



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





Q-ue pueque Eyma  
W. Green

2515

Uppn-ey nua  
yue Eyma  
Eyma Eyma Eyma  
Eyma Eyma Eyma

491.99-5  
Q-34

4. 11. 1862



2010





2002




131-ԲԵ Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Քերականութիւնը երկու կերպով կրնանք մտածել, մէյ-  
մը իբրև ընդհանուր արուեստ, մէյ մ'ալ իբրև մասնաւոր  
լեզուի մը կանոնները բովանդակող դրութիւն մը:

Քերականութիւնը իբրև ընդհանուր արուեստ՝ կրնանք  
ըսել թէ անայլայլելի է. քանզի քերականութեան արուեստը  
ուրիշ բան չընծայեր բայց եթէ իրաց ան բնութիւնը, հան-  
գամանքը, սարաքաները և յարաբերութիւնները որոնց  
համեմատ միտքը զանոնք կ'ըմբռնէ ու կը զգայ, և խօսքը  
զգալի կամ ղննելի կ'ընէ: Ոչ միտքը իրեն աս բնական եղած  
կերպէն տարբեր կերպով մը կրնայ ըմբռնել կամ զգալ, ոչ  
ալ խօսքը տարբեր կերպով կրնայ ներկայացընել: Ուստի քե-  
րականութեան արուեստն ամեն լեզուի համար միևնոյն է. և  
լեզուի մը քերականութիւնը սորվողը՝ յետոյ ուրիշ լեզուի մը  
քերականութիւնը սորված ատենը՝ ընդհանուր քերականա-  
կան օրէնքներու նկատմամբ նոր բան մը չի սորվիր:

Բայց քերականութիւնը, իբրև մասնաւոր լեզուի մը կա-  
նոնները բովանդակող դրութիւն, կրնայ քիչ շատ փոփո-  
խութիւն կրել. և փորձով ալ կը տեսնենք որ ոչ միայն այլև-  
այլ լեզուներու մասնաւոր քերականութիւնները, այլև միև-  
նոյն լեզուի քերականութիւններն իրարմէ քիչ շատ կը տար-  
բերին: Չկայ գրեթէ քերականութիւն մը որ ըստ ամենայնի  
ուրիշ քերականութեան մը կարգը բաժանումը, կանոննե-  
րը և կանոններու ըմբռնումն ու բացատրութեան միևնոյն  
կերպն ունենայ:

Քերականութիւն գրողը մը պաշտօնն ուրիշ բան չէ,  
բայց քերականութեան արուեստին սկզբունքները մերձեցը-  
նելան լեզուին՝ որուն քերականութիւնը կը գրէ. և հարկաւ  
անիկա այնպէս պիտի ընէ՝ ինչպէս որ իրեն աղէկ և յարմար  
կերևի: Եսոր համար է որ ոմանք հայրիւնքը կամ բայերուն  
ժամանակներն ուրիշ կարգի կ'ամփոփեն. ոմանք այս ինչ  
կարգ բառեր դերանուններուն կարգը կը գառեն ըստ  
րիշներն անոնք ածականներուն դասին մէջ գնելով և այս



370-82  
45439



շած կը համարին : Ա երջասպէս շատ կողմանէ մեծ կամ փոքր  
տարբերութիւններ ամէն քերականութեանց մէջ կը գտնուին :  
Մեր քերականութիւնն ալ հարկաւ այս դէս պիտի ըլ-  
լայ . ուրիշներէն երևելի կամ աննշան տարբերութիւններ պի-  
տի ունենայ : Օրինակի համար , մենք ածականը զատ մասն  
բանի ըրինք , և հինգ տեսակի բառերով ուրիշներուն թուա-  
կան անուն , ստացական և ցուցական գերանուն ու միջակ  
կամ միջական անուն ըսածները՝ թուական , ցուցական , ստա-  
ցական և անորոշ ածական անունով ածականներուն կարգը  
անցուցինք : Ասանկ ընելուս պատճառը , նախ՝ ասոնք ՚ի բնէ  
ածական , այսինքն՝ ըլլալու կերպ կամ եզանակ ցուցնող բա-  
ռեր են , շատ անգամ գոյականներու հետ կը գործածուին և  
անոնց օրէիքը կ'աւելն : Երկրորդ՝ բոլոր եւրոպական լեզու-  
ներու քերականութեանց մէջ՝ ասոնք ածական ճանչցուած  
են և ոչ ուրիշ բան . և առանձին իբր գոյական գործածուել  
նին՝ անոնց ՚ի բնէ ածական ըլլալուն գէմ չէ , քանզի ամէն  
ածական կրնայ ըստ տեղոյն գոյականաբար գործածուիլ ,  
ինչպէս որ գոյականն ալ ածականաբար կրնայ գործածուիլ ,  
բայց ասոր համար մէկը չըսեր թէ գոյականներն ածական են :  
Երրորդ՝ ածականներուն աս բաժանումը տալելուս պատ-  
ճառը ուրիշ դժուարութեան մը առջին առնելու համար է :  
Տղաք հայերէն քերականութեանց մէջ՝ ցուցական , ստացա-  
կան և անորոշ ածականներու գաղափարն անգամ չունենա-  
լով հայերէնին մէջ իբր գերանուն սորվածնին՝ երբ Գաղիե-  
րէնի մէջ իբր ածական նկատելու կը սկսին , կարգէ գուրս կը  
կարծեն , և անոնց միտքը ան կարգին ընտանեցրնելը բաւա-  
կան դժուարին կ'ըլլայ : Ար մեր քերականութիւնը սորվող  
տղաք Գաղիերէնին մէջ աս մասին բնաւ դժուարութեան մը  
չեն կրնար հանդիպիլ : Առջի մասին ոչ միայն ածականներուն  
մէջ , այլև ուրիշ ուր որ կարելի և յարմար էր , Գաղիերէն  
քերականութեանց լեզուն ու դրութիւնն առինք , ոչ միայն  
մեր տղոց Գաղիերէնին ուսմանը մէջ դժուարութիւն մը քիչ  
ընելու համար , այլ և քանզի ճշգրութիւնն այնպէս կը պա-  
հանջէր :

Գերանուններուն մէջէն ցուցական և ստացական գերա-  
կան ըսուած բաժանումները վերջուցինք . քանզի մեր լեզ-



ուին մէջ Գաղիերինի պէս ցուցական և ստացական դերա-  
նուններ չկան : Սա , դա , նա , երրորդ դէմքի անձնական կամ  
էական դերանունն է , և միևնոյն պաշտօնը կը կատարէ ըստ  
մասին , ինչ որ Գաղիացւոյ ցուցական դերանունը • և կամ  
ըստ տեղւոյն , այս , այդ , այն , ցուցական ածականները՝ երբ  
գոյականաբար կը գործածուին • ինչպէս նաև մեր ստացա-  
կան ածականներն՝ անոնց ստացական դերանուններուն պաշ-  
տօնը կը կատարեն՝ գոյականաբար գործածուելով : Ուստի և  
անգամ մը ածականներուն մէջ գնելէն ետքը՝ դերանուն մէջ  
դարձեալ կրկնելն աւելորդ էր : Աս և ասոնց նման տարբե-  
րութիւնները որ մեր քերականութեան մէջ պիտի տեսնուին ,  
այնպէս ծանր տարբերութիւններ չեն , որ վարժապետնե-  
րուն դժուարը բերեն , և աղոց ուսմանը դժուարութիւն  
տան • ասոր հակառակ թէ ան բաւերուն քերականական բը-  
նութեանը վրայ լուսաւոր գաղափար և ղիւրին ըմբռնում կու-  
տան , և թէ գործնական ռգուա ունին :

Բայերուն մէջ ջանացինք որ կրկին և կրկին խոնարհմանց  
ըրկնակներ չյաճախենք , աս ներգործականն է , աս կրաւոր-  
ականն է , աս կրաւորակերպն է ըսելով • այլ չորս լծորդու-  
թեանց պատկերը գնելէն ետքը՝ չորս համառօտ դիտողութիւն  
ըրկնք՝ որոնց մէջ չորս լծորդութեանց ներգործական բայերը  
կրաւորական ընելուն կերպը դիւրաւ և յայտնի կ'ըմբռնուի :  
Կրաւորակերպ , ձայնակրական , և ուրիշ չենք գիտեր ինչ  
բաժանումներ իբր աւելորդ նետեցինք • քանզի ամեն մէկ  
լծորդութիւն ինքնին ձև մըն է , որ իր տակը ներգործական և  
չէզոք բայեր ունի , մինակ կրաւորականի յատուկ ձև մը չկայ ,  
որ կարող ըլլանք կրաւորակերպ կոչել :

Հասարակ կանոնաւոր լծորդութեանց կերպէն քիչ կամ  
շատ տարբերող ամեն բայ , իբր զսրտուղի կամ անկանոն , ա-  
չակերտաց ղիւրոթեանը հս մար առանձին պատկերով մըներ-  
կայացուցինք :

Քերականական բաւերուն մէջ նորաձևութիւն ընել չու-  
ղեցինք , մինակ էական դերանունն՝ անջնական կոչեցինք , և  
առաջին խնդրոյ տեղ՝ սորոգելէ բառը գործածեցինք , ասոնք  
ալ այնպէս ընել հարկ էր , մանաւանդ վերջներ , քանզի առ-  
աջին խնդիր քերականական բառ չէ , որ սորոգելէ , սորոգ-



Եւ քերականական քառեր են , որոնք մեր քերականութեանց  
մէջէն դուրս ձգուելով գաղափարն ալ անծանօթ մնացած է ,  
որ բայց 'ի քերականութենէ' արամաբանութեան մէջ ալ էա-  
կան եզրներէն մէկն է : Ստոյգ է որ մեր քերականական եզր-  
ների ունի մէջ անխմաստ բառեր կան , ինչպէս են «-ի խնդիր ,  
բնութեան խնդիր , բառերը . բայց առ և ասոնց նմաններուն փո-  
փոխութիւնը ժամանակին թող սցինք : մանաւանդ որ ասոնց  
նայելով բարեկարգելու շատ աւելի կարևոր բաներ ունինք :

Ընդհանրապէս մեր քերականութեան առաջին մասը  
շատ զարտուղութիւններով կամ մանրամասն ծանօթութիւն-  
ներով ծանրաբեռնել չուզէցինք . օրինակի համար՝ անուններ  
րուն հոլովմանցը մէջ կրնայինք շատ զարտուղութիւններ մէջ  
բերել , որոնք թէպէտ անօգուտ չեն կրնար ըլլալ , բայց քե-  
րականութիւննիս բառարան ընելու ալ կամքը չունէինք : Մեր  
մենակ փոյթն եղաւ՝ սահմանները կամ վարդապետութիւննե-  
րը կարելի եղածին չափ համառօտ և պարզ ընել . և կը յու-  
սանք թէ մեր վարդապետութիւնները կամ կանոնները բա-  
ցարութեան մասին աւելի մթութիւն մը չունին քան որչափ  
կանոնի մը վերացեալ բնութիւնն 'ի հարկէ կ'ունենայ :

Մեր գլխաւոր փոյթը եր' բորդ և երրորդ մասին համար  
եղաւ : Ամեն քերականութիւն դրող իրեն մասնաւոր նպա-  
տակ մը կ'ունենայ . ոմանք համառօտութիւնն իրենց կանոն  
ընելով ամենէն հատու ճամբան կ'ընարեն . ոմանք ալ ման-  
րամասն , երբեմն ալ նուրբ ծանօթութիւններ հայերէն լեզ-  
ուին ուսմանը կարևոր կը համարին , այնպէս որ զարտուղու-  
թիւն կամ բացառութիւն չեն թողուր որ քերականութեան  
մէջ չգնեն : Ճշմարիտ է որ ամեն բանի մէջ միշտն ճամբան միշտ  
ընարելի է . բայց լեզուի մը համար պէտք է գիտնալ թէ կան  
էական բաներ որոնք չենք կրնար դուրս ձգել բայց եթէ դոր-  
ծը կրճատ և թերի ընելով . քանզի լեզուն գործնական ու-  
սում մըն է , անոր մէկ կարևոր յատկութեանը պա-  
կասութիւնը միայն լեզուին գործնական ընթացքին մէջ մնծ-  
ծակ մը կը կրնայ թողուլ . ինչպէս կան տեսակ մը անկանոն  
զարտուղութիւններ ալ որոնք իրենց անկիւններէն հանելու  
քերականութեան մէջ իբրև կանոն խառնելը՝ յստակ ջուր մը  
կամաւ պղտորելու , և ճշմարիտ մարդարիտներ ապակեղէն



ուչանց մէջ անյայտ ընելու անմտութեանը հետ հաւասար է :

Աս տեսութեամբ , մեր երկրորդ մասին քերականական ընդհանուր կարևոր կանոններն աւանդելէ ետքը , ինչպէս են , բառերուն իբր Տէր բայի , Ինդիւր , Ստորագելի և Բացայայտիչ , Աստարած պաշտօնները , յաւելուած մը ըսինք ուր հայերէնի վրայ 'ի մասնաւորի տեղեկութիւններ ժողովեցինք :

Ընդհանրապէս մեր նպատակն եղած է , նախ թէ ընդհանուր քերականական , և թէ մասնաւոր լեզուին նկատմամբ եական կանոն մը դուրս չլծողուլ : Երկրորդ՝ Գործնական զարգացումները նոյնպէս կանոններուն մէջ ընդունել . իսկ ան տեսակ զարտուղութիւններ որ էզական և անկանոն Բացառումներ են , մէկդի թողուլ : Երրորդ՝ քանի մը հարկաւոր գիտելիք՝ բոլոր գործածումներն մէջ մէջ իարևորումներն ունեն , Բայց մինչև փոքր թերականումներն մէջ փեղ ունեցած լին , կանոնի տակ առնել . և ան յատկութիւնները որոնք անորոշ և փարփած կերպով ասանդուած էին , նոր տեսութեամբ գործնական կանոններու վերածել :

Նախ լեզուին էական կանոններն ըսելով ան տեսակ յատկութիւնները կ'իմանանք որոնք առհասարակ գործնական են , և որոնց համար մեր ընտիր մատենագիրներուն ամենն ալ միաբան են : Զոր օրինակ՝ ցուցական և ստացական ածականներուն համաձայնութեան կանոնները , մեր դրած կերպովը միօրինակ , ընդհանուր և կական են , այնպէս որ ան կանոններուն հակառակ եղող զարտուղութիւնները՝ լեզուին դէմ և սխալ ըսուելու չափ անկարգ են : Եթէ , Տանս այսորիչ , յերիւրէր յայրմանէ , Բանիւն այնուի , որդայ իմայ , յերիւրէր Կամմէ , զօրօթ իւրով , համաձայնութիւնը՝ աս կերպերուն փոխուելու ըլլայ , Տանս այս , յերիւրէր յայր , Բանիւն այն , որդայս իմ , յերիւրէր Կամմէ , զօրօթ իւր , զարտուղութիւններն ապօրինաւոր ազատութիւն մը կամ մանաւանդ զեղծում մը եղած կ'ըլլան : Մինչ առջև կերպը լեզուին սովորական համաձայնութիւնն է , վերջիններն անանկ դէպքեր են որ հազարին մէկ հազիւ կը պատահին , ան ալ ստորին և ինկած հեղինակներու մէջ : Աս տեսակ զարտուղութիւններու համար է որ ըսինք թէ էզական և անկանոն Բացառումներ են , որոնք իբր լեզուին մէկ օրի-



Նաևոր ձևը կանոն ընկելով Այսպէս ալ կ'ըլլայ, ըսելու ար-  
ժանի չենք համարիր: Աս տեսակ համաձայնութիւն մը քեր-  
թողական, այսինքն տաղաչափական լեզուին մէջ հազիւ կըր-  
նայ արդարանալ, ան ալ ոչ ամեն ճաշակի համար, և միշտ  
բունի հարկ մը համարուելու է, քան թէ կամաւոր և ազատ  
ընտրութիւն մը:

Բայց տարբեր բաներ են գործնական զարատաւորութիւնները  
սամնիս: Զոր օրինակ՝ արդարեւ զարատաւորութիւն մըն է որ  
յաւակացուցիչը յատկացեալէն առաջ գրուի. բայց անանկ  
զարատաւորութիւն մը որ սովորական, և ընտիր հեղինակաց մէջ  
ստէպ գործածական ըլլալուն համար՝ աւելի կանոն կոչելու է,  
քան թէ զարատաւորութիւն, ուստի ոչ միայն քերականութեան  
մէջ իբրև կանոն կրնայ մտնել, այլև գործածութեան մէջ  
այնպէս օրինաւոր է, ինչպէս հակառակ ձևը, որ է յատկա-  
ցուցիչը յատկացեալէն ետքը գրել: Ասանկ զարատաւորութիւն-  
ներ մեր քերականութեանց մէջ կանոնաւոր կերպերուն հա-  
ւասարապատիւ ընդունուած են. ուր էլական և անկանոն կոչ-  
ուած բացառութիւնները, ինչպէս ցուցական և ստացական  
ածականներուն անկանոն համաձայնութեանը համար ըսինք,  
խապառ թողուած են:

Ըսինք թէ, քանի մը հարկաւոր գիտելիք որն է գործածու-  
թեան մէջ մեծ կարեւորութիւն ունին, բայց մեզմէ հիմա քերականու-  
թեաց մէջ քեզ ունեցած չեն, մեր քերականութեան մէջ կանոնի  
տակ առինք: Այսպէս են յօդ գրելու և չգրելու կանոննե-  
րը, աներևոյթի և ընդունելութեան վրայ ըսուածները, բա-  
յերուն ժամանակներուն համեմատութիւնը, այլովքն հան-  
դերձ:

Ասոնք, ինչպէս նաև դիմորոշներուն գործածութեան  
վրայ տուած բացատրութիւննիս, անանկ տեսութիւններ են,  
որ լեզուին բանալիները կրնան ըսուիլ, և գործնական կիրա-  
ւորութիւնը միօրինակ, դիւրին և կանոնաւոր կ'ընեն:

Վերջապէս ըսինք թէ կան յատկութիւններ որ ոնք ան-  
րոշ և փարփամ կերպով անհրոճ են, և մենք նոր տեսութեամբ  
գործնական կանոններու վերածեցինք: Այսպէս են ան կա-  
նոնները որով դիմորոշները գործածելու դէպքերը որոշեցինք:

Դիմորոշներուն վրայ մենք առաջ ալ շատերը խօսած են,



բայց ի՞նչ կերպով: Տես, Տաբերտ, դիմորոշներուն գլուխը,  
էջ 177—193: Յիշեալ գլխուն մէջ, դիմորոշներուն գործա-  
ծութեանը վրայ ցուցուած բաղմամբիւ կամ ոննէրուն կամ դեպ-  
քերուն մեծ մասը սա կանոնին կը վերածուին. այսինքն թէ  
Ընդունելութեան տեղ յալ աբերակամով դիմաւոր բայ գոր-  
ծածուած ատեն՝ յարաբերեալը զորոթեամբ կ'իմացուի. և  
ան ատեն յարաբերականէն անմիջապէս ետքը եկող բառին  
վրայ, ( ինչ բառ կ'ուշէ ըլլայ, ածական, գոյական, մակբայ,  
բայ, կայն, ) դիմորոշ յօդ կը դրուի: Տես մեր Քերական-  
նութեան թիւ 34:

Աս գործնական կանոնը գտնելէ ետքը՝ աւելորդ է ըսել,  
Դիմորոշները երբեմն ածականին վրայ կը դրուին, երբեմն  
գոյականին, երբեմն Մակբային, երբեմն Տէր բային, եր-  
բեմն Ինդրոշն, կայն: Ասանկ կանոն տալը կանոն չէ, այլ  
լոկ պատմութիւն մը, թէ այսպէս ալ կ'ըլլայ, այնպէս ալ  
կ'ըլլայ: Ա՛յլ է, բայց այսպէս և այնպէս ըլլալուն «տառադրոշ»  
ի՞նչ է, ե՞րբ կամ ի՞նչ պարագայի մէջ կ'ըլլայ: Պատճառը՝  
կերպը, տեղը, կամ ուրիշ որոշ պարագայ մը առանց ցուցը-  
նելու՝ կանոն մը գործնական չէ:

Ահա մեր քերականութեան վրայ մանրամասն համարա-  
տուութիւն մը. որուն հախն ու արժէքը որոշել մեր ար-  
գարակերով բանասէրներուն կը թողունք: Հիմա ուրիշ խնդ-  
րոյ մը դանք:

Հայերէն գրաբար լեզուին նկատմամբ մեծ բանասիրա-  
կան երկու սխալ կայ, որոնք հայերէն լեզուին գործնական  
ուսումը դժուարին և անկանոն լրած են: Աս սխալներուն  
դէմ քանի մը անգամ մեր և ուրիշ քանի մը բանասէրներու  
կողմէն մեծամեծ բողոքներ եղած են, և աս բողոքներն այն-  
չափ աւելի և սաստիկ պլտի ըլլան, որչափ հայերէն լեզուին  
ուսումն ազգին մէջ յառաջ կ'ըլլայ. և այնչափ արշարացի  
են բողոքները, որչափ յայտնի է թէ մեր լեզուին պատմու-  
թիւնն ու բանասիրական քննադատութիւնը յիշեալ սխալնե-  
րուն դէմ առաջին բողոքուններն են:

Աս սխալներուն մէկն աս է որ հայերէն գրականութեան  
կամ հինգերորդ դարուն սկիզբէն մինչև ասկէ քանի մը դար  
առաջ, իբր տատուերկու դարու լեզուն՝ մէկ և հաւասարա-



պատիւ համարուած է , և հայերէն գրականութեան այս գո-  
րան օրս մեր ձեռքը գտնուած բոլոր մնացորդներուն՝ նախ-  
նէաց գրութիւններ աւուրն տալով , գրեթէ միևնոյն հեղինակու-  
թիւն կը տրուի : Որեւիչ նախնեաց կոչուած գրքի մը անկիւ-  
նը գտնուած ամեն բան , օրինաւոր է :

Երկրորդ սխալը՝ լեզուին մէջ շատ բաներ , չը-  
սենք թէ ամեն բան , ընելու մենք մեզ ազատ կը կար-  
ծենք . անանկ արտօնութիւն մը կամ իշխանութիւն մը  
մեզի սեպհականած ենք որ մեր պատուոյն դէմ ընել կը հաւա-  
տանք մենէ համար սահանջելը թէ արդեօք այս ինչ բանն  
աս կամ ան նշանակութեամբ կրնա՞նք գործածել , այս ինչ  
աղատութիւնը մեզի օրինաւոր է թէ ոչ : Ասանկ անիշխա-  
նութիւն մը կենդանի լեզուներու մէջ անգամ ապօրինաւոր  
է , թող թէ հայերէնի պէս մեռած լեզուի մը համար՝ որուն  
գիտութիւնը և բոլոր գաղանիքը լեզուին պատմութեամբն ու  
բանասիրական քննադատութեամբ վիայուած հին գրութեան  
մը մնացորդներուն մէջ են , և անոնք միայն մեզի համար լեզ-  
ուին անսխալ պատգամատիւններն են :

Հինգերորդ գարուն սկիզբէն , մեր առաջին թարգմա-  
նիչներէն , կամ անէ ալ առաջ հին հայ վկայասանաց երգե-  
րուն մնացորդներէն սկսեալ մինչև Ստեփանոս Ահաւին ,  
իբր տասուերկու գարու գրաւոր լեզուին միօրինակ հեղինակ-  
ութիւն , հաւասար արժէք և օրինաւորութիւն ունենալուն  
կամ չունենալուն վրայ հոս է քիչայն խօսիլ չենք ուզեր : Ասոր  
վրայ բաւական խօսուած է\* . և որովհետև լեզուին պատմու-  
թենէն ու բանասիրական քննադատութեան օրէնքներով հաս-  
տատուած զգալի պատմական ապացոյցներ ունինք , որով ու-  
զենք չուզենք ընդունելու ենք թէ մեր գրաւոր լեզուն մինչև  
հինգերորդ գարուն առջի կէսն անարատ կը հասնի , անկէ  
ետքը յեղափոխութիւն մը գրաւոր լեզուն տակնուվրայ կ'ը-

\* Տես . Նկարագիր ուսմանց . էջ 30—39 : Եւ Քաղոսաճոյժ  
'ի Բարգմանութեանց նախնեաց . Յառաջաբանը , որուն յօդ-  
ուածը վարը չակերտով առած ենք : Եւ Պատմութեան  
ճառագրութեան հայոց . իբր ակնարկութիւն . էջ 40 .  
57 . 58 .



նէ , և քիչ շատ աղետալի անկում մը , և լեզուի ու ճաշակի  
զգալի տարբերութիւն լեզուին մէջ կը յաջորդէ , անոր հա-  
մար մեզի փոյթ չէ , աս պատմական և բանասիրական վկա-  
յութիւնը ընդունուի կամ չընդունուի , մենք հետեալ սկզ-  
բունքները մեր հին լեզուին հեղինակութեանը համար կը  
գնենք :

1 . Թարգմանիչք\* բուն հայերէն մաքուր և հարազատ լեզ-  
ուով , որուն հին հայ վկայասանաց երգերուն հատակոտորներն  
ալ վկայ են , հայերէն մատենագրութեան սկսան , և անոնց  
մաքրութեանն ու հարադատութեանը նշանները , ան հա-  
յերէն գրականութեան մեր ձեռքը գանուած մնացորդներուն  
մէջ , միջինակութեամբ և գրեթէ նոյնութեամբ այնպէս  
զգալի են , և անոնցմէ ետքի ժամանակներուն լեզուէն այնպէս  
տարբեր են , որ անոնք միայն կրնանք լեզուին հարազատ և  
բացարձակ վարպետները կոչել , և մեզի լեզուին մի միայն  
պատգամախաներն համարիլ :

2 . Ասոնց միջինակ գործածութենէն տարբեր , կամ ա-  
նոնց հակառակ որևիցէ կիրառութիւն ընդհանրապէս կաս-  
կածելի և բանասիրապէս խորհելով անընդունելի է . բայց  
եթէ հարկը ստիպէ մեզ որ , որևիցէ տարբերութիւն՝ գիա-  
նական կարտութիւն մը լեցունելու համար ընդունինք , և  
գործածենք :

Աս երկու սկզբունքէն կը հետևի որ մենք հայերէն լե-  
զուն մեր գրականութեան յիշեալ ժամանակին , այսինքն ան  
ժամանակուան հեղինակներուն մէջ մնաուելու ենք . ան լե-  
զուն մեզի ուսում ընելու , և անոր գաղանեացը թափանցե-  
լու ենք , եթէ կանոնաւոր և կարելի եղածին չափ յստակ և  
գիւրիս հայերէն մը ձեռք բերել կ'ուզենք :

Բարեբախտութեամբ , մեր հին գրականութեան բոլոր

---

\* Թարգմանիչք ըսելով , նոյն իսկ Խորենացւոյն վկայու-  
թեամբը կ'իմացուի Ս . Սահակ և Մեսրոպ , իրենց  
գործակից աշակերտներովը , որոնցմէ գործով ծանօթ  
եղողներն են , Եզնիկ և Կորիւն . առջինը սքանչելի գիր-  
քովը , երկրորդը՝ նոյնպէս համանուն մատենագրու-  
թեամբը :



մնացորդներուն մէջ թարգմանիչներէն մնացած մատենագրութիւններն ամենէն բազմաթիւն ու ամենէն աւելի նիւթոյ զանազանութիւն ունեցող մասն են : Թարգմանչաց կամ մեր բուն ոսկեղէն դարուն մատենագրութեան մնացորդներէն մեր ձեռքը գտնուած գլխաւոր կտորներն են հետևեալները :

« 1 . Եղնիկ : 2 . Ս . Սահակ Կանոնաշրոյ մէջ : 3 . Ոսկեկէն . Մատթէի , Պողոսի թուղթերուն , Եսայեայ , Ծննդոց : 4 . Եսեբեայ Քրոնիկոնը : 5 . Սեբեթիանոս : 6 . Կիւրղ . Աղէքս . Մէկն . Ծննդոց , Դատ : 7 . Բոլբ սուրբ գիրքերը , բայց ՚ի Սիրաքայ նոր թարգմանութիւնէն և Յայանութիւնէն : 8 . Ագաթանգեղոս : 9 . Բուզանդ : 10 . Կորիւն : 11 . Յակ . Մծբն . կամ Չգօն : 12 . Եփրեմայ մեկնութիւնները : 13 . Եսեբեայ եկեղեց . Պատմ : 14 . Կոչումն լիւծոյ . Կիւրղի Երուսաղ : 15 . Ոսկեք . Մէկն . Յով : առջի 13 ճառերը : 16 . Եւազր Պոնտացի : 17 . Բարսղի վեցօրեան » : Թող ասգին անգին ճառնարաց և Հարանց վարուց մէջ գտնուած կտորները , որոնք ոճէն կրնան ճանչցուիլ :

Ըս մնացորդները որոնց մեծ մասը բաւական ընդարձակ գործեր են , հայերէն լեզուին էութիւնն իրենց մէջ կը պարունակեն , և լեզուին նկատմամբ արգարև գին չունեցող գանձ են :

Ըս ամենը « թէպէտ գեղեցկութեամբ , պատուով ու հեղինակութեամբ հաւասար են , բայց այլևայլ նկարագիր կամ յատկութիւն ունին , և ամեն մէկուն յատուկ բառերուն կամ ոճին նայելով չորս դաս կրնան բաժնուիլ : Ընդի դասը բուն ոսկի դարուն հայերէն մատենագրութեանը մէջ ամենէն ընդհանուր և ամենէն պատշաճ ոճն է . բանակաս . դասին մէջ շարագրութեան ընթացքը կանոնաւոր է , բառերը ճիշդ , զրուցուածներն առատ ու պէսպէս , զապերը պարզ և դարձուածները զրեղ . ասոր համար ալ աս ոճը զօրաւոր ճարտասանութեան , գեղեցիկ պատմագրութեան , յատուկ փիլիսոփայութեան և ամեն տեսակ գաղափար կամ

Քաղաքացի , ՚ի Թարգմանութեանց Եւրոպաց . Յատմագրանիւն մէջ . Տպ . Վիեննա . 1849 .



մտած աւթիւնն ճշգրտութեամբ բացատրելու յարմար : Եւ ոճն  
ուշին , Եղնիկ . Ոսկ . Մատթէի , Պողոսի Թուղթերուն , Եւ  
այլայ , Սենդոյ մեկնութեանները . Եւսեբեայ Բրոնիկոնը .  
Սեբերիանոսի , Կիւրլի Վլէքսանդրացւոյն գործքի , Ը . բուն  
Պողոսի Թուղթերը , և ուրիշ շատեր :

Աերջի երեք դասը , Թէպէտ ամեն մասամբ առջինին  
հաւասար , բայց առջինին չափ կանոնաւոր չէ , շարադրու-  
թեան մասին : Եսոնց առջինը գիւտնական կամ սրբո. նա-  
կան ոճ է , ինչպէս են Վրասթանդեղոս , Բուզանդ , Կորիւն :  
Երկրորդը՝ բանաստեղծական լեզու մըն է , զարդարուն և  
ծաղկալից , ինչպէս են Զգոնին , Եփրեմայ և Եւսեփեայ եկե-  
ղեցական պատմութեան ոճը : Այրորդը մեղմ , հանգարտ ու  
քաղցրախօս , և կանոնաւոր ու թեամբ առջի դասուն մօտ ,  
բայց ոչ անոր չափ թիւր սթեք , ինչպէս են Կոչումն Սեծա-  
յութեան . Եւսդր . և Ոսկ . Յովհաննոս մեկնութեան առջի  
13 ճառը » :

Մերք՝ բանաստեղծական մէջ եղած բոլոր կանոններուն և  
գիտություններուն հիմն վերցնելու հեղինակներուն լեզուն  
ըրած ենք , մանաւանդ անոնց , որոնք իբր առաջին դասին վե-  
րաբերեալ յիւցինք : Աւր որ « ընտիր հեղինակ » , « ընտիր  
մատենագիր » ըսած ենք , միշտ ասոնք գիտ. ծ ենք :

Եթէ հին հայերէն , իբր տասու ըկու դարու , մատենա-  
գրութեան միւնոյն հեղինակութիւնն ու սրժեքը տալը բա-  
նասիրական սխալ է , աւելի մեծ սխալ մը ըլլալու է , կոր-  
ծել թէ լեզուին մէջ ամեն բան ընելու ազատ ենք : Բայց  
մենք մեզ լեզուին մէջ ամեն բանի կաւոր համարեւն ինչ ո-  
գուտ ուշինք : Գիշը ձեռք առած ասեմնիս հազիւ թէ քա-  
նի մը տող գրած ենք , ետ իր դառնանք բառին մէկը ը գնենք  
մէկալը կը վերցնենք . չենք յիտեր թէ ինչպէս ընենք որ ա-  
նու , վրէլուչ և վսեմ ըլլայ . երբեմն նաև այնպէս մուծ ըլ-  
լայ որ մարդ բան չհասկնայ : Կարծես թէ բառերը հասարա-  
կ. ց տեղի մը ըրած ենք , անո՛ց մէ իմաստ կը մուրանք , ուր  
քաջ լեզուագէտ մը որ իր նիւթին տէրն է , ամենեկին բառ  
չմտած էր , բառերն ինքնին կու գան իրենց տեղը կը գտնեն :

Քաղաքագր . Յատուցաբանին մէջ . Տպ . Վիեն . 1849 .



Չարմանք . ամեն լեզուի մէջ սխալ կայ , բան կայ որ չըլար . քանզի կանոն կայ . տրամաբանութիւն , պատշաճութիւն կը փնտոռի . երբ հայերէնի կու գայ , ամենեկին սխալ չկայ . ամեն բան կ'ըլլայ . ուզածիդ սէս բառ դիր , վերցուր , բառերուն ուզած նշանակութիւնդ տուր , իրարու հետ համաձայնեցուր ինչպէս կ'ուզես , բառը ծայրատէ , արմատ հանէ , ածանց չիւնէ , ուզածիդ պէս շարէ , ամենեկին կանոն , արամաբանութիւն , պատշաճութիւն մի փնտոռեր . այսպէս անկանոն գրեւէդ ետքը՝ տես թէ անուշ , վսեմ եղան . եթէ չես հաւնիր , քանի մը տեղ փառաւոր բայց անխմաստ ածականներ աւելցուր , երբեմն ամեն բառի մէյմէկ ածական տուր , ահա եղաւ գեղեցիկ շարադրութիւն մը :

Մինչ Գաղիացին կամ Անգղիացի՛ն աւելորդութեան անունէն կը դողայ , նշանախեց մը անգամ աւելի գնել'ն կը վախնայ , ածական մը չի տար մ'նչև որ բառը եղանակաւորելու կամ նոր իմաստ մը տալու հարկը չտեսնէ , մենք կը կարծենք թէ աս զգուշութիւններն ու կանոնները հայերէնի համար չեն : Ինչո՞ւ . հայերէնը կանոն չունի՞ , անտէրո՞ւնչ լեզու է . ուրիշ լեզուի մէջ մտածելով , տրամաբանելով , համեստութեամբ կը գրենք , հայերէնի մէջ ամենեկին նկատում մը չունենանք :

Աս ապերինաւորութենէն ազատելու համար , հին և նոր գասական (+լատ+) լեզուներու պէս , կանոնաւոր , յստակ , կոկ և արու ոճ ունենալու համար , վերջապէս մեր դիւրութեանը և լեզուին պատուոյն համար , պէտք է որ մեր ընթացքը փոխենք : Ան հեղինակներուն միտ գնենք , որոնց համար ըսինք թէ , հին Յունարէնի և Ղաախներէնի ընախ հեղինակներուն պէս կանոնաւոր կը գրէին :

Թերևս ոմանց մեր խօսքերը ծանր դան , և կեք'դով մը փտանան թէ ի՞նչու համար արդի հայերէն ոճերուն չենք հաւնիր : Այո , մեծաւ մասամբ չենք հաւնիր , քանզի աս ոճերուն և դարձուածներուն նմանը հին և նոր լեզուաց ամենէն ընախ հեղինակներուն մէջ չտեսնելէ զատ , մեր ընախ հեղինակներուն մէջ ալ չենք տեսներ . ան հեղինակներուն կ'ըսենք , որոնց հայ ազգը գրեթէ աւանդութեամբ միշտ առաջին աստիճանի յարգանք մատուցած է , և հայերէնի



հայատակութիւնն անոնց իբրև լեզուին բնական իշխաններուն  
կը մատուցանէ, թէև շատ քիչերն անոնց առաւելութեանը,  
պատճառներու դիտութեամբ՝ ծանօթ եղած են, և անոնց  
ուսումը ըստ արժանւոյն յարգած են :

Քաջ լեզուագէտ անոնք են որոնք ամենէն բնական կար-  
գով ամենէն վտեմ իմաստներ կը բացատրեն . ուստի և ամե-  
նէն քաջ հայերենագէտ անոնք կրնան համարուիլ, որոնք ա-  
ռանց շարադրութեան մանկական ճիգեր ընելու՝ հատուած  
մը բան բնական դիւրութեամբ հայերէնի կրնան շրջել, ա-  
նակ հայերէնի մը՝ ուր պարզութեան և չփնտուած բայց  
յատուկ բառերու ընտրութեան հետ վկայեալ հայերէնի մը  
յատկութիւնը փայլի :

Քերականութեան ուսումը դպրոցներու մէջ կատար-  
եալ ընթացք մը ունենալու է . և որովհետև աս ընթացքը  
մինակ քերականութեամբ չի կրնար ըլլալ, այլ իրեն օգնա-  
կան մասերն ալ ունենալու է, զոր օրինակ քերականական և  
գործնական կրթութիւնն մը, տրամաբանական և քերականա-  
կան վերջուծութիւններ . մենք 'ի խնդրոյ Պէշիկդաշու հայ-  
կաղեան Նիկերութեան, որն որ դպրոցաց ամեն կարգի դա-  
սական գիրքեր դիւրագնի մատակարարելու մեծ փոյթ ունի,  
քերականութեան ուսման յիշեալ օգնական մասերուն աշ-  
խատասիրութեանը կը զբաղինք : Ուստի քերականութեան  
անմիջապէս պիտի յաջորդէ քերականական կրթութիւն մը,  
ինչպէս նաև վերջուծութիւնը, որուն համառօտ մէկ փորձը  
սուինք, երկրորդ ապագրութեան մէջ աւելի կատարեալ  
ձևով 'ի լոյս պիտի ընծայուի :









## Ն Ե Ր Ա Մ Ո Ի Թ Ի Ի Ն

Քերականութիւնն անանկ ուսում մըն է որ լեզուի մը վերաբերութիւնն ունեցող բոլոր սկզբունքները կը սորվեցընէ :

Լեզուի մը սկզբունքները սա հինգ բաներուն վերաբերութիւնն ունին .

1 . Լեզուին գրաւոր նշաններուն որ գիրեր կամ տառեր են : Աս մասը Ուղղագրութիւն կը կոչուի , եւ լեզուին տառերուն եւ ուրիշ նշանագիրներուն , եւ բառերը հեգելու եղանակին վրայ կը խօսի : Քերականութեան սա մասը սովորաբար հեգարաններու եւ բառարաններու մէջ կը սորվուի :

2 . Լեզուին ձայնաւոր հնչմանը : Աս մասը Ուղղասացութիւն կ'ըսուի եւ գիրերը կամ բառերը շիտակ հնչելու վրայ կը խօսի :

3 . Լեզուին բառերուն շէնքին կամ կողմութեանը : Աս մասն ալ Ստուգաբանութիւն կը կոչուի , եւ բառերուն ծագմանը , ածանցմանը , բարդութեանը եւ ուրիշ փոփոխութիւններուն վրայ տեղեկութիւններ կու տայ :

4 . Բառերուն բնութեանը , այսինքն՝ տեսակներուն , անոնց պաշտօնին եւ շարադասութեանը : Աս մասն է բուն Քերականութիւն կամ Գպրութիւն կոչուածը . եւ բառերուն բաժանումները եւ ստորաբաժանումները կ'ընէ :



Բ  
անոնց իրարու հետ համաձայնութիւնը , պաշ-  
տօններն ու շարադասութեան օրէնքները կը  
ցուցրնէ :

Ծ . Տաղաչափութեան : Տաղաչափութիւ-  
նը չափով խօսքեր , կամ ոտանաւոր շինելու ար-  
ուեստին վրայ կը խօսի :

Տաղաչափութիւնը Քերականութեան ար-  
ուեստին մէկ մասը համարուած է , մանաւանդ  
քանի մը հին եւ նոր լեզուներու համար , որոնց  
մէջ տաղաչափելու ամենէն մեծ գաղտնիքը՝ Ս.  
ուղղանութեան ( Էրօզօտի ) օրէնքներէն կախում  
ունի . այսինքն՝ ձայնաւոր գիրերուն չափէն ,  
երկարութենէն կամ կարճութենէն , եւ անոնց  
ուրիշ գիրերու հետ ունեցած յարաբերութե-  
նէն : Ս. յապէս են մասնաւորապէս հին Յունա-  
րէնին , Լատիներէնին , եւ ըստ մասին նաեւ  
Գերմաներէնին տաղաչափութիւնները :

Բառին ընդարձակ նշանակութեամբը՝ Քե-  
րականութիւն կամ Գպրութիւն ըսելով վերո-  
յիշեալ հինգ մասերն ալ կ'իմացուին : Բայց սո-  
վորաբար՝ Քերականութիւն ըսելով , բառին ան-  
ձուկ նշանակութեամբը , մինակ վերի հինգ բա-  
ժանմանց չորրորդը կը հասկցուի :

Մենք ալ մեր Քերականութեան գլխաւոր  
նիւթ՝ սա մասն ըլինք . եւ սա մասը բաժնեցինք  
երեքի : Ս. ղինին մէջ բառերուն բաժանումնե-  
րուն եւ ստորաբաժանումներուն վրայ խօսե-  
ցանք , ուր բառերուն բնութիւնը եւ ինչ փո-  
փոխութիւններու ընդունակ ըլլալը կը աւեա-



նուի : Աս Մասին Բառագիրքն անուն տու-  
ինք :

Երրորդին մէջ խօսեցանք բառերուն խօս-  
քի մէջ կատարած պաշտօններուն եւ իրարու հետ  
համաձայնութեանը վրայ . աս մասին մէջ է որ  
բառերուն աւելի մեծ եւ մտաւոր յարաբերու-  
թիւնը կը տեսնուի : Ասոր ալ Համաձայնութեան  
անուն տուինք :

Երրորդին մէջ խօսեցանք բառերուն խօսքի  
մէջ ինչ կարգով շարուելուն վրայ . աս մասին  
մէջ ալ բառերուն , իբրեւ մարդուս խորհուրդ-  
ներուն բացատրութեանը գործիք , ինչ բնական  
նպատակ եւ դիտում ունենալը կ'իմացուի : Աս  
մասը Շարագիրքն կոչեցինք :

Թէպէտ մեր Քերականութիւնը վերը յիշ-  
ուած հինգ կէտերէն չորրորդին , այն է Բառա-  
դիտութեան , Համաձայնութեան եւ Շարա-  
գիրքութեան վրայ պիտի խօսի , ըստ որում  
Բուն քերականութիւն ըսելով ասոնք կը հաս-  
կըցուին , բայց եւ այնպէս միւս մասերուն վրայ  
ալ գոնէ համառօտիւ անցնիլ հարկ է :

### Ա. ՈՒՂՂՊԳՐՈՒԹԻՒՆ

Ուղղագրութիւնը , ինչպէս ըսինք , լեզուին  
տառերուն , եւ ուրիշ նշանագիրներուն , եւ բա-  
ռերը հեղելու եղանակին վրայ կը խօսի :

Հայերէն այբուբենը երեսուն եւ վեց գիր  
ունի , եւ երեք ձեւով կը դրուի . Երկաթի ,  
կամ Գլխաթի , Բուրգի եւ Նօսքի :



Երկ-Ռ-Գեր .

Ա . Բ . Գ . Դ . Ե . Զ . Է . Ը . Թ . Ժ . Ի .  
 Լ . Խ . Ծ . Կ . Հ . Ձ . Ղ . Ճ . Մ . Յ . Ն .  
 Շ . Ո . Զ . Պ . Ջ . Ռ . Ս . Վ . Տ . Բ . Ց .  
 Խ . Փ . Ք .

Բարե Գեր .

ա . բ . գ . դ . ե . զ . է . ը . թ . ժ . ի . լ .  
 խ . ծ . կ . հ . ձ . ղ . ճ . մ . յ . ն . շ . ո . չ .  
 պ . ջ . ու . ս . վ . ա . ը . ց . ռ . փ . ք .

Նորե Գեր .

ա . բ . գ . դ . ե . զ . է . ը . թ . ժ . ի . լ .  
 խ . ծ . կ . հ . ձ . ղ . ճ . մ . յ . ն . շ . ո . չ . պ . ջ .  
 ա . ս . վ . փ . ք . ց . ո . ք . ր .

Ուրիշ երկու գիրեր ալ կան որ ետքը մտած  
 են , օ եւ Ք :

Հիմա մեր օ ով գրած բառերը , մեր նախ-  
 նիք առ ով կը գրէին , ուստի , օրհնել , օծու-  
 թիւն , օրէնք , օր , քաղաքօք , հօր , գրելու  
 տեղ՝ կը գրէին , առհնել , ածութիւն , ա-  
 րէնք , առ , քաղաքառք , հառ :

Հայերէն լեզուին բառերուն մէջ Ք հնչու-  
 մը չկայ . մենք բառ մը չունինք որ Ք գիրն ու-  
 նենայ . մեր Ք գիրը քն է . անոր համար մեր  
 նախնիք օտար լեզուաց Ք ն՝ քի կը դարձընեն .  
 առ պատճառաւ կ'ըսենք , Փիլիսոփոս , Սո-



հետոն . որոնք Յունարէն բառեր են , եւ կը գրուին , Յիլոսոֆոս , Սոֆիստիս :

Մեր այժմու այբուբենին մէջ ուրիշ գիր մ'ալ կայ , ե , բայց ասիկա զատ հնչում մը չէ , այլ ե ին մէկ համառօտ ձեւն է :

Ա.՝ վերջի երեք գիրերը , օ , Ք , եւ , Մեարոպեան նշանագիրներուն մէջ չկան : Մեարոպեան նշանագիր կը կոչուին վերի այբուբենին երեսուն եւ վեց գիրերը , որոնք հնարողին անունովը , որ հինգերորդ դարուն (քրիստոնէական թուականին 400 ին) սկիզբները ծաղկող Մեարոպ անունով երեւելի վարդապետ էր :

Վերի այբուբենին մէջէն եօթը հասար , ա , է , է , ը , ի , ո , - , գիրերը շայնասօր կը կոչուին , քանզի մինակ , առանց ուրիշ գրի օգնութեան , կրնան արտաբերուիլ :

Մնացածները Բաղաշայն կը կոչուին , քանզի առանց ձայնաւորի մը օգնութեան չեն կրնար արտաբերուիլ :

Վերոյիշեալ եօթը ձայնաւորները պարզ ձայնաւորներ են : Ան Բաղադրեալ ձայնաւորներ , որոնք երկու կամ աւելի ձայնաւորներէ բաղադրուելով զատ հնչում մը կ'ունենան . ինչպէս են , եա , ու , ի- (եո-), իա , իե , ուա , եւ ուրիշ շատեր :

Ան բաղադրեալ ձայնաւորները որոնց մէջ ամեն մէկ ձայնաւորին ձայնը կը պահուի , երբ Բաղադրեալ կ'ըսուին . այսպէս են , իա , իե , իա . եա . էի , էա . ուա , ուե , ուի , եւ ասոնց նմաններ :



Պէտք է գիտնալ որ երկբարբառներ մէյմէկ վանկ են , ուստի եւ անոնք կարդալու ատեն կամ ոտանաւորի մէջ երկու վանկի տեղ առնելով զատ հնչելը սխալ է , եւ լեզուն ծանր ու դանդաղ կ'ընէ : Աերի երկբարբառները ի-ա , ի-ե , ի-ա . ու-ա , ու-ի\* հնչելէ զգոյշ ըլլալու է . զոր օրինակ . Մարի-աճ , Գի-եյիէ , Չի-ոյ , Թողո-աք , Ընկենա-իւ :

Բայ 'ի կետադրութեան նշաններէն , ինչպէս են , կէ-ալ , Փ-ւ-ը , Ս-արաիէ-ալ . եւ Առագանութեան նշաններէն , ինչպէս են Շեշ-ալ , Պարոյիւ , Երի-ալ , առաջ տեսակ մը նշաններ ալ կային , որոնք այլ եւայլ բառեր ցուցնելու համար համառօտ նշաններ էին . Երիէն\* , Երիե , Երպէս , զոր օրինակ , աշտիէն\* , Ե-այլն , եւ ուրիշ բառեր ան նշանադիրներով կամ նշաններով կը գրուէին : Տպագրութեան արուեստին եւ կարդալու դիւրութեան համար հիմա ան նշանները վերցած են :

Հեզել կ'ըսուի գիրերուն իրարու հետ կապուիլը , որով վանկեր կը կազմուին : Չոր օրինակ . Բա ըե հաճ , Գի առ Բի-ան , երեք վանկէ շինուած բառեր են :

Ամեն մէկ վանկ քանի գիր որ ունենայ ,

\* Առաջ երկբարբառներուն վրայ օ սուղ կոչուած բոլորակ նշանը կը դրուէր , ցուցնելու համար որ անոնք մէկ հնչմամբ արտասանելու է . հիմա ան նշանը խափանուած է . բայց օրիշքը չի խափանուիր :



միշտ մէկ հնչմամբ կ'արտաբերուի . բայց նոր  
կարդալ սոր լելու սկսողները սովորաբար ամեն  
մէկ գրին անունը տալէ ետքը ամբողջ վանկը մէ-  
կէն կը հնչեն , եւ առ է հեզել կամ կապելը ,  
որ շիտակ կարդալու վարժեցրնելու համար է :

Բառերը վանկերէ կը շինուին : Եթէ բառ  
մը մէկ վանկ է , մասնակցի կ'ըսուի . եթէ երկու  
վանկ է , երկամասնի . եթէ երեք վանկ է , եռա-  
մասնի . եթէ չորս վանկ է , քառամասնի . ընդհան-  
րապէս երկուքէն կամ երեքէն աւելի վանկ ու-  
նեցող բառեր՝ բազմամասնի կը կոչուին :

Հեզելու դիտարոր կանոններն ասոնք են :

1 . Երբոր բառին սկիզբը կամ մէջը մէկ  
բաղաձայն կայ , բաղաձայնը յաջորդ ձայնաւո-  
րին հետ վանկ կը կազմէ . զոր օրինակ . Սե-բե-ւի :

2 . Երբոր բառին վերջը մէկ կամ երկու  
ձայնաւոր կ'ոյ , ան բաղաձայնները նախընթաց  
ձայնաւորին հետ մէկ վանկ կը կազմեն . զոր օ-  
րինակ . Բա բե կամ . Բազ մա գոնի . Թաւ շա ասրբ :

3 . Երբոր բառի մը սկիզբը երկու բաղա-  
ձայն կայ , աւելի աղէկ է որ երկու բաղաձայնը  
մէկէն յաջորդ ձայնաւորին հետ մէկ վանկ կազ-  
մէ , քան թէ երկու բաղաձայնին մէջ ը հնչումը  
զգալի ընելով՝ առջի բաղաձայնը ը հնչման հետ  
զատ վանկ , երկրորդ բաղաձայնն ալ յաջորդ  
ձայնաւորին հետ զատ վանկ ըլլայ : Ռատի ըստ  
մեզ պէտք է հնչել . Գնա ջի . Գրա սրբ . Նշա-  
նաւ . Մշել . Թաւ նել . Սրա ջայ . Սրա լիւն .  
Ոչ թէ , Գը նա ջի . Գը բա սրբ . Նը շա նաւ . Մը-



շել . Թը Գա նել . Ըա Գա Գայ . Սը Գա Բիւն : Առ-  
ջի կերպով բառերը թեթեւ , արագ եւ սահուն  
կ'ըլլան , եւ լեզուն կայտառութիւն մը կ'առնէ ,  
ուր վերջի կերպով բառերը բազմավանկ , ուստի  
եւ ծանր ու դանդաղ կ'ըլլան : Բայց ասկէ՝ եր-  
կու բաղաձայն իրարմէ զատել ուրիշ լեզուի  
մէջ սովորութիւն չէ :

Բայց բառին մէջ երկու բաղաձայն մէկտեղ  
եկած ատեն , կրնայ վերի կանոնով ալ հեգուիլ ,  
կրնայ բաղաձայնին մէկը նախընթաց , ու մէ-  
կալը յաջորդ ձայնաւորին հետ վանկ կազմել .  
զոր օրինակ . Յա Տրա Գնայ . Ար Գե լւլ :

4 . Երեք բաղաձայն քովէ քով եղած ա-  
տեն , հակաւ երկու վանկ պիտի կազմուի . այս-  
ինքն՝ առջի երկու բաղաձայնը զատ , եւ եր-  
րորդ բաղաձայնը յաջորդ ձայնաւորին հետ  
զատ . զոր օրինակ . Գն դա պե . Խա Գա Բիւն .  
Մը Գա նա :

Երկու բաղաձայն մէկէն իբր մէկ վանկ  
հնչելու կանոնը պէտք է պահել , մանաւանդ  
երբոր երկրորդ բաղաձայնը նայ գիր է : Նայ  
կըսուին հայերէն ( շ կամ ) շ , ճ , ն , ը , գիրե-  
րը . ինչպէս են սա բառերը . Տշայ . Սլա . Սմա .  
Գնել . Գրեմ .

Բ . ՈՒՂՂԱՍԱՑՈՒԹԻՒՆ

Ուղղասացութիւնը , ինչպէս ըսինք , գիրե-  
րուն կամ բառերուն հնչմանը վրայ կը խօսի :



Աս մասին համար շատ բան չենք կրնար ըսել : Հնչումը մինակ կենդանի ձայնով կրնանք սորվիլ . եւ ինչ որ ըսենք հնչման վրայ, մեր արդի հնչումներուն համեմատ պիտի ըսենք . բայց վարժապետներուն կենդանի բարբառը հարկար վարդապետութենէ աւելի դիւրաւ եւ աղէկ կրնայ սորվեցնել : Բայց թէ մեր արդի հնչումները բուն հայկական տառերուն հնչումներն են, թէ ժամանակը, ինչպէս ուրիշ շատ բան, աւ ալ այլայլած է, չենք գիտեր :

Յ, գիրը, թէպէտ բաղաձայն համարուած է, նոյն իսկ է ձայնաւորն է . եւ բառերուն սկիզբը ուրիշ ձայնաւորէ մը առաջ է ին տեղ կը դրուի . ինչպէս, Յովտ, Յիսուս, Յոնիա . փոխանակ, Իոտ, Իիսուս, Իոնիա : Ասոր համար ձայնաւորով սկսող գրերու վրայ 'Ինախդրի տեղ, կը դրուի :

Բայց մեր արդի արտաբերութեան մէջ բառին սկիզբը, ն հ կը հնչենք . ուստի կը գրենք յովտ, եւ կը հնչենք հովտ : Բառերուն մէջտեղը, ին իր բուն ձայնը կու տանք, ուստի հայել, ձայն, կայմ, կը հնչենք, հաիել, ձաին, կաիմ : Իսկ բառերուն վերջը երբեմն կը հնչուի, ինչպէս, Հայ, Բայ, շատ անգամ բնաւ չի հնչուիր . ինչպէս, Արքայ, Ընծայ, Ծառայ, Ընկալայ : Բայց, ին երբեմն հ ի հնչում ունենալուն նայելով անոր հետ լծորդ բռնելու չէ . հ ն հաղագ (ասբեցասեռն) է, եւ միշտ իր հաղագ այլին ձայնը կը պահէ . աւր յ է ձայնաւորն է, եւ բա-



Ժ  
ուին սկիզբը մինակ , ան ալ թերեւս մինակ մեր  
արտաբերութեանը մէջ , հի հնչման կը մօտենայ :

Ի , գիրը նախնեաց ուղղագրութեանը մէջ  
երբեմն է գրին տեղ կը դրուի . ուստի հին ձե-  
ռագրաց մէջ սովորական է տեսնել գրուած ,  
Հիւս-սոյ . Եթ-ովայւոյ : Ասոր համար է որ  
է ով վերջաւորուած բազմավանկ բառերուն մէջ  
է գիրը հոլովելու ատեն - ի կը փոխուի , ինչ-  
պէս , Գօտի , գօտւոյ . Եկեղեցի , եկեղեցւոյ .  
փոխանակ գրելու , Գօտիոյ , Եկեղեցիոյ :

Նոյն - գիրը եւ -՝ հին ուղղագրութեան  
մէջ շի հետ կը փոխուին , եւ մեր արդի արտա-  
բերութեան մէջ նոյն իսկ շին հնչումն ունին .  
Մեր բառերուն սկիզբը միշտ շէ , իսկ վերջը - ,  
Ո էն զատ , ուրիշ ձայնաւորէ մը ետքը շչի գար-  
ուստի միշտ գրելու է , ա- , ե- , ի- , փոխա-  
նակ՝ ալ , եվ , իվ : Իսկ բառերուն մէջտեղը  
վանկին սկիզբը լսկ - ի տեղ՝ կը դրուի - , ինչ-  
պէս , Պատիւ , պատուոյ . Թիւ , թուոյ . նոյն-  
պէս բաղաձայնի մը անմիջապէս քովը՝ շի տեղ  
- կը դրուի . ինչպէս , Ն-աճել . Լ-անամ .  
Խ-ել . Մ-ին . փոխանակ գրելու , Նվաճել .  
Լվանամ . Խվեմ . Սվին : Աս սկզբունքին հա-  
մեմատ է որ սովորութիւնը մեր արդի աշխար-  
հաբարին մէջ բայերուն կրաւորականները շի  
տեղ - ալ սկսաւ գրել տալ . ուստի հիմա կը  
գրենք . Գործուիլ . Մատնուիլ , եւայլն . առաջ  
կը գրէինք , Գործվիլ . Մատնվիլ :



Ստուգարանութիւնը, ինչպէս ըսինք, բա-  
ռերուն ծագմանը, ածանցմանը, բարդութեա-  
նը եւ ուրիշ փոփոխութիւններուն վրայ կը խօսի:

Եթէ հայերէն լեզուին ստուգարանական  
մասն աղէկ քննութեան առնուի, շատ հետա-  
քրքրական ծանօթութիւններէ զատ, դործնա-  
կանի համար, այսինքն մեր դիտնական կամ  
արուեստական բառեր շինելու կարօտութեանը  
մէջ՝ մեզի մեծ նպաստ եւ դիւրութիւն կը նայ  
մատակարարել: Բայց, թէ աս նպատակով, եւ  
թէ ընդհանրապէս հայերէն լեզուին գաղտնեա-  
ցը թափանցելու համար՝ Յունարէն լեզուին գի-  
տութիւնը՝ նախնեաց ընտիր թարգմանութիւն-  
ները բաղդատելու համար՝ առաջին հարկաւոր  
բանն է: «Նախնեաց դործքերուն լոկ մտադիր  
ընթերցմամբը հայերէնին ուսմանն ու կրթու-  
թեանը մէջ չափով մը յաջողութիւն ստանալ  
անկարելի չէ, բայց բոլոր բառերուն, զրուց-  
ուածներուն եւ լեզուին ոգւոյն կատարեալ հա-  
սու ըլլալու համար՝ նախնեաց ընտիր թարգմա-  
նութիւնները բնագիրներուն հետ բաղդատել  
ամենահարկաւոր է. մինակ սա կերպով հայե-  
րէն լեզուին գաղտնեացը հասնիլ եւ անոր բուն  
առջի յատկութիւններուն տիրել կարելի է: Ա-  
սոր համար մեր ոսկի դարուն մատենագրու-  
թեանը մեծաւ մասամբ՝ ստար լեզուներէ թարգ-  
մանութիւն ըլլալը թէպէտ մէկ կողմանէ ցաւա-



ԺԲ  
լի է , բայց ատոր հակառակ կողմանէ ալ մեր  
բանասէրներուն բախտ կրնանք համարիլ , քան  
զի ան թարգմանութեանց ձեռքովը լեզուին  
ծածուկներուն եւ հնութիւններուն մէջ կրնան  
մտնել»\* :

Մենք հոս լեզուին վրայ մասնաւոր ստու-  
գարանական դիտողութիւններ ընելու միտք  
չունինք . քանզի , ինչպէս առաջ ալ ըսինք , քե-  
րականական ուսման աս մասերուն վրայ մինակ  
հարեւանցի տեսութիւն մը տալ ուզեցինք : Հոս  
մինակ ստուգարանութեան վերաբերութիւն  
ունեցող քանի մը ընդհանուր սկզբունքներ յի-  
շենք :

Արձառ . Ամատ կ'ըսուին լեզուի մը նախ-  
նական բառերը , որոնցմէ ուրիշ բառեր կ'ա-  
ծանցին կամ կը բարդուին . ուստի Գիւր , բառը  
հայերէն արմատ բառ է , որմէ կ'ելլեն , գրեճ ,  
գրասոր , գրեան , անգիր , գրել , ածանցները ,  
մատենագիւր , պատմագիւր , Գրասէր , բարդերը :

Ածանց . Ածանց կ'ըսուին ան բառերը ո-  
րոնք արմատին վրայ գիր կամ մասնիկ աւելցը-  
նելով շինուած են . ինչպէս են վերի , գրեճ ,  
գրասոր , գրեան , անգիր , գրել , բառերը , որոնց  
ամենն ալ Գիւր արմատին ածանցներն են :

Ածանց շինելու համար արմատին վրայ ա-  
ւելցուած գիրեր կամ մասնիկներ՝ ածանցական

\* Բողոքածոյք 'ի Թարգմանութեանց նախնեաց հանդէսի Յոյն  
Բնագրատ . Յառաջարանին մէջ . Տպ . Վիւնն . 1849 .



դիր կամ մասնիկ կը կոչուին . ուստի , առ , ա-  
հան , եղէն , ահ , իհ , եւ ուրիշ շատեր , հայերէն  
ածանցական մասնիկներ են :

Ածանցական դիր կամ մասնիկ մը ոչ մի-  
այն բառին վերջը , այլեւ սկիզբը կրնայ յարիչ ,  
ինչպէս , ահ , ա , դժ , որոնք բացասութիւն կամ  
հակասութիւն կը ցուցնեն . զոր օրինակ . Մահ ,  
անմահ . Գիր , անգիր . Գեղ , արգեղ . Քուն ,  
արքնել . Գին , արժգին . Կամք , արժկամակ :

Ածանցական մասնիկները նշանակութիւն  
ունեցող բառեր չեն . բայց ամեն մէկը արմա-  
տական բառին վրայ մասնաւոր գաղափար կամ  
խմաստ մը կ'աւելցնէ . զոր օրինակ , առ մաս-  
նիկը՝ ստացման գաղափար կու տայ . ինչպէս ,  
Զօր , զօրա-առ . Բան , բանա-առ . առ-առ՝ առատու-  
թեան կամ յաճախութեան գաղափար . ինչ-  
պէս , Աւազակ , աւազակ-առ . Տիղմ , տղմ-առ .  
ահան՝ վերաբերութիւն . ինչպէս , Աստուած ,  
աստուածահան . ոչ կամ անոչ՝ տեղւոյ կամ ըն-  
դունակութեան . ինչպէս , Գպիր , գպրոյ . Ժո-  
ղովուրդ , ժողովրդանոց . եղէն՝ էութեան կամ  
նիւնոյ գաղափար . ինչպէս , Ոսկի , ոսկեղէն .  
Քար , քարեղէն . իհ , ահ կամ եահ՝ նուազու-  
թեան կամ փոքրկութեան գաղափար . ինչ-  
պէս , Հաց , հացեհ . Օղ , օղահ . Որդի , որդ-  
եահ . եւ ուրիշ այլեւայլ մասնիկներ՝ այլեւայլ ի-  
մաստ կամ գաղափար կու տան :

Գարձեալ ածանցական մասնիկները ոչ մի-  
այն բառին յարաբերութիւնը կը փոխեն , այլ



ԺԴ  
Եւ անոր բնութիւնը կը փոխեն . զոր օրինակ՝  
ածանցական մասնիկ կայ՝ որ բառը գոյական  
կ'ընէ , ինչպէս են ուրիշն , ուժն . կայ՝ որ ածա-  
կան կ'ընէ , ինչպէս , աւոր , եղէն , աչան . կայ՝  
որ բայ կը շինէ , ինչպէս են , էմ , իմ , ամ , ում ,  
մասնիկները . վերջապէս կայ որ մակբայ կ'ընէ ,  
ինչպէս են , պէս , բար : Ածանցներ ամեն լեզ-  
ուի մէջ առատ են , հայերէնն առ մասին ամե-  
նէն հարուստներէն մէկն է : Բայց ածանցա-  
կան մասնիկներն , ինչպէս ըսինք , իւրաքանչիւր  
մասնաւոր իմաստ կամ գաղափար տալու յա-  
տուկ ըլլալուն համար՝ անոնց զօրութեանը կամ  
արժէքին աղէկ թափանցել պէտք է :

Բարդ . Բարդ կ'ըսուին ան տեսակ բառեր  
որոնք երկու արմատ բառէ շինուած են , զոր օ-  
րինակ , Տնտես , փռն եւ փէս բառերէն . Մըշ-  
տաբուխ , Դշտ եւ Բուխ բառերէն . Արակետդ ,  
կրակ եւ Էփդ (տեղի) բառերէն , եւ ուրիշ ասոնց  
նմաններ :

Բարդութեանց մէջ ալ բառերն իրենց յա-  
րաբերութիւնը կամ պաշտօնը կը փոխեն . եւ  
բարդ բառին տալու իմաստը՝ բառը կազմող մա-  
սերուն դիրքէն կախում ունի : Զոր օրինակ ,  
հայերէն բարդութեանց մէջ գրեթէ առհասա-  
րակ առջի բառը խնդիր կամ վերադիր է , երկ-  
րորդը խնդրառու կամ վերադրեալ : Առտի եւ  
աս կանոնով պէտք է որ առջի բառը կամ յատ-  
կացուցչի , կամ սեռի խնդրոյ , կամ բնութեան  
խնդրոյ մը , կամ ածականի մը , եւ կամ վեր-



Չապէս մակբայի մը զօրութիւն ունենայ : Իսկ երկրորդ բառը գոյականի այսինքն յատկացեալի մը , ածականի մը , կամ բայի մը զօրութիւն :

Օրինակի համար , Արտայորդէ , զօրագլուխ , բարդերուն մէջ առջի բառերը արտայ , զօրդ , յատկացուցչի զօրութիւն ունին , վերջինները յատկացեալի . ուստի եւ արտայի որդէ , զօրաց գլուխ , կը նշանակեն : Աստեասակ բարդեր գոյական են :

Ոստատիտ , արեւեակաւոր , բարդերուն մէջ առջի բառերը խնդիր են , վերջինները խնդրառու ածական . ուստի՝ Խիտ ոստով , Ըտտեակ 'ի արեւոց , կը նշանակեն : Ասոնք ածական են :

Եղբայրասէր , Իրասագէտ , Տաքեհագիր , բարդերուն մէջ՝ առջի բառերը սեռի խնդրոյ մը , վերջիններն ալ ներգործական բայի մը զօրութիւնն ունին . ուստի կը նշանակեն , որ սիրէ զեղբայր , որ գիտէ զիրասանս , որ գրէ Տաքեանս : Ասոնք թէ իբր ածական եւ թէ իբր գոյական կը գործածուին :

Վշտահար , Կօշտակէզ , սորսմուտ , ամբագնաց , բարդերուն մէջ՝ առջի բառերը բնութեան խնդրոյ մը , եւ վերջինները չէզոք կամ կրաւորական բայի մը զօրութիւնն ունին . ուստի կը նշանակեն , որ հարեակ է՛ի Վշտաց , որ հեղու 'ի Կօշոց , որ Տաանէ 'ի սորս , որ գնաց ընդ ամպս : Ասոնք թէ իբր ածական եւ թէ իբր մակբայ կը գործածուին :

Արագագիր , յամբագնաց , Ծարարախօս , բարդ



դերուն մէջ առջի բառերը մակբայ են , վերջինները բայի զօրութիւն ունին . ուստի եւ կը նշանակեն , որ Գրէ արագ , որ Գնայ յաճ , որ Խօսէ ճարար : Ասոնք թէ իբր ածական եւ թէ իբր գոյական կը գործածուին :

Կան տեսակ մը բարդ բառեր ալ որոնց առջինը երկրորդին ածականն է . զոր օրինակ . Քաջասիրտ , Հասարակուն , Ժրագլուխ . իբր քաջ սիրտ ունեցող , վատ անուն ունեցող , ժիր գլուխ ունեցող : Աս տեսակ բարդութիւնը քիչ է ընտիր հեղինակաց մէջ , ուստի եւ աս տեսակ բարդութիւններ շինելու մէջ զգոյշ ըլլալու է : Ասոնք թէ իբր ածական եւ թէ իբր մակբայ կը գործածուին :

Նեղուի մը մէջ արդէն եղած ածանցական մասնիկներէն կամ գիրերէն զատ՝ ուրիշ ածանցական գիր կամ մասնիկ չի կրնար ստեղծուիլ , բայց եղածներուն նմանութեամբը ուրիշ ածանցներ շինել ներելի է :

Իսկ բարդ շինելու յարմարութիւն ունեցող լեզուներու մէջ , ինչպէս հայերէնն է , կրնան արդէն եղածներէն զատ բարդ բառեր շինուիլ . բայց զգոյշ ըլլալու է որ աս ազատութիւնը զեղծման չզառածի . քանզի կրնան անխմաստ եւ անյարիր բարդեր շինուիլ , որոնք լեզուին մէջ առաւելութիւն մը ըլլալու տեղ՝ ապականութիւն կրնան ըլլալ : Ընդհանրապէս , մինչեւ որ բացարձակ հարկ եւ կարեւորութիւն չտեսնուի , ածանց կամ բարդ շինելու ձեռնա-



մութիւն ըլլալու չէ: Անոնք որ լեզուին մէջ գտնուած բառերը գործածել չգիտնալով՝ նոր բառեր շինելու կ'ելլեն, լեզուին տգէտ ըլլալնին կը յայտնեն:

ԼԺՊԳ. ԼԺՊՐԴ կ'ըսուի ան բառը որ ուրիշի մը հետ միեւնոյն է, թէեւ ուրիշ գիրերով գրուած ըլլայ: Հայերէնի մէջ Գ եւ Կ, Դ եւ Ծ, Զ եւ Ծ, Գիրերը լԺՊՐԴ են. կան բառեր որոնք աս գիրերուն երկուքովն ալ գրուած են, թէպէտ միշտ մէկը աւելի ընտրելի է:

Երկու լեզուի մէջ ալ լԺՊՐԴ կրնան ըլլալ. ինչպէս որ Հայերէնն ու հին Պարսկերէնն իրարու հետ անհամար լԺՊՐԴ բառեր ունին. ինչպէս, ԹԷՃ, թաղ, Սեփեյ, սպիտակ, Չերաղ, ճրագ, եւ ուրիշ շատեր:

Հոմանուն կամ նոյնանշան. Հոմանուն կամ նոյնանշան կ'ըսուին ան բառեր՝ որոնք գրեթէ միեւնոյն բանը կը նշանակեն. զոր օրինակ, Հովանի եւ սպուտ, պարու եւ մրր, աղաթել եւ փրփել, հոմանուն են, քանզի, գրեթէ միեւնոյն բանը կը նշանակեն: Հոմանունները որչափ նոյնանշան ըլլան, միշտ իրարմէ տարբերութեան կէտ մը ունին, այնպէս որ երկու հոմանուն միշտ եւ ամեն կողմանէ իրարու տեղ անխափր գործածել անկարելի է: Մէկ առմամբ նոյն կրնան ըլլալ, բայց ուրիշ առմամբ իրարմէ երթալով կը հեռանան: Եթէ գտնուին անանկ հոմանուն բառեր որոնք ըստ ամենայն մասին միեւնոյն ըլլան, լեզուի մը շատ առաւելութիւն



ԺԸ  
չեն : Աեզուի մը առաւելութիւնն ան է որ , ա-  
մեն բառ իր յասակ գտողափարը կամ իմաստն  
ունենայ , թէեւ ուրիշ բառի մը հետ ալ ու-  
րիշ բան մը նշանակելու կրնայ զուգընթանալ :  
Առած է թէ « Աեզուի մը մէջ հոմանուն ըլլալու  
չէ » :

Հայերէնի մէջ շատ մը բառերու տարտամ-  
եւ անորոշ կերպով գործածուելը , շատերուն  
ալ իբր նոյնանշան բնաւ չգործածուելով բառա-  
րաններուն էջերը մինակ լեցնելն անոր համար  
է , որ բառերուն նշանակութիւնները եւ անոնց  
ամեն առումները տակաւին ճշդիւ ճանչցուած  
չեն :

Շատ հասարակ բառեր կան որոնք կը կար-  
ծուին թէ միեւնոյն բանն են , բայց անոնց գոր-  
ծածութեանը մէջ տարբերութիւն կայ . զոր օ-  
րինակ , Արտայ եւ Թագաւոր բառերը միեւնոյն  
բանը կը նշանակեն , բայց գործածութեան մէջ,  
« արտ » իբր տխողոս կը գործածուի . ուստի կ'ը-  
սենք , Արքայ Սողոմոն , Արքայ Դաւիթ , Շապ-  
հոյ արքայից արքայի , յաւուրս Տրդատայ ար-  
քայի , Արքայ , յաւիտեան կեայ , Արքայդ-  
Հայոց , Հրաման տուր , արքայ , եւայլն : Իսկ  
թագաւոր՝ իբրեւ գոյական անուն՝ հասա-  
րակ եւ պատմական խօսքերու մէջ կը գործած-  
ուի . Բարկացաւ թագաւորն . Յետ Աղեքսանդ-  
րի Մակեդոնացւոյ թագաւորք յԵգիպտոս որ  
դի 'ի հօրէ առնուին զթագաւորութիւնն : Ա-  
ծե՛մ եւ Բեբե՛մ , միեւնոյն նշանակութիւնն ունին :



բայց շատ տարբեր պարագաներով կը գործած  
ուին . Աժէշ կ'ըսենք ան բաներուն համար որոնք  
իրենց ուղքովը կրնան գալ . Աժի զորդի իմ . Ա-  
ժին զնա մինչեւ յարտեւան լերինն . Աժին զնա  
առ Պիլատոս . Աժին զյաւանասին . Աժէք զեզնն  
պարարակ , եւ այլն : Իսկ Բեբէշ կ'ըսուի ան որ  
ինքնիրեն չի կրնար գալ . Հրամայեաց բերել  
զգլուխ նորա . Բերէք ինձ գահեկան մի . Բեր  
զմատունս քո : Գարձեալ կրնանք ըսել , Աժել  
դօտի . Աժել ցանկ , իբր պատել . բայց բերել  
աս մտօք չենք կրնար գործածել . ասոր հակա-  
ռակ կ'ըսենք . Բերել պտուղ . Բերել փուշ եւ  
տատասակ . բայց չենք կրնար ըսել , Աժել պտուղ .  
Աժել փուշ , եւ այլն :

Այսպէս ամեն բառ իր յատուկ առումն  
ունենալու է եւ ունի , միայն թէ պէտք է որ ա-  
ռումները որոշ ճանչցուին :

**ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ**

Տաղաչափութիւնը , ինչպէս ըսինք , քանի  
մը լեզուաց մէջ առողանութեան օրէնքներուն  
վրայ հիմնուած ըլլալուն համար , քերականու-  
թեան կամ լաւ եւս ըսենք , քերականական  
արուեստին մասը համարուած է :

Մեր լեզուին մէջ տաղաչափութիւն չկայ ,  
ոչ հին ատենը եւ ոչ հիմա : Մեր ոտանաւորը  
յանգ է . իսկ 'նախնիք' հին Հայոց վիպասաննե-  
րուն քանի մը հատակոտորներէն զատ՝ մեզի  
ուրիշ քերթուած մը չթողուցին . իսկ հին հա-



Խ  
տակրատորներուն մէջ Յունաց եւ Ատախնացւոց  
պէս չափական արուեստ մը չինչմարուիր , ոչ ալ  
յանգ , որ ան երգերուն նայելով շատ նոր է եւ  
Արաբացիներէն մեզի մտած է :

Մեր թարգմանիչներն , ըսել կ'ուզենք , ա-  
մենէն հին եւ ամենէն ընտիրները , թէ արդեօք  
ուսանաւորի փորձ ըրին թէ ոչ , շենք գիտեր .  
մինակ հին քերականութեան մը մէջ բաւական  
դժուշաւոր գրչէ մը Համերոսէն քանի մը տողեր  
թարգմանուած գանուած են , ուր թարգմա-  
նիչը թերեւս Յունական չափը հայերէնի մէջ ալ  
մուծանելու փորձ մը ընել ուզած է , բայց , ինչ-  
պէս որ ան տողերը յառաջ բերողն\* աղէկ ըսած  
է , հայ ականջներ անկէ բան մը չեն խմանար .  
Յիշեալ տողերն ասոնք են .

Ինձ բնաւ ես ոչ դու իրիք սլատճառք , արեւ , այլ  
Աստուածք :

ԶՆեատոր ոչ խարեաց խօշիւն թէպէտ եւ յուճալ  
էր :

Պատրոկղէ ինձ հիքիս կարի յոյժ սիրեցեալ ան-  
ձին :

Մեր հին վիպասանաց երգերուն հատակո-  
տորները զորս Խորենացին եւ Մագիստրոս մե-  
զի կ'աւանդեն , եւ որոնց լեզուն , ճաշակն ու  
ոգին գրեթէ միեւնոյն է , թէպէտ ոչ չափական  
արուեստ , ոչ ալ յանգ ունին , սակայն չի կրնար

---

\* Քերականութիւն Գաղղիական 'ի Հ . Արսէն վարդա-  
պետէ Անթիստեան . 'ի Ա հնէտ . 1821 : Տես էջ 546 .



ուրացուիլ թէ իրենցմէ ետքը ամենէն հին արեւ-  
 ձակ հայերէն լեզուէն, որ է թարգմանչաց լե-  
 զուն, զգալի կերպով կը տարբերին: Արդեօրուն  
 ու թարգմանչաց լեզուին մէջ եղած տարբերու-  
 թիւնը՝ լեզուի տարբերութիւն չէ այլ ձեւոյ մը,  
 յորում երգերուն բանաստեղծական արուես-  
 տը կը կայանայ:

Արդեօրուն լեզուն թարգմանչաց լեզուին  
 հետ չըսենք խնամութիւն, այլ ան աստիճան  
 ազգականութիւն ունի, որ ամենէն խիստ եւ  
 կորովի բանասիրական հայեցումներ ան եր-  
 կուքին մէջ ուրիշ բան չեն կրնար նշմարել բայց  
 միեւնոյն արիւնք եւ միեւնոյն ոսկրներ:

Սակայն մաքուր եւ կոյս բառերու, կար-  
 դի ընտրութեան եւ համաձայնութեան կանոն-  
 նաւորութեանը վրայ, որոնք երկուքին մէջ ալ  
 հաւասար կը փայլին, եւ իրարու անարատու-  
 թեանը փոփոխակի ապացոյց են, երգիչները  
 տեսակ մը կրկնում ունին, որ միօրինակ կանոն-  
 նաւոր, եւ հատակոստորներուն քիչութեանը  
 նայելով յաճախ ըլլալուն համար՝ իրաւունք կու  
 տայ ըսելու թէ դիտմամբ եղած կրկնում մըն  
 է, եւ թերեւս մեր հին բանաստեղծութեան  
 բոլոր արուեստը՝ ան տողերուն շղթայի մը օղե-  
 րուն պէս իրարու անցած ըլլալուն վրայ կը կա-  
 յանայ. « անանկ որ աս աստիճանաւ ար կարգա-  
 ւորութեամբ կապակցեալ խօսքերը, կարծես թէ  
 կոհակաձեւ ետեւէ ետեւ կը ծփան, ու իրազ  
 դէպ աւաճ կը քչեն՝ մինչուկ որ որոշեալ ամ- »



ԻՔ

բողջութեան մը հասնին օ՞ :

Ահա մեր վիպասանաց երգերուն հատա-  
կատորները :

Երկներ երկին եւ երկիր ,

Երկներ եւ ծիրանի ծով .

Երկն 'ի ծովուն ունէր զկարմրիկ եղէգնիկն ,

Ընդ եղեգան փող ծուխ ելանէր ,

Ընդ եղեգան փող բոց ելանէր ,

Եւ 'ի բոցոյն պատանեկիկ վազէր .

Նա հուր հեր ունէր ,

Ապա թէ բոց ունէր մօրուս՝

Եւ աշխուքն էին արեգակունք ,

Խոր .

Ուրիշ հատակոտոր մը .

Հեծաւ արի արքայն Արտաշէս 'ի սեան գեղե-  
ցիկ ,

Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն ,

Եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գեան ,

Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝

Ընկէց 'ի մէջք օրիորդին Ալանաց ,

Եւ շատ ցաւեցոյց զմէջ փափուկ օրիորդին ,

Խոր .

Ուրիշ մը .

Եղ .	Բ .	Թող ուս	Հան ուս
	Գ .	Թող ու	Հան ու

	Ա .	Թող ումք	Հան ումք
Յ* .	Բ .	Թող ուք	Հան ուք
	Գ .	Թող ուն	Հան ուն

Սահ . Անկապար .

	Ա .	Թող ուի	Հան ուի
Եղ .	Բ .	Թող ուիր	Հան ուիր
	Գ .	Թող ոյր	Հան ոյր

	Ա .	Թող ուաք	Հան ուաք
Յ* .	Բ .	Թող ուիք	Հան ուիք
	Գ .	Թող ուին	Հան ուին

Սահ . Կապարէալ .

	Ա .	Թող ի	Հան այ
Եղ .	Բ .	Թող եր	Հան ար
	Գ .	Թող , էթող	Հան աւ

	Ա .	Թող աք	Հան աք
Յ* .	Բ .	Թող էք	Հան այք
	Գ .	Թող ին	Հան ան

Սահ . Ապարանի .

	Ա .	Թող ից	Հան այց
Եղ .	Բ .	Թող ցես	Հան ցես
	Գ .	Թող ցէ	Հան ցի

	Ա .	Թող ցուք	Հան ցուք
Յ* .	Բ .	Թող ջիք	Հան ջիք
	Գ .	Թող ցեն	Հան ցին

Հրամ . Եղանակ .

Եղ .	Բ .	Թող մի Թող ուր	Հան իր մի Հան ուր
------	-----	-------------------	----------------------

Յ* .	Բ .	Թող էք մի Թող ուք	Հան արուք մի Հան ուք
------	-----	----------------------	-------------------------



Գէճ . Ստոր . Եղանակ .

Եղ . Ա . Թող ուցում      Հան ուցում  
 Բ . Թող ուցուս      Հան ուցուս  
 Գ . Թող ուցու      Հան ուցու

Յ\* . Ա . Թող ուցումք      Հան ուցումք  
 Բ . Թող ուցուք      Հան ուցուք  
 Գ . Թող ուցուն      Հան ուցուն

Անէրեայի Եղանակ . Թող ուլ      Հան ուլ  
 Անցեալ Ընդունել . Թող եալ      Հան եալ  
 Ադաունի Ընդունել . Թող լոց      Հան լոց

Ասոր պէս կը խոնարհին հետեւեալ բայերը .

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ

Արգելում  
 Հեղում

Ձղենում  
 Ընթեռնում

ՉԷՁՈՒՅ

Չրօնում

Յենում

120 . Աս լծորդութեան Ա . ձեւին տակ դացող բայերուն ալ արմատը կատարեալին երրորդ դէմքն ու հրամայականն է :

121 . Աս բայերուն ալ բաղաձայնով սկսող միավանկներուն կատարեալ եզակի երրորդ դէմքին վրայ է գիրը կ'աւելնայ . զոր օրինակ . Թողում , կտր . Եթող . հեղում , կտր . Եհեղ : Իսկ \* գիրով սկսող միավանկներուն վրայ է գիրը կ'աւելնայ . զոր օրինակ . առնում , էառ : Բայց բազմավանկներուն , եւ \* էն զատ ուրիշ ձայնաւորով սկսող միավանկներուն վրայ գրի յաւելուած չըլլար . ուստի չըսուիր , յաւելում , էյաւել . արգելում , էարգել , ընկենում , էընկէց :

122 . Աս լծորդութեանն \* մերջաւորում .



Ներէն ոմանց և գիրը՝ արմատական ժամանակ-  
ներուն , այսինքն՝ հասարեալին , ապատեանցն , հը-  
րամայականն ու անցեալ ընդունելութեան մէջ ց ի կը  
փոխուի . զոր օրինակ . ըստ , լցե , լցեց , լեց ,  
լցեալ . խնտ , խցե , խցեց , խեց , խցեալ . ընկե-  
նտ , ըկեցե , ըեկեցեց , ընկեցեալ . քանզի ա-  
սոնց արմատներն են , լեց , խեց , ընկեց : Նոյն-  
պէս զգե՞նտ , կ'ըլլայ զգեցայ , զգեցայց , զգե-  
ցիր , զգեցեալ . ընթե՞նտ , ընթերցայ , ըն-  
թերցայց , ընթերցիր , ընթերցեալ . յե՞նտ , յե-  
ցայ , յեցայց , յեցիր , յեցեալ :

123 . Ընկենում բային հրամայականը կ'ըլ-  
լայ ընկեա :

124 . Առնո՞ճ եւ զքօսնո՞ճ բայերն ալ և գի-  
րը արմատական ժամանակներուն մէջ կը կոր-  
սընցնեն , զոր օրինակ . առնո՞ճ , կտր . առի ,  
ապռ . առից . հրմ , առ , անց . ընդ . առեալ .  
զքօսնո՞ճ , կտր . զքօսայ , ապռ . զքօսայց , հրմ .  
զքօսից , անց . ընդ . զքօսեալ :

### ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ԿՐԱԻՈՐԱԿԱՆԸ

125 . Ինչպէս օրինակներուն մէջ կը տեսնուի ,  
ամեն լծորդութեան տակ ներգործական բայեր  
կը գտնուին :

Արդ , ներգործական բայերը կրաւորական  
ընել խիստ դիւրին է , եթէ հետեւեալ դիտ-  
ղութիւնները միտք առնուին :

126 . Ա . Գիտողութիւն . Առաջին լծորդու-  
թեան , այսինքն՝ է՛ճ եւ անէ՛ճ վերջաւորուած ներ-



դործական բայերուն կրաւորականները՝ Երկ-  
րորդ լծորդութեան, այսինքն՝ խօսիմ եւ ուսանիմ  
ին պէս կ'ըլլան. ուստի թող աշակերտը սիրէ՞ր  
սիրիմ ընելով՝ խօսիմին պէս խոնարհէ. Հաստանիմ  
ալ հաստանիմ ընելով՝ ուսանիմին պէս խոնարհէ.  
զոր օրինակ. Սիրիմ, սիրեցայ, ասիրեցայ, սիր-  
եաց, սիրիցիմ. Հաստանիմ, հաստաց, հաստացայ, հա-  
ստիր, հաստասանիցիմ: Բայցդ աստէ խօսիմ եւ ուսանիմը:

127. Բ. Գիտողութիւն. Երկրորդ լծորդու-  
թեան, այսինքն՝ իմ եւ անիմ վերջաւորուած բա-  
յեցուն կրաւորականը ներդործականին հետ մի  
եւ նոյն է. ուստի խօսիմ, խօսեցայ. Ուսանիմ,  
ուսաց, եւ այլն, թէ կը խորհիմ, խորհեցայ. կը  
սորվիմ, սորվեցայ. եւ թէ կը խորհուիմ, խոր-  
հուեցայ. կը սորվուիմ, սորվուեցայ, կը նշա-  
նակեն:

128. Գ. Գիտողութիւն. Երրորդ լծորդու-  
թեան ամ վերջաւորուածներուն, զոր օրինակ՝ աղամ  
ին, կրաւորականը, նոյն լծորդութեան անամ վեր-  
ջաւորուածներուն, այսինքն՝ Սքանամին պէս կ'ըլ-  
լայ. զոր օրինակ. Աղամ, աղացի, աղացայ, աղա-  
ցայ, աղացից, աղալ, աղացեալ, աղալոյ: Բայց  
դ աստէ Սքանամը: Մինակ ստորադասականը այ-  
ցիմ կ'ըլլայ. զոր օրինակ. աղացիմ, աղացիեա,  
աղացից, եւ այլն:

129. Իսկ անամ վերջաւորուածներուն, զոր  
օրինակ. Սքանամին, կրաւորականը ներդործա-  
կանին հետ մի եւ նոյն է. ուստի ստանամ, ստա-  
ցայ, ստացից, եւ այլն, թէ կը ստանամ, ստա-



ցայ . եւ թէ կը ստացուիմ , ստացուեցայ , կը նշանակեն :

Ասոնց ալ ստորադասականները կրաւորականին մէջ աչիճ կ'ըլլան . ուստի կրաւորականին համար պէտք է ըսել . ստորադասական , ստանաչիճ , ստանաչիս , ստանաչի , եւ այլն :

130 . Դ . Դիտողութիւն . Չորրորդ լծորդութեան Ա . ձեւին , զոր օրինակ . Թողոճին կրաւորականը՝ նոյն լծորդութեան Բ . ձեւին պէս կ'ըլլայ . եւ ինչպէս օրինակներէն կը տեսնուի , տարբերութիւնը մինակ արմատական ժամանակներուն մէջ է . ուստի Թողոճին կրաւորականն է . թողոճ , թողոտ , թողայ , թողայց , թողէր , թողոցոճ , թողու , թողեալ , թողչ :

Բաղդատէ Հանոճը :

131 . Իսկ ոճ վերջաւորուած Բ . ձեւին , այսինքն՝ Հանոճին կրաւորականը ներգործականին հետ մի եւնոյն է . ուստի Չղենոճ , զղեցոյ , զղեցէր . թէ կը հագնիմ , հագայ , հագիր . եւ թէ կը հագնուիմ , հագնուեցայ , հագնուէ , կը նշանակեն :

ԲԱՅԵՐՈՒՆ ՍՆԿԱՆՈՆ ԿԱՄ ԶԱՐՏՈՒՂԻ  
ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

132 . Վերի խոնարհմանց պատկերները կանոնաւոր խոնարհման ձեւ են . բոլոր կանոնաւոր բայեր անոնց պէս կը խոնարհին :

133 . Բայց կան բայեր որոնք գլխաւորաբար արմատական ժամանակներուն մէջ կանոնաւոր



ճևւ էն սարքեր խանարհում ունին . զոր օրինակ .  
 ճանաչե՛մ , կատր . ճանաչեցի , հրմ . ճանաչեա ,  
 ըսուելու անդ , ժանեաց , ժանեք , կ'ըսուի : Աոյն .  
 պէս Գնե՛մ , դնեցի կամ դրեցի , դրեա , ըսուելու  
 անդ , Եղի , դեր , կ'ըսուի :

Հաւ աշակերտաց դիւրութեանը համար զար-  
 տալի բայերու աղիւսակ մը կը դնենք , որուն  
 մէջ անոնց զարտուլի ժամանակներն ամբողջ  
 գրուած են . իսկ կանոնաւոր ժամանակներուն  
 մինակ աւալին դէմքը նշանակուած է :

Ների	Անեմ	Աեմ	Գիտեմ	Գնեմ
Անի	Անեի	Աեի	Գիտեի	Գնեի
Սահ . կարգ .	Արարի	Ասացի	Գիտացի	Եղի
	Արարեր	Ասացեր	Գիտացեր	Եղեր
	Արար	Ասաց	Գիտաց	Եղ
	Արարաք	Ասացաք	Գիտացաք	Եղաք
	Արարէք	Ասացէք	Գիտացէք	Եղէք
	Արարին	Ասացին	Գիտացին	Եղին
Սահ . լից .	Արարից	Ասացից	Գիտացից	Եղից
	Արասցես	Ասասցես	Գիտասցես	Գիցես
	Արասցէ	Ասասցէ	Գիտասցէ	Գիցէ
	Արասցուք	Ասասցուք	Գիտասցուք	Գիցուք
	Արասցիք	Ասասցիք	Գիտասցիք	Գիցիք
	Արասցեն	Ասասցեն	Գիտասցեն	Գիցեն
Վրա .	Արա	Ասա	Գիտա	Գիլ
	մի Անեք	մի Աեք	մի Գիտեր	մի Գներ
	Արարէք	Ասացէք	Գիտացէք	Գիլք
	մի Անե՛ք	մի Աե՛ք	մի Գիտե՛ք	մի Գնե՛ք
Սահ .	Անիցեմ	Աեցեմ	Գիտցեմ	Գնցեմ
Անե .	Անել	Աել	Գիտել	Գնել
Լից .	Արարեալ	Ասացեալ	Գիտացեալ	Եղեալ
Լից .	Անելոց	Աելոց	Գիտելոց	Գնելոց



Ներսիս	Ըմպեմ	Լսեմ	Կարեմ	Ճանաչեմ
Անի	Ըմպէի	Լսէի	Կարէի	Ճանաչէի
Սահ. Կարգ.	Արբի	Լուայ	Կարացի	Ծանեայ
	Արբեր	Լուար	Կարացեր	Ծանեար
	Արբ, էարբ	Լուաւ	Կարաց	Ծանեաւ
	Արբաք	Էլուաք	Կարացաք	Ծանեաք
	Արբէք	Լուայք	Կարացէք	Ծանեայք
	Արբին	Լուան	Կարացին	Ծանեան
Սահ. Լայն.	Արբից	Լուայց	Կարացից	Ծանեայց
	Արբցես	Լուիցես	Կարացես	Ծանիցես
	Արբցէ	Լուիցէ	Կարացցէ	Ծանիցէ
	Արբցուք	Լուիցուք	Կարացցուք	Ծանիցուք
	Արբջիք	Լուիջիք	Կարացջիք	Ծանիջիք
	Արբցեն	Լուիցեն	Կարացցեն	Ծանիցեն
Սահ.	Արբ	Լուր	Կարողէր	Ծանիր
	մի Ըմպեր	մի Լսեր	եայլի	մի Ճանաչեր
	Արբէք	Լուարուք		Ծանիրուք
	մի Ըմպէք	մի Լսէք		մի Ճանաչէք
Ստոր.	Ըմպիցեմ	Լսիցեմ	Կարիցեմ	Ճանաչիցեմ
Անի.	Ըմպել	Լսել	Կարել	Ճանաչել
Ան. Ըն.	Արբեալ	Լուեալ	Կարացեալ	Ծանուցեալ
Այ Ըն.	Ըմպելոց	Լսելոց	Չէ+	Ճանաչելոց
Ներսիս	Մեղանչեմ	Յառնեմ	Ուտեմ	Յանցանեմ
Անի	Մեղանչի	Յառնի	Ուտի	Յանցանի
Սահ. Կարգ.	Մեղայ	Յարեայ	Կերայ	Յանցեայ
	Մղար	Յարեար	Կերար	Յանցեար
	Մեղաւ	Յարեաւ	Կերաւ	Յանցեաւ
	Մեղաք	Յարեաք	Կերաք	Յանցեաք
	Մեղայք	Յարեայք	Կերայք	Յանցեայք
	Մեղան	Յարեան	Կերան	Յանցեան
Սահ. Լայն.	Մեղայց	Յարեայց	Կերայց	Յանցեայց
	Մեղիցես	Յարիցես	Կերիցես	Յանցիցես
	Մեղիցէ	Յարիցէ	Կերիցէ	Յանցիցէ
	Մեղիցուք	Յարիցուք	Կերիցուք	Յանցիցուք
	Մեղիջիք	Յարիջիք	Կերիջիք	Յանցիջիք
	Մեղիցեն	Յարիցեն	Կերիցեն	Յանցիցեն



Ման .	Մեղիք	Արի	Կեր	Յանցիր
	մի Մեղանչեր	մի Յառներ	մի Ուտեր	մի Յանցաներ
	Մեղարուք	Արիք	Կերայք	Յանցերուք
	մի Մեղանչէք	մի Յառնէք	մի Ուտէք	մի Յանցանէք
Սոր .	Մեղանչիցեմ	Յառնիցեմ	Ուտիցեմ	Յանցանիցեմ
Անէր .	Մեղանչէլ	Յառնէլ	Ուտէլ	Յանցանէլ
Ան . Ը .	Մեղուցեալ	Յարուցեալ	Կերեալ	Յանցուցեալ
Ար . Ը .	Մեղանչէլոյ	Յառնէլոյ	Ուտէլոյ	Յանցանէլոյ
Ների .	Մարթիմ	Երնչիմ	Թաքչիմ	Թուչիմ
Անի .	Մարթէի	Երնչէի	Թաքչէի	Թուչէի
Ման . Կար	Մարթայայ	Երկեայ	Թաքէայ	Թուեայ
	Մարթայար	Երկեար	Թաքեար	Թուեար
	Մարթայաւ	Երկեաւ	Թաքեաւ	Թուեաւ
	Մարթայաք	Երկեաք	Թաքեաք	Թուեաք
	Մարթայայք	Երկեայք	Թաքեայք	Թուեայք
	Մարթայան	Երկեան	Թաքեան	Թուեան
Ման . Ար	Մարթայայց	Երկեայց	Թաքեայց	Թուեայց
	Մարթասիս	Երկիցես	Թաքիցես	Թուիցես
	Մարթասցի	Երկիցէ	Թաքիցէ	Թուիցէ
	Մարթասցուք	Երկիցուք	Թաքիցուք	Թուիցուք
	Մարթասչիք	Երկիչիք	Թաքիչիք	Թուիչիք
	Մարթասցեն	Երկիցեն	Թաքիցեն	Թուիցեն
Ման .	Չի+	Երկիր	Թաքիր	Թուիր
		մի Երկնչեր	մի Թաքչեր	մի Թուչեր
		Երկերուք	Թաքերուք	Թուերուք
		մի Երկնչիք	մի Թաքչիք	մի Թուչիք
Սոր .	Մարթայցիմ	Երկնչիցիմ	Թաքչիցիմ	Թուչիցիմ
Անէր .	Մարթէլ	Երկնչէլ	Թաքչէլ	Թուչէլ
Ան . Ը .	Մարթայեւ	Երկուցեալ	Թաքուցեալ	Թուուցեալ
Ար . Ը .	Չի+	Երկնչէլոյ	Թաքչէլոյ	Թուչէլոյ
Ների .	Կորնչիմ	Հանգչիմ	Մատչիմ	Մարտնչիմ
Անի .	Կորնչէի	Հանգչէի	Մատչէի	Մարտնչէի
Ման . Կար	Կորեայ	Հանգեայ	Մատեայ	Մարտեայ
	Կորեար	Հանգեար	Մատեար	Մարտեար
	Կորեաւ	Հանգեաւ	Մատեաւ	Մարտեաւ
	Կորեաք	Հանգեաք	Մատեաք	Մարտեաք
	Կորեայք	Հանգեայք	Մատեայք	Մարտեայք
	Կորեան	Հանգեան	Մատեան	Մարտեան



Մահ . Ազգ	Կորեայց	Հանգեայց	Մառեայց	Մարաեայց
	Կորիցես	Հանգիցես	Մառիցես	Մարաիցես
	Կորիցե	Հանգիցե	Մառիցե	Մարաիցե
	Կորիցուք	Հանգիցուք	Մառիցուք	Մարաիցուք
	Կորիջիք	Հանգիջիք	Մառիջիք	Մարաիջիք
	Կորիցեն	Հանգիցեն	Մառիցեն	Մարաիցեն
Դրամ .	Կորիր	Հանգիր	Մառիր	Մարաիր
	մի Կորնջիք	մի Հանգչիք	մի Մառչիք	մի Մարանչիք
	Կորերուք	Հանգերուք	Մառերուք	Մարաերուք
	մի Կորնջիք	մի Հանգչիք	մի Մառչիք	մի Մարանչիք
Սոր .	Կորնջիցիմ	Հանգչիցիմ	Մառչիցիմ	Մարանչիցիմ
Աեբ .	Կորնջել	Հանգչել	Մառչել	Մարանչել
Այ . Ը .	Կորուսեալ	Հանգուցեալ	Մառուցեալ	Մարաուցեալ
Ադ . Ը .	Կորնջելոց	Հանգչելոց	Մառչելոց	Մարանչելոց
Ների .	Փախչիմ	Ընդունիմ	Ունիմ	Տանիմ
Աի .	Փախչի	Ընդ . շնի	Ունի	Տանի
Մահ . Լապր	Փախեայ	Ընկալայ	Կալայ	Տարայ
	Փախեար	Ընկալար	Կալար	Տարար
	Փախեաւ	Ընկալաւ	Կալաւ	Տարաւ
	Փախեաք	Ընկալաք	Կալաք	Տարաք
	Փախեայք	Ընկալայք	Կալայք	Տարայք
	Փախեան	Ընկալան	Կալան	Տարան
Մահ . Ազգ	Փախեայց	Ընկալայց	Կալայց	Տարայց
	Փախիցես	Ընկալիս	Կալիս	Տարցիս
	Փախիցե	Ընկալի	Կալի	Տարցի
	Փախիցուք	Ընկալցուք	Կալցուք	Տարցուք
	Փախիջիք	Ընկալջիք	Կալջիք	Տարջիք
	Փախիցեն	Ընկալցին	Կալցին	Տարցին
Դրամ .	Փախիր	Ընկալ	Կալ , կա	Տար
	մի Փախչիք	մի Ընդունիք	մի Ունիր	մի Տանիր
	Փախերուք	Ընկալարուք	Կալարուք	Տարէք
	մի Փախչիք	մի Ընդունիք	մի Ունիք	մի Տանիք
Սոր .	Փախչիցիմ	Ընդունիցիմ	Ունիցիմ	Տանիցիմ
Աեբ .	Փախչել	Ընդունիել	Ունիել	Տանիել
Ը . Ը .	Փախուցեալ	Ընկալեալ	Կալեալ	Տարեալ
Ադ . Ը .	Փախչելոց	Ընդունիելոց	Ունիելոց	Տանիելոց



Սահ . Կէի .

Գամ  
Գաս  
Գայ  
Գամք  
Գայք  
Գան

Երթամ  
Երթաս  
Երթայ  
Երթամք  
Երթայք  
Երթան

Լամ  
Լաս  
Լայ  
Լամք  
Լայք  
Լան

Կամ  
Կաս  
Կայ  
Կամք  
Կայք  
Կան

Սահ . Անի .

Գայի  
Գայիր  
Գայր  
Գայաք  
Գայեք  
Գային

Երթայի  
Երթայիր  
Երթայր  
Երթայաք  
Երթայեք  
Երթային

Լայի  
Լայիր  
Լայր  
Լայաք  
Լայեք  
Լային

Կայի  
Կայիր  
Կայր  
Կայաք  
Կայեք  
Կային

Սահ . Կարք .

Եկի  
Եկիր  
Եկն  
Եկաք  
Եկայք  
Եկին

Չոքայ  
Չոքար  
Չոքաւ  
Չոքաք  
Չոքայք  
Չոքան

Լացի  
Լացեր  
Լաց , ելաց  
Լացաք  
Լացեք  
Լացին

Կացի  
Կացեր  
Կաց , եկաց  
Կացաք  
Կացեք  
Կացին

Սահ . Ազո .

Եկից  
Եկեսցես  
Եկեսցէ  
Եկեսցուք  
Եկեսջիք  
Եկեսցեն

Երթայց  
Երթայցես  
Երթայցէ  
Երթայցուք  
Երթայջիք  
Երթայցեն

Լացից  
Լացցես  
Լացցէ  
Լացցուք  
Լացջիք  
Լացցեն

Կացից  
Կացցես  
Կացցէ  
Կացցուք  
Կացջիք  
Կացցեն

Սահ .

Եկ  
մի Գար  
Եկայք  
մի Գայք

Երթ  
մի Երթար  
Երթայք  
մի Երթայք

Լաց  
մի Լար  
Լացեք  
մի Լայք

Կաց  
մի Կար  
Կացեք  
մի Կայք

Սոր . Գայցեմ  
Աեր . Գալ  
Ան . Եկեալ  
Ան . Գալոց

Երթայցեմ  
Երթալ  
Երթեալ  
Երթալոց

Լայցեմ  
Լալ  
Լացեալ  
Լալոց

Կայցեմ  
Կալ  
Կացեալ  
Կալոց



Սահ. Ներհայ.

Կեամ  
Կեսս  
Կեայ  
Կեամք  
Կեայք  
Կեան

Տամ  
Տաս  
Տայ  
Տամք  
Տայք  
Տան

Այանում  
Այանու  
Եայն .

Երդնում  
Երդնու  
Եայն .

Սահ. Անի.

Կէի  
Կէիր  
Կեայր  
Կէօք  
Կէիք  
Կէին

Տայի  
Տայիր  
Տայր  
Տայօք  
Տայիք  
Տային

Այանուի  
Այանուիր  
Եայն .

Երդնուի  
Երդնուիր  
Եայն .

Սահ. Կարր.

Կեցի  
Կեցեր  
Եկեաց  
Կեցօք  
Կեցէք  
Կեցին

Ետու  
Ետուր  
Ետ  
Տուօք  
Ետուք  
Ետուք

Այանայ  
Այանար  
Այանա  
Այանօք  
Այանայք  
Այանան

Երդուայ  
Երդուար  
Երդուա  
Երդուօք  
Երդուայք  
Երդուան

Սահ. Ապր.

Կեցից  
Կեցցես  
Կեցցէ  
Կեցցօք  
Կեցջիք  
Կեցցեն

Տաց  
Տացես  
Տացէ  
Տացօք  
Տաջիք  
Տացեն

Այանայց  
Այանցես  
Այանցէ  
Այանցօք  
Այանջիք  
Այանցեն

Երդուայց  
Երդուցես  
Երդուցէ  
Երդուցօք  
Երդուիջիք  
Երդուիցեն

Սահ. մի.

Կեաց  
մի Կեար  
Կեցէք  
մի Կեայք

Տուր  
մի Տար  
Տուք  
մի Տայք

Այաիր  
մի Այանուր  
Այանրօք  
մի Այանուք

Երդուիր  
մի Երդնուր  
Երդուարօք  
մի Երդնուք

Սոր. Կեայցեմ  
Անի. Կեալ  
Անի. Կեցեալ  
Անի. Կեւոց

Տայցեմ  
Տալ  
Տուեալ  
Տաւոց

Այանուցում  
Այանուլ  
Այանուցեալ  
Այանուց

Երդնուցում  
Երդնուլ  
Երդուեալ  
Երդնուց



Ների.	Զարթնում	Ոսանում	Յամնում	Քաղցնում
Անի.	Զարթնուի	Ոսանուի	Յամնուի	Քաղցնուի
Սահ. Կարգ.	Զարթեայ	Ոստեայ	Յատեայ	Քաղցեայ
	Զարթեար	Ոստեար	Յատեար	Քաղցեար
	Զարթեաւ	Ոստեաւ	Յատեաւ	Քաղցեաւ
	Զարթեաք	Ոստեաք	Յատեաք	Քաղցեաք
	Զարթեայք	Ոստեայք	Յատեայք	Քաղցեայք
	Զարթեան	Ոստեան	Յատեան	Քաղցեան
Սահ. Ինք.	Զարթեայց	Ոստեայց	Յատեայց	Քաղցեայց
	Զարթիցես	Ոստիցես	Յատիցես	Քաղցիցես
	Զարթիցէ	Ոստիցէ	Յատիցէ	Քաղցիցէ
	Զարթիցուք	Ոստիցուք	Յատիցուք	Քաղցիցուք
	Զարթիցիք	Ոստիցիք	Յատիցիք	Քաղցիցիք
	Զարթիցեն	Ոստիցեն	Յատիցեն	Քաղցիցեն
Վրաս.	Զարթիր	Ոստիր	Յատիր	Քաղցիր
	մի Զարթնուք	մի Ոսանուք	մի Յամնուք	մի Քաղցնուք
	Զարթիք	Ոստերուք	Յատերուք	Քաղցերուք
	մի Զարթնուք	մի Ոսանուք	մի Յամնուք	մի Քաղցնուք

Սոր.	Զարթնուցմ	Ոսանուցում	Յամնուցում	Քաղցնուցում
Անի.	Զարթնուլ	Ոսանուլ	Յամնուլ	Քաղցնուլ
Ան.Ը.	Զարթուցել	Ոստուցեալ	Յատուցեալ	Քաղցեալ
Ար.Ը.	Զարթնուց	Ոսանուց	Յամնուց	Քաղցնուց

134 . ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԶԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐՈՒՆ  
ԿՐԱԻՈՐԱԿԱՆԸ

Ների.	Անիմ	Ասիմ	Գիտիմ	Դնիմ
Անի.	Անիկի	Ասիկի	Գիտիկի	Դնիկի
Սահ. Կարգ.	Արարայ	Աստայ	Գիտայ	Եդայ
	Արարար	Աստար	Գիտար	Եդար
	Արարաւ	Աստաւ	Գիտաւ	Եդաւ
	Արարաք	Աստաք	Գիտաք	Եդաք
	Արարայք	Աստայք	Գիտայք	Եդայք
	Արարան	Աստան	Գիտան	Եդան



Մահ . Ապր .	Արարայց	Ասացայց	Գիտացայց	Եղայց
	Արասցիս	Ասացիս	Գիտացիս	Դեցիս
	Արասցի	Ասացի	Գիտացի	Դեցի
	Արասցուք	Ասացուք	Գիտացուք	Դեցուք
	Արասջիք	Ասասջիք	Գիտասջիք	Դեջիք
	Արասցին	Ասացին	Գիտացին	Դեցին
Դիմ .	Առնիջիք	Ասիջիք	Գիտացիք	Դնիջիք
	մի Առնիք	մի Ասիք	մի Գիտիք	մի Դնիք
	Առնիջիք	Ասացարուք	Գիտացարուք	Եղարուք
	մի Առնիք	մի Ասիք	մի Գիտիք	մի Դնիք

Սքոր .	Առնիցիմ	Ասիցիմ	Գիտիցիմ	Դնիցիմ
Անէր .	Առնէլ	Ասէլ	Գիտէլ	Դնէլ
Անդ . Ը .	Արարեալ	Ասացեալ	Գիտացեալ	Եղեալ
Ադ . Ը .	Առնեւոյ	Ասեւոյ	Գիտեւոյ	Դնեւոյ

Ների .	Ըմպիմ	Ճանաչիմ	Պարաիմ
Անի .	Ըմպէի	Ճանաչէի	Պարաէի

Մահ . Պար .	Արբայ	Ծանուցայ	Չանի .
	Արբար	Ծանուցար	
	Արբաւ	Ծանուցաւ	
	Արբաք	Ծանուցաք	
	Արբայք	Ծանուցայք	
	Արբան	Ծանուցան	

Մահ . Ապր .	Արբայց	Ծանուցայց	Չանի .
	Արբցիս	Ծանուցիս	
	Արբցի	Ծանուցի	
	Արբցուք	Ծանուցուք	
	Արբջիք	Ծանուսջիք	
	Արբցին	Ծանուցին	

Դիմ .	Արբիք	Ծանուցիք	Չանի .
	մի Ամպիք	մի Ճանաչիք	
	Արբերուք	Ծանուցարուք	
	մի Ամպիք	մի Ճանաչիք	

Սքոր .	Ըմպիցիմ	Ճանաչիցիմ	Պարաիցիմ
Անէր .	Ըմպէլ (իլ)	Ճանաչէլ (իլ)	Պարաէլ (իլ)
Անդ . Ը .	Արբեալ	Ծանուցեալ	Չանի .
Ադ . Ը .	Ըմպեւոյ	Ճանաչեւոյ	Չանի .







Այդ ամենայն Տարևի . Չի այդմ հնար . Մարե  
է ասել . չէ Տարև խօսել , եւայլն :

137 . Գնէ՛ք բային կատարեալ եղակի երկ-  
քորդ գէմքը սովորաբար եդեր կ'ըսուի . բայց ե-  
դեր ըսել ըստ ընտիր հեղինակաց ընտրելի է :

138 . Անէ՛ք բային կրաւորական ձեւը առ-  
նի՛ք , մանաւանդ ներկան ու ստորագասականք  
առնի՛ք , առնիցի՛ք , ընտիր հեղինակաց մէջ եղանի՛ք  
ին տեղ կը գործածուի , իբր ըլլուի . ուստի սա  
կերպ գրուցուածները խիստ սովորական են .  
Առնի խմաստուն , առնի՛ք մեծատուն , առնիցի  
հզօր :

139 . Ընդհանի՛ք , առնի՛ք բայերը կրաւորական  
ձայնիւ գործածել հարկ եղած ատեն , առնի՛ք  
բային պէս չի՛նք ով եւ բային անցեալ ընդունե-  
լու թեամբը կը շինուին . այսպէս . ընկալեալ լե-  
նի՛ք , ընկալեալ եղև , հալեալ եղև , եւայլն :

140 . Պէտք է գիտնալ որ սա տեսակ գրու-  
ցուածներ , այսինքն՝ ընկալեալ լինիմ , կալեալ ,  
կերեալ եղէ , լուեալ եղէ . հայերէն շատ ան-  
գամ խօսքին խմաստին նայելով ուրիշ կերպ կըր-  
նան բացատրուիլ . զոր օրինակ . Ընդունուե-  
ցաւ , ընկալեալ եղև , ըսելու տեղ՝ կրնայ ըսուիլ  
ընդհանեւի եղև . կամ ուրիշ առմամբ , եղև նմա  
ընդհանեւ լուրի-ն . Բռնուեցաւ , հալեալ եղև , ըսելու  
տեղ՝ կրնայ ըսուիլ , ձերբակալ եղև , 'ի բուն  
անկաւ . կերեալ եղև ըսելու տեղ՝ եղև հեր կամ  
ճարակ . Լուեալ եղև ըսելու տեղ՝ լու կամ լեւել  
եղև : Նոյնպէս կը ճանչցուի , ճանչցուեցաւ ,



Հայերէն կրնան ըսուիլ ծանօթ է , ծանօթ էլ՝ ,

Ասոնց նման ասութիւններ Հայերէն գրա-  
բար լեզուին մէջ , մանաւանդ ընտիր մատենա-  
գրաց մէջ , անթիւ եւ կերպ կերպ են , որոնց  
միտ դնել պէտք է . քանզի աս ձեւերը բացա-  
տարութեանը վայելչութիւն ու վսեմութիւն կու-  
տան . ասլա թէ ոչ բացատրութիւնն անհամ-  
կ'ըլլայ , եւ խմաստին ազդուութիւնը կ'իյնայ :

141 . Պարտիճ , պարտիս , պարտի , պակասաւոր  
բայ մըն է եւ պարտաւորուած ըլլալ կը նշանա-  
կէ : Այս ուրիշ բայ մ'ալ Պարտխ , պարտե-  
ցայ , պարտեալ , որ յաղթուիլ կը նշանակէ :

## Գ Լ Ո Ի Խ Ե .

### Դ Ե Ր Բ Ա Յ

142 . Դերբայ կ'ըսուին ան տեսակ բառեր  
որոնք անուան եւ բայի նշանակութիւնը միան-  
գամայն ունին . այսինքն՝ թէ իբր անուն՝ եր մը ,  
իբր ածական՝ որդիսո-ւ-նի-ն մը կը նշանակեն , եւ  
թէ իբր բայ՝ ընէլ կամ ըլլալ մը :

143 . Հայերէն Դերբայ են՝ բայերուն Անե-  
րեւոյթն ու Ընդունելութիւնները . քանզի ա-  
սոնք են մինակ՝ որ թէ իբր անուն , այսինքն գո-  
յական կամ ածական , եւ թէ իբր Բայ կը գոր-  
ծածուին :

144 . Ըստ այսմ՝ Դերբայը կրկին է .

Ա . Գոյահան դերբայ , որ է Աներեւոյթը . եւ



Բ . Ածական դերբայ , որ է Անցեալ ընդունելութիւնը :

145 . Գոյական\* դերբայը , այսինքն բայերուն աներեւոյթները , մինակ եղակի մէջ կրնան հոլովիլ , այսպէս .

Ա.Լ.Ճ. } Սիրել , սիրելոյ , սիրելով .  
 Հառանել , հառանելոյ , հառանելով .

Բ.Լ.Ճ. } Խորհել , խորհելոյ , խորհելով .  
 Ուսանել , ուսանելոյ , ուսանելով .

Գ.Լ.Ճ. } Աղալ , աղալոյ , աղալով .  
 Ստանալ , ստանալոյ , ստանալով .

Դ.Լ.Ճ. } Թողուլ , թողլոյ , թողլով .  
 Հանուլ , հանլոյ , հանլով .

146 . Ածական դերբայը , այսինքն Անցեալ ընդունելութիւնը , թէ եղակի եւ թէ յօքնակի կը հոլովի , այսպէս .

Ա.Լ.Ճ. } Սիրեալ , սիրելոյ , սիրելով . կամ Սիրեցեալ , սիրեցելով , և այլն .  
 Սիրեալք , սիրելոյ , սիրելովք .  
 Հատեալ , հատելոյ , հատելով .  
 Հատեալք , հատելոյ , հատելովք .

\* Գոյական Դերբայը կամ Աներեւոյթը միանգամայն անուն և բայ ըլլալով , Անունին ու բային խօսքի մէջ կատարած պաշտօնները միանգամայն կը կատարէ : Ուստի թէ անունն պէս , Տէր բայի , Խնդիր , սորադէմ , կ'ըլլայ և թէ բայի պէս խնդիր , կ'ունենայ : Ինչպէս Երկրորդ մասին մէջ պիտի տեսնուի :



Բ. Լ. Ժ. } խորհեալ, խորհելոյ, խորհելով.  
 խորհեալք, խորհելոց, խորհելովք.

Ուսեալ, ուսելոյ, ուսելով.  
 Ուսեալք, ուսելոց, ուսելովք.

Գ. Լ. Ժ. } Աղացեալ, աղացելոյ, աղացելով.  
 Աղացեալք, աղացելոց, աղացելովք.  
 Ստացեալ, ստացելոյ, ստացելով.  
 Ստացեալք, ստացելոց, ստացելովք.

Գ. Լ. Ժ. } Թողեալ, թողելոյ, թողելով.  
 Թողեալք, թողելոց, թողելովք.  
 Հանեալ, հանելոյ, հանելով.  
 Հանեալք, հանելոց, հանելովք.

147. Անցեալ դերբայն, իբրև ածական, դոյականի հետ կը գործածուի, այսպէս.

Որդի սիրեալ, որդւոյ սիրելոյ, որդւով սիրելով.

Որդիք սիրեալք, որդւոց սիրելոց, որդւովք սիրելովք.

Խուճիկ աղացեալ, խնկոյ աղացելոյ, խնկով աղացելով.

Խուճիկք աղացեալք, խնկոց աղացելոց, խնկովք աղացելովք.

Ուրիշներն ալ ասոնց նման :

148. Անցեալ ընդունելութիւնն իբր ածական գործածուած ատեն՝ միշտ յետագասկըլլայ :

149. Սպառնի ընդունելութիւնը չի հսկովիր :

Անցեալ ու ապառնի ընդունելութիւնները է՛հ հական բային ներկայ, անկատար եւ ստորագասական ժամանակներուն հետ մէկտեղ կը գործածուին, այսպէս.



ՅԵՐԱԿԱՏԱՐ Գործած է՛մ .

Գործեալ եմ	Հատեալ եմ	Աղացեալ եմ
Գործեալ ես	Հատեալ ես	Աղացեալ ես
Գործեալ է	Հատեալ է	Աղացեալ է
Գործեալ եմք	Հատեալ եմք	Աղացեալ եմք
Գործեալ էք	Հատեալ էք	Աղացեալ էք
Գործեալ են	Հատեալ են	Աղացեալ են

ԳԵՐԱԿԱՏԱՐ Գործած էի .

Գործեալ էի	Հատեալ էի	Աղացեալ էի
Գործեալ էիր	Հատեալ էիր	Աղացեալ էիր
Գործեալ էր	Հատեալ էր	Աղացեալ էր
Գործեալ էաք	Հատեալ էաք	Աղացեալ էաք
Գործեալ էիք	Հատեալ էիք	Աղացեալ էիք
Գործեալ էին	Հատեալ էին	Աղացեալ էին

ՍՏԱՐ . ԱՆՑ . Գործած է՛մ իմ ըԼԼՏՏ .

Գործեալ իցեմ	Հատեալ իցեմ	Աղացեալ իցեմ
Գործեալ իցես	Հատեալ իցես	Աղացեալ իցես
Գործեալ իցէ	Հատեալ իցէ	Աղացեալ իցէ
Գործեալ իցեմք	Հատեալ իցեմք	Աղացեալ իցեմք
Գործեալ իցէք	Հատեալ իցէք	Աղացեալ իցէք
Գործեալ իցեն	Հատեալ իցեն	Աղացեալ իցեն

ԱՊԱՌ . ՆԵՐԿ . Պիտի Գործէ՛մ .

Գործեւոյ եմ	Հատանեւոյ եմ	Աղաւոյ եմ
Գործեւոյ ես	Հատանեւոյ ես	Աղաւոյ ես
Գործեւոյ է	Հատանեւոյ է	Աղաւոյ է
Գործեւոյ եմք	Հատանեւոյ եմք	Աղաւոյ եմք
Գործեւոյ էք	Հատանեւոյ էք	Աղաւոյ էք
Գործեւոյ են	Հատանեւոյ են	Աղաւոյ են

ԱՊԱՌ . ԱՆԿ . Պիտի Գործէի .

Գործեւոյ էի	Հատանեւոյ էի	Աղաւոյ էի
Գործեւոյ էիր	Հատանեւոյ էիր	Աղաւոյ էիր
Գործեւոյ էր	Հատանեւոյ էր	Աղաւոյ էր
Գործեւոյ էաք	Հատանեւոյ էաք	Աղաւոյ էաք
Գործեւոյ էիք	Հատանեւոյ էիք	Աղաւոյ էիք
Գործեւոյ էին	Հատանեւոյ էին	Աղաւոյ էին



## ԱՊԱՌ . ՍՏՈՐ . ՊԵՒԻ ԳՐԺԷՏ .

Գործեւոց իցեմ	Հատանեւոց իցեմ	Աղաւոց իցեմ
Գործեւոց իցես	Հատանեւոց իցես	Աղաւոց իցես
Գործեւոց իցէ	Հատանեւոց իցէ	Աղաւոց իցէ
Գործեւոց իցեմք	Հատանեւոց իցեմք	Աղաւոց իցեմք
Գործեւոց իցէք	Հատանեւոց իցէք	Աղաւոց իցէք
Գործեւոց իցեն	Հատանեւոց իցեն	Աղաւոց իցեն

## Գ Լ ՈՒ Խ Զ .

## Մ Ա Կ Ր Ա Յ

150 . Մակրայ կ'ըսուին ան տեսակ բառեր որոնք ածականներու պէս որպիսութիւն մը կամ եղանակ մը կը ցուցնեն :

151 . Ինչպէս որ Ածականը Գոյականին մէկ որպիսութիւնը կամ եղանակը կը ցուցնէ , աւանակ ալ Մակրայն ընդհանրապէս Բային մէկ որպիսութիւնը կամ եղանակը կը յայտնէ : Զոր օրինակ . յոյժ աշխատել . հարի ըմպել , յոյժ եւ հարի մակրայ են , եւ աշխատելուն ու ըմպելուն որպիսութիւնը կը ցուցնեն : Յոյժ աշխատել , շատ կամ սաստիկ աշխատիլ ըսել է . հարի ըմպել , չափէն աւելի խմել կը նշանակէ :

152 . Մակրայները չորս տեսակ են . Որահահան , Տեղահան , Ժամանահահան ու Քանահահան :

153 . Որահահան մակրայները բուն բային կամ դործողութեան որպիսութիւնը , ինտոր ըլլալը կը ցուցնեն : Բարոտ խօսել , աղէկ խօսիլ . Բարոտ Որակական մակրայ է , եւ Ինչպէս կամ Ինչոր հարցման պատասխան է :

Հարցմունք . Ինչպէս խօսել . Պատասխան . Բարոտ , աղէկ :



154 . Տեղահան մակբայները գործողութեան տեղը , ուր ըլլալը կը ցուցնեն : Ի վեր ելանել . վեր ելել . ' Ի վեր տեղական մակբայ է , եւ ո՞ր հարցման պատասխան է :

Հրց . Ո՞ր ելել . Պատաս . Ի վեր , վեր :

155 . Ժամանակահան մակբայները գործողութեան ատենը , ե՞րբ ըլլալը կ'իմացնեն : Առիտ-գալ . վաղը գալ . վաղի-տեղական մակբայ է , եւ ե՞րբ հարցման պատասխան է :

Հրց . Ե՞րբ գալ . Պատաս . Առիտ- , վաղը :

156 . Քանահան մակբայները գործողութեան քանակութիւնը , որչափ ըլլալը կը ցուցնեն : Յոյժ սիրել . շատ սիրել . յոյժ քանակական մակբայ է , եւ ո՞րչափ հարցման պատասխան է :

Հրց . Ո՞րչափ սիրել . Պատաս . Յոյժ , շատ :

157 . Որահան մակբայներուն գլխաւորներն ատենք են . Բար-ոտ , շարաշար , զո-ր , վայրապար , Գաղտ , հետի , Դայն , է-էլ , Յրի :

158 . Ամեն պէս եւ Բար վերջաւորուած մակբայ՝ Որակական մակբայ է . զոր օրինակ . մեծապէս , քաջաբար , եւայլն :

159 . Ածականներն ալ երբոր բային որակ-տութիւնը կը ցուցնեն մակբայ են . զոր օրինակ . Քաջ գիտել . Երկայն խօսել . Տանք պատմել :

160 . Ածականները Մակբայ եղած ատեն երբեմն « գիրը կ'առնեն . զոր օրինակ . Բազումս աշխատել . յանդդնադոյնս խօսել . մեծամեծս փքալ :

161 . Տեղահան մակբայներուն գլխաւորներն ատենք են . Ապս , անոր . աչար , անորոյ . աստի , ան-



որի . ասրաստիս , ասրաստիտյ , ասրաստիտ-ասր . 'ի ներիս , 'ի  
 ներիտյ , 'ի ներիտ-ասր . Տօտ , Տերչ , հեւի , 'ի վեր , 'ի  
 վերայ , 'ի վերո-ասր , շաւղ , եւայլն :

162 . Ժամանակահանձն մակրայներուն զլիաւոր-  
 ներն հետեւեալներն են . Այծճ , յէտիտյ , աշատր ,  
 վաղիւ , հանուխ , անսօփանս , երէկ , երանոր , հերուն ,  
 Գիշերայն , աշփուն , վաղ , ետիտյն , վաղվաղահի , նասխ ,  
 ապա , եւայլն :

163 . Քանակահանձն մակրայներուն զլիաւոր-  
 ներն են . Ստեղ , յաճախ , ասիսա , յոյծ , հարի ,  
 Տրի , երբէմ , Տանասանոր , եւայլն : Քանակական  
 մակրայ են նաեւ . Այալսփ , անյնսփ , աշտլսփ ,  
 աշտիանս , անյնիանս , Ռանսփաճ , Ռանսփաճ , Դարչեւալ ,  
 վերասին , հրիին , երիտա , երիտա , եւայլն :

164 . Աս չորս տեսակ մակրայներէն զատ  
 կան հետեւեալ մակրայները .

Ու , շ , Բ' . ասոնք Բացասական մակրայ կ'ըս-  
 ուին :

Չիտոր , շի , շիտի , ո'րուէս , եւայլն . ասոնք  
 Հարցական մակրայ կ'ըսուին :

165 . Մակրայները բայէն զատ , Ածականի  
 մը եւ ուրիշ Մակրայի մը որպիսութիւնն ալ կը  
 ցուցնեն . զոր օրինակ . յոյծ բարի , հարի չար .  
 յոյծ բարուք , հարի չարաչար : Աս օրինակնե-  
 րուն մէջ յոյծ եւ հարի մակրայները Բարի եւ չար  
 ածականներուն ու Բարուք եւ չարաչար մակրայ-  
 ներուն որպիսութիւնը ցուցուցած են :



## Գ Լ Ո Ի Խ Է .

## Ն Ա Խ Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

166 . Նախադրութիւն կ'ըսուին ան տեսակ բառեր որոնք , մակբայներուն պէս , բային կամ գործողութեան մը Որպիսութիւնը , Տեղը , Ժամանակը , նաեւ Պատճառը եւ ուրիշ պարագաները ցուցնելու կը ծառայեն :

167 . Նախադրութիւնները երկու տեսակ են . ոմանք նշանակութիւն չունեցող բառեր կամ գիրեր են . ինչպէս , է , յ , ց , աւ , ընդ , ըստ , եւայլն : Ասոնք նախդէր ալ կը կոչուին :

168 . Ոմանք ալ նշանակութիւն ունեցող բառեր են . ինչպէս , յատաւ , յեփոյ , աւաջի , յանդիման , ' է ներսոյ , աբասոսոյ , ' է վերայ , ' է ձեջ , ' է Ռջի , Տօտ , Ռերչ , շարջ , զէնի , ' է յեռն , եւայլն . ասոնք բուն նախադրութիւն են :

169 . Նախադրութեան ու մակբայի մէջ եղած տարբերութիւնը սա է որ , Նախադրութիւնը քովը ուրիշ բառ մը կ'ուզէ որ իմաստ մը տայ . Մակբայն առանց ուրիշ բառի ինքնին իմաստ կու տայ : Չոր օրինակ . ' է կամ , նախադրութիւնը շատ անգամ տեղ մը դադարում ցուցնելու համար կը գործածուի . բայց ինքնիրեն իմաստ չի տար . քանզի բառ մը կ'ուզէ որ իմաստ տայ . ուստի երբոր կ'ըսենք , ' է տան , յայնմ տեղում , բան մը կը հասկընանք : Բայց անդ , հոն , որ տեղ մը դադարում ցուցնող մակբայ է , առանց քովը բառ մը դրուելու իմաստ կու տայ :



170 . Նախադրութիւններուն քովը դրուած  
բառը նախադրութեան խնդիրը կը կոչուի . վե-  
րի օրինակին մէջ , ասն , այնմ ասեղ-ով բառերը՝ է  
եւ , նախադրութիւններուն կամ նախդիրնե-  
րուն խնդիրներն են :

171 . Նախադրութեանց խնդիրներն , ուղ-  
ղականէ զատ , ուրիշ ամեն հոլով կը դրուին .  
Սեռական , Տրական , Հայցական , Բացառական  
ու Գործիական :

172 . Նախդիր նախադրութիւնները գրեթէ  
ամեն հոլով խնդիր կ'առնեն , բայց հոլովին հա-  
մեմատ բառին յարաբերութիւնը կը փոխեն .  
զոր օրինակ զնախդիրը .

զտուն , զտունս . տունը , տուները , ըսել է .

զտանէ , զտանց տունին , տուներուն վրայով , կը  
նշանակէ .

զտամբ , զտամբք . տունին , տուներուն բոլորտի-  
քը , ըսել է :

173 . Այսպէս ալ է , յ , առ , ընդ , ըստ նախ-  
դիրները հոլովը փոխելով՝ բառին յարաբերու-  
թիւնը կը փոխեն . ինչպէս երկրորդ մասին մէջ  
պիտի տեսնենք :

174 . Իսկ Բուն նախադրութիւններէն , ու-  
մանք Հայցական խնդիր կ'ուզեն . ինչպէս , Բան  
չլոյս . լոսէ սեւէ .

Ոմանք՝ Սեռական , ինչպէս . Ասան նորս , սո-  
նոր համար .

Ոմանք՝ Տրական , ինչպէս . Հակառակ Տեղ  
Տեղի հակառակ .



Ումանք՝ Բացառական , ինչպէս : Հեռի 'ի  
 Կէղ-ՈՂԷՆ , ան ԿէղԷՆ հեռու :

Ումանք՝ Գործիական , զոր օրինակ . Հան-  
 դերձ Տարբն , Տօրը հեռ . Շուրջ զնո՛վա , անոր Բո-  
 շրփե՛ք :

Ի՛ք բե- եւ որպէս նախադրութիւնները՝ յար-  
 մարութեան նայելով՝ ամեն հոլով խնդիր կրնան  
 առնել :

Նախադրութեանց յայ երկրորդ մասին մէջ  
 աւելի ընդածակ պիտի խօսինք : Առաջին մասին  
 մէջ տղոց համար այսչափը բաւական է : Թող  
 տղաք հիմակու հիմա՛ Նախդիրներն ու Նախա-  
 դրութիւնները ճանչնալ սորսին :

## Գ Լ Ո Ի Խ Ը .

### Շ Ա Ղ Կ Ա Պ

175 . Շաղկապ կ'ըսուին ան տեսակ բառեր ,  
 որոնք երկու բառ կամ երկու խօսք իրարու հետ  
 կը կապեն .

176 . Գլխաւոր շաղկապները հետեւեալնե-  
 րն են :

Ե- , ղի , ե՛ւէ , համ , եւի , Բայց , ալ , ասկայն ,  
 Եւպէս , ապա , Ռե՛չ , Ռե՛չրէս , ԻԲրէ- , յորժամ , քան-  
 ղի , քան , արդ :

## Գ Լ Ո Ի Խ Թ .

### Չ Ա Յ Ն Ա Ր Կ Ո Ի Թ Ի Ն

177 . Չայնարկութիւն կ'ըսուին ան տեսակ







# Ե Ր Կ Ր Ո Ր Գ Ւ Մ Ը Ս

## Հ Ա Մ Ս Ձ Ա Յ Ն Ո Ի Թ Ի Ի Ն

179 . Ըստ մասին մէջ պիտի ցուցնենք թէ բառերը խօսքի մէջ ինչ Պաշտօններ կը կատարեն , եւ սն պաշտօնները ցուցնելու համար իրարու հետ ինչպէս կը համաձայնին :

180 . Բառերուն խօսքի մէջ կատարած Պաշտօններն են .

- 1 . Տէր բայի եւ Բայ .
- 2 . Խնդիր եւ Խնդրառու .
- 3 . Ստորագելի եւ Ստորագեալ .
- 4 . Բացայայտիչ եւ Բացայայտեալ .
- 5 . Վերադիր եւ Վերադրեալ .
- 6 . Կոչական :

## Գ Լ Ո Ի Խ Ա .

### ՏԷՐ ԲԱՅԻՆ Ի՞ՆՁ Է ԵՒ ԲԱՅԻՆ ՀԵՏ ԻՆՁՊԷՍ ԿՐ ՀԱՄՍՁԱՅՆԻ

181 . Բայն , ինչպէս (82) ըսինք , ընել կամ ըլլալ կը ցուցնէ : Տէր բային ընդէ կամ ըլլո՞ւն է . զոր օրինակ , սա՛ Ես սիրեցի զՅէզ . Հայր առաքեալ զԵս , խօսքերուն մէջ՝ Ես , հայր , Տէր բայի են :

182 . Տէրբային , ո՞վ , ի՞նչ , հարցման պատասխան է , եւ սա հարցումն ընելով Տէր բային դիւրաւ կը գտնուի : Զոր օրինակ , վերի խօսք



քին մէջ , Ո՛չ սիրեց . -Ե\* . Ո՛չ առաքեց . -Հայր :  
183 . Տէր բայի կ'ըլլան , Գոյականը , Գերա-  
նունը , գոյականաբար\* առնուած Աճական մը  
կամ Անցեալ ընդունելութիւն մը , բայերուն Ա-  
ներեւոյթները , երբեմն նաեւ Մակբայ մը , Շաղ-  
կապ մը , Նախադրութիւն մը իր խնդրովը , Հո-  
լոված բառ մը եւ Գլխաւոր բայ մը . զոր օրինակ .

ՏԵՐ ԲԱՅԻՆ

Հայր առաքեաց . Հայր զրկեց	Գոյակ. ն .
Ե* ննջեմ . Ես կը քնանամ .	Գերանուն .
Անաստէլ Աստուծոյ չար է . Աստու- ծոյ չհնազանդելը չար է .	Աներեւոյթ .
Անգգա՞ն անդոսնէ գխրատ . Անգգա- մը խրատը կը մերժէ .	Աճական գոյականա- բար առնուած .
Մեռեալ* յարիցեն . Մեռելները պի- տի յառնեն .	Անցեալ Ընդունել .
Մատուցաւ շան ճղաշն . Այսին մե- ղացը մատուցուեցաւ .	Նախորդ-Ռիւն ինդ- ր՛ւն .
Եղիցի ձեր այն այո . Ձեր այն՝ ա- յո ըլլայ .	Մակբայ ՏԸ .
Նշանն 'ի ձեռն նորա յայտ առնէ .	Հոլոված բառ .
Նովաւը՝ անոր ձեռքով ըսել է .	
Եւէնին աստ հրաման է . Եղիցին՝ հոս հրաման է .	Գլխաւոր բայ .

184 . Երբոր Տէր բային պարզ\* \* է , Բայն անոր :

\* Գոյականաբար առնուած կ'ըսուի Աճական մը , երբոր  
խօսքին մէջ մինակ առանց Գոյականի է , կամ Գոյական  
մը լռելեայն կ'իմացուի :

\*\* Պարզ կ'ըսուի Տէր բային , երբոր եզակի կամ յոբնակի  
ձէ բառ է . ինչպէս . դու սիրեցեր . նոքա գնացին :

Բազադրեալ կ'ըսուի Տէր բային , երբոր երկու կամ  
աւելի եզակի կամ յոբնակի բառեր են . ինչպէս (186)  
օրինակներուն մէջ :



հետ թուով ու դէմքով կը համաձայնի . զոր օրինակ .

Եւ ննջէ՛ . Մէ՛ գիտէ՛ .

Դու առէ՛ , Դու՛ ոչ գիտէ՛ ,

Նա ետես . Նա՛ ոչ խմայան :

185 . Թէ գոյակիանով եւ թէ աւանց գոյակիանի էղանէ թուական անուններուն բայը յորնակի կրնայ դրուիլ . զոր օրինակ .

Պատահեցան նմա փանն այք բորոտ .

Հինգն 'ի նոցանէ խմատունք էին :

186 . Երբոր Տէր բային Բաղադրեալ է , բայը յորնակի կը դրուի , թէեւ Տէր բային կազմող բառերը եղակի ըլլան . զոր օրինակ .

Պեքոս եւ Յովնանէն ելին 'ի տաճարն .

Նոյ եւ ուրի՛ նորա Տփին 'ի տապանն :

187 . Երբոր բաղադրեալ Տէր բային տարբեր դէմքի անուններէ բաղկացած է , բայը յորնակի կը դրուի , ու դէմքով՝ <sup>պատասխանաբար</sup> \* դէմքին հետ կը համաձայնի . զոր օրինակ .

Եւ եւ հայր ի՛ մի է՛ .

Յորժամ դու եւ նա միայն իցէ՛ :

188 . Տէր բային միշտ ուղղական հոլով պիտի ըլլայ :

189 . Բայց երբոր է - շաղկապով կապուած

\* Առաջին դէմքը՝ երկրորդէն , երկրորդը՝ երրորդէն պատուաւոր է :



երկու բայ միեւնոյն Տէր բային ունին , կրնայ  
առջի բայն Անցեալ ընդունելութեան փոխուիլ ,  
ու է- շարկապը զանց առնուիլ . եւ ան ատեն  
անուն բային սեռ-անն հոլով կրնայ գրուիլ . զոր  
օրինակ .

Տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ . փոխա-  
նակ ըսելու , էրէ՞ Յիսուս զհաւատս նոցա և ասէ :

Հրէոյ կալեալ զիս՝ կամէին սպանանել . փո-  
խանակ ըսելու . Հրէոյ՝ կալան զիս և կամէին սպանա-  
նել :

190 . ԵՏ , բայով եւ անցեալ ընդունելու-  
թեամբ շինուած բայի ժամանակներուն եղակի  
երրորդ գէմքը՝ սեռ-անն Անուն կամ Գերա-  
նուն Տէր բայիով ամեն գէմքի տեղ կը գործած-  
ուի . զոր օրինակ .

Լուեալէ յեր վասն նոցա . փոխանակ՝ Լուեալ էր  
դու՝ վասն նոցա :

Երէ ի՞նչ էր եկեալ եւ խօսեցեալ ընդ նոսա . փոխանակ՝  
Եթէ ես ոչ էի եկեալ եւ խօսեցեալ :

Եթէ չէր նորա խոստեալ , ի՞նչ գրեզ սպանեալ էր . փո-  
խանակ՝ Եթէ նա չէր խոստափեալ , ես գրեզ սպան-  
եալ էի :

Եթէ այնպիսի արարեալ էր զնա Աստուծոյ , պա-  
տիժս ՚ի նմանէ չէր պարտ պահանջել . փոխանակ՝  
Եթէ այնպիսի արարեալ էր զնա Աստուծոյ :

## Գ Լ Ո Ւ Խ Բ .

### ԽՆԴԻՐ ԵՒ ԽՆԴԻՐԱՌՈՒ

191 . Խնդիր կ'ըսուին ան բառերը որոնք առ-  
րիչ բառի մը քով գրուելով՝ անոր խմաստը կ'առ-



բաշեն կամ կ'ամբողջացրնեն :

Սա՛ Լեառն Յի՛նէնէաց . Արժանի շարժուց . Վասն խաղաղութեան Առաքեաց զճախն յայգի իւր , խօսքերուն մէջ՝ Յի՛նէնէաց շարժուց , խաղաղութեան , զճախն յայգի իւր , բառերը խնդիր են : Առանց սա բառերուն՝ Լեառն , Արժանի , Վասն , Առաջեաց , որոշ կամ կատարեալ խնամտմը չեն տար :

192 . Խնդիր ունեցող բառը խնդրատու կը կոչուի . վերի օրինակներուն մէջ՝ Լեառն , Արժանի , Վասն , Առաջեաց բառերը խնդրատու են :

193 . Խնդիր առնող բառերն են Գոյականը՝ Ածականը , Նախադրութիւնն ու Բայը :

### Յօդուած Ա .

#### Գոյականին խնդիրները :

194 . Գոյականն անունը , կամ գոյականաբար առնուած Ածական մը եւ բայերուն Աներեւոյթները սեռական հոլով խնդիր կ'առնեն , որուն հայերէն յատկացուցիչ ըսել սովորութիւն եղած է . ինչպէս որ սեռական հոլով խնդիր առնող բառն ալ յատկացեալ կը կոչուի :

Սա , Լոյս աշխարհի . Խնամտունքն Յունաց . Ի ծնանելն Յիսուսի , խօսքերուն մէջ՝ Աշխարհի , Յունաց , Յիսուսի , յատկացուցիչ են . Լոյս , Խնամտանք , Ծնանելբառերն ալ յատկացեալ են :

195 . Յատկացուցիչը՝ որո՞ւն , ի՞նչ , հարցման պատասխան է , Վերի խօսքերուն մէջ սա հարցումը կրնանք ընել .

Ո՞րո՞նք լոյսը - Աշխարհին . - Ո՞րո՞նք խնամտունքն .



րը . - Յունաց . - Արտն ճնանելու ատենը . - Յիսուսին :

196 . Խօսքին բնական կարգին մէջ Յատկացուցիչը յատկացեալէն ետքը կը դրուի . ինչպէս վերի օրինակներուն մէջ տեսնուեցաւ :

197 . Բայց Յատկացուցիչը յատկացեալէն առաջ ալ կրնայ դրուիլ . զոր օրինակ .

Յովհաննու եղբայրն որ ստանաւ սրով . իսկսանակ՝ Եղբայրն Յովհաննու :

198 . Յատկացուցիչը յատկացեալէն առաջ դրուած ատեն Յատկացեալին նախդիրն ինք կ'առնէ . կամ նախդիրը երկուքին վրայ ալ կը կրկնուի . զոր օրինակ .

Գիտել զճարտան բարս , եւ զգալանաց բնութիւն . այսինքն . զբարս մարդկան . զբնութիւն զաղանաց :

Մեք զայս յԱրտնէն վարդապետութենէ ուսար . այսինքն . ՚ի վարդապետութենէ Առաքելոց :

Զամանէ ասեն թէ առ Աբրահամ ժամանակօքն կր . այսինքն . Առ ժամանակօքն Աբրահամու :

Մոզոզքարկոծողացն զհանդերձս յառեալ սրահէր : կապեցէք զդորս զոտս եւ զձեռս :

Յօդ . Բ .

Աճականներուն խնդիրները :

199 . Աճականներն , ինչպէս նաեւ Անցեալ ընդունելութիւնները որոնք իբր Աճական կը գործածուին , ուղղականէն եւ հայցականէն զատ , ամեն հորով խնդիր կ'առնեն . զոր օրինակ .



Արժանի շարժուց . Հմուտ սրտոյ . Հնազանդ ունէք .  
Ազատ 'ի հարկէ . Թափուր 'ի Բնակչաց . Լի պարզէ . Չար-  
դարեակ ահաճէք :

200 . Թուական եւ Անորոշ ածականներն ալ  
գոյականաբար առնուելով , Բացառական հոլով  
խնդիր կ'առնեն . զոր օրինակ .

Ոմն 'ի շինուորաց . Ոմանք 'ի նոցանէ . Մին 'ի Յէշ . Ա-  
ռաքեաց զերկուս յաշակէրփաց էրոց . Իւրաքանչիւր ոք  
'ի Յէշ . Այլք յիմաստնոց :

Այսպէս կ'ըսուի նաեւ . Բազումք 'ի Դէշ .  
Կէսք 'ի նոցանէ :

Յօդ . Գ .

Նախադրութիւններն խնդիրք :

201 . Նախադրութիւններն , ինչպէս առջի  
մասին մէջ (167) ըսինք երկու տեսակ են . Բոն  
նախադրութիւն , որոնք նշանակութիւն ունեցող  
բառեր են . զոր օրինակ՝ փոխանակ , զէնի , առա-  
ջի , յանդիման , եւ այլն . եւ Նախդիր՝ որոնք ինք-  
նին նշանակութիւն չունեցող գիրեր կամ բառեր  
են . ինչպէս . 'ի , յ , ո , առ , ընդ , ըստ :

202 . Բուն նախադրութիւններէն ոմանք սե-  
ռական հոլով խնդիր կ'առնեն . ինչպէս՝ Այսին  
խաղաղութեան . Փոխանակ նորա . Առաջի էճ .

203 . Ոմանք Տրական . ինչպէս՝ Հակառակ  
Յէշ . Յանդիման պաճարին

204 . Ոմանք Հայցական , ինչպէս՝ Արպէս՝

\* Արպէս , էբէն , նախընթաց բառին նայելու արեւ հոլով



զարեօճ . Իբրև զարեօճին . Մինչև 'ի գեօին .  
Մինչև յերկինս :

206 . Ոմանք Բացառական . ինչպէս՝ Բայ 'ի  
\*էն . Հեռի 'ի արեղ-ճէն . Գաղա 'ի նմանէ :

207 . Ոմանք գործիական . ինչպէս՝ Հան-  
դերձ Տարբն . Շուրջ զնո՛վս :

Բուն նախադրութեանց վրայ Բերականու-  
թեան մէջ ասկէ աւելի խօսիլ աւելորդ է : Այսք  
է գիտնալ որ շատ Նախադրութիւններ կան . ա-  
սանք , ինչպէս նաեւ տանց ինչ խնդիր առնելը՝  
վարժութեամբ պէտք է սորվիլ : Բայց Նախդիր-  
ներու վրայ ուրիշ տեղ պիտի խօսինք :

Յօդ . Դ .

Ներգործական Բայեր :

208 . Ներգործական բայերը Հայցական հո-  
լով խնդիր կ'առնենան , որն որ գործողութիւնը  
կրօղն է . զոր օրինակ .

Միրացես զնիւր քո . Եհար զչառայ քահանայա-  
պետին , եւ եհատ զանին նորա . Յղեաց զնա յազա-  
րակ իւր :

209 . Աս հայցականը հայերէն քերականու-  
թեանց մէջ անի խնդիր կը կոչուի :

210 . Սեռի խնդիր կ'ըլլան , Գոյական անու-  
նը , Բերանունը , գոյականաբար առնուած Ա-

---

ալ խնդիր էրնայ առնել . զոր օրինակ՝ Փախիլ 'ի գինւոյ ,  
իբրև 'ի թշնամւոյ :



Ժական մը կամ Անցեալ ընդունելութիւն մը ,  
Աներեւոյթը , երբեմն նաեւ Մակրայը , Նա-  
խադրութիւնն իր խնդրովը , Շաղկապը , Հոլո-  
ված բառ մը եւ Ղիմաւոր բայ մը . զոր օրինակ .

Աւս զճանոսին .

Տեախի զէւզ .

Տէր սիրէ զարդարն .

Հայր յարուցանէ զՔրիստոս .

Խնդրէին ունել զնա .

Մատուցէք զձաւն մեզայն .

Որ սիրէ զընկերն զօրէնան կատա-  
րէ , զ՛ի շնայեան , եւ ի սպանանիցէս ,  
եւ ի գողանայեան :

ՍԵՈՒԻ ԽՆԴԻՐ .

Գոյալան .

Դէրանան .

Գոյալանաբար առ-  
նուած ածական .

Անցեալ Ընդունելու

Աներեւոյթ .

Նխորդութեան հան-  
դերձ խնդրուլ .

Դիմաւոր բայ .

Արատորական Բայեր :

211 . Ներգործական բայով եղած խօսք մը  
կրնայ կրաւորականով ալ բացատրուիլ . բայց  
ան ստանն ներգործականին Սեռի խնդիրը Տէր  
բայի , եւ Տէր բային՝ բացառական հոլով կը  
դրուի , կամ ուրիշ նախադրութեամբ մը կը բա-  
ցատրուի . զոր օրինակ .

Ներգործականով. Զոր ասացն Եսայի Մարգարէ .

Արատորականով. Որ ասացան ՚ի ձեռն Եսայեայ Մար-  
գարէի .

Ներգործականով. Պաւղոս պատմեաց զբանն ՚ի Բերիա .

Արատորականով. Ի Բերիա պատմեցաւ Բանն ՚ի Պաւղոսէ .

Ներգործականով. Զի՞նչ է նոր վարդապետութիւնս զոր  
պատմես .



Կրատարականով: Չի՞նչ է նոր վարդապետութիւնս որ 'ի  
քէն պատմի .

Ներգործականով: Զամենայն ինչ ետ ինձ Հայր .

Կրատարականով: Ամենայն ինչ տուաւ ինձ 'ի հօրէ իմմէ .

Ներգործականով: Իմքն ճանաչեն զիս .

Կրատարականով: Ճանաչիմ յիմացն .

212 . Տեսակ մը բայեր կան որոնց կրաւորա-  
կանը ներգործականի տեղ կը գործածուի , եր-  
բոր գործողութիւնն ընողն՝ ըրածը իրեն կամ իր  
վրայ կ'ընէ . այսպէս են՝ Ա,բ,է,Տ, Ա,ծ,է,Տ, Գ,ն,է,Տ,  
բայերը .

Ուրիշի վրայ . Ա,բ,ի զնովաւ հանդերձ .

Իր վրայ . Ա,բ,ու- զիւրեւ հանդերձ .

Ուրիշի վրայ . Ետ 'ի գլուխ նորտ զթագն .

Իր վրայ . Ետ- թագն 'ի գլուխ իւր .

Ուրիշի վրայ . Ա,ծ, գօտի ընդ մէջ նորտ .

Իր վրայ . Ա,ծ,ու- գօտի ընդ մէջ իւր :

213 . Կան անասնի բայեր ալ որոնց կրաւորա-  
կանը ներգործականէն տարրեր նշանակութեամբ  
գարձեալ Ներգործական է , եւ Հայցական իրն-  
գիր կ'առնէ . զոր օրինակ .

Պահանջէ 'ի մէնջ համարս . Մենէ հաշիւ կը սրահանջէ :

Պահանջի՞մ համարս . Հաշիւ պարտըկան ենք :

Բաժանեցին զաւարն . Աւարը բաժնեցին :

Բաժանեցան զաւարն . Աւարէն բաժին առին :

Չէզոք Բայեր .

214 . Չէզոք բայերը սովորաբար Հայցական  
խնդիր չեն ունենար (89) : Աս պատճառաւ եր-



բոր Ներգործական բայ մը առանց սեռի խնդրոյ է, չէզոքաբար առնուած կ'ըսուի. զոր օրինակ.

Համապատասխանի. Այլը եւ համերը են, ոչ Գեանեն եւ ոչ լեն:

Աս օրինակներուն մէջ Ռ-անին, Տեանեն, Լ-են, Ներգործական բայերն առանց դործողութեան առարկայի, ոյինքն առանց Հայցականի, լակ Կ-անելու, Գ-անելու, լենու դործողութիւնը ցուցնելու համար՝ չէզոքաբար առնուած են:

215. Արաւորական բայերն ալ շատ անգամ չէզոքաբար կ'առնուին, եւ ան ատեն Բացարձակական հոլով խնդիրը չեն ունենար. զոր օրինակ.

Երկրքին որդիք նորա սպանան:

Արքայութիւն երկնից Բռնադատի:

Ժողովի որոմն եւ 'ի հուր արէ:

Աս օրինակներուն մէջ Սպանան, Բռնադատի, Ժողովի, Արէ բայերը լակ ըւտու մը կը նշանակեն, ոչ թէ մէկուն ձեռքով ըլլալ. անոր համար կրաւորական չեն այլ չէզոք:

216. Ասոր հակառակ՝ չէզոք բայերը երբեմն Հայցական խնդիր կ'առնեն, եւ ան ատեն Ներգործաբար առնուած կ'ըսուին. զոր օրինակ.

Գնացին նորա գճանապարհ լերինն:

Շրջեցաւ նա շէրիւն մինչեւ 'ի գետն մեծ:

Նորա բնակեցան զէզ ծովուն, եւ սորա՝ զհոլն հիւսիսայ:

Անց զՅոզղանան:



217 . Չէզոք բայերուն արմատները կամ ա-  
նոնց մօտ խնտատ ունեցող բառեր՝ չէզոք բայե-  
րուն քով Հայցական հոլով կրնան դրուիլ . զոր  
օրինակ .

Եւ երկեան երկիւղ մեծ :

Բազում եւ ազգի ազգի շաւիւնս շայն եւ աստ եւ  
անդ :

Խնդացին յոյժ ուրախութիւն մեծ :

Եւ նորա գնոյն գուն ննչէջին :

Փոխանակ ըսելու՝ Երկեան երկիւղի մեծաւ . Խնդաւ  
ցին ուրախութեամբ մեծաւ , եւ այլն :

218 . Ասանկ բայերու հետ յարարերական  
գերանունն ալ հայցական կը դրուի , երբոր յա-  
րարերալը Բային արմատն է . զոր օրինակ .

Ասան յանցանացն ղը յանցեալ :

Ի մեղս իւր ղը մեղալ :

Բժշկել ՚ի վիրացն ղը խոցեցին գնա :

Ոչ թողից քեզ զանարդանս դիցն ղը անարդե-  
ցեր գնտա :

Փոխանակ ըսելու՝ ոչ՝ յանցեալ , ոչ՝ մեղալ , ոչ՝ ա-  
նարդեցեր , եւ այլն :

219 . Ինչպէս որ հայցական հոլովը ներդար-  
ժական բայերուն սեռի խնդիր կը կոչուի , ա-  
սանկ ալ ուրիշ հոլովներ , ինչպէս Տրականը ,  
Բացառականը , Վործիականը եւ Նախադրու-  
թիւններ իրենց խնդրովը մէկտեղ՝ ամեն տեսակ  
բայերու խնդիր են . զոր օրինակ .

Ետ նմա սրարդեալ .



Գայր յագարակէ :

Մպանառ սրճ :

Գնաց զինի նորա :

Խօսեցայց շատն քո :

Եւ ուրիշ ասոնց նմաններ :

220 • Տրականը՝ Որո՞ն, քի՞ճ, հարցման պատասխան է . վերի օրինակներուն մէջ կրնանք աս հարցումներն ընել .

Պարզե տուաւ . — Որո՞ն . — Անոր :

221 • Բացառականը՝ Որ՞է, կամ Ո-տի՞ . քի՞ճ, ներքէքէ՞ն, հարցման պատասխան է :

Կու գար . — Ո-տի՞ . — Ագարակէ .

222 • Գործիականը՝ Որո՞՛վ, Ինչո՞՛վ . քի՞ճ, նէ՞նէ, հարցման պատասխան է :

Սպաննուեցաւ . — Ինչո՞՛վ . — Սրով :

223 • Նախադրութեամբ հանդերձ խնդիրներն ալ՝ նախադրութեան խմաստին նայելով այլեւայլ հարցումներու պատասխան են :

Ասոնց վրայ ետքը պիտի խօսինք . հոս մինակ քանի մը հարկաւորները դնենք :

224 • Ի կամ յ\* նախդիրը, թէ եղակիի եւ թէ յօքնակիի մէջ, առանց զի հայցականով գէտ ՚ի տեղ մը շարժում կը ցուցնէ . զոր օրինակ .

Գնաց ՚ի քոն իւր . Գնացին ՚ի քոնս իւրեանց :

Սրկին զնա ՚ի գո-բն առիւծուց :

Ընկէց զանձն ՚ի ծով . Եմուտ ՚ի պարպեղ .

Եւ ՚ի քանիս . վերացաւ յերկնս .

\* Արդէն ըսած ենք թէ ճշնաւորով սկսած բառերու վերայ ՚ի տեղ կը դրուի : Տէն, էջ 8 . Ծանօթ :



Աս խօսքերուն մէջ , Պնաց , Պնացին , Արհին ,  
Բնէն , Եճուս , Եւ , Վերացաւ , գէպ 'ի տեղ մը  
չարժում ցուցնող բայեր են , ուստի եւ խնդիր-  
ները 'ի կամ , նախդիրով առանց չ'ի հայցական  
դրուած են :

225 . Աս ձեւը\* , ո՞ր , նէ՞րէյէ , հարցման կը  
պատասխանէ . զոր օրինակ .

Ո՞ր գնաց . — 'ի քան իւր , իր տունը .

Ո՞ր գնացին . — 'ի քան իւրեանց , տուներին :

226 . 'ի կամ , նախդիրը եզակիի մէջ տրա-  
կանով , յոքնակիի մէջ առանց չ'ի հայցականով  
գաղարում կը ցուցնէ . զոր օրինակ :

Մնաց 'ի քան իւրում . Մնացին 'ի քան իւրեանց .

Եկաց 'ի գէն . Հեղձաւ 'ի ծովու . Երջէր 'ի սարսի-  
ւն . Նստէր 'ի քանիսն . Բազմի յերկին .

Աս խօսքերուն մէջ ալ , Մնաց , Մնացին , Ե-  
կաց , Հեղձաւ , Երջէր , Նստէր , Բազմի , բայերը  
տեղ մը դադարում կը ցուցնեն . անոր համար  
խնդիրները 'ի կամ , նախդիրով եզակիի մէջ  
տրական , յոքնակիի մէջ առանց չ'ի հայցական  
դրուած են :

227 . Աս ձեւը\*\* ո՞ր , նէ՞րէրէ , հարցման կը  
պատասխանէ . զոր օրինակ .

\* Աս ձևին նախդրի փրահան ըստւած է :

\*\* Աս ձևին ներոյսական ըստւած է :



Ո՞ր մնաց . — 'ի քան իւրում, իր տունը .

Ո՞ր մնացին . — 'ի քան իւրեանց, տունեքնին :

228 . Չորրորդ, Հինգերորդ եւ Վեցերորդ  
հոլովմանց բառերը, թէ շարժում եւ թէ դա-  
դարում ցուցնելու համար՝ առանց 'ի հայցա-  
կան կը դրուին . զոր օրինակ .

Շարժում . Եմուտ 'ի յորն .

Դադարում . Եսուք են 'ի յորն .

Շարժում . Ենկաւ 'ի գէփն .

Դադարում . Հեղձաւ 'ի գէփն .

Շարժում . Եմուտ 'ի լոյսն .

Դադարում . Բնակէ 'ի լոյսն .

Շարժում . Եստոյց զնա յախտան .

Դադարում . Եստաւ յախտան .

229 . Երբոր խօսքն անջի կամ անջնաւորեալ իւ-  
րաց վրայ է, 'ի կամ յ նախդրի սեղ, առ կը  
դրուի . զոր օրինակ .

Եկն առ նա . Գնաց առ հայրն . Սուտքեաց առ իւ-  
խանան :

Եկաց առ նա . Եստի՞ առ հօրն . Բնակեցաւ առ սղ-  
գականին իւրում :

230 . Չ, նախիրն առանց 'ի ի բացառակա-  
նով բանի մը շրայով կը նշանակէ . զոր օրինակ .

Այր մի էր մեծատուն, որոյ էր անունս . եւ ե-  
ղև զնա՞նէ՞ ամբաստանութիւն թէ վասնիցէ զինչ՞  
նորա :

Հարուստ մէկը կար որ անունս մը ունէր . ա-

\* Աս ձեկն պարճական ըստւած է :



որ շրայով ամբաստանութիւն եղաւ թէ ինչքերը  
կը վատնէ :

Մանեան վասն բանին որ սասցաւ նոցա զման-  
կանէն . Տղուն շրայով ըսուած խօսքին համար գիտցան :

Ոչ գիտացին թէ զ՛որէ ասէր ցնտա . Չխնացան  
թէ հօրը շրայով կ'ըսէր :

231 . Չ , նախդիրը գործիականով ԲՈՆԵԲԻԸ  
կը նշանակէ . զոր օրինակ .

Խանեցան զնձա\* ժողովուրդք բազումք . Շատ  
ժողովուրդ անոր ԲՈՆԵԲԻԸ լեցուեցաւ :

Պատեացեն զեւ թշնամիք քո պատնէշ . Թշնա-  
միներդ քու ԲՈՆԵԲԻԸ պատնէշ պիտի պատեն :

Ուրիշ նախդիրներու վրայ ետքը պիտի խօ-  
սինք :

Գ Լ Ո Ի Խ Գ .

### ՍՏՈՐՈԳԵԼԻ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԱԼ

232 . ՍՏՈՐՈԳԵԼԻ կ'ըսուի ան բառը որ սովո-  
րաբար էական բայէն ետքը կու գայ , եւ էա-  
կան բային Տէր բայիին ինչ կամ ռ՛ըլլալը կը ցու-  
ցընէ . զոր օրինակ .

Դա ձԺ ես . Ես եմ որդին քո . Այրն այն էր իշխան .  
Դուք էք աշ երկրի . Նոքա եղիցին ձեր դատարար :

233 . Ան բառը որուն ստորագելին կը վերա-  
բերի , ՍՏՈՐՈԳԵԱԼ կը կոչուի : Ա երի օրինակնե-

\* Ըս ձեին պարտական ըսուած է :



րուն մէջ՝ ՏԵԾ, որդի, էշխան, աղ, դասարան, բա-  
ռերը ստորագելի են . Ղու, էս, դուր, այրն, նոս,   
բառերն ալ ստորագելի են :

234 . Կական բայէն զատ ուրիշ քանի մը  
ներդործական բայերու Տէր բային կամ Առի  
խնդիրն ալ ստորագելի կ'ունենայ . ինչպէս .  
Անուանէ՛մ, կոչէ՛մ, առնէ՛մ, դնէ՛մ, կարգէ՛մ, կացու-  
ցանէ՛մ, բայերը . զոր օրինակ .

Դու կոչեացիս կեփա . Որ անուանեցաւ Քրիստոս .  
կոչեցի զձեզ Բարեկամ . Արար զմեզ սուրբ . Դու զ՞  
առնես զքեզ . Ո՞ կացոյց զիս դասար :

Աս օրինակներուն մէջ կեփա, Քրիստոս,  
Բարեկամ, սուրբ, ու՞, դասար, բառերը՝ Ղու,  
որ, զձեզ, զձեզ, զքեզ, զիս, բառերուն ստորո-  
գելիներն են :

235 . Ստորագելին ստորագելին հոլովը կը  
դրուի . ինչպէս օրինակներէն յայտնի\* է :

\* Ստորագելին ուրիշ Քերականութեանց մէջ ուղղական  
ինքի կոչուած է . բայց ուղղական խնդիր կո-  
չելըստ մեզ շատակ չէ . քանզի, ինչ էս օրինակներէն կը  
տեսնուի, ստորագելին հայցական ալ կը դրուի, երբոր  
ստորագելը հայցական է . մինակ ստորագելին ուղղա-  
կան եղած ատեն՝ ստորագելին ուղղական կ'ըլլայ : Եր-  
բոր բայը Կական բայն է, ստորագելին միշտ ուղղական  
կ'ըլլայ, քանզի Կական բային Տէր բային կը վերաբե-  
րի . բայց բայը ներդործական բայ մը եղած ատեն,  
ստորագելին ուղղական կ'ըլլայ, երբոր Տէր բային կը  
վերաբերի . հայցական կ'ըլլայ, երբոր սեռի խնդրոյն  
կը վերաբերի :



236 . Ստորագելին խօսքին մէջ իր տեղը կըրնայ փոխել , բայց իմաստէն կը հասկըցուի . ուստի կրնայ ըսուիլ .

Աստուած է արար . Աստուած արար է . Արար է Աստուած :

237 . Ստորագելին երբոր գոյական է , երբեմն է նախդրով հայցական ալ է . զոր օրինակ .

Եղիցուք ձեզ 'ի ծառայս . փոխանակ ըսելու . Եղիցուք ձեզ ծառայ :

238 . Ստորագելին հայցական եղած ատեն անորոշ հայցական , այսինքն առանց չի հայցական կը դրուի . ինչպէս .

Կոչեցի զձեզ Բարեկամս . Արար զմեզ արար :

239 . Տէր բային եզակի եղած ատեն ալ բայը յոքնակի կը դրուի , երբոր ստորագելէ առ յոքնակի է . զոր օրինակ .

Կռնոտան դէ՛ էն . Հերս երկայնս ունել կնոջ մարդոյ չառ՛ էն . Յայտ է թէ մտաց Բաշազան՛ էն աղանդն :

Ք Լ Ո Ւ Խ Դ .

ԲԱՅԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՅԱՅԱՅՏԵԱԼ .

240 . Բայայայտիչ կ'ըսուի ան բառը որն սրտուրիչ բառ մը աւելի յայտնի ճանչցընելու կամ ուրիշներէն որոշելու համար՝ անոր քով կը դրուի զոր օրինակ .



Աստուծոյ , Կառման Պետրոսի Կառման Կառման :

Յոսիպի , Կառման Մարտինի :

Յոսիպի , Տեառն :

Երբայք

241 . Բացայայտչին բացատրած կամ յայտնի ըրած բառը՝ Բացայայտեալ կ'ըսուի . վերի օրինակներուն մէջ , Ասանէր , Յոսիպի , Յոսիպի , բացայայտեալ են :

242 . Բացայայտիչը բացայայտեալին հետ թուով ու հոլովով կը համաձայնի . եւ , բաց 'ի ղ եւ 'ի նախդիրներէն , եթէ բացայայտեալը նախդիր կամ նախադրութիւն մը ունի , անիկա բացայայտչին վրայ չը կրկնուիր . զոր օրինակ .

Փախուստն Անտիպ , հոր սրբոյն Գրիգորի .  
Հանդերձ կնաւ իւրով Զմայրն ամենայն առաքի-  
նութեանց , զխոնարհութիւն , չունէր յանձին :

Կուոյ եւ զբոշկաց հանգամանք առ Թարայիւ ,  
Հարբ Արրահամու , եղեն : Խնդրեալ չուր յինէն ,  
'ի կնոջէ Սամարացոց : Սոլան զՅոսիպի , զեղբայ-  
րն Յովհաննու :

243 . Շատ անգամ մարդու , տեղւոյ եւ ա-  
միաներու յատուկ անուանց քով՝ հասարակ ա-  
նուն մը իբրեւ բացայայտիչ կը դրուի . զոր օրինակ .

Սոլաման արքայ . Արտաք զեւ . Այլարատ զաւառ :

244 : Ասանկ բառեր իրարու հետ հետեւ-  
եալ կերպով կը համաձայնին .

Ա . Կ . Եթէ յատուկ անունը մարդու անուն  
է , եւ նախադրութիւն է , վիճակ կամ պաշտօն յու-



յընտղ հասարակ անուան հետ կը համաձայնի .  
զոր օրինակ .

Առ կղկոսատրաւ դշտայիւ . Ետայեայ մարդա-  
րէի . Ի Շապհոյ, արքայից արքայէ . Առ հերոնիւ  
կայսերաւ :

2 . Երբեմն ալ յատուկ անունն անփոփոխ  
կը մնայ . զոր օրինակ .

Եւ հրաման յՅգոսաոս կայսերէ . Սանատրուկ  
արքայի . Բակուր բդեշխի . Աշխէն տիկնաւ .

3 . Իսկ երբոր յատուկ անունն իբրեւ բա-  
ցայայտիչ վերջը դրուած ըլլայ , միշտ կը համա-  
ձայնի . զոր օրինակ .

Առ դշտայիւ կղկոսատրաւ . վասն մարդարէ-  
ին Դաւթի . Յարքայէն Սողոմոնէ . Առ կայսերաւ  
հերոնիւ :

Ե . 1 . Երբոր Յատուկ անունը հաղհի , գեպի ,  
լեւան անուն է , հաղատ , գեպ , լեւան բառերն  
իրբեւ բացայայտիչ վերջը դրուած ատեն , յա-  
տուկ անունն անփոփոխ կը մնայ . զոր օրինակ .

Երուսաղէմ քաղաքի . Ի Սիան լեռնէ . յԱյրա-  
բատ դաւառի . զՆիրատ գետով :

Չըսուիր , Երուսաղէմի քաղաքի , Ի Սիանէ լեռ-  
նէ . զՆիրատաւ գետով :

Հատուած գնացեալ վարդգէս մանուկն 'ի Տրա-  
հայ դաւառէն՝ եկեալ նստաւ զՇեշ բլոււ , շիւրհէր-  
հաղատ , զԲասաղ գետով : Եւ Գ վիդաս . հայոց :

2 . Բայց յատուկ անունը վերջը դրուած



ատենն սովորաբար իբրև յասկացուցիչ սեռականն կը դրուի . զոր օրինակ .

Քաղաքինն Երասաշէթ . ի լեռնինն Սեռի . ի Գաւառինն Արարաբայ . Զգեառնն Երասայ :

Գ . 1 . Նոյնպէս ամսոյ անուններն առաջ դրուած ատենն անսխալօք կը մնան . զոր օրինակ .

Մարտ ամսոյ . Յառաջ քան զերիս կաղանդացն Յուլեայ , որ օր վեց է Նոսնն ամսոյ որ է Մարերի :

2 . Իսկ ամսոյն յատուկ անունը վերջը դրուած ատենն՝ իբրև յասկացուցիչ սեռականն կը դրուի . զոր օրինակ .

Յամսեանն Մարտի . Յամսոյն Յուլեայ , այսինքն յուլիսի :

3 . Հայոց ամիսները հոլովել սովորութիւնն չէ , ուստի վերջը դրուած ատենն ալ անսխալօք կը մնան . ինչպէս . Ամսոյն Մարերի . Յամսեանն Քաղոց :

## Գ Լ Ո Ի Խ Ե .

### ՎԵՐԱԴԻՐ ԵՒ ՎԵՐԱԴՐԵԱԼ

245 . Վերադեր կ'ըսուի ան բառը որն որ ուրիշ բառի մը քով դրուելով անոր որակատեսիւնը կը ցուցնէ . զոր օրինակ . Այր Իմաստուն . Բարաստ խօսել :

Աս օրինակներուն մէջ Իմաստուն բառը Այր բառին վերագիրն է . Բարաստ բառն ալ խօսել բառ-



ուն վերադիրն է :

246 . Վերադիր մը առնեցող բառը Վերադրեալ է . վերի օրինակներուն մէջ Սար, Խօսել, բառերը Վերադրեալ են :

347 . Վերադիր կ'ըլան Ս.Ժ. աշտանն ու Մ. աշտանը :

Յօդ . Ա .

Ա. ծառայան Վերադիր :

248 . Ա. ծառայանին այլ եւ այլ տեսակներուն վրայ առջի մասին մէջ խօսեցանք :

249 . Ա. ծառայան մը կրնայ առանց գոյականի գործածուիլ . ան առեն ածականը գոյականաբար առնուած կ'ըսուի : Բայց ածականները սովորաբար գոյականի մը հետ կը գործածուին . եւ ան առեն՝ ածականը Վերադիր կը կոչուի : Վերադիր եղող ածականը իր գոյականին հետ կը հարավի . եւ ասոր կ'ըսուի Ա. ծառայանին իր գոյականին հետ համաչափելը , որուն վրայ հիմայ պիտի խօսինք :

250 . Հայերէնի մէջ ածականը գոյականէն թէ առաջ եւ թէ վերջը կրնայ գրուիլ :

251 . Ա. ծառայանը գոյականէն առաջ գրուած առեն՝ սովորաբար անփոփոխ կը մնայ , մինակ գոյականը կը հարավի , բայց նախդիրն ածականին վրայ կը գրուի : Օրինակ .

Եղան .

Յոյնացի .

Ո . Իմաստուն որդի

Իմաստուն որդիք



Հ . շխմաստունն որդի շխմաստունն որդիս  
 Ս . խմաստունն որդւոյ խմաստունն որդւոյ  
 Տ . խմաստունն որդւոյ խմաստունն որդւոյ  
 Բ . , խմաստունն որդւոյ , խմաստունն որդւոյ  
 Գ . խմաստունն որդւով խմաստունն որդւովք

252 . Ածականը գոյականին յետագաս եւ զած ատենն՝ անոր հետ մէկտեղ կը հոլովի , բայց նախդիրը առջորդաբար մինակ գոյականին վրայ կը դրուի : Օրինակ .

Եղաչի .

Յորհաչի .

Ո . Որդի խմաստունն      Որդիք խմաստունք  
 Հ . շՈրդի խմաստունն      շՈրդիս խմաստունս  
 Ս . Որդւոյ խմաստնոյ      Որդւոյ խմաստնոյ  
 Տ . Որդւոյ խմաստնոյ      Որդւոյ խմաստնոյ  
 Բ . , Որդւոյ խմաստնոյ , Որդւոյ խմաստնոյ  
 Գ . Որդւով խմաստնով      Որդւովք խմաստնովք

253 . Նախ ըսինք որ ածականը նախագաս եղած ատենն՝ առջորդաբար անխտիտիս կը մնայ :

Պէտք է գիտնալ որ երբեմն , մանաւանդ միավանկ ածականները նախագաս եղած ատենն կը հոլովին . ուստի կ'ըսուի :

Քաջի ատն . Մէջ աւ պատերազմաւ . Բարեաց գործոյ . Չարաց իրաց , եւայլն :

254 . Երկրորդ ըսինք որ նախդիրը նախագաս բառին վրայ կը դրուի : Բայց պէտք է գիտնալ որ երբեմն երկուքին վրայ ալ կրնայ կրկնուիլ . ինչպէս .



Աս նա զաճիւնախառն զկրակն . Յամենայն իսկ  
'ի թուղթսն . Սամենայն 'ի կեանս քո . Աճեր 'ի վե-  
րայ դորս զանհարին զվեղաղ . Ասէ յարսն յյա-  
րուցեալս 'ի վերայ նորս . Ընդ ամենայն անապատն  
ընդ մեծ եւ ընդ ահագին :

255 . Երբոր դոյաւկանը երկու յեռադաս ա-  
ծական ունի , երկուքն ալ դոյաւկանին հետ կը  
հորովին , եւ երկրորդ ածականին վրայ ալ նախ  
դերը կրնայ կրկնուիլ . զոր օրինակ .

Եղաէի .

- Ո . Այրս այս մեծ
- Հ . ՂԱյրս զայս զմեծ
- Ս . Անս այսորիկ մեծի
- Տ . Անս այսորիկ մեծի
- Բ . , Անիս յայտմանէ 'ի մեծէ
- Ք . Արամբս այսուիկ մեծաւ

*Գր. Գայ*  
*Եղ. այն է*

Յոհնաէի .

- Ո . Արքս այսորիկ մեծք
- Հ . ՂԱրսս զայստիկ զմեծս
- Ս . Արանցս այսոցիկ մեծաց
- Տ . Արանցս այսոցիկ մեծաց
- Բ . , Արանցս յայսցանէ 'ի մեծաց
- Ք . Արամբքս այսորիք մեծօք

Եղաի .

- Ո . Եղբայր քո երէց
- Հ . ՂԵղբայր քո զերէց
- Ս . Եղբօր քոյ երիցու
- Տ . Եղբօր քում երիցու
- Բ . , Եղբօրէ քումմէ ,երիցուէ
- Ք . Եղբայր քով երիցու



256 . Այսպէս կ'ըսուի . Յաւուր միում յերեւել-  
 ւոջ . Որ ոք լուծցէ զմի 'ի պատուիրանացս յայս-  
 ցանէ 'ի քրոնոնց . Քաղեցաւ յայրի անդ 'ի հե-  
 նոսմ . Գաի զուշխարն իմ շէրոսեալ :

Բ . Յոցական ածականներ :

257 . Յուցական ածականները գոյականին  
 թէ նախադաս եւ թէ յետադաս կրնան ըլլալ :

258 . Նախադաս եղած ատեն՝ ցուցականին  
 հարձ հոլովները կը դործածուին . զոր օրինակ .

	Եղանէ .	Յոցական .
Ո .	Այս տուն	Այս տունք
Հ .	Վայս տուն	Վայս տունս
Ս .	Այսր տան	Այսց տանց
Տ .	Այամ տան	Այսց տանց
Բ .	Վայամ տանէ	Վայսց տանց
Գ .	Այսու տանք	Այսու տանքք

259 . Յետադաս եղած ատեն երկայն հոլով-  
 ները կը դործածուին . զոր օրինակ .

	Եղանէ .	Յոցական .
Ո .	Տունս այս	Տունքս այսոքիկ
Հ .	ՎՏունս Վայս	ՎՏունսս Վայսոսիկ
Ս .	Տանս այսորիկ	Տանցս այսոցիկ
Տ .	Տանս այամիկ	Տանցս այսոցիկ
Բ .	'ի Տանէս յայամանէ 'ի Տանցս յայսցանէ	
Գ .	Տանքս այսուիկ	Տանքքս այսոքիւք

260 . Ինչպէս օրինակներէն յայտնի է , ցու-  
 ցական ածականը յետադաս եղած ատեն՝ դո-



յականին վրայ « գիրը կը դրուի , եւ նախդիր-  
ներն երկուքին վրայ ալ կը կրկնուին :

261 . Այդ , այն ցուցականներն ալ ասոր պէս  
կ'ըլլան , միայն ասոնք գոյականին յետագաս  
եղած ատեն՝ գոյականին վրայ « գիրը կը դրուի ,  
երբոր այդ ցուցականն է . » գիրը կը դրուի , եր-  
բոր այն ցուցականն է . զոր օրինակ .

Այրդ այդ , առնդ աշդորիկ , զայլդ զայդ .  
Այրն այն , առնն այնորիկ , արամբն այնուիկ :

262 . Աստ , անդ . այսը , անդը , այդը . աստի .  
անտի , այտի , տեղական մակբայները ցուցականե  
ածականներու տեղ գոյականներու հետ կը գոր-  
ծածուին հետեւեալ կերպով .

263 . Աստ , անդ , դադարում ցուցընելու  
համար . զոր օրինակ .

Նստէր 'ի աստն անդ . կային յէկէղէց-ոջ անդ .  
փոխանակ ըսելու , 'ի աստն յայնմի . յէկէղէց-ոջն  
յայնմի :

264 . Այսը , անդը , այդը , շարժում ցուցընել-  
լու համար . զոր օրինակ .

Գնաց 'ի աստն անդը . երթ 'ի հրատարակն այդը .  
Եկին 'ի աստն այսը . փոխանակ ըսելու , գնաց  
'ի աստնն յայն . երթ 'ի հրատարակն յայդ . եկին 'ի  
աստնն յայս :

Աստի , անտի , այտի , բացառական գոյականի  
հետ . զոր օրինակ .

Եւ 'ի աստն անտի . Մեկնեցաւ 'ի աստնն աս-  
տի . Եւ յերկէ այտի . փոխանակ ըսելու , 'ի աստնն  
յայնմանէ . 'ի աստնն յայնմանէ . յերկէ յայդմանէ :



Ստացական ածականներ :

265 . Ստացական ածականները սովորաբար գոյականին յետագաս կ'ըլլան , ու անոր հետ մէկտեղ կը հօլովին . զոր օրինակ .

	Եղանի .	Յոգնանի .
Ո .	Տուն իմ	Տունք իմ
Հ .	շՏուն իմ	շՏունս իմ
Ս .	Տան իմոյ	Տանց իմոյ
Տ .	Տան իմում	Տանց իմոց
Բ .	'ի Տանէ իմմէ	'ի Տանց իմոց
Ք .	Տամբ իմով	Տամբք իմովք

266 . Աս ածականները գոյականին նախադաս ալ կ'ըլլան ու դարձեալ մէկտեղ կը հօլովին .

	Եղանի .	Յոգնանի .
Ո .	իմ տուն	իմ տունք
Հ .	շիմ տուն	շիմ տունս
Ս .	իմոյ տան	իմոց տանց
Տ .	իմում տան	իմոց տանց
Բ .	, իմմէ տանէ	, իմոց տանց
Ք .	իմով տամբ	իմովք տամբք

267 . Ինչպէս օրինակներէն յայտնի է , ի՞՞հ , եւ ուրիշ ստացական ածականներ գոյականի հետ գործածուած տուն՝ յոքնակի ուղղականին եւ հայցականին մէջ \* եւ « գիրերը չեն առներ : Բայց գոյականաբար գործածուած առտուն՝ յոքնակիին վրայ ան գիրերը կը գրուին . ուստի կ'ըսուի .



Իմք , զիմն . քոյք , զքոյս . իւրք , զիւրս . եւ այլն :  
 Հանաչեմ զիմնն . Չքոյսն քեզ մատուցա-  
 նեմք . Յիւրսն եկն եւ իւրսն զնա ոչ ընկալան :

268 . Քո , է-ր , Տէր , Յէր , ստացական\* ածա-  
 կաններն ալ ճիշդ է՞ ին պէս կը համաձայնին ի-  
 ընց դոյականին հետ . զոր օրինակ . Տուն քո ,  
 տան քու , տան քում , 'ի տանէ քումսէ . Տուն  
 մեր , տան մերում . Տուն իւր , տան իւրում .  
 Տուն ձեր , տան ձերում , եւ այլն :

269 . Բայց ' նորա , նոցա , է-րէանց ածական  
 չեն , այլ 'նա , նոքա , է-րէանց անձնական գերա-  
 նուններուն սեռականներն են , եւ իբրեւ յատ-  
 կացուցիչ անվտիտիս կը մնան , այսպէս . Տուն  
 նորա , տան նորա , 'ի տանէ նորա . Տուն նո-  
 ցա , տան նոցա . Տուն իւրեանց , տան իւր-  
 եանց , եւ այլն :

270 . Ի՞ճ , \*ո , Տէր , Յէր , է-ր , ալ անձնական  
 գերանուններուն սեռականն են , բայց ածական

Ի՞ճ , է-ր , Տէր , Յէր , ստացական ածականներէն տեսակ մը  
 ստացական անուններ ալ կը շինուին , որոնք միշտ դոյա-  
 կանաբար կը դորձածուին , եւ Չորրորդ հոլովման պէս  
 կը հոլովին այսպէս . Իմայ , իմայոյ , իմայով . Իւրայ ,  
 իւրայոյ , իւրայով . Մերայ , մերայոյ , մերայով . Չե-  
 րայ , ձերայոյ , ձերայով : Իմայք , իմայոց . Իւրայք ,  
 իւրայոց . Մերայք , մերայոց . Չերայք , ձերայոց , եւ այլն :

'Նոյնպէս նորա , նոցա , նոյն կերպով կ'ըլլան . Նորայ ,  
 նորայոյ , նորայով . Նոցա , նոցայոյ , նոցայով .

Ամանք իմային , իմայնոյ . Իւրային , իւրայնոյ . Մե-  
 րային , մերայնոյ . Նորային , նորայնոյ , եւ այլն , ալ Ե-  
 սած են : Բայց ընտիր հեղինակաց մէջ մեր բոսժ ձե-  
 բովն է :



են , եւ Չորորդ հարովման պէս կը հօլավին , ինչ  
պէս օրինակներէն յայտնի է :

271 . Իւր ստացական ածականն ու Իւրեանց  
յատկացուցիչն ան ատենը գործածելու է , եր-  
բոր ստացեալն ու Իւր Բային միեւնոյն անձն են :  
Իսկ եթէ Ստացեալն ու Տէր բային տարբեր ան-  
ձեր են , Իւր , Իւրեանց ի տեղ , Կորա , Կոցա պէտք  
է գործածել : Ուստի պէտք է ըսել .

Գնաց 'ի տուն , 'ի տունս Իւր . Եթէ տունին  
տէրը գացողն է :

Գնացին 'ի տուն , 'ի տունս Իւրեանց . Եթէ  
տունին տէրերը գացողներն են :

Բայց պէտք է ըսել .

Գնաց 'ի տուն , 'ի տունս Կորա , 'ի տուն , 'ի  
տունս Կոցա . Եթէ տունին տէրերն ու գացողնե-  
րը տարբեր անձինք են :

272 . Երբոր խօսքի մը մէջ Իւրաւանչեւ Իւր բա-  
ռը կայ , Ստացիչը առաջին եւ երկրորդ դէմքի  
անձինք կամ իրեր եղած ատենն ալ իւրաքան-  
չիւրէն ետքը ստացական ածականը եղակի եր-  
րորդ դէմք , այսինքն Իւր կը դրուի . զոր օրինակ .

Երթիցուք իւրաքանչիւր յերկիր Իւր . փոխա-  
նակ ըսելու , յերկիր ձեռ .

Ասացէք իւրաքանչիւր ցրնկեր Իւր . փոխանակ  
ըսելու , ցրնկեր ձեռ :

Դիք իւրաքանչիւր զսուր Իւր յազդեր Իւրոս . փո-  
խանակ , զսուր ձեռ յազդեր ձեռոս :

Չգոյշ լերուք իւրաքանչիւր յընկերէ Իւր . փո-  
խանակ , յընկերէ ձեռէ :



Դասուցայց զձեզ, խրաքանչիւր ըստ ճանապարհաց  
 է-րոյ . փոխանակ, ըստ ցանապահաց յէրոյ :

Թէպէտ երկրորդ կերպով ալ գործածուած  
 կայ, բայց առաջին կերպն աւելի յարմար է :

Դ . Թո-տէան ածականներ :

273 . Թուական ածականներն իրենց գոյա-  
 կանին հետ հետեւեալ կերպով կը համաձայնին :

274 . Մէ\*, գոյականին թէ յետադաս եւ  
 թէ նախադաս կրնայ ըլլալ, եւ երկու դէպքին  
 մէջ ալ գոյականին հետ կը համաձայնի . զոր օ-  
 րինակ .

Ո .	Այլ մի	Մի ազգ
Հ .	ԶԱյլ մի	ԶՄի ազգ
Ս .	Առն միոջ	Միոյ ազգի
Տ .	Առն միոջ համ միում	Միում ազգի
Բ .	Առնէ միոջէ	՚ի միոջէ ազգէ
Գ .	Արամբ միով	Միով ազգաւ

275 . Երէ՞, երե՞, չոր՞, միշտ յոքնակի գոյ-  
 ական կ'ուզեն, եւ թէ առաջ ու թէ վերջը  
 գրուելով՝ միշտ գոյականին հետ մէկտեղ կը հո-  
 լովին :

\* Պէտք է գիտնալ որ Տ բառը գոյականէն ետքը գրուած  
 ատեն՝ ա՞ն, ճ, կը նշանակէ . ուստի և Այլ Տ, որդի  
 Տ . Մարդ ճ, որդի ճ, կը նշանակեն :

Բայց Տ, գոյականէն առաջ գրուած ատեն՝ Թուական  
 միութիւն, կամ Տի հոք կը նշանակէ . ուստի, Ի Տոմ  
 տան, Տիւն ահամբ . Մէի տան մէջ, Տի աչքով, կը նշա-  
 նակեն :



## Նախագրան .

- Ո . երկու , երեք , չորք արք  
 Հ . շերկուս , շերիս , շչորս արս  
 Ս . երկուց , երից , չորից արանց  
 Տ . երկուց , երից , չորից արանց  
 Բ . յերկուց , յերից , 'ի չորից արանց  
 Գ . երկու , երիւք , չորիւք արամիւք

## Յեւագրան :

- Ո . Արք երկու , երեք , չորք  
 Հ . շԱրս երկուս , երիս , չորս  
 Ս . Արանց երկուց , երից , չորից  
 Տ . Արանց երկուց , երից , չորից  
 Բ . յԱրանց երկուց , երից , չորից  
 Գ . Արամիւք երկու , երիւք , չորիւք

276 . Հինգէն անդին մնացած թուականները թէ եզակի եւ թէ յոգնակի գոյական կրնան ունենալ , ու թէ առաջ եւ թէ վերջը կրնան գրուիլ :

Առաջ գրուած ատեն՝ անսխիտիս կը մնան , եթէ գոյականը եզակի է . զոր օրինակ .

- Ո . Հինգ հաց      Վեց կանգուն      Տասն այր  
 Հ . շՀինգ հաց      շՎեց կանգուն      շՏասն այր  
 Ս . Հինգ հացի      Վեց կանգնոյ      Տասն առն  
 Տ . Հինգ հացի      Վեց կանգնոյ      Տասն առն  
 Բ . 'ի Հինգ հացէ      'ի Վեց կանգնոյ      'ի Տասն առնի  
 Գ . Հինգ հացիւ      Վեց կանգնով      Տասն արամիւք

Չըսուիր , Հնգէ հացի . Վեցի = կանգնով . Ի տասնէ առնէ :



277 . Իսկ եթէ գոյականը յօքնակի է . հին-  
գէն անդին թուականներն առաջ դրուած առեն,  
կրնան թէ հօլովիլ եւ թէ հօլովիլ . զոր օրինակ .

Ո .	Հինգ ամբ	հաճ	Հինգ ամբ
Հ .	Հինգ ամս		Հինգ ամս
Ս .	Հինգ ամաց		Հնգից ամաց
Տ .	Հինգ ամաց		Հնգից ամաց
Բ .	Հինգ ամաց	Ի	Հնգից ամաց
Պ .	Հինգ ամօք		Հնգօք ամօք

Այսպէս կրնայ ըսուիլ . Եօթն սարկաւա-  
զաց , հաճ Եօթանց սարկաւազաց . Երկոտասան  
առաքելովք , հաճ Երկոտասանիւք առաքելովք .  
Քառասուն մանկանց , հաճ Քառասնից մանկանց :

278 . Իսկ երբոր գոյականին յետադաս  
կ'ըլլան , միշտ յօքնակի գոյական կ'ուզեն , եւ  
անոր հետ մէկտեղ կը հօլովին . զոր օրինակ .

Ո .	Արք հինգ	Աւուրք տասն
Հ .	Հարս հինգս	ՀԱւուրս տասն
Ս .	Արանց հնգից	Աւուրց տասանց
Տ .	Արանց հնգից	Աւուրց տասանց
Բ .	Արանց հնգից	Աւուրց տասանց
Պ .	Արամբք հնգօք	Աւուրբք տասամբք

279 . Ինչպէս օրինակներէն կը տեսնուի , աս  
թուականները գոյականի հետ գործածուած ա-  
տեն՝ ուղղականին ու հայցականին մէջ + եւ «  
յօքնակիի նշանները չեն առներ . ուստի չըսուիր .  
զարս հինգս , աւուրք երկոտասանս , աւուրս  
երկոտասանս :



Բայց առանց գոյականի գործածուած ատեն կ'ըսուի . Երկոտասանին , զերկոտասանան . Քառասունին , զքառասունան , եւ այլն :

280 . Գասական թուականները միշտ եզակի գոյական կ'ուզեն , եւ թէ առաջ ու թէ վերջը կրնան դրուիլ . վերջը դրուած ատեն գոյականին հետ կը հոլովին , իսկ առաջ դրուած ատեն անփոփոխ կը մնան . զոր օրինակ .

Յեփարասա .

Նախարասա .

Ո . Յր երկրորդ

Երկրորդ օր

Հ . չՅր երկրորդ

ՉԵրկրորդ օր

Ս . Առւր երկրորդի

Երկրորդ առուր

Տ . Առւր երկրորդի , դուռ

Երկրորդ առուր

Բ . Յրէ երկրորդէ

Երկրորդ օրէ

Գ . Առւրք երկրորդաւ

Երկրորդ առուրք

281 . Գասական թուականը նախադաս եղած ատեն ալ կրնայ հոլովիլ , ուստի կ'ըսուի նաեւ յԵրկրորդո՞ւմ առուր . Ի չորրորդո՞ւմ պահու :

282 . Առաջին ածականը թէ առաջ եւ թէ վերջը դրուած ատեն կը հոլովի , այսպէս .

Առաջին օր , առաջնոյ առուր , յառաջնմէ օրէ . կամ՝ Օր առաջին , առուր առաջնոյ , առուր առաջնում . յօրէ առաջնմէ , եւ այլն :

283 . Նոյնպէս Վերջին ածականը կ'ըլլայ , վերջին օր , վերջնոյ առուր , վերջնում առուր . կամ՝ Օր վերջին , առուր վերջնոյ , առուր վերջնում , եւ այլն :



284 . Անճներական թուականները միշտ յոթնակի գոյական կ'ուզեն , ու գրեթէ միշտ առաջ գրուելով գոյականին հետ մէկտեղ կը հոլովին . զոր օրինակ .

- Ո . Երկոքին որդիք
- Հ . շերկոսին որդիս
- Ս . Երկոցունց որդւոց
- Տ . Երկոցունց որդւոց
- Բ . , Երկոցունց որդւոց
- Ք . Երկոքումիք որդւովք

285 . Աճնէի բառը միշտ գոյականաբար կը գործածուի . ուստի չըսուիր , Աճնէի որդիք նորա . այլ ըսելու , Աճնայն որդիք նորա :

286 . Անորոշ ածականները , ո՞ն , ո՞ք , ի՞ն , ի՞նչ , սովորաբար գոյականին յետագաս կ'ըլլան , ու թէ եզակի եւ թէ յոթնակի գոյականով մէկտեղ կը հոլովին . այսպէս .

Եղանի .

Յոհնանի .

- |     |                |               |
|-----|----------------|---------------|
| Ո . | Այր ոմն*       | Արք ոմանք     |
| Հ . | շԱյր ոմն       | շԱրս ոմանս    |
| Ս . | Առն ուրումն    | Արանց ոմանց   |
| Տ . | Առն ումեմն     | Արանց ոմանց   |
| Բ . | , Առնէ ումեմնէ | , Արանց ոմանց |
| Ք . | Արամբ ոմամբ    | Արամբք ոմամբք |

Եղանի .

Յոհնանի .

- |     |            |           |
|-----|------------|-----------|
| Ո . | Այր ոք     | Արք ոմանք |
| Հ . | շԱյր ոք    | Լայն      |
| Ս . | Առն ուրուք |           |



Տ . Ասն սակք  
 Բ . , Ասնէ սակքէ  
 Գ . Արամբ ոսամբ

	Եղակի .	Յոհնակի .
Ո .	Գործ իմն , ինչ	Գործք իմն , ինչ
Հ .	ՂԳործ իմն , ինչ	ՂԳործս իմն , ինչ
Ս .	Գործոյ իրիք	Գործոյ իրիք , ինչ
Տ .	Գործոյ իմիք	Գործոյ իմիք , ինչ
Բ .	'ի Գործոյ իմեքէ	'ի Գործոյ իմեքէ , ինչ
Գ .	Գործով իւիք	Գործովք իւիք , ինչ

287 . Ո՞ն , ո՞ր , անձանց համար կ'ըսուին . իսկ  
 է՞ն , է՞նչ , իրաց կամ շնչաւորաց համար կ'ըսուին :

288 . Ինչպէս օրինակներէն կը տեսնուի ,  
 է՞նչ , ամեն հոլովի տեղ կը դրուի . այսինքն՝ ան-  
 փոփոխ է :

289 . Մի-ս , անորոշ ածականը եղակի գոյա-  
 կան կ'ուզէ , ու նախադաս ըլլալով՝ անոր հետ  
 մէկտեղ կը հոլովի . այսպէս .

Ո . Միւս օր  
 Հ . ՂՄիւս օր  
 Ս . Միւսոյ աւուր  
 Տ . Միւսում աւուր  
 Բ . 'ի Միւսմէ օրէ  
 Գ . Միւսով աւուրք

290 . Նոյն , անորոշ ածականը թէ եղակի եւ

\* Ասոնք երբեմն կրնան գոյականէն առաջ դրուիլ . ուստի  
 կ'ըսուի . Ուրախ խիստաբար , ունեն կնոջ , առանց իրի-  
 ցանցանաց :



Թէ յարեակի գոյական կրնայ ունենալ, եւ միշտ յառաջ գրուելով գոյականին հետ կը հոլովի :

Եզակի .

Յոռեակի .

Ո .	Նոյն գործ	Նոյն գործք
Հ .	Ղնոյն գործ	Ղնոյն գործս
Ս .	Նորին գործոյ	Նոցին գործոց
Տ .	Նմին գործոյ	Նոցին գործոց
Բ .	'ի Նմին գործոյ	'ի Նոցին գործոց
Գ .	Նովին գործով	Նովին գործովք

Սոյն, դոյն, ալ այսպէս կը հոլովին :

291 . Ո՛ւ, ո՛, ո՛ր, ղէնչ, էնչ, որպիսի, քանի, որչափ, որքան, ածականները գրեթէ միշտ հարցական խօսքերու մէջ կը գործածուին :

292 . Ո՛ւ, ո՛, սովորաբար առանց գոյականի կը գործածուին, մինակ անձանց վրայ կ'ըսուին, եւ ո՞ւ, քե՞՛մ, կը նշանակեն . Ո՞ւ մերձեցաւ 'ի հանդերձս իմ :

293 . Ո՛ւ, ո՛, մինակ ո՛ր բառին հետ իբր ածական կը գործածուին :

Ո՞ւ կամ ո՞ ոք, ո՞յր ուրուք, ո՞մ ումեք, զո՞ ոք . Ո՞յք ոմանք, ո՞յց ոմանց, ո՞րո՛ւք ոմամք, եւ այլն :

294 . Որ՝ ածականը թէ անձանց եւ թէ իրաց վրայ կ'ըսուի . եւ գոյականին նախադաս ըլլալով մէկտեղ կը հոլովի .

Ո՞ր տուն, որո՞յ տան, որո՞ւմ տան, զո՞ր տուն, որո՞վ տամք :

\* Որ, նաև յարաբերական գերանուն է . (78, 79) :



Ո՞ր տունք , որո՞յ տանց , զո՞ր տունս , որովք  
ասանքք :

Ո՞ր թագաւոր , զո՞ր թագաւոր , որո՞յ թագաւորի , եւայլն :

295 . Որ , հարցական չեզող խօսքերու մէջ  
ալ կը գործածուի . Յոր տուն մտանիցէք , անդ  
աղջիք . Որ տուն որ մտնէք՝ հոն օթեւան ըրէք :

296 . Որ , առանց գոյականի գործածուած  
ատեն՝ ո՛չ որ կը նշանակէ . Որ կամիցի առնու  
լինչ՝ ի քէն . Ո՛չ որ քէնէ բան ճշ առնել ուղէ :

297 . Որ ո՛ր , որ Բանգամ , նոյնպէս ո՛չ որ կը  
նշանակեն . Որ ո՛ր լուծցէ զմի ինչ՝ ի պատուի  
րանացս յայտցանէ . Ո՛չ որ աս պատու-երանդնէրէն  
Դէր ւ-ծէ .

Որ Բանգամ ճշմարտիւ անմահութեան իցեն ցանկացողք . Որ ո՛ր որ անմահութեան կը փափաքին :

298 . Որ , ածականը Ինչ բառին հետ ալ կը  
գործածուի , ու Ինչ որ կը նշանակէ . եւ կը հո-  
լովի այսպէս :

Որ ինչ , զոր ինչ , որոյ իրիք , որում խմիք , որով  
իւիք :

Չոր Ինչ կամիցիք զի արասցեն ձեզ մարդիկ .

Որ-Նի-ի՛ մեղանչէ որ , նովին եւ ծառայ է :

399 . Չե՞նչ , Ինչ\* , իբր հարցական ածական ,

\* Պէտք է գիտնալ որ շինչ մինակ հարցական է , Ինչ հարցական չէ . բայց ՚ի կամ՝ նախդիրով գործածել հարկ



իրաց վրայ կ'ըսուին . եւ սալորարար ուղից հա-  
լով , այսինքն՝ ուղղական ու հայցական կը գոր-  
ծածուին . զոր օրինակ . Չի՞նչ գործ . չի՞նչ բանք .  
չի՞նչ խորհրդով . չի՞նչ գործ :

300 . Որպէսի , ածականն ալ գոյականին նա-  
խադաս ըլլալով երբեմն գոյականին հետ մէկ-  
տեղ կը հալովի , երբեմն ալ անփոփոխ կը մնայ .

Որպէսի՞ տուն , որպէս-՞ տան , որպէս-՞ տան ,  
չորպէսի՞ տուն , որպէսե-՞ տամք . Որպէսի տունք ,  
որպէսի՞ տանց , եւայլն :

301 . Քանի , ածականը գոյականէն առաջ  
կը դրուի ու անփոփոխ կը մնայ . Քանի՞ ամբ ,  
քանի՞ ամաց , եւայլն :

302 . Որչափ , ալ իբր ածական գոյականին  
նախադաս ըլլալով անփոփոխ կը մնայ . Որչափ  
գինք , որչափ գնաց . որչափ բանք , որչափ բանիւք .  
որչափ զօրականս , եւայլն :

Յօդ . Բ .

Մահեաց Էրարեր :

303 . Վերադիր կ'ըլլայ նաեւ Մակբայը ,  
նախ՝ Բայերուն , երբոր բայերուն ցուցուցած  
գործողութեան սրալիաութիւնը կը ցուցնէ . զոր  
օրինակ .

եղած ատեն , նաև հարցական խօսքերու մէջ չի՞նչ ի տեղ  
ի՞նչ կը գործածուի : Ուստի պէտք է ըսել . չի՞նչ միաս .  
չի՞նչ տունս . չի՞նչ բանից . չքուիր , 'ի չի՞նչ միաս . 'ի  
չի՞նչ տունս . 'ի չի՞նչ բանից :



Բարոտ խօսեցաւ . Չարաշար տանջէր :

աս խօսքերուն մէջ՝ Բարոտ եւ Չարաշար մակբայ-  
ները՝ խօսեցաւ եւ Գանձէր բայերուն վերագիրն  
են : Բարոտ մակբայը խօսելուն որպիսութիւնը  
( աղէկ ըլլալը ) կը ցուցնէ . իսկ Չարաշար մակ-  
բայը՝ Գանձէլուն որպիսութիւնը :

304 . Հայերէնի մէջ մակբայներէն ոմանք  
յատուկ վերջաւորութիւն մը ունին . այսպէս  
են սովորաբար , Բար , պէս , օրէն , վերջաւոր-  
ուած բառեր . ինչպէս՝ Բաշաբար . Մեծապէս .  
Հսկայօրէն :

305 . Բայց շատ անգամ հասարակ ածական  
մը ըսկ , կամ « գիրն ասնելով մակբայ կ'ըլլայ .  
զոր օրինակ .

Բաշ գիտէր . Բարձրաստի աղաղակեցին . Բազմա խօ-  
սեցաւ : Համարձակագոյնս գուշէր :

306 . Մակբայն Ածականի մը եւ ուրիշ Մակ-  
բայի մը վերագիր ալ կ'ըլլայ . զոր օրինակ .

Էր սյրն խնաստուն յոյժ .

Կարէ յանդգնագոյնս բարրաուեցար .

աս խօսքերուն մէջ յոյժ , կարէ մակբայները վե-  
րագիր են : Առջինը՝ Իմաստուն ածականին , եւ  
երկրորդը՝ յանդգնագոյնս մակբային . եւ անոնց  
ստատկութիւնը կամ չափազանց ըլլալը կը յայտ-  
նեն :



## Գ Լ Ո Խ Խ Ե .

## Կ Ո Չ Ա Կ Ա Ն .

307 . Կոչահան կ'ըսուի ան բառը որ կը ցույցնէ անձ մը կամ անձնաւորեալ իր մը , առ որ խօսք մը ուղղուած է : Չոր օրինակ .

Արտ , ընդ մեզ զի՞ կք պշուցեալ : Ախն , ունիմ ինչ ասել քեզ : Ուրե՞նչ , զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ : Լուր , ուրե՞նչ , խրատաւ հօր քո : Բարեկամ , ՚ի վեր մատիր : Բժէ՞ն , բժշկեալ զանձն քո : Արտ Անէնայի , պաշտօնատէրս տեսանեմ զձեզ :

308 . Կոչականը հայերէնի մէջ շատ անգամ ոչ եւ որ բառերուն հետ կը գործածուի . զոր օրինակ .

Ոչ բանաքաղ Մարկիոն . Ոչ անսխտք եւ հեզ գասիրտք ՚ի հաւատալ . Ոչ ազգ անհաւատ եւ թիւր , մինչեւ յերբ իցեմ ընդ ձեզ :

Այլ որ , ով կացոյց զիս դատաւոր ՚ի վերայ ձեր . Արի կաց , մանուկ որ :

309 . Երբոր կոչականն իրմէ առաջ ածականն մը ունի , ածականին վրայ է գիմարուշը կ'առելցուի . զոր օրինակ .

Կամ եղեւ եւ ինձ գրել քեզ , քաջ թէովիկէ Ոչ մուխիմ , քաջ փեսառու :

310 . Իսկ եթէ կոչականն իրմէ ետքը յապացուցիչ մը ունենայ , է գիրը կոչականին վրայ կը դրուի . զոր օրինակ .



Ատուածորդիչ Պարսից , ընդէր զանդիտես .  
 Ի բաց կացէք յինէն , մշակքտ անիրաւութեան . Գի-  
 տեմ զքեզ ով ես , սուրբտ Ատուածոյ :

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ

ԻՆՐ ՄԱՍԱՆՅ ԲԱՆԻ ՎՐԱՅ ՀԱՐԿԱԻՈՐ  
 ԳԻՏԵԼԻՔ ԶԱՐԳԱՅԵԼՈՅ ՀԱՄԱՐ

Գ Լ Ո Ի Խ Ա .

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

311 . Այն գոյական անուններ որոնք եղա-  
 կի ճայնով յոքնակի են . զոր օրինակ .

Գրեան , գրենոյ , գրենով . Գերե .

Որեոր , որերոյ , որերով . Մարտո Բազմա՛նիս ՏԸ .

Մարդիկ , մարդկան , մարդկամբ . Մարտի .

Մանկտի , մանկաւոյ , մանկաւով . Տշա .

Աւաղանի , աւաղանոյ , աւաղանով . Մեծա՛նծո՛ .

Ոսկրտի , ոսկրտաւոյ , ոսկրտաւով . Ուրե՛նէր :

Եւ ուրիշ ստանց նման շատեր . ուստի Մարդիկ ,  
 Տարդահանց . Գրեան , Գրեանց . Մանկտի , Տանկտեաց ,  
 ըսելը սխալ է :

312 . Գոյական անունները կրկնուելով ալ  
 յոքնակի , կամ շատ կը նշանակեն , երբոր կրկ-  
 նուած բառը յոքնակի է , կամ հաւաքական  
 անուն է : Զոր օրինակ .

Ի կողմանոյ կողմանոյ . Եւ կողմերէ .

Ի քաղաքաց քաղաքաց . Եւ քաղաքներէ .



ի տուճա տուճա .      Շաք տուճեր  
 Գուճոյ գուճոյ .      Շաք գուճոյեր :  
 Երամ երամ , տարամ տարամ .      Շաք խուճեր :

Այսպէս կ'ըսուի նաեւ . Ինչ ինչ , իմն իմն ,  
 Իրիք իրիք . իւիք իւիք : Շատ բաներ , շատ բա-  
 ներու , շատ բաներով , ըսել են :

313 . Իսկ եթէ կրկնուած գոյականը եղակի  
 է , աճէն ճէ կամ ի-բառանչի-բ կը նշանակէ . զոր  
 օրինակ .

Այր սյր .	Աճէն ճէ մարդ .
Առն առն .	Աճէն ճէ մարդու .
Քաղաքի քաղաքի .	Աճէն ճէ քաղքի .
Առ երէց երէց .	Աճէն ճէ երիցու

Աս մարով կ'ըսուի , Մի մի , միոյ միոյ , 'ի  
 միովէ միովէ . ուրուք ուրուք . ումեք ումեք :  
 Աճէն ճէլ , աճէն ճէոան , աճէն ճէէն , եւայլն , կը  
 նշանակեն :

ՈՐՈՇԵԱԼ ԵՒ ԱՆՈՐՈՇ ԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ  
 ԿԱՄ ՅՕԴԻ ՎՐԱՅ

Հայերէն լեզուին մէջ ուշադրութեան ար-  
 ժանի բան մ'ալ կայ , որուն մինչեւ հիմայ շատ  
 քիչ մտադրութիւն եղած է . այն է Յօդ :

314 . Յօդ ամեն լեզուի մէջ կայ : Յօդին  
 պաշտօնն է՝ գոյական կամ գոյականաբար առ-  
 նուած բառի մը սկիզբը կամ վերջը դրուելով  
 անոր որոշեալ ըլլալը , սյսինքն՝ որոշ բան մը  
 կամ բաներ ցուցնելը խմայրնել :



315 . Աշխարհաբարի մէջ ը եւ ն գիրերը յօդ  
են . զոր օրինակ . Հաց տուր . Մարդ չեկաւ ,  
խօսքերը՝ Հացը տուր . Մարդը չեկաւ , խօսքերէն  
տարբեր են : Առջիններուն մէջ հաց , մարդ ,  
բառերը սրոշ կամ ծանօթ հաց , մարդ , չեն ցու-  
ցրներ . երկրորդ խօսքերուն մէջ՝ հացը , մարդը ,  
բառերը՝ սրոշ կամ ծանօթ հաց մը , սրոշ կամ  
ծանօթ մարդ մը կը ցուցրնեն :

316 . Գրաբար լեզուին մէջ ալ ասանկ յօդ  
կայ , որ է ս , դ , եւ մանաւանդ ն գիրը : Ուս-  
տի՝ Մանուկ ծնաւ . Ետեւ երազ . Գայր յագարա-  
հէ . Լուաց ջրով . Աղաւ հօշիհ . Եմուտ 'ի պարտեզ .  
Բնակէր 'ի քաղաքի , խօսքերուն մէջ՝ մանուկ ,  
երազ , յագարահէ , ջրով , հօշիհ , 'ի պարտեզ . 'ի  
քաղաքի , բառերն առանց յօդի , ուստի եւ անտ-  
րոշ մտքով առնուած են : Բայց , Օնաւ մանուկն .  
Մեկնեաց շերայն . Գայր յագարակէն , կամ  
յագարակէ անփի\* . Լուաց ջրովն . Աղաւ զկօ-  
շիկան . Եմուտ 'ի պարտեզն . Բնակէր 'ի քա-  
ղաքին , խօսքերուն մէջ՝ նոյն բառերը սրոշեալ  
են , այսինքն՝ այս ինչ մանուկը , այն ինչ պար-  
տեզը , այն ինչ սգարակէն , եւ այլն , կը նշա-  
նակեն :

Ուրեմն ս , դ , եւ մանաւանդ ն գիրը հայե-

\* Ափի , անփի . ասփ , անդ . այսր , այդր , մակբայներն՝ այս ,  
այն , ցուցական ածականներու աեղ կը դործածուին .  
եւ ս , դ , ն , գիրերն ալ ուրիշ բան չեն եթէ ոչ՝ այս ,  
այդ , այն , ցուցական ածականներ :



րէն յօդ է , կամ յօդի պաշտօն կը կատարէ :

317 . Հայերէնի մէջ յօդ դործածելու կամ չգործածելու գլխաւոր գէպերն ասանք են .

Ա . Երբոր անուն մը նշանակած անձերուն կամ իրերուն բոլոր սեռը կամ տեսակը կը նշանակէ , հայերէնի մէջ յօդ չառնել . զոր օրինակ .

Մարդ 'ի պատուի էր եւ ոչ իմացաւ . Մարդս պատուի մէջ էր ու չիմացաւ :

Գինի ուրախ առնէ եւ ինչ զուարթ . Գինին ուրախ կ'ընէ , ինչը՝ զուարթ :

Եղն եւ ոչխար խոտակեր են , եւ շուն մսակեր . Եղն ու ոչխարը խոտակեր են , իսկ շունը՝ մսակեր է :

Աս խօսքերուն մէջ՝ Տարդ , գինի , ինչ , եղն , ոչխար , շուն՝ բոլոր մարդիկ կամ մարդկային ազգը , գինուոյ , ինչի , եղան , ոչխարի շան փեսան , կամ ամէն գինի , ամէն ինչ , ամէն եղ . ամէն ոչխար , ամէն շուն , կը նշանակեն , անոր համար յօդ առած են :

Բ . Երբոր «ե» կամ տեսակ ցուցընող անունը գոյականաբար առնուած ամական մըն է , եղակիի մէջ յօդ կ'առնէ , յօքնակիի մէջ չառնել . զոր օրինակ .

Անդգամ գլխաւոր անգոսնեն :

Ասաց անգգամ 'ի սրտի իւրում .

Արտաբ ժառանգեացեն զերկիր .

Արդարն 'ի հաւատոց կեցցէ :

Աս խօսքերուն մէջ՝ Անդգամք , անգգամն .



Արդարք , արդարն , աճն անդգամ . աճն արդար  
կը նշանակեն . բայց գոյականաբար առնուած  
ածական ըլլալուն համար , անոնց եղակիին յօդ  
դրուած է , յօքնակիին դրուած չէ :

Գ . Բայց երբոր բառ մը նշանակած անձե  
րուն կամ իրերուն ոչ բոլոր սեռը կամ տեսակը  
այլ որոշ կամ արդէն ծանօթ անհատ մը կը ցու  
ցունէ , յօդ կ'առնէ . զոր օրինակ .

Եւ արար Աստուած զհարէն (Ադամը) 'ի հողոյ .  
իբրեւ ետես տաճարապետն զգինին .

Թափեաց զիւն . Ընդէր ոչ վաճառեցաւ իւր

Եւ Աբրահամ առ զուխարն .

Եղեն հայրքո զԷզնն պարարակ :

Գ . Երբոր անուն մը անորոշ մտքով կ'առ  
նուի , այսինքն՝ երբոր անով անորոշ անհատ մը  
կամ մաս մը բան նշանակել կ'ուզուի , յօդ չառ  
նէր . եւ եթէ անունն հայցական է , զնախդիրն  
ալ չի դրուիր . զոր օրինակ .

Լին նորա ոչխար եւ արջառ եւ անասունն . Ա  
նիկա ոչխար , արջառ ու անասունն ունէր :

Մանուկ ծնաւ մեզ . Մեզի մանուկ ծնաւ :

Առ հաց , գոհացաւ . Հաց առաւ գոհացաւ :

Այր ոմն մեծատուն ազանէր բեհեզս եւ ծե  
րանիս . Հարուստ մը բեհեզներ ու ծիրանիներ կը  
հագներ :

Ե . Անանկ բաներ որ չեն համարուիր , այլ  
կը չափուին , կամ քանակութեամբ կ'առնուին ,  
եւ ոչ հատով կամ համրանքով , անորոշ մտքով



դործածուած աստեն՝ եզակի կը դրուին . զոր օրինակ .

Տուր ինձ Ը-ր . Արբին գեղի . Չնեայ աշխարհ :

Բայց անանկ բաներ որոնք կրնան համարուիլ կամ թէ ըսենք՝ հատով (թանկով) են , անորոյ մտքով առնուած աստեն՝ հասարակ խմայրներու համար՝ Գ թուականով առանց յօդի կը դործածուին . եւ եթէ անունը հայցական է , զնախդիրը չի դրուիր . զոր օրինակ .

Բեր ինձ նշանակ Գ . Որդի Գ էր նորա . Ու Գ երբէք ոչ ետուր ինձ . Առն Գ-ը էին երկու որդիք :

Զ . Իսկ երբոր ան իրերէն մէկէ աւելի անորոյ թուով անհատ կ'ուզենք խմայրներ , բառն առանց յօդի , եւ , եթէ հայցական է , առանց շի , յօքնակի դնելու ենք . զոր օրինակ .

Բերէք ինձ նշանակ . Էին նորա որդիք , աստեղի եւ դասերի . Ունէին ընդ իւրեանս Յէս եւ Ըրիս . Այր ոմն մեծատուն ազանէր Բեհեզս եւ Ժերանիս . Յղեայ զնա յազարակ իւր արածել խոյս :

Է . Երբոր յօդ առնելու անունները երկու են , եւ շաղկապով կապուած , յօդը սովորաբար մինակ առաջինին վրայ կը դրուի . զոր օրինակ .

Աղքատն եւ անանկ . Դպիրքն եւ Փարիսեցիք . Զխուլն եւ զհամր :

Ը . Երբոր յօդ առնելու բառն ածական մը ունի , ածականը գոյականէն թէ առաջ ըլլայ եւ թէ վերջը , յօդը մինակ գոյականին վրայ կը դրուի . զոր օրինակ .



Իրրեւ ետես այրն քաջ .

Իսկ քաջ զինուորն Քրիստոսի .

Մեծ թագաւորն Տրդատ .

Թագաւորն մեծ Տրդատ .

Գտին զծառայն հիւանդ բժշկեալ :

Թ . Բայց երբոր դոյականը յատուկ անուն է , յօղն ամականին վրայ կը դրուի , երբորնախադաս է . իսկ երբոր ամականը յետադաս է , երկուքին վրայ ալ յօղ չի դրուիր . զոր օրինակ .

Մեծն Աղեքսանդր . Աղեքսանդր մեծ .

Երանելոյն Ղեւոնդայ . Ղեւոնդայ երանելոյ .

Քաջին Տրդատայ . Տրդատայ քաջի :

Ժ . Երբոր յօղ առնելու բառը հասարակ դոյական յատկացուցիչ ունի , յատկացուցիչը յատկացեալէն թէ առաջ եւ թէ վերջն ըլլայ , յօղը միշտ յատկացուցչին վրայ կը դրուի . զոր օրինակ .

Ետես զմայր մանականն .

Կատարել զհրաման թագաւորին .

Առ դրան տաճարին .

Կատարեաց զհօրն հրամանն .

Մանկանցն կատորած :

ԺԱ . Բայց երբոր յատկացուցիչը յատուկ անուն է , յօղը յատկացեալին վրայ կը դրուի .

Անդ էր մայրն Յիսուսի .

Կատարեաց զհրամանն Հերովդի .

Կաքաւեաց դուտորն Հերովդեայ .

Ինձատունքն Յունաց . Քաջացն Հայոց :



ԺԲ . Նոյնպէս յօդը յատկացեալին վրայ կը դրուի , երբոր յատկացուցիչը եզական բան մը , կամ ամբողջ սեռ կամ տեսակ ցուցնող անուն է . զոր օրինակ .

Որդիքն Աստուծոյ .      Զլոյսն արեգական .  
Տէրն արարածոց .      Աստուածն օրինաց :

Աս խօսքերուն առջի երկուքին մէջ , Աստուած , Արեգակն բառերը՝ եզական բաներ կը ցուցնեն . իսկ վերջի երկուքին մէջ՝ արարածոց , օրինաց բառերը , Բոլոր արարածք , Բոլոր օրէնքը կը նշանակեն . անոր համար յօդը յատկացեալին վրայ դրուած է :

Աս տեսակ խօսքերուն մէջ , յատկացուցիչը յառաջ դրուած ատեն՝ յօդն ինք կրնայ առնելու ստի կրնայ ըսուիլ .

Օրինացն Աստուած . Արարածոցն Տէր :

ԺԳ . Երբոր գոյական անունը է՛՛ , Գո , Տէր , Յէր , Իւր , ստացական ածականներէն մէկը , կամ նորա , նոցա , Իւրեանց յատկացուցիչներէն մէկն ունի , յօդ չառներ . զոր օրինակ .

Տեսին զճայր նորա . Աստարել զհրաճան նոցա .  
Առ դրան իւրեանց . Տուն իմ տուն աղօթից կողացի .  
Մինչեւ ցերթ թափեա զոգիս մեր . Թողեալ լիցին քեզ Տէրք քո . Քաղաք ձեր աւերակ :

ԺԴ . Աս տեսակ խօսքերու մէջ եթէ գոյականին վրայ ա , որ , ն , դիրերը դրուին , աչա , աչդ ,



այն , ցուցականն ածականներու զօրութիւնն կ'ու-  
նենան . զոր օրինակ .

Յորդույս խմէ . Յերկրիդ ձերում . Յազա-  
րակն իւր . կը նշանակեն , խմաս որդիէս . Չեր-  
աս երկրին մէջ . Իր ան ազարակը :

ԺԵ . Աս տեսակ խօսքեր , սովորաբար այսք  
անդր , այդք . աստ , անդ . աստի , անտի , այտի ,  
մակբայներով կը բացատրուին : Այսք , անդք ,  
այդք , կը դրուի , երբոր գործողութիւնը շար-  
ժում է : Աստ , անդ , կը դրուի , երբոր դատա-  
րում է . Ատտի , անտի , այտի , կը դրուի , բացա-  
ռականի նշանակութեամբ : Ուստի կ'ըսուի .

Առաքեաց 'ի քաղաք անդք նոցա . փոխանակ  
ըսելու . Ի քաղաքն , կամ 'ի քաղաքն յայն նոցա :

Բնակեաց յերկրի աստ խմում . փոխանակ ը-  
սելու . Յերկրիս , կամ յերկրիս յայտիէ ի-  
մում :

Յորդույ աստի խմէ . փոխանակ ըսելու .  
Յորդույս , կամ յորդույս յայտանէ խմէ :

ԺԶ . Յուցականն ածականներու հետ դոյա-  
կանները յօդ չեն առներ , երբոր ցուցականը  
դոյականին նախադաս է . ուստի կ'ըսենք .

Այս այր . Չայն տեղի . Յայդմ տան . Այ-  
դու բանիւ . Յայնց տեղեաց . չըսուիր , Այս  
այրս . Չայն տեղին . Յայդմ տանդ , եւայլն :

ԺԷ . Բայց ցուցականը յետադաս եղած ա-  
տեն՝ դոյականը միշտ յօդ կ'առնէ . ուստի կ'ը-  
սենք .

Այլս այս . Չտեղին զայն . Ի տանն յայն .



միկ . Բանխուդ այդուիկ . Ի տեղեացն յայնցա-  
նէ : Տէս եւ (262) :

ԺԸ . Բացարձակ թուականներու հետ գոյա-  
կանը , երբոր որոշեալ անհատներ չի ցուցնեն ,  
յօդ չառնեն . ոչ ալ զնախդիրը , եթէ անունը  
հայցական է . զոր օրինակ .

Տեսի արս էրհոս , եւ , Տեսի զէրհոս արսն կամ  
զարսն զէրհոսին , միեւնոյն ընդարձակութիւնն ու-  
նեցող իմաստներ չեն : Առջինը կը նշանակէ ,  
էրհոս ճարդ տեսայ . երկրորդը՝ էրհոս ճարդէն  
տեսայ , ըսել է :

ԺԹ . Դասական թուականներու հետ գոյա-  
կանները միշտ յօդ կ'առնեն . ուստի կ'ըսենք .

Զգունդն երկրորդ . Յաւուրն երրորդի , եւ-  
այլն :

Ի . Անորոշ ածականներու հետ գոյական-  
ները յօդ չեն առնեն , ուստի կ'ըսենք .

Մարգարէ ոմն . Թագաւոր ոմն . Ծառայ  
ոք . Արք ոմանք . Կնոջ ուրումն . Կնոջ ուրուք .  
Զայլ տուն . Յայլմէ քաղաքէ . Ի միւսում տան .  
Զայր իւրաքանչիւր , Զամենայն այր . Ամենայն  
մարդոյ . Ո՞ր տուն . Յորմէ՞ քաղաքէ . Որով ե-  
րեսօք . Զի՞նչ գործ , եւայլն :

Զըսուիր , Մարգարէն ոմն . Արքն ոմանք .  
Յայլմէ քաղաքէն . Ո՞ր տունն , եւայլն ,



Ա. Ժ ահա նեն էրտանն աստիճանը :

318 . Ա. Ժ ահան մը գոյականին որպիսութիւնը երեք կերպով կրնայ ցուցնել :

Նախ՝ պարզապէս . զոր օրինակ . Եղբայրս հարուստ է :

Երկրորդ՝ բաղդատութեամբ . զոր օրինակ .

Եղբայրս է հարուստ է :

Երրորդ՝ վերջին աստիճան կամ գերազանց կերպով . զոր օրինակ .

Եղբայրս ինչպէս կամ վերջին աստիճան հարուստ է :

319 . Ա. ս երեք կերպին նայելով՝ ածականներուն աստիճանը երեքի կը բաժնուի . Գրահան . Բաղդատական ու Գերազրահան :

320 . Գրահան ածականը գոյականին որպիսութիւնն առանց բաղդատութեան կը ցուցնէ . զոր օրինակ .

Հայր իմ ձեռ է . Լաւ է մեռանել . Գուրբաստ խօսիս . Նորա Բաղդատ վիշտս կրեցին . Ելնա արդարացեալ ի տուն իւր :

Ինչպէս յայտնի է՝ աս խօսքերուն մէջ բաղդատութիւն կամ առաւելութիւն չկայ :

321 . Բաղդատական ածականը երկու բան իրարու հետ բաղդատելով՝ անոնց իրարու հաւասար կամ իրարմէ աւելի ըլլալը կը ցուցնէ :

322 . Հաւասարութիւն ցուցնելու համար



Իբրև նախադրութիւնը հայցական խնդրով կը  
գործածուի . զոր օրինակ .

Տէր իմ Իմաստուն է իբրև զհրէշտակ Աստուծոյ :

Եղերուք միամիտք իբրև զաղաւնիս :

323 . Առաւելութիւն ցուցրնելու համար քան  
նախադրութիւնը նայնպէս հայցական խնդրով  
կը գործածուի . զոր օրինակ .

Հայր իմ Տէ՛ծ է քան զիս . Լա՛ւ է մեռանել  
քան զայս հեանս իմ : Գու Բարձր խօսիս քան զնա :  
Նորա Բարձր վիշտս կրեցին քան զմեզ . Էջ սա ար-  
քարացեալ 'ի տուն իւր քան զնա :

324 . Առաւելութեան բազդատութիւն ցու-  
ցրնելու համար՝ երբեմն ածականին վրայ գոյն  
մասնիկը կ'աւելնայ . զոր օրինակ .

Եւ էր օճն Իմաստնագոյն քան զաճնացն գաղտնա .  
փոխանակ ըսելու . Իմաստուն քան զաճնացն գա-  
ղտնա :

Զուր քան զժանուռնան նրբագոյն է , եւ քան  
զթեթեւն Ռանչրագոյն :

325 . Գերադրական ածականը գոյականին որ  
պիտութիւնը վերջին աստիճանի հասած կը ցու-  
ցրնէ :

326 . Գերադրականը\* հայերէն քանի մը կեր-

\* Նախնեաց մէջ աճնա մասնիկն ունեցող ածականները  
տեսնելով ոմանք կարծեցին թէ , Յունարէնի և Ղաթի-  
ներէնի տէս , ասոնք ալ հայերէնի մէջ Գերադրական  
ածականներ են . ուստի և ածականներու վրայ աճնա  
աւելցրնելով սկսան Գերադրական շինել : Բայց պէտք  
է գիտնալ թէ աճնա մասնիկը մեր ընտիր նախնեաց մէջ



պով կը բացատրուի :

Նախ՝ յոյժ , Ռեծապէս , անհնարէն , եւ ուրիշ ասանց նման մակբայներով . զոր օրինակ . Յոյժ ի մատուէն . Անհնարէն բարձր :

Երկրորդ՝ ածականին բացառական կամ 'ի նախդրով յոքնակի հայցական խնդիր տալով . զոր օրինակ .

Ամենչն 'ի Յէնջ արկցէ քար . Չենէ ամենէն անակողր .

Չընտիրս 'ի հեծէլոյ . Չիաւորներէն ամենէն ընտիրները :

Մեծն 'ի Բազատարս . Թագաւորներէն ամենէն մեծը :

Որ փոքրիկն է յամենեւին 'ի ձեզ . Չեր մեջէն ամենէն պզտիկը :

Երրորդ՝ ածականը կրկնելով . զոր օրինակ . Ժողովեցին զբարի բարէն . Ամենէն աղէկները ժողովեցին :

Չընտիր ընտիր մայրիան . Ամենէն աղէկ մայրիները :

Մանր ճանր ինչ ճճիք կամ անատունք կերակուր լինին օձից . Օձերը խիստ մանր կամ ամենէն մանր գազաններ կամ անատուններ կ'ուտեն :

Յունարէն դարոս Գերաղրահանին չի պատասխաներ , այլ Էմպոս բառին տեղ է որ ամեն կը նշանակէ : Ուստի ե ըստ մեր նախնեաց , ամենագէտ , ամենախնամ , ամենախաչ , ե ուրիշ ասանց նման բառերը , ոչ թէ ամենէն գիտան , ամենէն ասէլի ինամող , կայլն , ըսել են , այլ ամեն բան գիտցող , ամեն բան խնամող , ամեն բան տեսնող , կայլն , կը նշանակեն :



Թողէք զծանր ծանր օրինացն . Յրէնքներուն  
ամենէն ծանրերը թողուցիք :

327 . Հայերէն տեսակ մը գերադրական  
խօսք ալ կայ որ հետեւեալ կերպով կը բացատրուի .

Զգետա՛ զյառին զգետուն : Ամենէն յառի  
(գէշ) զգետոր կը հագնին :

Ճանապարհ՛ զարքունի գնացուք . Ամենէն  
բանուկ ճամբան երթանք :

Ա. քեզ կինաման՛ զանայշ . Ամենէն անայշ  
կինամանն առ :

Կերակուրս ժանտա՛ զայն ուտէ , զոր եւ ոչ  
գազանք եւ անատունք ուտեն . Ամենէն ժանտ  
կերակուրները կ'ուտէ , զոր գազաններն ու ա-  
նատուններն անգամ չենուտեր :

Գ Լ Ո Ի Խ Գ .

1 . ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐՍՆՈՒՆ

328 . Ես , դու , նա , թէ , դու-ք , նոքա , Անձ-  
նական գերանունները ինքն եւ ինքնին գերանուն-  
ներով մէկտեղ կը դործածուին . այսպէս . Ես  
ինքն , դու ինքն . դուք ինքնին , մեք ինքնին . որ  
էս անչաճ , դուն անչաճ , եւայլն , կը նշանակեն :

Այսպէս կ'ըսուի նաեւ , ինչէն , չէզէն , թե-  
զէն , չէզէն , ի-բո՛ւի . որ , էս ինքն , դու ինքն ,  
եւայլն , ըսել են :

2 . ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐՍՆՈՒՆ

329 . Յարաբերական գերանունը որ , որք  
ամեն գէ՛մքի անուն կամ գերանուն , կրնայ յա-



բարերել . զոր օրինակ .

Ես որ խօսիմ : Դու որ լսես . Նոյա որ լուան .  
Այն որ խօսեցաւ :

330 . Յարարերականին ցուցուցած անունը  
կամ գերանունը՝ յարաբերեալ կ'ըսուի . վերի օ-  
րինակներուն մէջ՝ Ես , դու , նոյա , այն , բառե-  
լը յարաբերեալ են :

331 . Յարարերականը միշտ յարարերեալին  
անմիջապէս քովը պիտի դրուի , բոլոր իրեն վե-  
րարերեալ բառերովը . զոր օրինակ .

Աճեցոսն որ 'ի Ժողովրդեանն էին , աչք 'ի  
նա հայէին :

Եւ ծանիցես զբանիցն որոց աշակերտեցար՝  
զճմարտութիւն :

Յարարերականն իրեն վերարերեալ մասե-  
րովն ամբողջ խօսք մըն է , որ Գլխաւոր խօսքին  
Բնանկեալ անդամը կը կոչուի . զոր օրինակ սա խօս-  
քին մէջ .

Ամենեքին որ լուան , փախեան :

Որ լուան , միջանկեալ անդամ է Գլխաւոր  
խօսքին . Գլխաւոր խօսքն է՝ Ամենեքին փախեան :

332 . Յարարերականն , ինչպէս ըսինք , իր  
բոլոր մասերովը յարարերեալին անմիջապէս քո-  
վը կը դրուի . ուստի շատ անգամ գլխաւոր խօս-  
քին մնացած մասերը՝ միջանկեալ անդամէն ետ-  
քը կու գան . ինչպէս էր վերի խօսքերուն մէջ ,  
եւ սա խօսքին մէջ ալ .

Նա՛ որ ընդ ճատագայնս արեգահան հայել համե-  
ցի , պարտի զպղտորութիւն աչացն , զաղտն եւ



դրիժն , 'ի բաց սրբել , զի մի միժարքն' ոչ զԲԵՕՒ  
 շշայե՞ն , արդեւ հայերոյ 'ի յատակաթիւն լու-  
 աոյն լիցին :

Աս խօսքին մէջ' նա , եւ , ճշարտն , յարա-  
 բերեալ են , եւ ասանց վերաբերեալ մասերը  
 դրուած են միջանկեալ անդամէն ետքը , որ  
 նօսր դրով նշանակուած է :

333 . Ասանկ ըլլալը էական չէ . յարաբեր-  
 եալին վերաբերութիւն ունեցող մասերը , կամ  
 դիւսաւոր խօսքը ամբողջ միջանկեալ անդամէն  
 առաջ ալ կրնայ դրուիլ . ուստի փոխանակ ը-  
 սելու .

Աճնէցոան' որ 'ի ժողովրդեանն էին , աչ' է  
 նա հայեի՞ն :

Կրնանք ըսել .

Ի նա հայեի՞ն աչ' աճնէցոան որ 'ի ժողովրդեա-  
 նրն էին :

334 . Ըսինք թէ յարաբերականը յարաբեր-  
 եալին անմիջապէս քովը սլիտի դրուի : Աս կա-  
 նոնը շատ կարեւոր է :

Յարաբերեալը կրնայ մինակ ան առեն յա-  
 րաբերականէն բաժնուիլ , երբ յարաբերականէն  
 անմիջապէս յառաջ եղող բառն անանկ է , զոր  
 յարաբերականը չի կրնար յարաբերել , ինչպէս  
 է Բայը , Մակբայը : Ուստի կրնանք ըսել .

Մի էո-նի-ն է որ զամենայն յամենայնի ազ-  
 դեցուցանէ :

Աս խօսքին մէջ յայտնի է թէ որ յարա-  
 րաբերականը չն չի կրնար յարաբերել . ուստի



յարաբերութիւնը էստէն բառին հետ ըլլալը  
հարկաւ կը հասկըցուի :

335 . Յարաբերականին եզակի ուղղականն  
ու հայցականը , որ , զոր , յոքնակիի տեղ կը գոր-  
ծածուին , այսինքն՝ յոքնակի բառ մը կրնայ յա-  
րաբերել . զոր օրինակ .

Դո՛ւք որ եկայք զկնի իմ .

Բազմո՛ք որ ունէին հիւանդութիւնս :

Փոխանակ ըսելու , որք եկայք . որք ունէին :

336 . Յարաբերական դերանունը յատկա-  
ցուցիչ եղած ատեն՝ իր յատկացեալէն առաջ  
կը դրուի , եւ ան ատեն եթէ յատկացեալը  
նախդիր կամ նախադրութիւն մ' ունի , նախ-  
դիրը կամ նախադրութիւնը երբեմն մինակ յա-  
րաբերականին վրայ , երբեմն ալ երկուքին վրայ  
ալ կը կրկնուի .

Աինն որոյ անուանն պատմի ընդ ամենայն աշ-  
խարհ :

Աս օրինակին մէջ անուան յատկացեալ է որոյ  
յարաբերականին :

Դաւիթ՝ ընդ որոյ խնաստութիւնն զարմանային  
Յոյնք :

Աս օրինակին մէջ՝ ընդ նախդիրը յարաբերա-  
կանին վրայ դրուած է :

Պապիաս Չանն որոյ գրոցն պատմէ Նւսերի :

Դարեհ զորոյ զմայրն կալաւ Աղեքսանդր :

Աս օրինակին մէջ՝ զ նախդիրը երկուքին  
վրայ ալ կրկնուած է :



5 · ԴԵՐԱՆՈՒՆԱԿԱՆ ԳԻՐԵՐ , ԿԱՄ ԴԻՄՈՐՈՇ

ՅՈՒՆԵՐ

337 . Դիմորոշ յօդ կը կոչուին « , ր , ն , զի-  
րերը :

Ասոնց համար քիչ մը առաջ (316) ըսինքժէ  
բառերուն վերջը դրուելով , յօդի պէս , անոնց  
որոշեալ մտքով առնուած ըլլալը կը ցուցնեն :

Հոս անոնց ուրիշ քանի մը գործածութեանը  
վրայ պիտի խօսինք :

Բայց որովհետեւ դիմորոշներուն գործա-  
ծութիւնը հայերէն լեզուին ամենէն կարեւոր  
յատկութիւններէն մէկն է , որպէս զի անոնց  
գործածութեան կերպն աղէկ հասկցուի , հոս  
քիչ մը ընդարձակ պիտի խօսինք :

Նախ եւ առաջ կարեւոր գիտելիք մը կայ  
եւ սա է .

338 . Պէտք է գիտնալ որ հայերէն լեզուին  
մէջ յարաբերական դերանունը դիմաւոր բայով ,  
ընդո-նէլո-նէան տեղ կը գործածուի . զոր օրի-  
նակ . կ'ըսուի ,

Որ ըննէ-նոսն 'ի միտ առցէ . փոխանակ ըսե-  
լու . ըննէրոշն 'ի միտ առցէ : Կարդացողը հաս-  
կընայ :

Որ ո-նէյի աղանջս լսելոյ , լուիցէ . փոխանակ  
ըսելու . Ո-նոշն աղանջս . Աղանջ ունեցողը :

339 . Ընդունելութիւն գործածելը գրաբա-  
րի մէջ խորթ է , մանաւանդ երբոր ընդունելու-



Թիւնը , իբր բայանուն , սեռի կամ բնութեան  
խնդիր ունի : Ուստի պէտք է ըսել .

Գուք ոչ մտանէք , եւ որոյ Տրանէնն չտայք  
Թոյլ մտանել . փոխանակ ըսելու . Գուք ոչ  
մտանէք , եւ Տրանողաց չտայք Թոյլ . Գուք չէք  
մտներ , ու մանողներուն ալ Թող չէք տար :

Սմենեցուն որ 'ի Ժողովրդեանն էին աչք 'ի  
նա հայէին . փոխանակ ըսելու . Սմենեցուն էղե-  
լոյ 'ի Ժողովրդեան աչք . Ժողովրդեան մէջ բո-  
լոր եղողներուն աչուրները :

Ձոր առնելոցն իցես , արա վաղվաղակի . փո-  
խանակ ըսելու . Ձառնելէն քո արա . Տնելիքդ  
ըրէ :

340 . Ասանկ դէպքերու մէջ , զօրութեամբ  
կամ ընկեայն կ'իմացուի յարարերեալը , որ է՝  
դու . սա , դա , նա , դերանուններէն եւ կամ  
այս , այդ , այն , ցուցական ածականներէն մէկն  
է . զոր օրինակ .

Որ ընկեանուն , խօսքին մէջ կ'իմացուի , Նա որ  
ընթեռնու . եւ , Որ լսէինն ուրախ լինէին , խօս-  
քին մէջ , Նոյս որ լսէին , կը հասկցուի :

Աս կարեւոր գիտելիքին վրայ ետքը Գեր-  
բայներուն մէջ ընդունելութեան վրայ խօսած  
ատեննիս , ուրիշ քանի մը ըսելիք ունինք :

341 . Հիմա գանք Գիմարոշներուն գործա-  
ծութեանը կանոններուն .

Կանոն Ա . Գիմարոշները կը գործածուին  
նախ՝ էս , դու , եւ՝ սա , դա , նա , դերանուննե-  
րուն , եւ այս , այդ , այն , ցուցական ածական-



ներուն տեղ , երբ քիչ մը առաջ ըստածին պէս՝  
Յարաբերականով դիմաւոր բայը՝ Ընդունելու  
թեան տեղ գործածուած , ու Յարաբերեալը  
զօրութեամբ իմացուած է :

342 . Եթէ զօրութեամբ իմացուած յարաբեր-  
եալը է՝ առաջին դէմքի գերանունն է , յարա-  
բերականէն ետքը եկող բառին վրայ « կը դրուի .  
եթէ դու երկրորդ դէմքի գերանունն է՝ դ դի-  
րը . եթէ նա երրորդ դէմքի գերանունն է , յա-  
րաբերականէն ետքը եկող բառին վրայ ն դիրը  
կը դրուի . զոր օրինակ .

Ար խօսիմն ընդ քեզ . այսինքն՝ Ես որ խօսիմ :

Ար ետդ տէր . այսինքն՝ Դու որ տէր ես :

Ար հովուեադ Խորայէլի . այսինքն՝ Դու որ  
հովուեա :

Արք ոչն տեսանեն , տեսցեն . եւ որք տեսա-  
նենն կուրասցին . այսինքն . Նոքա որ ոչ տեսա-  
նեն . . . նոքա որ տեսանեն . Չտեսնողները տես-  
նեն , ու տեսնողները կուրնան :

Սկսան որ բազմեալն էին ընդ նմա , ասել .  
այսինքն՝ Նոքա որ բազմեալ էին . Անոր հետ  
նստողները :

Զոր ասեմն ոչ առնէք . այսինքն՝ Զայնուհի  
զոր ասեմ . Ըսածներս չէք ընել :

Եկեալ որ գքեզն եւ զնա կոչեաց . այսինքն՝  
Եկեալ նա որ կոչեաց . Քեզ ու անիկա հրաւի-  
րողը գալով :

343 . Եթէ զօրութեամբ իմացուած յարա-  
բերեալը « գերանունը , կամ այս ցուցմանն տ



Ժականն է , յարաբերականէն անմիջապէս ետ-  
քը եկող բառին վրայ , « գիրը կը դրուի . եթէ  
դա , կամ այդ է , ոչ գիրը . իսկ եթէ նա , կամ  
այն է , ն գիրը կը դրուի . զոր օրինակ .

Մի ոք մեղադիր լիցի եւ աղարտիցէ զոր ա-  
սեմն . այսինքն՝ Չայս զոր ասեմ . Մէկը ըսած-  
ներս չաղարտէ :

Գիտիցես արդեօք զոր ընթեռնուցուսդ .  
այսինքն՝ Չայդ զոր ընթեռնուս . Կարդացածդ  
արդեօք կը հասկընա՞ս :

Մեք ոչ կարեմք զոր տեսաքն եւ լուաք չխօ-  
սել . այսինքն՝ Չայն զոր տեսաք . Տեսածնիս ու  
լսածնիս չենք կրնար չխօսիլ :

Երթայք պատմեցէք զոր տեսէքդ . այսինքն՝  
Չայդոսէի զոր տեսէք . Տեսածնիդ ու լսածնիդ  
դացէք պատմեցէք :

344 . Առանց յարաբերական դերանունի ե-  
ղած խօսքերու մէջ ալ շատ անգամ « , ոչ , ն ,  
գիրերը , այս , այդ , այն ցուցական անձականնե-  
րու տեղ կը դրուին . զոր օրինակ .

Տեսանեմք զաշխարհս՝ ի պէս պէս կերպա-  
րանս . այսինքն . Չաշխարհս զայս :

Չարիքս որ լինին ուստի՞ իցեն . այսինքն՝  
Չարիքս այսոսէի :

Քոյրդ իմ միայն եթող զիս ՚ի սպասու .  
այսինքն՝ Սոք քոյր իմ . Սա քոյրս սպասու մէջ  
( Խզէի ) իս մինակ թողուց :

Արի առ զմանուկդ եւ զմայր նորա . այսին-  
քն՝ Չմանուկդ զայդ :



Այս երեք ամբ են յորմէ հետէ գամ խնդ-  
րել պտուղ 'ի թղենուղդ եւ ոչ գտանեմ. արդ  
կտրեա զդա . ընդէր եւ զերկիրդ խափանէ .  
այսինքն՝ Ն թղենուղդ յայդմէ . . . Չերկիրդ զայդ :

Թոյլ ամբ մանկուոյդ գալ առ իս . այսինքն՝  
Մանկուոյդ այդմէ :

Գուրբդ փակեալ են , եւ մանկունքս ընդ  
ինեւ կան յանկողնի . այսինքն . Գուրբդ այդո-  
մէ . . . մանկունքս այդմէ :

Ծածկեա զգլուխդ , զի խորչակ սատարիկ է  
'ի լերինդ . այսինքն . Չգլուխդ զայդ . . . 'ի լե-  
րինդ յայդմէ :

345 . Բոլոր առ օրինակներէն կը տեսնուի որ  
“ , ր , ն , գիրերն անխափր կամ առանց կանոնի  
չեն գործածուիր , այլ “ կը գրուի , երբոր զօ-  
րութեամբ իմացուած բառը՝ Ես , սա , դերա-  
նունները , կամ այս ածականն է . ր կը գոր-  
ծածուի , երբոր զօրութեամբ իմացուածը րս ,  
րա , դերանունները կամ այդ ածականն է . ն կը  
գործածուի , երբոր զօրութեամբ իմացուածը  
նա դերանունը , կամ այն ածականն է :

346 . Կանոն Բ . Ս , ր , ն գիմորոշ յօդերը կը  
գրուին , որ , ուստի , Բնչ , Բնչդեւ , յորժամ ,

\* Ս , ր , ն , գիրերն , աշխարհաբարին պէս , Իճ , Գո , Սեր ,  
Յեր , Իւր , ստացական ածականներուն , կամ նորա , նոցա  
Իւրեանց յատկացուցիչներուն տեղ գործածելը , գէթ  
ընտիր հեղինակաց մէջ սովորութիւն եղած չէ . ուստի  
Հոգիս , Մարմինս , ըսել , փոխանակ Հոգի Իճ , Մարմին  
Իճ ըսելու տեղ՝ ուստիորէն է :



բառերէն ետքը , երբ աս բառերէն առաջ անդ ,  
անդր , անդի , այժմ , յորժամ , մակբայները կամ ա-  
նոնց խմաստը ունեցող բառ մը լռելեայն կ'խմայ-  
ուին . զոր օրինակ .

Ուր եսն երթամ դուք ոչ կարէք գալ . այս-  
ինքն՝ Անդր ուր ես երթամ , դուք ոչ կարէք  
գալ . Իմ գացած տեղս դուք չէք կրնար գալ :

Ուր եսն իցեմ , եւ դուք անդ իցէք . այս-  
ինքն . Անդ՝ ուր ես իցեմ , եւ դուք իցէք . Դուք  
ալ իմ եղած տեղս ըլլաք :

Ուստի գաճ գիտիցէք . այսինքն . Գիտիցէք  
զորչի ուստի դամ . Եկած տեղս պիտի գիտ-  
նաք :

Մինչ մանուկն էիր . այսինքն՝ Յայժմ կամ  
'ի ժամանակին՝ մինչ մանուկ էիր . Տղայ եղած  
ատենդ :

Մինչ առ ձեզա եմ . այսինքն՝ Այժմ մինչ առ  
ձեզ եմ . Չեզի հետ եղած ատենս . կամ Բանի  
որ ձեր քովս եմ :

Չինչ են բանքդ վասն որոյ վիճիք ընդ միմ-  
եանս , մինչդեռ գնայք . այսինքն . Այժմ մինչ  
դեռ գնայք . Երթալու ատեն իրարու հետ վի-  
ճած խօսքերնիդ ի՞նչ է :

347 . Կանոն Գ . Վերջապէս « , դ , ն գիրե-  
րը կը գործածուին որպէս շաղկապէն անմիջա-  
պէս ետքը եկող բառին հետ , երբոր խօսքն ա-  
նանկ է , որ նախընթաց բայը լռելեայն կ'խմայ-  
ուի , փոխանակ կրկնուելու . զոր օրինակ .

Չգործ հեռն գործէ որպէս եւ եսս . այս



ինքն՝ Որպէս եւ ես գործէ՛մ :

Ելից եւ արարից որպէս միշտն . այսինքն՝ Ելից եւ արարից որպէս միշտ առնէի :

Ընդէր ոչ բովանդակեցէք զսակ աղիւսոյն ձերոյ որպէս յերեկն եւ յեռանդ . այսինքն՝ Որպէս Բովանդակեցէի յերեկ եւ յեռանդ . Ձեր աղիւսին սակը ( Գապալա ) ինչո՞ւ համար այսօր չկատարեցիք , ինչպէս որ երեկ եւ առջի օրը կատարեցիք :

Գ Լ Ո Ի Խ Գ .

Բ Ս Յ

348 . Բայերուն մէջ գիտնալու ամենէն հարկաւորքան՝ Ժամանակներուն գործածութիւնն է :

349 . Ուստի պէտք է գիտնալ որ գրաբարին Ժամանակներն՝ աշխարհաբարին Ժամանակներուն հետ նոյն են . մինակ Ապառնաոյն ու Ստորափառապատկանին վրայ քանի մը գիտնալու բան կայ :

Հոս նախ գրաբարին ուրիշ Ժամանակներուն աշխարհաբարին հետ նոյնութիւնը ցուցնենք , ետքը առանձին Ապառնաոյն ու Ստորափառապատկանին վրայ խօսինք :

Ա . Գրաբարին ուրիշ Ժամանակներուն աշխար-

հաբարին հետ նոյնութիւնը :

350 . Գրաբարին Սահմ . Ներկան , Գործէ՛մ , աշխարհաբարին ներկային հետ նոյն է , որ է ինչ գործէ՛մ , զոր օրինակ .



Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ , եւ ես գործէ՛մ . Հայրս մինչեւ հիսնա իջ գործէ , ես ալ կը գործէ՛մ :

Այսպէս ամեն բայ . զոր օրինակ .

Գիտեմք եթէ ուղիղ խօսիս . ոչ առնուս ակն , այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ առսոցանէս . Գիտենք որ շատակ իջ խօսիս , աչառութիւն չես ընէր , այլ Աստուծոյ ճամբան ճշմարտութեամբ իջ սորվեցընէս :

351 . Գրաբարին Անկասարն ալ նոյն է աշխարհաբարին անկատարին հետ , որ է իջ գործէի . զոր օրինակ .

Յառաջագոյն հայհոյիչ էի եւ հալածիչ . այլ գտի ողորմութիւն , զի զայն յանդիտութեան գործէի . Առաջ հայհոյիչ ու հալածիչ էի , բայց ողորմութիւն գտայ . քանզի չգիտնալով իջ գործէի :

Չցայգ եւ զցերեկ գործէա՛ր՝ վասն չժանրանալոյ ումեք 'ի ձէնջ . Չենէ մէկուն ծանրութիւն չըլլալու համար՝ գիշեր ցորեկ իջ գործէի՞ր :

Այսպէս ամեն բայ . զոր օրինակ .

Յաւուրան Ղովտայ առաւելն , ըմպէին , անկէին , շինէին , վաճառէին . Ղովտին ատենը կ'առաւելն , իջ եւէին , իջ անկէին , իջ շինէին , իջ ծախէին :

352 . Գրաբարին Ասասրեալն ալ գործէցի , նոյն է աշխարհաբարին կատարեալին հետ , որ է գործէցի . զոր օրինակ .

Եթէ արժանի ինչ մահու գործէցի , ոչ զանգիտեմ 'ի մեռանելոյ . Եթէ մահու արժանի



բան մը Գործեցի , մեռնելէն չեմ վախնար :

Այսպէս ամեն բայ . զոր օրինակ .

Իբրեւ էփէս զնա հայրն , Գլխացաւ , յարեաւ  
եւ ընթացաւ ընդ առաջ , անկաւ զպարանոցաւ  
նորա եւ հաճեալեաց զնա . Երբոր հայրը զանի-  
կա աեսաւ , Գլխաց , Էլաւ զխմացը վագեց , անոր  
վիզն ինչաւ ու զանիկա հաճեալեց :

353 . Գրաբարին Հրամայանէն ալ Գործեա ,  
Գործեցէ\* , աշխարհաբարին հրամայականին հետ  
նոյն է , որ է Գործէ , Գործեցէ\* . զոր օրինակ .

Որդեակ , երթ այսօր Գործեա յայգւոջ . Որդ-  
եակ , այսօր զնա այգին Գործէ :

Չամենայն ինչ Գործեցէ\* առանց տրանջելոյ  
եւ քրթմնջելոյ . Ամեն բան առանց տրանջելու  
ու մրմուալու Գործեցէ\* :

Այսպէս ամեն բայ . զոր օրինակ .

Աժ զգօտի քո , արկ զձորձս քո եւ էլ զկնի  
խմ . Գօտիդ հապէ , լաթերդ հագից ու կտուէս  
էհար :

Բ . Գրաբարին Ապառնէն ու Սարադասահանը :

354 . Գրաբարին Ապառնէն ընդհանրապէս  
աշխարհաբարին ապառնւոյն չի պատասխաներ .  
ուստի , Գործեցէ՞ պիտի դործեմ , ըսել չէ այլ  
իւր Գործե՞մ\* ըսել է , որ տեսակ մը ապառնի է .  
զոր օրինակ .

\* Աշխարհաբարին մէջ իւր Գործե՞մ որ ներկայ է , շատ ան-



Լուսոյց քեզ , յարժամ չարախօսք քո եկեացեն . Գեղի մտիկ է՛ շնէ՛մ , երբոր ամբաստանողներդ գան :

Դու առայժմ երթ , եւ յարժամ ժամ լիցի , հընչեց զքեզ . Դուն հիմակու հիմա գնա , երբոր պատեհութիւն ըլլայ , քեզ հը հանչէ՛մ :

Չայս ամենայն ասոյ քեզ , եթէ անկեալ երկիր պագանիցեա ինձ . Սա ամենը քեզի հոս ասմ , եթէ երեսի վրայ իյնալով ինձի երկրպագութիւն ընեա :

Ու Ժրճեցեց զՏէր . Տէրը շէ՛մ Ժրճեր :

355 . Ձե՞նչ , ո՞ր , յո՞ , ոստի՞ , շեա՞րդ , եւ ասանց նման հարցական բառերու հետ ապառնի կը գործածուի . զոր օրինակ :

Ձին՞չ գործեցից . Ու՞ր ժողովեցից . Յո՞ երթայց . Ուստի՞ առից . Ի՞նչ գործեմ . Ուր ժողովեմ . Ուր երթամ . Ուստի՞ առնեմ :

357 . Գարձեալ գրաբարին ապառնին շատ անգամ ստորադասական է , կամ ստորադասականին տեղ ալ կը գործածուի . Ուստի , Գործեցեց , կը նշանակէ նաեւ որ Գործեմ . զոր օրինակ .

Խորհուրդ արարին զի զկապեալն ապանցեն .  
Խորհուրդ ըրին որ կապեալներն ապանեն :

Ձե՞նչ կամիս զի արարեց . Ի՞նչ կ'ուզես որ շնէ՛մ :

գամ ապառնի նշանակութիւն մը կ'առնէ . եւ գրաբարին ապառնին սովորաբար աշխարհաբարին ապառնեցին կը գտանայ :



Կամի՞ս չի երևիցո՞ւմ . կուզե՞ս որ երևանք :

357 . Պարբարինն ապառնինն , աշխարհաբարինն ապառնուոյն կը պատասխանէ , այսինքն՝ Գործեցից , պիտի գործեմ , կը նշանակէ , մինակ ապառնական կամ մարգարէական , այսինքն գուշակելով եղած խօսքերու մէջ . զոր օրինակ .

Արեգակն խաւարեացի եւ լուսինն ոչ ասցէ զլոյս իւր . Արեգակը պիտի խաւարի , ու լուսինն իր լոյսը չպիտի ասց :

358 . Պարբարինն մէջ աշխարհաբարինն ապառնուոյն ճշդիւ պատասխանող ժամանակը՝ սա ձեւն է . Գործեցից եմ , պիտի գործեմ . Գործեցից էի , պիտի գործէի . Գործեցից եղեմ , պիտի գործեմ :

359 . Գործեցից եմ ձեւը՝ բուն ապառնի է . եւ գալու ժամանակի մէջ . զոր օրինակ՝ վաղը , գալ շաբաթ , գալ ամիս , գալ տարի , պիտի գործեմ ըսել է . զոր օրինակ .

Իբրեւ գիտաց Յիսուս թէ Գալոց են յափշտակել զնա , զի արասցեն թագաւոր . Յիսուս երբոր խմացաւ թէ զինք յափշտակելու պիտի Գան որ թագաւոր ընեն :

Լսեցից էր պատերազմունա եւ համբաւս պատերազմաց . Պատերազմներ ու պատերազմի լուրեր պիտի լսէ :

Մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտա Հայոց , եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց , որ ցայժմ կենդանի կայ , եւ նա ելանէլոց է եւ անէլոց զաշխարհս .



Ղիւսաց մուրրութիւնը Հայոց դիւցապաշտները  
խարեց թէ՛ դեւերն Սրտաւազդ անունով մէկը  
բանտարկած են , որ ցարդ կենդանի է , ու պե-  
տէ ելէ եւ աշխարհիս պէտէ տերէ : Եւնէ :

Կանխաւ գիտաց զՅակոբայ թէ առաքինի  
լինելոց է , եւ զԵսաւայ՝ թէ յանպիտանութիւ-  
նրա հորժանելոց է . Առաջուց դիտցաւ թէ Յա-  
կոբ առաքինի պէտէ ըլլայ , եւ Եսաւ անպիտա-  
նութեանց մէջ պէտէ էջնայ :

Յառաջագոյն հայեցեալ 'ի նախանձաւորու-  
թիւնն Յովսիայ՝ ազդ արար կանխագոյն թէ  
չառնելոց է 'ի նոցանէ թագաւոր , որ զկռապաշ-  
տութիւն որդւոցն Խարայէլի եղծանիցէ . Յով-  
սիային նախանձաւորութիւնը յառաջագոյն  
տեսնելով՝ կանխաւ խմացուց թէ անոնցմէ թա-  
գաւոր մը պէտէ ելէ որ Խարայէլի որդւոցը  
կռապաշտութիւնը ջնջէ :

360 . Գործելոց էի ձեւը՝ անցեալ ապառնի  
է , եւ կը նշանակէ բան մը որ անցեալ ժամա-  
նակի մը մէջ , զոր օրինակ , երեկ , անցած շա-  
բաթ , անցած ամիս , անցած տարի , պէտէ ը-  
լար . զոր օրինակ .

Սա է որ զկնի իմ Գաւոյն էր . Աս է որ ինէ  
ետքը պէտէ Գար :

Մովսէս եւ Եղիա երեւեալ փառօք՝ ասէին  
զելիցն նորա զոր հասարելոց էր յԵրուսաղէմ .  
Մովսէս ու Եղիա փառօք երեւնալով՝ կը խօսե-  
ին ան բաներուն վրայ զորոնք Երուսաղէմի մէջ  
պէտէ հասարէր :



Յառաջագոյն խրատեր զնոսա , թէպէտ զի-  
տէր թէ չէն նմա լտելոյ . Չանոնք առաջուց  
խրատեց , թէպէտ զիտէր թէ իրեն տիտի չլտէն :

Վասն Ախրոսի Պարսկի ասէր թէ արշալէւոյ  
էր զգերիս ժողովրդեանն . Պարսիկ Ախրոսին  
համար կ'ըսէր , թէ ժողովուրդին գերիները տի-  
տի արշալէեր :

361 . Գործելոյ էջե՛ճ ձեւը՝ ստորադասական  
ապառնի է , տիտի Գործե՛ճ կը նշանակէ , եւ Գոր-  
ծելոյ է՛ճին տեղ կը գործածուի , երբոր խօսքը  
Թէական , հարցական կամ տարակուսական է .  
քանզի ստորադասական եղանակն աս տեսակ  
խօսքերու մէջ կը գործածուի , ինչպէս քիչ մը ետքը  
(364) պիտի ըսենք : Տես հետեւեալ օրինակները .

Իսկ կէսքն ասէին . Միթէ 'ի Գալիլէէ՞ Գա-  
լոյ էջէ Քրիստոսն . Ոմանք ալ կ'ըսէին . Քրիս-  
տոսը Գալիլեայէ՞ն տիտի Գալ :

Մեք ակն ունէաք թէ նա իցէ որ շրջելոյն է-  
ջէ զիսրայէլ . Մենք կը յուսայինք թէ Իսրայէլն  
ան տիտի շրջէ :

Ընդէր աշխատ առնիցեն որ շրջեն անտալոյ .  
Ինչո՞ւ կը յողնեցընեն անոնք որ տիտի Տիտի չընեն :

362 . Գրաբարին ստորադասականը Գործե-  
լոյն , ընդհանրապէս աշխարհաբարին ստորադա-  
սականին հետ նոյն է , որ է Գործե՛ճ :

Ստորադասականը կը գործածուի սովորա-  
բար ,

363 . Նախ իբր օրինակ կամ ենթադրութիւն  
բերուած խօսքերու բացատրելու , զոր օրինակ .



Նման է ազգս այս մանկուոյ որ նստիցեն ՚ի  
հրապարակս , հարդացիցեն զընկերս իւրեանց եւ  
ասիցեն . Փողս հարաք ձեզ եւ ոչ կաքաւեցէք .  
ողբացաք ձեզ եւ ոչ կոծեցարուք . Սս ազգը  
կը նմանի աղոց , որոնք հրապարակները նստին ,  
իրենց ընկերներուն հանչեն ու ըսեն . Ձեզի փող  
հարինք ու չկաքաւեցիք , ողբացինք ու կոծ չը-  
րիք :

Արպէս յորժամ էցէ ոք ուրուք թշնամի , եւ  
թագուցեալ զթշնամու թիւնն գաղտ հաճիցէ վնա-  
սել , եւ չգիտիցէ զհանդամանս վնասակարու-  
թեանն , եւ շուրջ եկեալ յածիցէ հնարս ինդրել .  
ապա գտեալ ժամանակ յորժամ ոք ՚ի բժշկաց  
թշնամուոյ նորս պատուէր ասցիցէ յայս ինչ չհպել  
եւ յայս նիչ կերակրոց չճաշակել , որով առող-  
ջութեանն հարժեցէ հասանել , վաղվաղակի ՚ի կեղ-  
ծիս բարեկամութեան կեղծաւորեալ՝ զբժիշկն  
պարսասիցէ , եւ զօգտակարսն նմա վնասակարս  
թելադրեալ հարժեցոցանիցէ , եւ պատուէրս հա-  
կառակ հրամանաց բժշկին ասցիցէ , եւ այնու  
ասիցէ նմա վնաս :

Ինչպէս երբոր մէկը մէկուն թշնամի ըլլայ ,  
եւ թշնամութիւնը ծածկելով՝ գաղտ վնաս ընել  
ուզէ , բայց վնաս ընելուն եղանակն ալ չգիտնայ ,  
ու հնարք փնտռելու պատի . ետքը բժշկի մը ա-  
նոր թշնամուոյն պատուէր տուած ատենը՝ թէ  
այս ինչ բանին չճտենայ , այն ինչ կերակուրէն  
չուտէ որ առողջութեանը հասնի , սլասեհու-  
թիւն գտնելով եւ բարեկամութիւն կեղծելով



բժիշկը պարտաւէ , օղտակարններն անոր վնասա-  
կար հարժեցընէ , բժշկին հրամաններուն հակա-  
ռակ պատուէրներ քայ , ու այսպէս անոր վնաս-  
ընէ :

Ա՞ օրինակներէն ստորագասականին սա  
գործածութիւնը բաւական աղէկ կ'իմացուի :

364 . Երկրորդ՝ ստորագասականը տարակու-  
սական կամ անստոյգ խօսքերու մէջ կը գործած-  
ուի . ուստի գրաբարին մէջ Թէակն եւ հարցա-  
կն խօսքերու մէջ ստորագասական  
կը գործածուի , երբոր գործողութիւնը ներկայ  
կամ ապառնի\* է . զոր օրինակ .

Ե՛նէ սք ածեցէ ապտակ յա՛ջ ծնօտ քս , դար-  
ձո նսնա եւ գլխան . Ե՛նէ մէկը քու ա՛յ ծնօտիդ  
ապտակ մը զարնէ , մէկայն ալ անոր գարձուր :

Ե՛նէ էցէ անդ որդի սղջունի , հանգիցէ սղ-  
ջոյնն ձեր 'ի վերայ նորա . Ե՛նէ հոն սղջունի որ-  
դի հայ , ձեր սղջոյնն անոր վրայ հանգչի :

Մ'ե՛նէ քաղեցէ՞ն 'ի փշոց խաղող . Փուշերէն  
խաղող հը քաղո՞ւ-է՞ :

Բարեացն արարիչ եւ չարեաց ո՞քան զո՞  
հարուստ էցէ . Բարւոյն ու չարին արարիչներէն  
ո՞րն աւելի զօրաւոր է\*\* :

\* Թէական եւ հարցական խօսքեր , ինչպէս աշխարհաբա-  
րին , նոյնպէս գրաբարին մէջ , կրնան ներկայով ալ բա-  
ցատրուիլ . ուստի վերի խօսքերն այսպէս ալ կ'ըլլան .  
Մի՛թէ քաղեն 'ի փշոց խաղող . Բարեացն արարիչ եւ  
չարեաց , ո՞քան զո՞ հարուստ է :

\*\* Ե՛նէ գործողութիւնն անցեալէ , թէական եւ հարցա-



Արդէն քիչ մը առաջ ըսինք որ զբաբարին  
Սպառնին՝ Ստորագասականի տեղ կը գործած-  
ուի : ( Տե՛ս ԲԻ - 357 ) :

## Գ Լ Ո Ի Խ Է .

### Դ Ե Ր Բ Ա Յ

365 • Ինչպէս առջի մասին մէջ (144) ըսինք ,

կան խօսքեր անխաբարով կամ խաբարեալով կը բացատրու-  
ին , զոր օրինակ . Ե՛կէ գիտէի՛ գինչ է , “ Զողորմութիւն  
կամիմ եւ ոչ զզոհ ” , ոչ դատապարտէիք զանմեղան : Ե-  
թէ “ Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զոհ ” խօսքին ինչ  
ըլլալը գիտնայի՛ , անմեղները չէի՛ գաբապարտեր :

Ե՛կէ իմ լեռ եկեալ եւ խօսեցեալ ընդ նոսա , մեղ ինչ ոչ  
գոյր նոցա : Եթէ ես եկած ու անոնց հետ խօսած չըլ-  
լայի , յանցանք չէին ունենար :

Իմացայ՛ գայս ամենայն , ասէն ցնա . Այո , Տէր . Աս  
ամենը հասկըցա՞ք . Այո , Տէր , ըսին :

Ե՛կէ նշեաց , ապա ապրի . Եթէ քնացաւ , կ'աղատի :

Աս խօսքերուն մէջ , ինչպէս յայտնի է , թէական եւ  
հարցական բայերուն գործողութիւնը անշեալ է , այսին-  
քըն՝ արդէն եղած է :

Բայց սա խօսքերուն մէջ՝ գործողութիւնն ապառնի է ,  
այսինքն տակաւին պիտի ըլլայ .

Ե՛կէ ունիցի՛ հաւատաքան զհատ մանանխոյ եւ ասիցէք  
Թթենւոյս այսմիկ . խլեաց եւ սնկեաց 'ի ծովու , հնա-  
ղանդեսցի ձեզ .

Ե՛կէ մանանխոյ հատ էն , ալ ի՛չ հաւատք ունենաք , եւ  
այլն :

Ե՛կէ ոչևար ուրուք անխաբարի 'ի խորխորատ 'ի շաբա-  
թու , թէն ոչ ունիցի՛ եւ յարոսցանիցի ցնա . Ե՛կէ մէկուն  
ոչևարը շաբաթ օր խորխորատ էջեաց , անխկաւ չի՛ բռնեց ,  
չի՛ վերոսնեց :



հայերէն դերբայը կրկին է . Գոյական դերբայ  
որ է Աներեւոյթը , եւ Սժական դերբայ , որ է  
Անցեալ ընդունելութիւնը :

Ա . Գոյական դերբայ համ Աներեւոյթ :

366 . Աշխարհաբարին մէջ Աներեւոյթով բա-  
ցատուած խօսքեր դրաբարին մէջ շատ անգամ  
գիմաւոր բայով կը բացատրուին . զոր օրինակ .  
կ'ըսուի

Ձե ներող եւ արգահատող է արարիչն , այն  
ամենեցուն իսկ յայտնի է . փոխանակ ըսելու ,  
Ներող եւ արգահատող լինել արարչին յայտնի  
է ամենեցուն :

Արարչին ներող եւ կարեկից ըլլալն ամենուն  
յայտնի է :

Այլ շէ Աստուած մահաւան չէ պատճառ ,  
վկայեացէ ամենարուեստ իմաստունն . փոխա-  
նակ ըսելու , Ոչ լինելոյն Աստուծոյ պատճառ  
մահաւան , վկայեացէ իմաստունն :

Աստուած մահաւան պատճառ չըլլալուն ի-  
մաստունը թող վկայէ :

Եւ շէ ճշմարիտ է բանս , յայտ անտի է զի ,  
եւայլն . փոխանակ ըսելու . ճշմարիտ լինել բա-  
նիս անտի յայտ է զի եւայլն .

Աս խօսքին ճշմարիտ ըլլալն անկէ յայտնի է ,  
որ , եւայլն :

Այլ շէ Աստուած 'ի յողապատ մարմնաց ' է  
լէր է , այն յայտնի է ճշմարտից . փոխանակ ը



սերու . Ի շէր շէնէն Աստուծոյ 'ի յօղապատ  
մարմնոց յայտնի է ճշմարտից .

Աստուած բաղադրեալ մարմինէ (նիւթէ)  
դերազանց շատ ճշմարտա մարդոց յայտնի է :

Եւ զի շէր քարացոցեալ Աստուծոյ զսիրտն  
Փարաւոնի , այնու իմանալի է , զի մերթ հա-  
ւանէր արձակել զժողովուրդն եւ մերթ շհա-  
ւանէր . փոխանակ ըսելու . Ոչ քարացոցանէն Աս-  
տուծոյ զսիրտն Փարաւոնի այնու իմանալի է ,  
եւայլն :

Աստուած Փարաւոնին սիրտը քարացոցած  
շատն անկէ կ'իմացուի որ , եւայլն :

Եւ զի բարեաց կամեցող է Աստուած , ու-  
սուցանէ մեզ Տէր մեր յասելն , եւայլն . փոխա-  
նակ ըսելու . Զլէնէն Աստուծոյ կամեցող բար-  
եաց' ուսուցանէ Տէր մեր , եւայլն :

Մեր Տէրը Աստուծոյ բարեաց կամեցող ըլ-  
լալը մեզի կը սորվեցնէ եւայլն :

Եւ զի այս այսպէս է ամենեցուն յայտնի է  
որ կամին ուսանել . Այսմ' այսպէս շէնէն ամե-  
նեցուն յայտնի է որ կամին ուսանել :

Ասոր այսպէս ըլլալը' սորվիլ ուղղներուն  
ամենուն յայտնի է :

Եւ զի մի էութիւն մշտնջենաւորական է եւ  
պատճառ ամենեցուն լինելոյ , այնմ' եւ որ  
զբազմաստուածեան պաշտամունսն մուծին ,  
վկայեն . փոխանակ ըսելու . Զլէնէն միոյ մը-  
տնջենաւոր էութեան եւայլն . վկայեն որ զբազ-  
մաստուածեան պաշտամունսն մուծին ,



Մէկ մշանջեմու որ եւ ամենուն գոյութեան  
որ պատճառ էակի մը ըլլաւ՝ բաղմաստուա-  
ծութեան պաշտօնները հնարողներն ալ կը վը-  
կայեն :

Եւ շէ շէր (Սատանայ) բռնաւոր ոք , յայն-  
մանէ յայտ է զի ցկինն պատրանօք հարցանէր .  
փոխանակ ըսելու . Չլինէն (Սատանայի) բռնա-  
ւոր ոք յայնմանէ յայտ է զի . եւայլն :

( Սատանային ) Չորաւոր մէկը չըլլալը անկէ  
յայտնի է որ , եւայլն :

Այլ շէ դեւ զդեւ ոչ հանէ , զայն իսկ յայտ  
արար . փոխանակ ըսելու . Չոչ հանէն դիւի ըզ-  
դեւ յայտ արար :

Դիւին դեւ չհանէն ալ իմացուց :

Չէ կախարդք զդեւս ոչ հարէն հանել , բաւա-  
կան է մեզ հաւանեցուցանելոյ բանն Տեառն .  
փոխանակ ըսելու . Բանն Տեառն բաւական է  
հաւանեցուցանելոյ մեզ չլինէն կախարդաց  
հանել զդեւս :

Կախարդներուն դեւերը հանել չկրնաւը մե-  
զի ապացուցանելու համար՝ Տիրոջը խօսքը բա-  
ւական է :

Չէ շէ ինչ արարած բանաւոր արտաքս  
քան զայս երիս ջոկս , զհրեշտակաց , զդիւաց  
եւ զմարդկան , յամենայն աստուածատուր գը-  
րոց եւ ՚ի բնութենէ արարածոց յայտնի է . փո-  
նակ ըսելու . Ոչ չլինէն սյլոյ իրիք բանաւոր ա-  
րարածոց արտաքս քան զայս երիս ջոկս , եւ-  
այլն , յայտնի է :



Սա իրեք տեսակէն , հրեշտակներէն , դեւերէն ու մարդիկներէն դուրս ուրիշ բանաւոր արարած մը չըլլալը՝ Աստուածաշունչ գիրքերէն ու արարածոց բնութենէն յայտնի է :

Ձի ԲաճԲասէալ է 'ի չարութենէ Սատանայ , այն ամենեցուն յայտնի է . փոխանակ ըսելու . ԲաճԲասէալ չէ՞նէ՞ն Սատանայի 'ի չարութենէ՝ ամենեցուն յայտնի է :

Սատանային չարութեան համար ԲաճԲասէալ ըլլալն՝ ամենուն յայտնի է :

Օրինակները յաճախեցինք , եւ բոլորն ալ եզնիկէն է . ցուցնելու համար որ աշխարհաբարին մէջ աներեւոյթով բացատրուած խօսքեր՝ ինչպէս հայկաբանութեամբ հայերէնի կը դասնան :

367 . Ասոր հակառակ կան գէպքեր որոնց մէջ դիժաւոր բայի տեղ՝ Աներեւոյթ դնելը վայելուչ կ'ըլլայ :

Նո՞ն . Ձի շողկապով կապուած երկու դիմաւոր բայերուն երկրորդը սովորաբար Աներեւոյթ կը դրուի , եւ ան ատեն շի շողկապը զանց կ'առնուի . ուստի

Կամին շի Գեւորդ զքեզ , ըսելու տեղ , կ'ըսուի . Կամին տեսանել զքեզ :

Պատուէր տայր նոցա շի Ռ Բեհեւորդ յերուսաղեմէ , ըսելու տեղ՝ կ'ըսուի . Պատուէր տայր նոցա մի մեկնել յերուսաղեմէ :

Երեւորդ . Իբրեւ եւ կամ յորժամ շողկապով գիմաւոր բայի տեղ՝ կրնայ 'ի նախդրով Աներեւ-



ւոյթ գրուիլ . զոր օրինակ .

Ի ծնանէն Յիսուսի 'ի Բեթղեհէմ' եկին մոգք յԱրեւելից . փոխանակ ըսելու Իբրե-  
Ջնա-Յիսուս 'ի Բեթղեհէմ', եկին մոգք յԱրե-  
ւելից :

Ի հաշնորա յաղօթս՝ եղև տեսիլ երեսաց  
նորա այլակերպ . փոխանակ ըսելու . Իբրե-  
հաց յաղօթս , եւ այլն :

Ի Տէնէն նոցա 'ի նմանէ' ասէ Պետրոս ,  
եւ այլն . փոխանակ ըսելու . Իբրե- Տէնէցան  
նոքա 'ի նմանէ , ասէ Պետրոս , եւ այլն :

Ի հասանէլ նոցա անդր՝ լցան աւուրք ծնա-  
նելոյ նորա . փոխանակ ըսելու . Իբրե- հասն  
նոքա անդր՝ լցան , եւ այլն :

Բ . Ածահան Դերբայ համ Ընդո-նէլո-նի-ն .

368 . Աշխարհաբարին մէջ ընդունելութեամբ  
բացատրուած խօսքեր ալ՝ գրաբարին մէջ դի-  
մաւոր բայով կը դառնան :

Հայերէնին աս յատկութիւնը յիշեցինք .  
Թիւ 338 - 340 :

Հոս բուն տեղն ըլլալուն համար՝ քիչ մը ա-  
ւելի մանրամասն խօսինք , քանզի հայերէնին աս  
յատկութիւնը՝ տեսակ մը խօսքեր դիւրաւ եւ  
հայկաբանութեամբ բացատրելու բանալի մըն է :

1 . Ընդո-նէլո-նի-ն ներկայ :

369 . Ընդհանրապէս պէտք է գիտնալ որ



Յունարէնին մէջ, մեր աշխարհարարին պէս, ընդունելութիւնը իբր դիմաւոր բայ՝ սեռի եւ բնութեան, այսինքն հայցական եւ ուրիշ հոլով խնդիր կ'առնէ. ուստի առ լեզուներուն մէջ կրնայ ըսուիլ. Ականջ ունողը. Չեզ ընդունողը. Չեզի լողը. Օրէնքը հատարողը, եւայլն: Եւ կամ առանց խնդրոյ լոկ. զոր օրինակ. Աարդա ցողը. Գիտցողը. Հաւատացողը, եւայլն:

370. Արդ՝ հայերէն գրարար լեզուն մէջ մեր ընտիր հեղինակներն՝ առ հասարակ առ տեւակ խօսքեր Գիմաւոր բայով եւ Յարարերակա նով կը բացատրեն. ուստի վերի խօսքերն այսպէս հայերէն կը դառնան. Ար ունիցին ականջս. Ար ընդունին զձեզ, կամ, Ար զձեզն ընդունի. Ար լսիցէն ձեզ, կամ, Ար ձեզն լսիցէ. Ար կատարէն զօրէնս, կամ, Ար զօրէնսն կատարէ. Ար ընթեռնուն. Ար գիտէն. Ար հաւատայն, եւայլն:

371. Երբոր ընդունելութիւնը ներհայե նշանակութեամբ է, գրարարի մէջ դիմաւոր բայը ներհայ կը դրուի. զոր օրինակ. առ խօսքը՝ Աարդացողը թող հասկընայ, գրարար ներկայով կը բացատրուի, այսպէս. Ար ընթեռնուն ՚ի միտ

\* Մեր ոսկի դարուն ընտիր մատենագրաց թարգմանութիւնները Յունարէն բնագիրներուն հետ բաղդասամատեննիս՝ կը տեսնենք որ ընդունելութիւններն առ հասարակ դիմաւոր բայի փոխուած են: Եւ ասոր մէջ մեր հեղինակներն այնպէս միաբան են, որ առ միօրինակութենէն յայտնի կը տեսնուի որ, բացատրութեան առ կերպը՝ հայերէնին մէկ էակամ յատկութիւնն է:



տուցէ . եթէ Կարդացող հոս ներկայ է , այս-  
ինքն եթէ՝ Ան որ հիմա կը կարդայ , ըսել է :

372 . Եթէ ընդունելութիւնն անհատարի տեղ  
է , գրաբարի մէջ դիմաւոր բայն անհատար կը  
դրուի . զոր օրինակ , սա խօսքը՝ Կարդացողը  
չէր իմանար , գրաբար անկատարով կը բացատ-  
րուի , այսպէս . Որ ընթեռնույրն՝ ոչ առնույր ՚ի  
միտ . քանզի , հոս Կարդացող անկատար է , Ան  
որ կը կարդար , ըսել է :

373 . Եթէ ընդունելութիւնը հատարեալի  
տեղ է , գրաբարի մէջ դիմաւոր բայը հատարեալ  
կը դրուի . զոր օրինակ , սա խօսքը՝ Աս տեսնո-  
ղը կը վկայէ , գրաբար կատարեալով կը բացատ-  
րուի , այսպէս . Որ ետեսն զայս վկայէ , քանզի  
հոս Տեսնող կատարեալ է , Ան որ տեսաւ , ը-  
սել է :

374 . Վերջապէս եթէ ընդունելութիւնը ա-  
պատեանայ կամ արտրարարանէ տեղ է , գրաբարի  
մէջ դիմաւոր բայն ապատեանի կամ արտրարարանէ  
կը դրուի . զոր օրինակ , սա խօսքերը՝ Աս ընողը  
պիտի ապրի . Արտը եղողը ետ չդառնայ , գրա-  
բար ապատեանով եւ արտրարարանով կը բա-  
ցատրուին , այսպէս . Որ արասցէ զայս , կեց-  
ցէ . Որ իցէ յանդի , մի դառնայցէ յետս . քան-  
զի սա խօսքերուն մէջ , Ընող՝ ապատեանի է , Ան  
որ պիտի ընէ , ըսել է . Եղող՝ արտրարարան  
է , Ան որ ըլլայ , ըսել է :

375 . Թեպէտ որ , իչ եւ էլի վերջաւորած  
բառեր ընդունելութիւն են , կամ ընդունելու-



Թեան զօրութիւն ունին , բայց ստանք հայերէն  
 հայցական կամ ուրիշ հոլով խնդրով չեն գոր-  
 ծածուիր . ուստի չըսուիր , Գործող կամ Գոր-  
 ծիչ զայսպիսիս . Առնողք զօրէնս . Ասողքն 'ի  
 նմանէ , եւ այլն : Ասանք սովորաբար վերն ըսու-  
 ած կերպով կը բացատրուին , եւ կ'ըսուի . Ար  
 գործէն , Որ գործեացն , Ար գործիցէ զայս-  
 պիսիս . Ար առնէն , Ար արարն , Ար առնիցէն  
 զօրէնս . Ար լսէն , Ար լուսան , Ար լսիցէն 'ի նմա-  
 նէ :

376 . Մինակ էլ եւ էլէ վերջաւորութիւնը շատ  
 անգամ գործածական է , բայց առանց հայ-  
 ցական խնդրոյ , այլ հայցականը սեռական յատ-  
 կացուցչի դարձընելով : Ուստի վերի խօսքերը  
 կրնան վայելուչ կերպով ըսուիլ . Գործիչ այն-  
 պիսեաց . Առնելիք օրինաց . փոխանակ ըսելու .  
 Գործող զայնպիսիս . Առնող զօրէնս :

377 . Աս ալ պէտք է գիտնալ որ իւր եւ էլէ  
 վերջաւորութիւններն աւելի գործածական եւ  
 վայելուչ են , քան թէ ոչ վերջաւորութիւնը :  
 Իսկ յարաբերականով եւ դիմաւոր բայով բա-  
 ցատրելու կերպն՝ աւելի ընդհանուր է :

## 2 . Ընդունելութիւն անցեալ :

378 . Նոյնպէս Ընդունելութիւն անցեալնե-  
 րը սովորաբար յարաբերականով դիմաւոր բայի  
 կը դառնան . զոր օրինակ .

Զոր ետեսն վկայէ . Տեսածը կը վկայէ :



Չոր լուսքն եւ տեսար , պատմեմք ձեզ .  
 Լսածնիս ու տեսածնիս ձեզի կը պատմենք :

379 . Անցեալ ընդունելութիւնը եթէ ներկայ  
 չէ տեղ է , գրաբարին մէջ դիմաւոր բայը ներկայ  
 կը գրուի . եթէ անհասար է՝ անկատար . եթէ  
 հասարէալ է՝ կատարեալ . եթէ ազատնի կամ ստոր  
 բար ստանի է՝ ապառնի կամ ստորադասական .  
 զոր օրինակ .

Չոր ունիմն տայ քեզ . Ունեցածս քեզի տամ .  
 Հոս Ունեցած ներկայի տեղ է , Ան որ հիմա ու  
 նիմ , ըսել է :

Չոր լուսքն պատմեցար ձեզ . Լսածնիս ձե  
 զի պատմեցինք . Հոս Լսած կատարելի տեղ  
 է , Ան որ լսեցինք , ըսել է :

Չոր առնելոցն ես արա վաղվաղակի . Ընե  
 լիքդ շուտով ըրէ . Հոս Ընելիք ապառնի է , Ան  
 որ պիտի ընես , ըսել է :

Որ ունիցին տացի նմա , եւ որ ոչն ունիցի՝  
 եւ զոր ունիցին բարձցի ՚ի նմանէ . Ունեցողին  
 պիտի տրուի , չունեցողէն ունեցածն ալ պիտի  
 առնուի . Հոս Ունեցած ստորադասական է , Ան  
 որ ունենայ , ըսել է :

380 . Պէտք է գիտնալ որ , թէ ներկայ եւ  
 թէ անցեալ ընդունելութիւնը , աշխարհաբարին  
 մէջ ներկայ եղած ատենն ալ , գրաբարին մէջ  
 ստորադասական կը գրուի , երբ գրաբարին  
 բնութիւնը բայը ստորադասական կ'ուզէ , ինչ  
 պէս Հարցական , Թէական եւ Տարակուսական  
 խօսքերու մէջ . (Տես Բիւ 364) . զոր օրինակ .



Գիտօցե՛ս արդեօք զար ընթեռնուցոսսդ .  
 Կարդացածդ դիտե՛ս . հոս Կարդացած՝ աշ-  
 խարհաբարին մէջ ներկայ է , Սն որ կը կար-  
 դաս հիմա , ըսել է . բայց խօսքը հարցական ըլ-  
 լալուն համար , Ընթեռնուցուսս , ստորագասա-  
 կան դրուած է :

381 . Երբոր ընդունելութիւնն աշխարհաբա-  
 րին մէջ հոլոված է , դրաբարին մէջ յարաբե-  
 րականը\* կը հոլովի . զոր օրինակ .

Որո՞ւմ խնդրէ 'ի քէն տուր . Քենէ ուզողին  
 տուր :

Որոյ մտանեկն չտայք թոյլ մտանել . Մտնող  
 ներուն չէք թողուր :

Պատմեա յորոյ լուարն եւ տեսեր . Վսածնե-  
 րէդ ու տեսածներէդ պատմէ :

382 . Բայց շատ անգամ յարաբերականը հօ-  
 լովելու տեղ՝ յարաբերականն իր ձեւովը կը թող-  
 ուի , ու ետքը հոլոված դերանուն մը կամ ու-  
 րիշ յարմար բառ մը կը դրուի . զոր օրինակ .

---

\* Ուրիշ քերականներ առ ձեւին համար ըսած են թէ  
 Երբեմն յարաբերականը յարաբերեալին հոլովը կը  
 դրուի : Ճշմարիտ է որ , ինչպէս ( 340 ) ըսինք , յարա-  
 բերականով և դիմաւոր բայով բացատրուած ընդունե-  
 լութեանց մէջ՝ միշտ յարաբերեալ մը զօրութեամբ կ'ի-  
 մացուի . ուստի և Որում խնդրէ 'ի քէն տուր , Այնմ  
 որ խնդրէ 'ի քէն տուր , ըսել է . և այսպէս յարաբե-  
 րականը յարաբերեալին հոլովը դրուած կ'ըլլայ : Բայց ,  
 Երբեմն յարաբերականը յարաբերեալին հոլովը կը  
 դրուի , ըսելը՝ սարտամ և անորոշ կանան մը տալ է , և  
 գործնականին համար օգուտ մը չընէր :



Ար ոչն ունիցի , եւ զոր ունիցին բարձցի ' Է  
 Դճանէ . վախանակ ըսելու . Յ-բձ ոչն ունիցի , եւ  
 զոր ունիցին բարձցի :

Արք վաասակարքն կարծիցին , եւ անտի եւս  
 Հնարիւք օգտակարութիւնս կարիցէ գտանել .  
 վախանակ ըսելու . Հնարիւք օգտակարութիւնս  
 կարիցէ գտանել յորչ վաասակարքն կարծիցին :

383 . Չէզոք բայերուն Անցեալ ընդունելու  
 թիւնը գոյականարար կրնայ գործածուիլ գրա-  
 բարի մէջ , եւ աշխարհարարին ոչ ընդունելու  
 թեան նշանակութիւնը կ'ունենայ . զոր օրինակ .

Ո՛վ է մեծ , Բազմա՞ն էթէ ապաստւորն . Ո՛վ  
 մեծ է , ծառա՞ն թէ Բազմո՞ղջ :

Եւ ասէ յեհեալսն 'ի վերայ նորա . Իր վրան  
 էհողներուն կ'ըսէ :

Ո՞ յերեցունց 'ի նոցանէ թուի քեզ մերձա-  
 ւոր լեալ անհէշոյն 'ի ձեռս աւազակաց . Ան ե-  
 րեքէն որը քեզի աւազակներուն ձեռքն էհողէն  
 մերձաւոր կ'երեւի :

Աչ կամիմ էթէ ագէաք իցէք վասն նշեցե-  
 լոյն . Մեռնողներուն համար չեմ ուզեր որ ագէա  
 ըլլաք :

384 . Նոյնպէս կրաւորական բայերուն Անց-  
 եալ ընդունելութիւնը գրաբարի մէջ գոյակա-  
 նարար կրնայ գործածուիլ , բայց աշխարհարա-  
 րին ած ընդունելութեան նշանակութիւնը կ'ու-  
 նենայ . զոր օրինակ .

Նեղեալն յայտոց պղծոց բժշկէին . Պիղծ  
 ագիներէն նեղաւածնէրը կը բժշկուէին :



Այսպէս կ'ըսուի . Տալ կարօտելոյ . Բժշկել  
 պրեկեալս . Ազատել շփերեալս . Մի ոմն 'ի կա-  
 պելոյ , եւ այլն :

385 . Հիմա ընդունելութիւններով եւ կա-  
 կան բայով շինուած քանի մը բազադրեալ ժա-  
 մանակներու վրայ խօսինք :

Անցեալ եւ Ապառնի ընդունելութիւններով  
 եւ է՛հ կական բայով քանի մը բազադրեալ ժա-  
 մանակներ կը շինուին (149) :

386 . Անցեալ ընդունելութենէն կը շինուին  
 առ ժամանակները . Գործեալ է՛հ , Գործեալ է՛ի ,  
 Գործեալ է՛ց է՛հ :

387 . Գործեալ է՛հ , Յարակատար\* է . աշխար-  
 հարար Գործած է՛հ կը նշանակէ . եւ ներկայ ժա-  
 մանակէ մը առաջ եղած գործողութիւն մը կը  
 ցուցնէ . ուստի , Գործեալ է՛հ , այսօրուրնէ , առ  
 շաբթուրնէ , առ ամսուրնէ , առ տարուրնէ , ա-  
 ռաջ գործած եմ , ըսել է . զոր օրինակ .

Ձի՞նչ ինչ Գործեալ է քո . Ի՞նչ գործած ես :

Չարհորհեալ է՛հ եւ դողամ . Չարհուրած եմ  
 ու կը դողամ :

388 . Գործեալ է՛ի , Գերակատար է . աշխար-  
 հարար Գործած է՛ի կը նշանակէ . եւ անցեալ  
 ժամանակէ մը առաջ եղած գործողութիւն մը

\* Գործեալ է՛հ , Հայերէն Գերականութեանց մէջ Յարակա-  
 տար կոչուած է . Գործեալ է՛ի՝ Գերակատար . Գործեալ է՛-  
 ց է՛ի՝ Սպորադատական անցեալ : Աս ժամանակները քերա-  
 կանական անուն մը ունենալու են . ուստի մենք առ ա-  
 նունները պահեցինք .



կը ցուցնէ . ուստի , Գործեալ էի , երեկոյնէ ,  
անցած շաբթուրնէ , անցած ամսուրնէ , անցած  
տարուրնէ , առաջ գործած էի , ըսել է . զոր օ-  
րինակ .

Տեսին եւ ատեցին զիս . եթէ խմ չէր Գործ-  
եալ զգործան զոր ոչ այլ ոք գործեաց , մեզ ինչ  
ոչ գոյր նոցա :

Տեսան ու ատեցին զիս . եթէ Գործած չը-  
լայի գործերը ան զոր ուրիշ մը չգործեց , թերեւ  
անմեղադիր կրնային ըլլալ :

389 . Գործեալ էցե՛մ , Ստորագասական անց-  
եալ է , աշխարհաբար Գործած է՛մ կը նշանակէ .  
ուստի Գործեալ է՛մ ի տեղ կը գործածուի ան տե-  
սակ խօսքերու մէջ ուր Ստորագասական գոր-  
ծածել հարկ կամ վայելուչ է : ( Ստորագասա-  
կանի գործածութեանը վրայ , «Ե» ԲԷ- 364 ) :

390 . Ապառնի ընդունելութենէն , որ է  
Գործեւոյ , կը շինուին սա ժամանակները . Գոր-  
ծեւոյ է՛մ , Գործեւոյ էի , Գործեւոյ էցե՛մ :

Ասոնց վրայ «Ե» ԲԷ- 449 . 356 . 391 :

391 . Անցեալ ընդունելութիւնն իբր ամա-  
կան գործածուած ատեն , սովորաբար յետա-  
դաս կ'ըլլայ , ու մէկտեղ կը հոլովի . ուստի  
կ'ըսուի . Գանձի ծածկելոյ յողարակի . Ուռ-  
կանի արկելոյ 'ի ծով . Արյս խօսեցեալ առն :



## Մ Ա Կ Բ Ա Յ

Մակրայնեբուն վրայ առջի մասին մէջ , 151-165 , եւ երկրորդ մասին մէջ , 303-306 ըստ աւածները բաւական են :

392 . Այս , Մակրայ է , եւ կը նշանակէ էֆէջ . զոր օրինակ .

Զոր ինչ եսս գործեմ , գու ալ ժամ ոչ դիտես , բայց ապա գիտասցիր . Գուն հիմա իմ բրածները չես գիտեր , բայց էֆէջ պիտի գիտնաս :

Նախ վասն իւրեանց մեղացն մատուցանէին պատարագս , եւ ապա վասն ժողովրդեանն :

393 . Գարձեալ , ապա Շաղկապ է , եւ կը նշանակէ ուրէժն . զոր օրինակ .

Եթէ մատամբն Աստուծոյ հանեմ զդեւս , ապա հասեալ է 'ի վերայ ձեր արքայութիւնն Աստուծոյ :

Եթէ Աստուծոյ մատուր դեւերը կը հանեմ ուրէժն Աստուծոյ թագաւորութիւնը ձեր վրայ հասած է :

394 . Այս Շաղկապը՝ ուրէժն , է՛ի շաղկապներով ալ կը գործածուի . զոր օրինակ .

Սիմոն , թագաւորք յուսմէ՞ առնուն զհարկն . նա ասէ . Յոտարաց . ասէ ցնա Յիսուս . Այս ուրէժն ազատ են որդիքն :

Այս է՛ի եւ սատանայ բաժանեցաւ յանձն իւր , զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորս :



395 . Ե- Շաղկապ է երբոր ու կը նշանակէ .  
 Մակբայ է , երբոր ալ կը նշանակէ . զոր օրինակ .  
 Օն եկայք և մեք , զի ընդ նմա մեռցուք .  
 Հապա , եկէք , մեք ալ ( երթանք ) որ անոր  
 հետ մեռնինք :

Արա և զիս իբրև զմի 'ի վարձկանաց քոյ .  
 Իս ալ քու վարձուորներէդ մէկն ըրէ :

Մտոյդ և սա ընդ նմա էր . Մառգիս սա  
 ալ անոր հետ էր :

Աս խնայաւ երբեմն ալ կը կրկնուի . զոր օ-  
 րինակ .

Յիրաւի պատժեցան , և նա ( սատանայ )  
 և մարդն զոր յօժարեցոյց յանասառութիւնն :

396 . Ե-ս ալ նոյն նշանակութեամբ կը գոր-  
 ծածուի , եւ Մակբայ է . զոր օրինակ .

Յա ել միս և ծառայ յղել , նոքա եւ վնա  
 ևս դան հարին . Աւրիշ ծառայ մ' ալ զրկեց , ա-  
 նոնք ան ալ ծեծեցին :

Ոմն մերկանայ զհանդերձս ընկերին , եւ ե-  
 թէ ընդդէմ դառնայցէ յարեւէ ևս արկանէ :

397 . Ե-ս երբեմն ա-եւէ կը նշանակէ . եւ  
 բողբատական խօսքերու մէջ ածականի կամ  
 մակբայի հետ կը գործածուի . զոր օրինակ .

Քակեցից զչանմարանս իմ , եւ ևս մեծա-  
 մեծս շինեցից :

Ոչ ոք արկանէ կապերա նոր 'ի վերայ հնաց-  
 եալ ձորձոյ . ապա թէ ոչ առնու նորն 'ի հնոյ  
 անտի , եւ չար ևս պատառումն լինի :

398 . Գ-ոցէ , Բ-երևս Մակբայներն անխախտ



խրարու անդ գործածել ասէկ չէ :

399 . Գոյե կը գործածուի , երբոր գործու-  
ղութեան կատարուելը չենք ուզեր ու կը վախ-  
նանք թէ կ'ըլլայ . ուստի շուտով ինչ կը նշանա-  
կէ . զոր օրինակ .

Գոյե , մինչ քաղիցէք գործուն , եւ վար-  
եանն ընդ նմին 'ի բաց խլիցէք . Չուտայ ինչ որոմը  
քաղած ատեննիդ՝ ցորենն ալ մէկտեղ բրցնէք :

Արձակել զգոսա նօթիս չկամիմ , Գոյե  
նքթիցեն զճանապարհայն :

Ասն յիմարքն ( կուսանք ) ցիմատունան .  
Տուք մեզ յիւղոյդ ձերմէ : Ի նատունքն ա-  
սն . Գոյե ոչ իցէ մեզ եւ ձեզ բուական ,  
այլ երթայք 'ի վաճառականս եւ գնեալիք ձեզ :

Ասն ( Հրեայքն ) ցՊիղատոս . Հրամայեա  
զգուշանալ ( առնել պահպանութիւն ) գերեզ-  
մանին մինչեւ ցերիս աւուրս . Գոյե եկեալ ա-  
շակերտքն գիշերի գողանայցեն զնա :

Արթան կացէք , զի ոչ գիտէք երբ տէր  
տանն գայցէ . Գոյե եկեալ յանկարծակի գտա-  
նիցէ զձեզ 'ի քուն :

Առեալ զմակոյկն յօգնականութիւն՝ կա-  
պէին ընդ նաւն , երկուցեալք թէ Գոյե 'ի յոր-  
ձանուտն անկանիցին :

Ճնշեմ զմարմինս իմ , զի Գոյե , որ այլոցն  
քարոզեցի՝ ես ինքն անպիտան գտանիցիմ :

400 . Ասոր հակառակ՝ Իերեւոյն կը գործած-  
ուի , երբոր գործողութեան ըլլալը կ'ուզենք ,  
եւ կը յուսանք թէ պիտի ըլլայ . զոր օրինակ .



Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր , եւ  
 սակ . Թէրէ-ս ամաչեացեն յորդոյ ապա իմնէ :

Սակ ցնա այդ եղործն . Տէր , թող զգա այս  
 սակ եւս , մինչեւ շուրջ զգովաւ բրեցից եւ ար-  
 կից աղբ , Թէրէ-ս արասցէ պատու :

Ապաշատեա դու 'ի շարեացոյ , Թէրէ-ս թո-  
 զու թիւն լիցի քեզ :

Հաստատեաց ժամանակս ինդրել զԱստ-  
 ուած , զի Թէրէ-ս զննիցեն զնա եւ գտանիցեն :

Ընդ ամենայնի ամենայն եղէ , զի Թէրէ-  
 ս պրեցուցից զամանս :

Հանդարտութեամբ խրատեա զհակառակ-  
 կողմն , Թէրէ-ս տացէ նոցա Աստուած ապաշ-  
 խարութիւն :

Ինչպէս յայտնի է , եթէ , Գոցէ եւ  
 Թէրէ-ս իրարու տեղ դրաին , կրնայ հաշտուակ  
 իմաստ ելլել :

401 . Ոչ , կամ չ , բացառական մակբայ են ,  
 եւ , բայ ի հրամայականէն ուրիշ ամեն ժամա-  
 նակի հետ կը դործածուին . զոր օրինակ .

Հայեցարուք 'ի թաշունս երկնից , ոչ վարեն  
 եւ ոչ հնձեն եւ ոչ ժողովեն 'ի շտեմարանս :

Ոչ գոյր նոցա տեղի յիջեւանին :

Չերկնչիս Աստուծոյ զի 'ի նմին պատժի  
 կաս :

Եթէ դիտէր տանուտէրն յարում ժամու  
 գող դայ , հսկէր եւ շտայր թոյլ ակամ հատա-  
 նել 'ի տան իւրում :

Ծանայ որ դիտիցէ զկամս տեւառն իւրոյ եւ



ու պատրաստեցէ ըստ կամաց նորա , արբցէ  
գան բազում . եւ որ ոչ գիտիցէ եւ արժանի  
գանի ինչ գործեացէ , արբցէ գան սակաւ :

Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ ար-  
կանել շանց :

402 . Ոչ , նաեւ հարցական մակբայ է , ու  
ու աստե՛ն , չէ մի , կը նշանակէ . զոր օրինակ .

Ոչ երկոտասան ժամ է աւուր . Օրը տաս-  
ուերկու ժամ չունի՞ մի :

Ոչ զնոյնս պարտ էր չարչարել Քրիստոսի :

Ոչ եւ սիրտք մեր ճմլէին 'ի մեզ , մինչ խօ-  
սէրն ընդ մեզ զճանապարհայն :

403 . Չե՛ , բացասական մակբայ մըն է ,  
եւ , դե՛ ոչ , կը նշանակէ . զոր օրինակ .

Կին դու , չե՛ է հասեալ ժամանակ իմ . Կնիկ՝  
ժամանակս դե՛ հասած չէ :

Չե՛ եւս գիտէին զգիրան . Գեռ գիրքերը  
չէին գիտեր :

404 . Մե՛նչ չե՛ ալ նոյն նշանակու թիւնն ունի :

Մե՛նչ չե՛ հաւու խօսեալ իցէ , երկոցս ուրաս-  
ցիս զիս . Գեռ հաւը չխօսած՝ իս երեք անգամ  
պիտի ուրանաս :

Մե՛նչ չե՛ բնաւ էր ինչ , ասեն , ոչ երկինք եւ  
ոչ երկիր եւ ոչ այլ ինչ արարած , Չրուան ոմն  
անուն էր :

Մե՛նչ չե՛ ծնեալ էին , եւ Գե՛նչ չե՛ բարի ինչ  
կամ չար գործեալ էր , ասացաւ թէ՛ Երեցն  
կրտսերոյն ծառայեացէ :

405 . Չէ՛ , էական բային սահմանականներ



կայ եղակի երրորդ դէպքն է բացասականով ,  
եւ ոչ քոչ , չկայ , կը նշանակէ . զոր օրինակ .

Ես եմ Աստուած , եւ չէ՛ս այլ ոք . Աստուած  
եւս եմ , եւ ուրիշ մը չէ՛ս :

Չէ՛ս ոք բարի բայց մի Աստուած . Մէկ Աստուած  
մէ զաս բարի չէ՛ս :

Չէ՛ս ինչ ծածուկ որ ոչ յայտնեացի . Ծածուկ  
բան մը չէ՛ս որ չյայտնուի .

406 . Մէ , ալ բացասական մակբայ է , բայց  
արգելիչ խօսքերու մէջ , Ապառնոյ , Ստորադասականին  
եւ Հրամայականին հետ կը գործածուի . զոր օրինակ .

Գատերք Երուսաղէմի , Դ լայք ՚ի վերայ խմ :

Մէ առնուցուս զանուն Աստուծոյ քո ընդունայն :

Յարժամ առնիցես ողորմութիւն . Դ զիտասցէ  
ձախ քո զինչ գործէ աջ քո :

Արձակեացես պղա ՚ի տուն հօր իմոյ , որպէս  
զի տայցէ նոցա վկայութիւն , զի Դ եւ նոքա  
գայցեն յայս տեղի տանջանայ :

407 Արդեօս , Մէ՛Է , մակբայները՝ հարցա-  
կան խօսքերու մէջ կը գործածուին .

Արդեօս , կը դրուի նախ՝ երբ հարցընողը  
չգիտնալով կամ տարակուսանօք կը հարցնէ .  
զոր օրինակ .

Ո՞րք արդեօս իցէ սա , զի եւ հողմք հնազանդին  
սմա :

Գիտիցես արդեօս զոր ընթեռնուցուս :

Մի՞ արդեօս դու իցես Եղիսպատային :



Երկրորդ՝ Արդէօս, կը նշանակէ նաեւ, ար-  
դարեւ, ապաքին, անշուշտ. զոր օրինակ.

Եթէ գիտէիր ո՛վ է որ ասէ՞ղ ցքեղ թէ Տուր  
ինձ ըմպել, դու արդէօս խնդրէիր 'ի նմանէ: Ե-  
թէ՛ Ինձի ջուր տուր, ըսողն ով ըլլալը գիտնա-  
լիր, անշուշտ դուն անկէ կ'ուզէիր:

Եթէ յաշխարհէ աստի էր արքայութիւնն  
իմ, սպասաւորքն իմ մարտնչէին արդէօս զի մի  
մասնեցայց Հրէից:

Մէ՛ծէ, ոչ տարակուսական, այլ հաստա-  
տական հարցումներու մէջ ալ կը գործածուի.  
Երբ հարցընողը գիտէ ու կը հարցընէ. զոր օրի-  
նակ.

Մէ՛ծէ օրէնքն մեր դատի՞ն զմարդ, եթէ ոչ  
լսեն ինչ նախ 'ի նմանէ:

408. Ա-բ, տեղ ցուցընող մակրայ է. զոր  
օրինակ.

Ա-բ եսն իցեմ, ոնդ եւ պաշտօնեայն իմ ե-  
ղեցի:

Ա-բ եղիք զնա. Ա-բ իցէ նա:

Գէպ 'ի տեղ մը շարժում ցուցընելու հա-  
մար՝ յ՞ ալ կը գործածուի. զոր օրինակ.

Յ՞՞ երթայց. Յերեւաց քոց յ՞ փախեայց:

Ա-բ, միանգամայն շողկապ է, եւ միջ կը  
նշանակէ. զոր օրինակ.

Չեն ինչ զարմանք եթէ նոքա (հրեշտակք)  
մերոց դրացեաց արարածոց անուամբքս անուա-  
նին, որ եւ նոցա արարիչն ոչ դարչի զայնպիսի  
անուանս զինքեամբ առնուլ: Չարմանք չէ որ



անոնք մեր գրացի արարածներուն անուններո-  
վը կ'անուանուին , քնն կամ ուր որ անոնց արա-  
րիչն ալ անանկ անուններ վրան առնելէն չի  
գարչիր :

409 . Պէտք է գիտնալ որ շատ անգամ Հո-  
լոված բառ մը , նախադրութեամբ կամ առանց  
նախադրութեան , իբր մակբայ առնել լեզուին  
մէջ սովորութիւն եղած է . զոր օրինակ . Համա-  
օտիւն , Սյգոտն , Ի զո՛ր , Ս՛ր օրին , Չճանադար-  
էայն , Ընդ առաջնօրս , եւ այլն :

Գ Լ Ո Ի Խ Է .

Ն Ա Խ Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

410 . Նախադրութեանց մէջ ամենէն կարե-  
ւորը Նախդիրներն են . ասոնց քանի մը հատին  
վրայ թիւ 224—231 խօսեցանք . բայց հոս բուն  
տեղն ըլլալուն համար աւելի ընդարձակ պիտի  
խօսինք :

Ի կամ Յ .

411 . 1 . Երբոր բայ մը դէպ 'ի տեղ մը շար-  
ժում կը նշանակէ , տեղւոյն անունը 'ի կամ ,  
նախդիրով առանց չի հայցական կը դրուի .  
զոր օրինակ .

Երթալ յեկեղեցի , 'ի տուն , 'ի քաղաք .

Երթալ յեկեղեցիս , 'ի տունս , 'ի քաղաքս .

Եհան զնոսա 'ի լեառն մի բարձր . Ել գնաց  
յանապատ տեղի . Խաղացո զնաւդ 'ի խորն , եւ  
արկէք զգործիս ձեր յորս . Եջ 'ի տեղի մի տա-







տաշխի . Տեղայր մարգարիտ ' է հարանութեան  
Սաթիկան :

Զ .

415 . 1 . Հարկանեմ, զարկանեմ, բայերը զնախ  
դիրով սեռական խնդիր կ'առնեն . Հարկանել  
զքարի . Յետս յետս շոգան եւ զարկան զգետ  
նի :

416 . 2 . Զ նախդիրը հայցական հոլովով սու  
վորաբար ներգործական բայերուն սեռի խնդիր  
է ( «է» 208) : Բայց երբեմն սեռի խնդիր չէ .  
զոր օրինակ երբոր ժամանակի մը բոլոր տեւո  
ղութիւնը ցուցնելու համար կը գործածուի .  
ինչպէս .

Զքառասուն եւ զվեց ամ շինեցաւ տաճարս,  
եւ դու զերիս աւուրս կանգնես զդա . Աս տա  
ճարը քառասուն ու վեց տարուան մէջ շինուե  
ցաւ , դուն ատիկա երեք օրուա՞ն մէջ պիտի  
կանգնես :

Զվեց օր գործեսցես . Զամենայն գիշերս  
աշխատ եղեսք , եւ կալաք ոչինչ . Պահեալ  
զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր՝ ապա  
քաղցեալ . Զի կայք չորս ցերեկ դատարկ :

Աս նշանակութիւնը հայերէն աշխարհաբար  
ալ հայցականով կը բացատրուի . Վեց օր գոր  
ծէ . Բոլոր գիշերն աշխատեցանք . Քառասուն  
օր քառասուն գիշեր պահեց . Ինչո՞ւ համար բո  
լոր ցրեկը դատարկ կը կենաք :

417 . 3 . Զ նախդիրով բացատականը մէ



Կու՛ն կամ բանի մը շարժ կը նշանակէ . զոր օրինակ .

Ձի՛նչ է այս զոր լսեմս գրէն . Ասքու շարժ Լսածս ի՛նչ է :

Տրանջէին զնմանէ . Անոր շարժ կը արանջէին :

Սպասէին որսալ բանս ինչ 'ի բերանոյ նորա զի չարախօսեցեն զնմանէ . Անոր բերնէն խօսք մը որսալու կը սպասէին , որ անոր շարժ չարախօսութիւն ընեն :

418 . 4 . Չ նախդիրով գործիական կը գրքութի , անորոչ ժամանակ մը զուցընելու համար զոր օրինակ .

Յարուցեալ զմէջ գիշերաւ . Ահա գիշերաւ ան ասէնէրը :

Չմիջառք ծագեաց լոյս . Ահսորու ան ասէնէրը լոյս ծագեց :

Այսպէս կ'ըսուի . Չհասարակ առուրք . Չմիջօրէի . Չհասարակ գիշերաւ . Չմիջացաւ հանապարհին . Չայնու ժամանակաւ , կը նշանակեն . Ահս օրու ան , Ահս գիշերու ան ասէնէրը . Չամբուն կէս եղած ասէնէրը . Ան ասէնէրը :

419 . 5 . Չ նախդիրով գործիականը բարբառի ալ կը նշանակէ . զոր օրինակ .

Ի խունել զնովաւ ժողովրդեանն՝ ինքն կայր առ ծովակին . Ժողովուրդին անոր բարբառի գիզուած ատենը :

Ան զիւրեւ յորոյ վերայ անկեալն գնէր .



Պատեաց շորք ահ : Անկառ պարանայառ շոր  
քա :

Ս.Ռ.

420 . Ըսինք (409 - 10) որ դէպ 'ի տեղ մը  
չարժում եւ կամ տեղ մը դադարում ցուցը-  
նելու համար 'է կամ չ նախդիրը կը դորժածուի :

421 . Պէտք է դիտնալ որ երբոր շարժումը  
դէպ 'ի անձ մը կամ մարդ մըն է , թէ եզակիի  
եւ թէ յոքնակիի մէջ առ նախդիրով հայցական  
կը դորժածուի . զոր օրինակ .

Բարեկամ իմ եկն առ իա յուզւոյ . Բարե-  
կամս ինձի (իմ տունս) հիւր եկաւ :

Յորժամ երթիցես առ իշխանն . Առչեաց առ  
ինքն զմի 'ի ծառայիցն . Յղեցին առ նոսա արս .  
Մատեանս առ Փարիսեցիս . Ընթացանս առ ու-  
ղեկիցան :

422 . Իսկ անձի կամ մարդու մը քով դա-  
դարում ցուցընելու համար , եզակիի մէջ՝ տրա-  
կան , եւ յոքնակիի մէջ առանց չի հայցական  
կը դրուի . զոր օրինակ .

Եկաց առ նմա աւուրս երկուս . Երկու օր  
անոր քովը (տունը) կեցաւ :

Առ առն մեղաւորի եմուտ լուծանել . Մե-  
ղաւոր մարդու տուն օթեւան ընելու մտաւ :

Բնակեցաւ առ եղբոր իւրում . Ծառայեցի  
առ քեզ . Քու քովդ ծառայութիւն ըրի . Առ-  
ցինս առ նոսա աւուրս երկուս :

423 . Բանի մը սովը կամ ծորը նշանակելու հա-



մար ալ եղակիի մէջ՝ առ նախդ քով սեռական, յոք  
նակիի մէջ՝ հայցական կը դրուի. ուստի կ'ըսուի .

Նստէր առ դրանն . Գրանը քովը կը նստէր :  
Կայր առ ծովակին , առ խաչին . Ծովուն ,  
խաչին քովը կը կենար :

Սպասէին առ դուրս . Գռանը տակը կը  
սպասէին :

424 . Առ , սեռականով՝ հոմար , կամ պար-  
ճառառ կը նշանակէ . զոր օրինակ .

Առ ամսթոյ փախչին 'ի նմանէ . Խիպերնէն  
կը փախչին :

Առ նախանձու մատնեցին զնա . Նախան-  
ձու հոմար մատնեցին :

Առ խնոյ յիշատակի . Իմ յիշատակիս հոմար :

425 . Աս մտքով երբեմն առանց ղի հայ-  
ցական ալ կ'առնէ , մանաւանդ աներեւոյթ-  
ները . զոր օրինակ .

Առ սէր քո արարի զայդ . Քու սիրոյդ հո-  
մար ըրի :

Առ գութ Փիլիպեան ազգին՝ Փիլիպպոս ա-  
նուանեցին . Փիլիպեան ցեղին սիրոյն հոմար :

Ոչ թէ առ ատել ասեմ . Ոչ թէ ատելուս  
հոմար կ'ըսեմ :

Ով 'ի ձէնջ առ հոգալ իւրով յաւելուլ կարի-  
ցէ 'ի հասակ իւր կանգուն մի . Ով հոգալովը  
իր հասակին ( պոյին ) վրայ կրնայ կանգուն մը  
աւելցրնել :

Առ չժուժել ծախուցն եղեւ փախատական .  
Ծախքին չդիմանալէն՝ առաւ քալեց :



426 . Ա. — , գործիականով՝ մեկուն իշխանու-  
թեան ատենը կը նշանակէ . զոր օրինակ .

Ա. — Աբիադարա քահանայապետի .

Ա. — նովաւ լինէր Գեւեղալիանեան ջրհեղեղն .

Հեթանոսութեան սկիզբն — Թարայի .  
հարբ Աբրահամու եղեւ .

Ա. — կենդանութեամբ առն իւրոյ .

427 . Ա. — , գործիականով՝ բանի մը — է  
լէր , կամ՝ երէն է լէր ( մակերեւոյթին վրա-  
յէն ) ալ կը նշանակէ . զոր օրինակ .

Անց — նովաւ . Անոր քովէն անցաւ .

Այսպէս կ'ըսուի . Քերել — ամիամբք . Ե-  
ղերքն 'ի վեր ( գըյը սըրա ) երթալ .

Նաւել — եղերք . Գնային — որմովն .  
Նստէր — ճանապարհաւն :

428 . Գարձեալ — , գործիականով համե-  
մատութիւն կը ցուցնէ . զոր օրինակ .

Ձի՞նչ է յարդ — ցորենով . Յարդը ցորե-  
նին քով ի՞նչ պիտի ըլլայ .

Արդարացաւ ապստամբութիւնն Խորայէլի  
— ապստամբութեամբն Յուդայ . Խորայէլին  
ապստամբութիւնը՝ Յուդայի ապստամբութեան  
նայելով արդարացաւ .

Այս փոքր ինչ է — նովաւ . Անոր նայելով  
ասիկայ փոքր բան է .

429 . Ա. — , առանց 'ի ի բացառականով հա-  
ճար կը նշանակէ . զոր օրինակ .

Նզովեաց զթղենին — օրինակէ . Թղենին  
օրինակ ըլլալու հաճար նզովեց .



Այս աստիկ չըջեցուցանե՛լին . խայտառա-  
կու թեան համար կը սպասցունե՛լին :

Այս եղեսանե՛, նորա եղեւ . Անոր փորձան-  
քի համար եղաւ :

430 . Այս բացառականով՝ հողէն կը նշանա-  
կե՛ . զոր օրինակ .

Անհարկներն առ ՚ի մարդկանե՛ . Մարդոց  
կողմանե՛ անկարելիները :

Այս տկարացի առ յԱստուծոյ ամենայն  
բան . Աստուծոյ կողմանե՛ բան մը չի տկարանար :

### Ը Ն Դ .

431 . Բանի մը մէջէն կամ՝ մէջտեղէն անց-  
նիլ նշանակելու համար՝ ընդ նախագիրով առանց  
չի հայցական կը դրուի . զոր օրինակ .

Եւ ընդ քո իսկ անձն անցցե՛ սուր . Բու հո-  
գիդ ալ սուր մտնե՛ :

Զանացարուք մտանել ընդ նեղ դուռն . Գը-  
նաց ընդ արտորայսն ՚ի շաբաթու . Եմուտ ընդ  
սրատուհանն ՚ի ներքո . Ընդ եղեգան փող՝ բոց  
ելանէր :

432 . Բան մը տեղւոյ մը բոլոր տարածու-  
թեանը վրայ եղած ցուցընելու համար ալ՝ տեղ-  
ւոյն անունը ընդ նախագիրով հայցական կը դրուի .  
զոր օրինակ .

Եւ հրաման յՕգոստոս կայսերէ՛ աշխարհա-  
գիր առնել ընդ ամենայն տիեզերս :

Եւ համբաւ զնմանե՛ ընդ ամենայն կողմանս  
գաւառին :



433 . Ընդ , եթէ կրկնուի հայցակաւնով , երկուքին մէջտեղը կը նշանակէ . զոր օրինակ .

Մի լիցի կռիւ ընդ իս եւ ընդ քեզ . ընդ հովիւս իմ եւ ընդ հովիւս քո :

Է այն ընդ կողէս եւ ընդ Բարադ . Անկողէսի եւ Բարադի մէջտեղն է :

Կախեցաւ ընդ երկինս եւ ընդ երկիր .

434 . Մէկուն հեռը նշանակելու համար՝ ընդ նախդիրով եզակիի մէջ տրական , յոքնակիի մէջ հայցական կը դրուի . զոր օրինակ .

Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի . Հանին ընդ նմա ի խաչ երկուս աւագակա . Ընդ մարտաւորս եւ ընդ մեղաւորս ուսէ եւ ըմպէ , Եղիւ ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւնս զօրաց երկնաւորաց :

435 . Փոխանակ կամ քեզը նշանակելու համար ընդ նախդիրով սեռական կը դրուի . զոր օրինակ .

Թագաւորեաց որդի նորա ընդ նորա . Անոր քեզը որդին թագաւորեց :

Ակն ընդ սկան եւ ատամն ընդ ատամն . Աչքի քեզ աչք , սկուայի քեզ սկուայ :

Զայն առեալ տացեա ընդ իմ եւ ընդ քո :

Առ զմի ՚ի կողից նորա , եւ ելից ընդ այնր մարմինս :

436 . Ընդ . առանց ՚ի ի բացառականով տեղւոյ մը կողմէն կամ քէէն կը նշանակէ . զոր օրինակ .

Սեմէի երթայր մօտ սա . նա ընդ կողաց լեւրինս . Վրասմար քէէն :



437 . Բանի մը տակը նշանակելու համար՝  
 ընդ նախդիրով գործիական կը դրուի . զոր օ-  
 րինակ .

Հանդիել ընդ հովանեալ . Եռքին տակը .  
 Բնակել ընդ սթով եւ ընդ թղենեալ . Հա-  
 ժողովէ զձագս իւր ընդ թևովք . Ունիմ ընդ իշ-  
 խանութեամբ իմով զինուորս . Զովապիք ընդ  
 ծառովս :

## Ը Ս Տ

438 . Ըստ . առանց զի հայցական խնդրով  
 յԱՅՆ ԳԷ կամ ճարդ գլխի կը նշանակէ .

Տալ ցորեան ըստ բերան . Բերան . այսինքն  
 ճարդ գլուխ ցորեն տալ :

Ըստ տունս աղգացն՝ ոչխար ըստ երդ . Ս.ԳՆ  
 ԳԷ ցեղի՝ տուն գլխի ոչխար մը :

439 . Նոյնպէս ըստ առանց զի հայցականով  
 տեղւոյ մը սահմանէն անդին կը նշանակէ . զոր  
 օրինակ .

Անցանել ըստ բլուրս եւ ըստ արձանս ըստ այս .  
 Աս բլրէն եւ սա արձանէն անդին :

Ելին ըստ քաղաքն . Քաղաքէն անդին , դուրս  
 ելան :

Ելեալ արտաքս ըստ սահմանս երկիւղին Աս-  
 տուծոյ . Ըստ երկիր անդր ոչինչ է . Անցանել  
 ըստ սահման , ըստ բանակն , ըստ օրէնս Աստուծոյ :

440 . Ըստ . սեռականով համեմատ (կէօրէ)  
 կը նշանակէ .

Արասցաք մարդ ըստ պատկերի մերում .



Եղիցի ինձ ըստ բանի քում :

441 . Ըստ , սեռական կամ պարզապէս ա-  
նբրեւոյթ խնդրով աստիճանաբար կամ շտիճակ կը  
նշանակէ . զոր օրինակ .

Ըստ պակասելոյ ամացն . Արշափ որ տարի-  
ները կը պակասին :

Ըստ յաճախելոյ արմտեացն . Արշափ որ ար-  
մտիքը կը շատնան :

Տեղիք ինչ են ծովուց , որոց ջուրն ըստ անել  
լուսնոյ անէ , եւ ըստ պակասելն՝ պակասէ :

442 . Ըստ , առանց ի ի բացառականով յա-  
ջարդ-Ռեան նշանակութիւն ունի . զոր օրինակ .

Զթաղաւորան որ ըստ նմանէ էին . Անկէ  
ետքը եկող , կամ անոր յաջորդող թաղաւոր-  
ները :

Եհաս վճիռն Աստուծոյ ի վերայ Ադամայ ,  
եւ որոց ըստ նմանէ էին . Ադամին ու անկէ ետ-  
քը եկողներուն վրայ Աստուծոյ վճիռը հասաւ :

### Յ .

443 . Քանի մը բայեր , ինչպէս , ասէ՛մ , հար-  
ցանէ՛մ , ասմ , շատ անգամ ց նախդիրով առանց  
չի հայցական խնդիր կ'առնեն . զոր օրինակ .

Ասէ զնա . Բարեկամ , տուր ինձ երկուս նկա-  
նակս :

Երկնչէին հարցանել զնա վասն բանին այ-  
նորիկ :

Հանեալ ետ զպանդակապեան երկուս դա-  
հեկանս :



Խփեալ զգիրն եւ զպաշտօնեայն եւ նստաւ :  
 Նախգիրներուն այլեւայլ հոլով խնդիր առ-  
 ներով այլեւայլ նշանակութիւններ առնելուն  
 վրայ այսչափը բաւական կը համարինք :

Հոս արժանա կը համարինք մեր ընթերցող-  
 ներն ու շողիր ընել թէ , մեր հայերէն գրութար  
 լեզուին մէկ սքանչելի յատկութիւնն է , որ շատ  
 բայեր այլեւայլ նախգիրներով եւ այլեւայլ հո-  
 լով խնդիր առնելով կերպ կերպ առուձմներ կը  
 ստանան , եւ տարբեր տարբեր մտքի տեսու-  
 թիւններ կը բացատրեն : Օրինակ ըլլայ Անցա-  
 նէ՛ք բայը :

Անցանէլ ընդ փորձ . կը նշանակէ Փորձուիլ :  
 Ընդ ամենայն ճառս անցողս կարգաւ . կը  
 նշանակէ կարգանք :

Անց զնովա . Անիկա անցաւ , կամ զանց ը-  
 րաւ , կը նշանակէ :

Երբէք զպատու-հրանաւ քով ոչ անցի . Պատ-  
 ուիրանազանց ըլլալ ըսել է : Նոյնպէս կ'ըսուի .  
 Անցանէլ զա-անդո-նեամբ , զերա-ամբ , զսերոքն Աս-  
 տուծոյ . Չայս արժան էր առնել եւ զայնոս շան-  
 ցանէլ :

Արութեամբ քաջութեամբ անցանէր զՀերախ-  
 շի . կը գերազանցէր , ըսել է :

444 . Երբեմն ալ բայ մը միեւնոյն հոլով  
 խնդրով տարբեր բաներ կը բացատրէ : Օրինակ  
 ըլլայ Ե՛՛՛ էական բայը սեռական խնդրով :

Գետինն չորեք հարիւր սատեր արծաթն է .  
 Չորեք հարիւր սատեր արծաթ կ'աժէ , ըսել է :



Կը նա աճաց ու թանկաց . Ու թառն տարուան էր , կը նշանակէ :

Գեաց է կերպարանս կերպարանս ցուցանել . Գեւերու գործ է , կամ Գեւերը մինակ կրնան , ըսել է : Այսպէս կ'ըսուի . Աստուծոյ է գիտել զայն որ լինելոց է . Անհնարին յիմարութեան է զայդ ասել :

Են ի՞նչ եղբարք երկու . երկու եղբայր ունիմ , ըսել է :

Թէ Եւրոպայի որկորն է , Բե Շիրակայ ամբարքն չեն . Եթէ դու Եւրոպայի որկորն ունիս , մենք Շիրակայ ամբարները չունինք :

445 . Այս բայ ալ որ իր յատուկ խնդիրն ունի . զոր օրինակ . Զարժանալ , խնդալ , բայերը ընդ նախադրութեամբ խնդիր կ'առնեն :

Վաճառել , Գնել , բայերը , սեռական հոլով խնդիր կ'ուզեն . ինչպէս .

Գնեցից արծաթոյ որքան արծիցէ . Վաճառեցին զՅովսէփ Իսմայելացւոցն ասան դահեկանի . երկու ճնճուկք դահի Բոլ վաճառին . Ոչ դահեկանի Բոլ սակ արկեր ընդ իս :

Գ Լ Ո Խ Խ Ը  
Շ Ա Ղ Կ Ա Պ

446 . Չի Եաղկոս է , եւ քանի մը առում ունի .

1 . Ար նշանակէ ասուլի , ինչու որ . զոր օրինակ .

Գուք յոյժ մտորեալ էք , շէ ոչ գիտեք ՂԿԻ



չլա , եւ զգորութիւնն Աստուծոյ . Դուք խիտ  
մոլորած էք , ինչու որ գիրքերն ու Աստուծոյ  
զօրութիւնը չէք գիտեր :

2 . Ար նշանակէ , որպէս շէ , որ . եւ իմէ  
եւքը եկող բայն Ապառնի կամ Ստորագրատա  
կան կ'ուղէ . զոր օրինակ .

Ասա շէ քարինքս այսօրիկ հաց լինիցին . Ըսէ  
որ սա քարերն հաց ըլլան :

3 . Ար նշանակէ , շնորհ , ինչո՞ւ համար .  
զոր օրինակ .

Ձե՞ տեսանես զշիղ յական եղբօրք . Եղ-  
բօրդ աչքին մէջի շիւղն ինչո՞ւ համար կը տես-  
նես :

Ձի՞նչ գործէք , շե՞ լուծանէք զյաւանակդ .  
447 . Իսկ , շողկապ է , եւ կը նշանակէ ,  
Բայց , ալ :

Իսկ Պետրոս ուրացաւ եւ ասէ . Աչ գիտեմ՝  
դնա , կին դու . Պետրոս ալ ուրացաւ , եւ այլն :

Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին , ասեն .  
Սա է ժառանգն , եկայք սպանցուք զսա . Մը-  
շակներն ալ երբոր տեսան , եւ այլն :

448 . Պէտք է գիտնալ որ , իսկ բառը հայե-  
րէնի մէջ յաճախ գործածութիւն մը ունի ,  
եւ կը գործածուի

1 . Գերանուններու հետ , եւ կը նշանակէ ,  
նոյն ինքն , ալ . զոր օրինակ .

Նորին իսկ (արարածք) իւրաքանչիւր փո-  
փոխամբք յայտ առնեն , եթէ է ոմն որ փո-  
փոխէ զնոսա :



Չիա՛րդ պաշտօնեմք զհուր քրում զքեզ էօն  
երկրորդ արարիչ կազմեաց յօրինիչն , զի յոր-  
ժամ կամիցիս՝ վառիցես , եւ յորժամ կամիցիս՝  
խափուցանիցես :

Եթէ որդի ուրուք չիցէ մտավարժ , բազում  
անգամ զծառայ այր առաջինորա գան հարկա-  
նեն , զի 'ի նա հայեցեալ լինիցի մտավարժ . ա-  
պա եթէ եւ այնու եւս ոչ խրատիցի , 'ի նա էօն  
մտաուցանեն զտանջանան :

Երբեմն հարկանէ զանասուն մեր , եւ եր-  
բեմն զանգա եւ զայդիս , զի ընդ այն հայեցեալ  
մտցուք ընդ լծով երկիւղին Աստուծոյ . ապա  
եթէ այնու եւս ոչ խրատիցիմք . 'ի մեզ էօն մա-  
տուցանէ զտանջանան :

Մի ոք լիցի դատաւոր 'ի միջի մերում , այլ  
քս էօն օրէնքն զոր գրեցեր :

Չինչ եւս պիտոյ է մեզ վկայութիւն , զի մե-  
զէն էօն լուաք 'ի բերանոյ դորա :

2 . Գոյականներու հետ կը դորժածուի ,  
Բուն , ալ , նշանակութեամբ . զոր օրինակ .

Ի մարդոյ էօն առ օրինակ . զի յորժամ գայ  
ի չափ հասակի մարդոյ , յայնժամ միտի 'ի չա-  
րիս :

Բուն մարդէն օրինակ առ , եւ այլն :

Այսու յայտ առնեն թէ զյարութիւն էօն  
մարմնոյ խափանել կամին . Ասով կը ցուցնեն  
թէ մարմնոյ յարութիւնն ալ խափանելի ուղեն :

Նա եւ 'ի տէրունական էօն փորձանայն ի-  
մանալի է , թէ չէ (Մատանոյ) կանխադէտ :



Է երբէք զի վասն մեղաց իսկ լինին այսպի-  
սի տանջանք . Երբեմն մեղքի համար ալ ասանկ  
տանջանքներ կ'ըլլան :

Ս.ՅԼ զի մի 'ի մէնջ եւ եթ լսիցէք , զգիրուն իսկ  
ընթերցարուք .

3 . Ար գործածուի ամականներու , մակբայ-  
ներու եւ բայերու հետ , նոյն նշանակու-  
թեամբ . զոր օրինակ .

Եթէ Աստուած չէր կանխագէտ եւ ամենա-  
գէտ , ապա եւ հատարեալ իսկ չէր . Եթէ Աստ-  
ուած կանխագէտ չըլլար , կատարեալ ալ չէր  
ըլլար :

Վասն որոյ եւ ընդունայն իսկ եղեւ յոյս նո-  
ցա . Անոր համար յոյսերնին ընդունայն ալ եղաւ :

Ան իսկ մեծ եւ զարմանալի է , զի մարդն  
վառեալ Աստուծոյ օգնականութեամբն՝ յաղ-  
թիցէ Սատանայի :

Ուստի յայտ իսկ է թէ հրոյ ընդ խառոյ ոչ ա-  
մուսնութիւն լինի , այլ ծախումն :

Արքունական է քաղաքն ( երկինք ) . ոչ որ-  
պէս աստա 'ի վաճառս եւ յարքունիս բաժան-  
եալ , այլ այն ամենեւն իսկ արքունիք են :

Արդարեւ իսկ չարիքն որ լինին՝ 'ի տարակու-  
սի կայուցանեն զբազումն :

Բնաւ իսկ , ասեն , յետ թիւրեւոյն Սա-  
տանայի եւ խաբելոյ զմարդն՝ ընդէր իսկ ոչ ե-  
բարձ 'ի միջոյ :

Եւ չարագործն , մնչորեւ իսկ 'ի գործ չարա-  
գործութեանն իցէ , եթէ սք չարագործ կոչէ



զնա , ըմբոստանայ :

Որպէս յառաջագոյն իսկ ասացաւ , որ մարմնաւոր ինչ է , յայլ կերպարանս չկարէ փոխել :

Այլ եւ փրկէր իսկ ընդէր զայլոյ արարածս , զոր իւր չէր արարեալ :

Եւ զօրէնան զիա՛րդ իշխէր դատաւոր ինգրել . մանաւանդ զի եւ գիտէր իսկ թէ պարտաւորեն զնա օրէնքն եւ ոչ արդարացուցանեն :

449 . Ինչ , բառը իբրեւ թարմատար կամ զարդ Հայերէնի մէջ յաճախ գործածու թիւն մը ունի .

1 . Նախ՝ սովորաբար էական բայով խօսքերու մէջ՝ ստորոգելոյն հետ կը գործածուի , երբ խօսքը բացասական կամ թէական կամ հարցական է . զոր օրինակ .

Ոչ եթէ հարօտ էնչ ոք իւրք էր , եթէ վասն այնորիկ խնայիցէ զկենդանութիւնն . Ոչ թէ հարօտ մէկն էր որ կենդանութիւնը խնայէր :

Ոչ եթէ անձիս էնչ ոք եղեւ նա յԱստուծոյ , եթէ չգիտէր եթէ որ ինչ ըստ Աստուծոյ կամացըն լինի՝ բարի է , եւ որ ինչ արտաքոյ քան զնորա կամանն՝ այն չար է :

Չէր էնչ Տէժ գործ Աստուծոյ զՍատանայ ինքնին անձամբ սպանանել , այլ թերեւս կարծիք ինչ՝ ի մէջ մտանէին թէ հաստատ էնչ ոք էր նա Աստուծոյ , եւ անապարեաց ՚ի միջոյ եբարձ :

Եթէ բնութեամբ չար էնչ էր օձ , ապա չգրտանէր ինչ ամենեւին ՚ի նմա օգտակար :

Որ չար էնչ է , նորա եւ ամենայն ինչ զնասակար է :



Եթէ Բնաւոր (զօրաւոր) ոչ Բնէր ոչ յԱստուծոյ խնդրեալ առնոյր օճան եւ ապա միտէր ՚ի փորձութիւնսն :

Գպրութիւն կամ ճարտարութիւն (քերթողութիւն) կամ բժշկութիւն ոչ եթէ անչին Բնէն , այլ , եւ այլն :

Ենցաւք որ ոչ վասն մեզայ են , եւ ոչ յԱստուծոյ Բնէ ՚ի փառս , այլ ՚ի շէշուելոյ (յանհաւատարակչութեանէ) խառնուածոց :

Ոչ եթէ ՚ի դատարարութեան Բնէ ողւոյ լինին մարդոյն ասնջանքն դիւայ , այլ աւաւել եւս յարդահատութիւնս :

Չեն Բնէ զարձանս եթէ նաքա (հրեշտակք) մերոց դրացեաց արարածոց անուամբքս անուանին , ուր եւ նոցա արարիչն ոչ գարչի զայն պիտի անուանա զինքեամբ առնուլ :

Եթէ հնար Բնէ էր մարմնաւորաց զկերպարանս փոփոխել , նախ մարդ փոխէր զկերպարանսն յինչ եւ կամէր :

Եթէ ՚ի կալս ջորիք եւ ուղտք երեւիցին , կեզծիք դիւայ են եւ ոչ ճշմարտութեան Բնէ իրաց :

2 . Երկրորդ՝ մակբայի կամ մակբայօրէն զորժածուած գործիականի՝ հետ կը գործածուի . զոր օրինակ .

Ուստի լինիցի նոցա զճշմարիտն ուսանել , եւ

\* Գործիականը հայերէն որակական ( 183 ) մակբայի գործութիւն ունի . զոր օրինակ . Քաջաբէլամբ մեռցուք . քաջանակ . Քաջութար մեռցուք :



մեզ ոչ 'է զոր էնչ գրանս ծախել :

Ոչ ընդ շարք էնչ սասայեալ է բան խնամանայն թէ , եւ այլն :

Յորժամ երեւել սրբոց իւրոց կամէր , մարդոց կերպարանօք յայտնէր , եւ այն ոչ շարքապար էնչ լինէր , այլ զի զառաւել սէրն իւր զոր ընդ մարմնոցն ունէր , ցուցանիցէ :

Ոչ եթէ անիրաւութեամբ էնչ յաղթել ջանամք , այլ իրաւամբ զճշմարիտն ուսանել :

Նոյնպէս յորժամ դուստր զմայր անարգիցէ , եւ նու (հարս) զկեսուր իւր եւ կին զայր , թէ էնչ տարցին ընդ միտ որ անարգեցանն :

3 . Երրորդ՝ հարցական խօսքերու մէջ կը գտնուածուի , եւ արդեօ՛ք , զիէ , բառերուն զօրութիւնը կ'ուսենայ . զոր օրինակ .

Հարցցուք զՀիւզեայն . Պա՞րզ ինչ բնութիւն իցէ եթէ յօդուածով . Հիւլէին համար հարցընենք . արդեօ՛ք պա՞րզ տարր էր թէ բաղադրեալ :

Օգո՞ւտ ինչ իցէ յաշտս զոր առնեմ . Արդեօ՛ք ըրած զոհս օգուտ ունի՞ :

Մարդիկ յանձա՞նց ինչ ունիցին զայնպիսի շարժմունս , եթէ յԱստուծոյ լեալ իցեն :

4 . Չորրորդ՝ մասնական կամ անարոշ մտքով (որէս թիւ 317 . Գ . Ե . Զ . ) առնուած բառերու հետ . զոր օրինակ .

Եթէ նշանս էնչ ոչ տեսանիցէք , ո՞չ հաւատաայ . Եթէ նշան չտեսնէք՝ չէ՞ք հաւատար :

Եթէ 'ի գետս 'ի հանանց էնչ կերպարանս երեւիցին , սատանայի կերպարանք են . Եթէ



գետերու մէջ հանանց կերպարանքով երեւան ,  
սատանայի երեւոյթներ են :

Ուտել արձապս Բնչ խասաց . Խտտերու արձապ-  
սներ սւտել :

5 . Հինգերորդ՝ բայի հետ կը դարձած ու ի , եւ  
Բնա- մակբային զօրութիւնք ունի . զոր օրինակ .

Ոչ խառնէին Բնչ , եւ ոչ զճառ- Բնչ ամէն .  
Բնա- շէին խառնիր , ոչ ալ Բնա- մաքէ կ'անցնէին :

Ոչինչ այսպիսի զմտաւ ամին , եւ ոչ խօսե-  
ցան Բնչ . Ստանկ բան մը շտորհեցան , Բնա- շխո-  
սեցան ալ :

Պարտ էր անկանել 'ի ձեռս Հերովդի , եւ  
ոչ Հասել (ել) Բնչ . Հերովդէսին ձեռքն իյնալու  
էր , ու Բնա- մատուերու շէր :

450 . Իբրեւ եւ Մեհրեւ , շաղկապները տար-  
բեր առում ունին :

451 . Իբրեւ , լոկ ժամանակ մը , դէպքի մը  
պատահած ատենը ցուցնելու համար է , եւ  
աշխարհաբարին երբեք , կամ երբ ինչ կը պատաս-  
խանէ . զոր օրինակ .

Իբրեւ լուան զայս 'ի թագաւորէն , դնացին .  
Երբ թագաւորէն առ լսեցին , դացին :

452 . Մեհրեւ , կամ Բնչ , բանի մը սուտ-  
զուժեան ատենը՝ ուրիշ բան մը եղած կը ցու-  
ցնէ , եւ աշխարհաբարին մէջ առէն բառով ա-  
ւելի աղէկ կը բացատրուի . զոր օրինակ .

Մեհրեւ նա զայս ամէր զմտաւ , ահա  
հրեշտակ տեսան երեւեցաւ նմա . Մն առ խոր-  
հած առէնը՝ ահա Տերովր հրեշտակն անոր երեւ-



ցաւ :

Զի՞նչ են բանքդ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս , Բնչքե՛ն զնայքդ . Գացած ասեմննիդ վիճածնիդ ի՞նչ է :

Մե՛նչքե՛ն նոքա զայս ընդ միմեանս խօսէին , ճնեալ Արմզդի ՚ի ժամու իւրում լուսաւոր եւ անուշահոտ՝ եկն եկաց առաջի Զրուանայ :

453 . Մե՛նչե՛ն նախադրութիւն է , եւ կը նշանակէ Բնչքե՛ն . զոր օրինակ .


Սսե՛ն հովիւքն . Եկայք երթիցուք Բնչե՛ն ցֆեթղահէմ եւ տեսցուք :

Սկաւ Յիսուս ասնել եւ ուսուցանել Բնչե՛ն յորն պատուիրելոյ առաքելոցն :

454 . Մե՛նչե՛ն , շողկապ է , եւ կը նշանակէ , այնպէս , ան աստիճան որ . եւ իրմէ ետքը գրեթէ միշտ աներեւոյթ կ'ուզէ . զոր օրինակ .

Եւ զայ միւսանգամ ընդ նոսա ժողովուրդն , Բնչե՛ն հաց եւս ոչ ժամանել ուտել նոցա . Ժողովուրդը դարձեալ անոնց հետ կու գայ , այնպէս որ հաց անգամ չեն կրնար ուտել :

Հասն մանանխոյ յորժամ ածիցէ , լինի ծառ Բնչե՛ն գալ թռչնոց երկնից եւ հանգչել յոստս նորա . Մանանխոյ հասը երբոր մեծնայ , ծառ կ'ըլլայ , այնպէս որ երկինքին թռչունները կու գան ու անոր ստերուն վրայ կը հանգչին :





Ն Բ Բ Ո Բ Գ Մ Ը Ս

Շ Ա Բ Ս Դ Ա Ս Ո Ի Թ Ի Ի Ն

455 . Մ Ը մասին մէջ խօսք մը կազմող բառերուն խօսքին մէջ ինչ կարգով շարուելուն վրայ պիտի խօսինք :

1 . խօսքի մը կազմութիւնը երկու կերպ կրնայ ըլլալ , մի՛ Բերականահան , երկրորդ՝ Չէ-ա-որ :

2 . Բերականահան կարգը խօսքին բնահան կարգըն է , որուն վրայ քիչ մը ետքը պիտի խօսինք :

3 . Չէ-ա-որ կ'ըսուի խօսքի մը կազմութիւնը , երբոր ան խօսքին բառերը քերականական կամ բնական կարգէն տարբեր կերպով շարուած են :

Նախ քերականական կարգին վրայ խօսինք , ետքը Չէ-ա-որ կարգին վրայ :

Գ Լ Ո Ի Թ Ա .

Ք Ե Բ Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն Կ Ա Բ Գ

Պէտք է գիտնալ .

456 . Ա . Ար եւ իցէ խօսք մէկ կամ աւելի նախադասութենէ կը բաղկանայ :

457 . Բ . Նախադասութիւն ան է որուն մէջ գիմաւոր բայ մը կայ . եւ գիմաւոր բայ մը եղած տեղ հարկաւ յայտնի կամ լռելեայն Տէր բայի



մը , եւ ստորագելի ( ուղղական հօրով մը ) կայ :  
Գոր օրինակ , սա խօսքը ,

Աստուած է արդար , դու ես վե՛մ ,

Նախադասութիւններ են . եւ ամեն մէկուն մէջ  
դիմաւոր բայ մը , է , ես , եւ Տէր բայի մը ու Ստու-  
րողելի մը կայ :

Երբոր բայն ամական բայ մըն է , այսինքն  
էական բայէն զատ ուրիշ բայ մըն է , ստորողե-  
լին էական բային հետ միացած կ'ըլլայ . զոր օ-  
րինակ . Ննջեմ , ննջող եմ . Սիրեմ , սիրող եմ ,  
բռնէ :

438 . Գ . Խօսքի մը մէջ որչափ դիմաւոր  
բայ կայ , այնչափ նախադասութիւն կայ . զոր  
օրինակ .

Ար «երէն զիս» «երէնցի» ՚ի հօրէ խմնէ .

Եթէ «անիցէն» սղորմութիւն , մի գիտացէ ձախ քո  
զինչ գործէ աջ քո .

սա խօսքերուն առջինին մէջ՝ երկու նախադաս-  
ութիւն , երկրորդին մէջ՝ երեք նախադասու-  
թիւն կայ , քանզի առջինին մէջ երէն- դիմա-  
ւոր բայ կայ , երկրորդին մէջ՝ երէն :

439 . Գ . Թէպէտ նախադասութեան մը էա-  
կան մասերն երեք են , Տէր բային , բայն ու ստու-  
րողեալը , բայց շատ անգամ նախադասութեան  
մէջ սա երեքէն զատ ուրիշ բառեր ալ կը գրա-  
նուին : Այսինքն՝ նախադասութեան մը մէջ  
կրնան գտնուիլ , ամական մը , բացայայտիչ մը ,



յատկացուցիչ մը , խնդիր մը եւ մակբայ մը :

460 . Ե . Տէր բայիէն , Վիմաւոր բայէն եւ Ստորագրելիէն զատ՝ նախադասութեան մը մէջ գտնուած ուրիշ բառեր՝ շարահիշ, կամ ըստ մեր նախնեաց՝ յաւելած կը կոչուին , եւ նախադասութեան էական մասերուն այսինքն՝ Տէր բայիին եւ Ստորագրելոյն , կամ բային իմաստը լրացնելու (ամբողջացնելու , որոշելու) կը ծառայեն : Չոր օրինակ .

Աստուած ճշմարիտ արարիչ է երկի եւ երկրի .

աս խօսքին մէջ ճշմարիտ անականը լրացուցիչ կամ յաւելած է Աստուած Տէր բայիին . երկի եւ երկրի յատկացուցիչներն ալ արարիչ ստորագրելոյն լրացուցիչը կամ յաւելածն են :

Գու խորհիս զայտ 'ի սրբի Գոմ .

աս խօսքին մէջ՝ զայտ , 'ի սրբի Գոմ , խնդիրները լրացուցիչ են խորհիս բային , կամ լաւ եւս ըսենք՝ խորհող ստորագրելոյն . ( քանզի խորհիս՝ խորհող ես , ըսել է ) :

Նա տրամեցաւ յոյժ .

աս խօսքին մէջ ալ՝ յոյժ մակբայը լրացուցիչ է արարմեցաւ բային , կամ արարմեալ ստորագրելոյն . (քանզի արարմեցաւ՝ արարմեալ եղեւ , ըսել է ) :

Ասոնք գիտնալէ ետքը՝ նախադասութեան մը բառերը բնական կամ քերականական կարգաւ շարելը շատ դիւրին է : Ասոր համար հետեւեալ կանոնները միտք առնել պէտք է :

461 . Առաջին կանոն . Նախադասութեան մը



Տէր բային ամենէն առաջ կը դրուի , ետքը բայը , ետքը Սատրոգելին :

Ես եմ հովիւ . Գու ես վէմ . Նոքա խորհեցան Այրն էր մեծատուն .

առ նախադասութիւններուն կարգը բնական կամ քերականական է :

462 . Երբորդ կանոն . Եթէ նախադասութեան մը Տէր բային , կամ Բայը կամ Սատրոգելին լրացուցիչ կամ յաւելուած մը ունի , լրացուցիչը կամ յաւելուածն՝ անմիջապէս լրանալի բառէն ետքը կը դրուի :

Զոր օրինակ , եթէ Տէր բային ածական մը , կամ բացայայտիչ մը , կամ յատկացուցիչ մը ունի՝ ասոնք Տէր բայիէն անմիջապէս վերջը կը դրուին : Բային կամ Սատրոգելոյն համար ալ նոյն բանն է : Զոր օրինակ .

Այրն այն էր մեծատուն .

Այրն Յ-Վ , էր արդար .

Եղբարքն Յ-Է-Է-Է իջին յԵ-Գ-Գ-Գ .

Նա էր իշխան եւեօն .

Եւ նա տրամեցաւ յոյժ .

Տեսի զՅ-Է-Է-Է ներքոյ Բ-Է-Է-Է-Է

առ խօսքերուն մէջ ալ կարգը բնական է , քանզի լրացուցիչները լրանալի բառերուն անմիջապէս քովը եւ անոնցմէ ետքը դրուած են :

463 . Երբորդ կանոն . Եթէ բառ մը երկու լրացուցիչ ունի , զոր օրինակ՝ ածական մը եւ բացայայտիչ մը , կամ ածական մը եւ յատկա-



ցուցիչ մը , բառէն անմիջապէս ետքը՝ նախ ա-  
ծականը կը դրուի , ու ետքը բացայայտիչը կամ  
յատկացուցիչը . զոր օրինակ .

Այրն աչ , Յ-Է , էր մեծատուն .

Դշխոյն ՏԺ հարաւայ եկն տեսանել զՍողոմոն .

Նոյնպէս եթէ բառ մը երկու խնդիր ունի ,  
սեռի եւ բնութեան , սովորաբար նախ սեռի  
խնդիրը կը դրուի խնդրառու բառէն անմիջա-  
պէս ետքը , ու ապա բնութեան խնդիրը . զոր  
օրինակ .

Դու խորհիս զայդ 'ի սրբի բամ .

Հերովդէս սպան զՅակոբոս սրով :

464 . Չորրորդ կանոն . Եթէ լրացուցիչն ալ  
ուրիշ լրացուցիչ ունի , զոր օրինակ՝ յատկացու-  
ցիչ մը ուրիշ յատկացուցիչ , կամ խնդիր մը ու-  
րիշ խնդիր մը՝ միշտ լրացուցիչը լրանալի բառէն  
ետքը կը դրուի . զոր օրինակ .

Կասրանք յեւայ նորա լուծան .

Իբրեւ լուան զհոտանէլնոցա 'ի փաղափն .

Կոչեաց զԷրիոս 'ի Ժառայից Էւրոց :

Բոլոր աս օրինակներուն մէջ շարադրութեան  
կարգը բնական է . քանզի ամենուն մէջ ալ նախ  
Տէր բային , ետքը Բայն ու ետքը Ստորոգելին  
դրուած է : Երկրորդ լրացուցիչները լրանալի  
բառերէն անմիջապէս ետքը դրուած են :



## Գ Լ Ո Ի Թ Բ .

## Զ Ե Ի Ա Ի Ո Ր Կ Ա Ր Գ .

465 . Խօսքիկամ՝ նախադասութեան մը կարգը ձեւաւոր է , երբ սա չորս բաներէն մէկը կայ . Յեղաշեջումն , կամ Սրբաւորումն , Զեշումն , Աւելագորումն , եւ Բահարումն :  
Ասանք չեբաննան յե-եք կը կոչուին :

## ՅՕԴ Ա .

## Յ Ե Գ Ա Շ Ր Զ Ո Ի Թ Ի Ի Ն

466 . Երբոր նախադասութեան մը բառերը բնական կամ քերականական կարգէն տարբեր կերպով շարուած են , անանկ նախադասութիւն մը ձեւաւոր է , եւ խօսքին սին մասը կամ բառը որ այսպէս իր քերականական դիրքը փոխած է , յեղաշեջում կամ շեջում կ'ըսուի :

Օրինակի համար վերն (461) ըսինք որ նախադասութեան մը Տէր բային բնական կարգով ամենէն առաջ կը դրուի . արդ՝ եթէ Տէր բային բայէն ետքը դրուի , նախադասութիւնը շեջումն , եւ Տէր բային ալ շեջումն եղած կ'ըլլայ :

467 . Դարձեալ ըսինք որ լրացուցիչ կամ յաւելուած մը միշտ լրանալի բառէն ետքը պիտի դրուի . ուստի լրացուցիչ մը , զոր օրինակ՝ յաւակացուցիչ մը՝ եթէ յատկացեալէն առաջ դրուի՝ նոյնպէս նախադասութիւնը շեջումն եղած կ'ըլլայ : Զոր օրինակ .



Կէ աչն մեծ ասուն

Յեղաչը յեղաչը յեղաչը յեղաչը

աս խօսքերուն կարգը շրջուն է :

468 . Յեղաչը յեղաչը յեղաչը է , Հարկաւոր  
Եւ Ազատ :

469 . Յեղաչը յեղաչը է , երբ  
հարկը կը պահանջէ որ բառ մը իր բնական կամ  
քերականական տեղէն տարրեր տեղ դնենք :

470 . Յեղաչը յեղաչը է , երբոր ամե-  
նեւին հարկ չկայ որ բառ մը նախադասութեան  
մէջ իր բնական տեղէն տարրեր տեղ դնենք .  
բայց լեզուն կը ներէ , եւ տկանը կամ ճաշակը  
յարմար կը տեսնէ , որ այս ինչ բառը խօսքին  
մէջ տարրեր տեղ մը դնենք :

Ա . Հարկաւոր յեղաչը-նէն .

471 . Յեղաչը յեղաչը հարկաւոր է ամեն  
անգամ , երբ կը տեսնենք որ բառ մը իր բնա-  
կան դիրքը պահելով խօսքին մէջ համութեան  
պիտի պատճառէ :

472 . Յեղաչը յեղաչը հարկաւոր ընտել է պ-  
քերն են .

1 . Բնական կարգով ամականը , իբրեւ  
լրացուցիչ , լրացուցած բառէն , այսինքն իր գո-  
յականէն ետքը պիտի գրուի : Բայց հարկ է գո-  
յականէն առաջ դնել , Նախ՝ երբոր ամականը  
բազմապատկ է , եւ գոյականն ալ հարկաւոր բառ  
մըն է :



Ասոր պատճառն աս է . Ածականը գոյա-  
կանէն ետքը դրուած ասուն՝ անոր հետ մէկտեղ  
կը հոլովի (252) . արդ՝ բազմականկ ածականներ  
սովորաբար չեն հոլովիր , եւ կամ եթէ հոլովե-  
լու ըլլան՝ ականջի խիտ կամ ծանր կու դան .  
զոր օրինակ .

Վասն իջանելոյ աստուածեղէն սուրբ հոգւոյն .  
աս խօսքին մէջ եթէ ածականը բնական կար-  
գին համեմատ գոյականէն ետքը դնենք , հո-  
լովել հարկ կ'ըլլայ , այսպէս .

Վասն իջանելոյ հոգւոյն սրբոյ աստուածեղինի .  
Յայտնի է որ աստուածեղէն ածականը հո-  
լովելն ականջի ծանր է :

Երկրորդ՝ հարկ է ածականը գոյականէն ա-  
ռաջ դնել , երբար գոյականը հոլոված բառ չէ  
եւ իրմէ ետքը բացայայտիչ կամ յատկացուցիչ  
մը ունի . զոր օրինակ .

Դառն եւ սատակիչ կործանումն Հերովդի .

Յայտնի է որ եթէ աս խօսքին մէջ դառն եւ  
սատակիչ ածականները գոյականին յետապաս-  
ըլլան , այսպէս՝

Կործանումն դառն եւ սատակիչ Հերովդի .

հոմ իմաստ կու տան , քանզի ան ասուն դառն  
եւ սատակիչ Հերովդի , ալ կրնայ հասկցուիլ :

2 . Յատկացուցիչը բնական կարգով , իբ-  
րեւ լրացուցիչ , լրացուցած բառէն , այսինքն՝  
յատկացեալէն ետքը պիտի դրուի . բայց յատ-  
կացուցիչը յատկացեալէն առաջ դնել հարկ է ,



1. Երբոր յատկացեալն իրմէ ետքը յարաբերական մը ունի : Ասոր պատճառն աս է որ , յարաբերականը հոմութիւն չտալու համար (մանաւանդ հայերէնի մէջ ուր սեռի զանազանութիւնը չկայ) յարաբերեալին անմիջապէս քովը պիտի դրուի : Եթէ յատկացուցիչը յարաբերական ունեցող յատկացեալէն ետքը դրուի , յարաբերականը կրնայ շատ անգամ թէ յատկացեալին եւ թէ յատկացուցչին վերաբերութիւն ցուցընել : Զոր օրինակ .

Յովհաննու եղբայրն որ սպանաւ սրով .

աս խօսքին մէջ եթէ Յովհաննու յատկացուցիչը յատկացեալէն ետքը դրուի , կրնայ հասկցուիլ թէ սրով սպաննուողն Յովհաննէսն է :

2. Երբոր յատկացուցիչը յարաբերական դերանունն է , միշտ յատկացեալէն առաջ կը դրուի . զոր օրինակ .

Աինն որոյ անունն պատմի ընդ ամենայն աշխարհ .

Արոյ յարաբերականը՝ անուն բառին յատկացուցիչն է , բայց անմիջապէս իր յարաբերեալին , ինքն բառին քովն ըլլալու համար՝ յատկացեալէն առաջ դրուած է . ուստի չըսուիր ,

Աինն անուն որոյ պատմի ընդ ամենայն աշխարհ :

3. Ըսինք (461) թէ Բայն անմիջապէս Տէր բայիէն ետքը կը դրուի : Աէաք է գիտնալ որ , Տէր բային Բայէն զատել հարկ կ'ըլլայ , երբոր Տէր բայիէն անմիջապէս ետքը՝ անոր մէկ յատկութիւնը բացատրող յարաբերականով միջանկեալ



խօսք մը (334) կայ • զոր օրինակ •

Յակոբոս զոր սպան շերտէն • կոչէր եղբայր տեան •

Ինչպէս կը տեսնուի • զոր սպան շերտէն • միջանկեալ խօսքը Տէր բային Բայէն բաժնած է • Ասանկ միջանկեալ նախադասութիւններ Տէր բային լրացուցիչը կը համարուին • անոր համար անմիջապէս անոր քովը կը դրուին •

Ասանկ խօսքերու մէջ գլխաւոր նախադասութիւնն իր բոլոր մասերովն առաջ ալ կրնայ դրուիլ • բայց ան առեն Տէր բային վերջը դրենէլ հարկ կ'ըլլայ • որպէս զի յարաբերականն անմիջապէս անոր քովն իյնայ • զոր օրինակ •

Եղբայր Տեան կոչէր Յակոբոս • զոր սպան շերտէն •

4 • Հարցական խօսքերու մէջ հարցում բացատրող անունը կամ ածականն իրեն վերաբերեալ մասերովը խօսքին սկիզբը կը դրուի • զոր օրինակ •

Արդ՞ է ո՞ր իցէ •••

աս խօսքին մէջ «ա Տէր բային» Բայէն ետքը դրուած է • իսկ «որպէս» ո՞ր բառերը • թէպէտ Ստորոգելի են • խօսքը հարցական ըլլալուն համար խօսքին սկիզբը դրուած են •

Վասն որո՞յ Գործո՞յ կամ իք քարկոծ առնել զիս •

աս խօսքին մէջ «Վասն որոյ Գործոյ» բառերը որո՞ւոր հո՞ծ առնել բային խնդիրն են • ուստի եւ անկէ ետքը պիտի դրուէին • խօսքը հարցական ըլլալուն համար խօսքին սկիզբը դրուած են •



հոս ալ ղէնչ ԳՐԻԾ բառերը որ սեռի խնդիր են  
ԳՐԻԾԵՎԱԼ Է բային, եւ անկէ ետքը պիտի գրուե-  
ին, խօսքը հարցական ըլլալուն համար՝ խօսքին  
սկիզբը գրուած են :

Ծ . Մակբայները, իբր լրացուցիչ, բնական  
կարգով, լրանալի բառէն կամ բայէն ետքը կը  
գրուին . բայց ոչ, Թ, բացասական մակբայներն  
հայերէնի մէջ գրեթէ միշտ բայէն յառաջ կը  
գրուին . զոր օրինակ .

Ու եւմ, համ, շեմ արժանի : Ու կամիմ . Մէ սիրէք :

### Բ . ԱՂԿԱՍ ՅԵՂԱՅՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ .

473 . Աղատ յեղաշրջութիւնն, ինչպէս ըսինք  
(470) հայերէն լեզուին մէջ ներելի է : Արնանք  
վերը յիշուած հարկաւոր դիպուածներէն գուրս  
ալ խօսքի մը բառերուն դիրքը փոխել . կրնանք  
Բայն առաջ դնել, Տէր բային ետքը : Խնդիր  
մը խնդրառուէն առաջ դնել, կամ բայը խօս-  
քին բոլոր մասերէն վերջը դնել :

Բայց աս աղատութիւնն ամենեւին առանց  
կանոնի կամ զգուշութեան չէ :

474 . Առաջին զգուշանալու բանը հոմո-  
թիւնն է : Բառ մը իր քերականական կար-  
գէն աղատօրէն փոխել ուզած ատեննիս նայե-  
լու ենք որ ան յեղափոխութիւնը խօսքին իմաս-  
տին հոմոթիւն կամ այլայլութիւն մը չտայ :

475 . Արկրորդ զգուշանալու բանն՝ ականջը



կամ ճաշակն է : Շատ անգամ կրնայ ըլլալ որ  
կրնանք բառ մը անմասա կերպով իր քերական-  
նական գիրքէն հանել , բայց ականջը չի ներեր  
ընել , կամ կը պահանջէ որ ուրիշ կերպով ը-  
նենք : Ականջ կամ ճաշակ ստանալու համար  
ընտիր հեղինակներ ստէպ կարգացուելու են :

Բայց պէտք է գիտնալ որ՝ առ հեղինակներ  
բուն մէջ ալ տեղ տեղ հոմ կարգով շարուած  
կամ բողբոլին խրթին եւ մութ խօսքեր կրնան  
դտնուիլ . ասոնց հետեւիլ հարկ չէ :

Բացայայտութիւնը , ճշդութիւնն ու կանո-  
նաւորութիւնը շարադրութեան մը էական յատ-  
կութիւններն են . ասոնց դէմ հեղինակութիւն  
մը չի կրնար ըլլալ , եւ ամենէն հմուտ գրիչներ  
անգամ կրնան , մանաւանդ անանկ հին ժամա-  
նա կի մը մէջ , անմտադրութեամբ ասոնց դէմ  
մեղանշած ըլլալ : Սա ալ պէտք է գիտնալ որ՝  
հին ժամանակներն այնչափ քերականական կամ  
ոճոյ ճշդութիւն չկար . մեր ժամանակն ասոնք  
խատիւ կը պահանջուին :

476 . Հայերէնի մէջ ազատ յեղաշրջութեան  
սովորական դէպքերն հետեւեալներն են .

1 . Տէր բային բայէն ետքը դրուած .

Էր այրն մեծատուն . փոխանակ . Այրն էր մեծատուն .

2 . Ստորոգելին բայէն առաջ դրուած .

Մեծապուն էր այրն . փոխանակ . Այրն էր մեծատուն .

3 . Խնդիր մը խնդրառուէն առաջ դրուած .

Ղոր օրինակ , յատկացուցիչն յատկացեալէն առաջ :



Սասանայ վրիպեցուցանէ զմարդիկ Սասանայ ճրջ-  
մարտութենէն . փոխանակ . 'ի ճշմարտութենէն Սա-  
սանայ :

Սեռի կամ՝ բնութեան խնդիր բայէն առաջ .

Զոնք Ար հանապազօր տուր մեզ . փոխանակ . Տուր  
մեզ զհաց մեր , եւ այլն :

Յ. Էնէ՛ք , Ե Դանէ՛ք մեծամեծ իրաց տեսիլք յայտ-  
նեցան . փոխանակ . Մեծամեծ իրաց տեսիլք յայտ-  
նեցան Յովսէփայ :

Նախադրութեան կամ՝ ածականի մը խնդիր-  
րը՝ նախադրութենէն կամ՝ ածականէն առաջ .

Յիմաստութենէ կարօտ . 'ի բնական թափուր . Խնդիր լի .  
Մարէն հանդերձ . Մէր առաջի . Փորձեալ վասն . փոխա-  
նակ . կարօտ յիմաստութենէ . Թափուր 'ի բնակչաց .  
Խնկովք լի . Հանդերձ մարդն . Առաջի մեր . Վասն  
փորձելոյ :

Յորժամ՝ 'ի պէս պէս խորհութեանց 'ի մէջ անկանիցիք .  
փոխանակ . 'ի մէջ պէս պէս փորձութեանց :

Ի՞նչե՛ր միջի . փոխանակ . 'ի միջի ձերում :

Զձեզ կնի ոչ ջրջեր . փոխանակ . Զկնի մեր :

Զ՞՞ք զհետ ելեալ ես . փոխանակ . Զհետ որո՞ջ .

Ի ձեզ վերայ . փոխանակ . 'ի վերայ մեր :

4 . Բացուսական մակբայներուն համար ը-  
սինք (472 . 3) թէ բայէն առաջ կը դրուին : Բայց  
կրնան վերջն ալ դրուիլ . զոր օրինակ .

---

\* Խնդիրը նախադրութենէն առաջ դրուած առէն էթէ  
նախադրութիւնը նախդիր մը ունի , առաջ դրուած խնդրոյն  
վրայ կը դրուի . ինչպէ՛ս առ օրինակներուն մէջ է :



Խոյզ թախտաւորձ է, բայց որոճայ ու փոխանակ .  
 Ոչ որոճայ .

Տկարանայ ինչ ու քեզ . փոխանակ . ինչ ոչ տկա-  
 րանայ քեզ .

Գրեցաւ իսկ ու փոխանակ . Ոչ գրեցաւ իսկ .

Որ ոչն գործիցէ, եւ կերիցէ զ . փոխանակ . Որ  
 ոչն գործիցէ, մի կերիցէ .

Տ . Հարցական խօսքերու համար ըսինք  
 (472 . 4) թէ, խօսքին սկիզբը կը դրուին : Բայց  
 հարցական մակբայները կրնան բայէն ետքն ալ  
 դրուիլ . զոր օրինակ .

Եւ փրկէր իսկ ըտէ՞ր զայլոյ արարածս : փոխա-  
 նակ . Եւ ընդէ՞ր փրկէր իսկ, եւայլն .

Բնաւ իսկ սուտ ըտէ՞ր կոչիցի . փոխանակ . Ըն-  
 դէ՞ր բնաւ իսկ սուտ կոչիցի .

477 . Տեսակ մը յեղաշրջութիւն ալ կայ, եւ  
 աս է որ իրարու հետ անմիջապէս կապակցու-  
 թիւն ունեցող բառերու մէջտեղն ուրիշ խօսքեր  
 կը մտնեն . զոր օրինակ .

1 . Նախադրութեան ու խնդրոյն մէջտեղը .

Թշնամի կոչի (Սատանայ) շատ զորումն 'ի մէջ ցո-  
 րենոյն ուրճանէլոյ . փոխանակ . Վասն սերմանելոյ,  
 եւայլն .

Վասն 'ի լաւութիւնս զմարդն յորտեւէլոյ . փոխա-  
 նակ . Վասն յորդորելոյ զմարդն, եւայլն .

Յետ զաշխարհն ընդ ձեռամբ նոսաճէլոյ . փոխա-  
 նակ . Յետ նուաճելոյ, եւայլն .

2 . Բացասական մակբային ու բային մէջ-  
 տեղը . զոր օրինակ .



Մէ , զի չեմք ակն , ասացուք թէ չեմք 'ի մարմնոյ  
անտի . փոխանակ . Մի ասացուք թէ չեմք 'ի մարմ-  
նոյ անտի , (այնու) զի չեմք ակն :

Եւ ոչ թէ վիշտս ինչ կրիցեն զգան . փոխանակ  
եթէ եւ վիշտս կրիցեն ոչ զգան :

Եթէ ոչ ք ծնի . փոխանակ . Եթէ ք ոչ ծնի :

3 . Երբեմն երկու բառէ շինուած նախադ-  
րութեանց կամ մակբայաց մէջտեղը . զոր օրի-  
նակ .

Ընդ հողմոցն ոչ . փոխանակ . Ընդ գէմ հողմոցն .

Գրէ իսկ թէ անենայն . փոխանակ . Գրէ թէ իսկ :

Ա. յապէս կ'ըսուի նաեւ . Այլ ինչ ազգ . Ա. յէ  
իմն ազգ . Ոչ այսչափ միայն , այլ եւ աչ եւ ա  
ազգ . փոխանակ ըսելու . Ա. յա ազգ ինչ , այլ  
ազգ իմն , այլ ազգ եւս :

4 . Երկու բառէ շինուած ասութիւններու  
(ոճերու) մէջտեղը . զոր օրինակ .

Ապա եթէ զմարտուսոցն զգաս ոչ ածիցեն . փո-  
խանակ . Եթէ ոչ ածիցեն զմտա զմարտուսոցն .

Ան Հերովդէս արքայ թեմ չարչարել զոմանս .  
փոխանակ . Հերովդէս արքայ արկ ձեռն , եւ այլն .

Չի մի մթարքն որ զբոքն շողայցեն , ագէլ հա-  
յերոյ 'ի քստակութիւն լուսոյն լիցեն . փոխանակ . Սր-  
գէլ լիցին հայերոյ , եւ այլն .

Աւուր Ստուած ոչ որդւոցն իտայէլի . փոխա-  
նակ . Ստուած այց արար , եւ այլն :

Յորժամ ( առաջնորդն ) ոչ , կամ ստամբ կամ  
ձայնիւ , ասնիցի . փոխանակ . Յորժամ ազգ ասնիցի ,  
եւ այլն :

Չինչ ինչ յազ օրհնութիւնքն . փոխա-



նակ . Չինչ ինչ յայտ ասնիցեն , եւայլն .

5 . Էական բայով ու անցեալ ընդունելու թեամբ շինուած բաղադրեալ ժամանակներու (385) մէջ՝ էական բային ու ընդունելու թեան մէջտեղը . զոր օրինակ .

Ես ծնեալ իսկ 'ի դմին է՛մ . փոխանակ . Ես ծնեալ եմ՝ իսկ 'ի դմին :

Որ էր վասն խառնութեան իրիք եղելոյ 'ի քաղաքին եւ սարանութեան ճարտար 'ի բանտ . փոխանակ . Որ էր մտեալ 'ի բանտ վասն , եւայլն :

Մինչչեւ ձեր Խնդրեալ ինչ եօէ . փոխանակ , Մինչչեւ ձեր խնդրեալ իցէ ինչ :

Չեւ իցէ հաւու բռնեալ . փոխանակ . Չեւ իցէ խօսեալ հաւու :

Անդ էր նաւն Բաժնեաց զբեռինան . փոխանակ . Անդ թափելոց էր , եւայլն :

6 . Վերջապէս , շաղկապը որ խօսքին սկիզբը պիտի դբուի , կրնայ տեղը փոխել . զոր օրինակ .

Սով էնէ լինիցի յերկրի . փոխանակ . Եթէ սով լինիցի յերկրի :

Իմ էնէ շէր եկեալ եւ խօսեցեալ ընդ նոսա . փոխանակ . Եթէ իմ շէր եկեալ , եւայլն :

Ձի կամակար մտօք էնէ յանցանիցեմք . փոխանակ . Ձի եթէ կամակար մտօք , եւայլն :

Չայն Բեռնի ցանկութիւն շահիցն հնարեցաւ . փոխանակ . Թէսլէտ զայն , եւայլն :

Չերկիրս շուրջ ջուր պատէ . փոխանակ . Չուրջուրջ պատէ զերկիրս :



## Ձ Ե Ղ Չ Ո Ի Մ

478 . Ինչպէս քիչ մը առաջ ըսինք , շէշշւմ կ'ըսուի , երբոր խօսքին մէջ խօսքին մէկ մասը , զոր օրինակ՝ Բայը կամ Տէր բային կամ Խնդիր մը պակաս կը թողունք , կամ լռելեայն կ'իմացնենք :

479 . Ձէշշւմ կ'ըլլայ , 1 . Դերանուն Տէր բային . 2 . Բային . 3 . Դերանուն խնդրոյ . 4 . Յատկացեալի . 5 . Ածականի կամ Ընդունելութեան . 6 . Նախադրութեան :

1 . Ձէշշւմ Դերանուն Տէր Բայի է :

480 . Առաջին եւ երկրորդ դէմքի բայերուն Տէր բային , Ես , Տէր , Դու , Դուք , սովորաբար կը զեղչուին : Ուստի կ'ըսուի .

կամիմք տեսանել զՅիսուս . փոխանակ . Մէր կամիմք .

կոչեցի զնոսա . փոխանակ . Ես կոչեցի զնոսա :

481 . Բայց երրորդ դէմքի բայերուն դերանուն Տէր բայիները , նա , նորա , ինքն , ինքեանք , հայերէնի մէջ սովորաբար կը զեղչուին , այսինքն՝ լռելեայն կ'իմացուին , երբ զեղչուած Տէր բային՝ նախընթաց բային հետ միեւնոյն անձը կամ իրն է :

Չակքէոս խնդրէր տեսանել զՅիսուս , եւ ոչ Կէր ի բազմութենէն , զի կարճ էր հասակաւ .



աս խօսքին մէջ՝ կորէր , եր , բայերուն Տէր բային Չակքէոսն է . անոր համար աս բայերուն վրայ նա դերանունն Տէր բային կրկնել հարկ չէ . ուստի աւելորդ է ըսել ,

Չակքէոս խնդրէր տեսանել զՅիսուս , եւ ոչ կարէր նա 'ի բազմութենէն , զի կարճ էր նա հասակաւ :

Բայց երբոր բայի մը Տէր բային՝ նախընթաց բային Տէր բային հետ միեւնոյն անձը կամ իրը չէ , ամեն մէկուն զատ զատ անուն կամ դերանունն Տէր բայի տալու է . զոր օրինակ .

Յետ ոչ բազում աւուրց ծառւէաւ զամենայն կրօնէր որդեան՝ Գնաց յաշխարհ հեռի , եւ անդ շափնեաց զինչըս իւր , զի կէայր անառակութեամբ . եւ իբրեւ սպառնաց զամենայն , եղև ո՛վ սաստիկ յաշխարհին յայնմիկ .

աս խօսքին մէջ՝ Գնաց , շափնեաց , կէայր , սպառնեաց բայերուն Տէր բային դրուած չէ , քանզի ամենուն ալ Տէր բային՝ 'ի սկզբան բացատրուած կրօնէր որդին է . բայց եղև բառին Տէր բային զատ ըլլալուն համար՝ զատ բառով բացատրուած է , որ է ո՛վ բառը :

Հետեւեալ խօսքը վերի խօսքին շարունակութիւնն է .

Եւ սկսաւ իսկ (կրտսեր որդին) չքաւորել . եւ գնացեալ յարեցաւ 'ի մի ոմն 'ի քաղաքացոց աշխարհին այնորիկ , եւ ո՛ր յղեաց զնա յազարակ իւր :

աս խօսքին մէջ՝ յղեաց բային Տէր բային՝ Գնացեալ յարեցաւ բային Տէր բային չէ : Քաղաքացի-



Եւրէն մէկուն յարողն ուրիշ է, եւ զանիկա իր  
 ազարակը զրկողն ուրիշ է, այսինքն ան քաղա-  
 քացին՝ որուն անիկայ գնաց յարեցաւ. անոր  
 համար յղեաց բային նա կամ սա Տէր բային տա-  
 շու է: Եթէ նա, Տէր բային չդրուի, այսպէս,

Գնացեալ յարեցաւ 'ի մի 'ի քաղաքացւոց աշ-  
 խարհին այնորիկ, եւ յղեաց զնա յազարակ իւր.

այնպէս կը հասկըցուի թէ ազարակը զրկողն ան  
 է՝ որ գնաց յարեցաւ, ուստի եւ զրկողը քաղա-  
 քացին ըլլալու տեղ՝ անոր յարողը կ'ըլլայ, եւ  
 զրկուողն ալ քաղաքացին, ազարակն ալ ոչ թէ  
 քաղաքացւոյն, այլ անոր յարողինը եղած կը  
 հասկցուի, որ սխալ է:

### Ուրիշ օրինակ մը.

Եւ յարուցեալ եկն առ հայր իւր, եւ մինչդեռ  
 հեռագոյն էր, ետեա զնա եւ դժացաւ, յարեալ եւ  
 քնթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւ նորա  
 եւ համբուրեաց զնա, եւ ասէ ցնա. Հայր, մեզայ  
 յերկինս եւ առաջի քո. եւ ոչ եւս եմ արժանի կո-  
 չել որդի քո: Եւ ասէ ցծառայս իւր. Վաղվաղակի  
 հանէք զպատմութեանն առաջին եւ ազուցէք նմա:

աս խօսքին մէջ երրորդ դէմքի բայերուն ամենն  
 ալ Տէր բայի չունին. ուստի եւ ամենուն ալ Տէր  
 բային միեւնոյն անձը կը հասկցուի. բայց ան  
 բայերէն ոմանք տարբեր Տէր բայի ունենալուն  
 համար, նոյն խօսքը հետեւեալ կերպով պիտի  
 գրուի.



Եւ յարուցեալ զնաց առ Հայր իւր . եւ մինչ  
 դեռ հեռագոյն էր , ետես զնա հայրն եւ գիտացաւ .  
 յարեաւ եւ ընթացաւ ընդ առաջ եւ անկաւ զսա-  
 րանոցաւ նորա եւ համբուրեաց զնա : Եւ սսէ ցնա  
 « Երեմի » : Հայր , մեղայ յերկինս եւ առաջի քո , եւ ոչ  
 եւս եմ արժանի կոչել որդի քո : Ասէ հայրն ցծառայս  
 իւր . Վաղվաղակի հանէք զպատմութեանն առաջին եւ  
 ազուցէք նմա :

482 . Ուրեմն , երբ խօսքի մը մէջ բայ մը  
 Տէր բայի չունի , անոր Տէր բային նախընթաց  
 բային Տէր բային հետ միեւնոյն անձը կամ իրը  
 կը հասկցուի . ուստի եւ ուր որ բայի մը Տէր  
 բային նախընթաց բային Տէր բային տարբեր  
 անձ կամ իր է , ան բային Տէր բային ներգոր-  
 ծութեամբ գրուելու է :

## 2 . Չէղչո՞նք Բայի :

483 . Առ , հաճ , ե , ( աչ նշանակութեամբ )  
 եւ ուրիշ ասոնց նման շաղկապներէն , ու , ոչ ,  
 Դ , բացասական մակբայներէն ետքը՝ միեւնոյն  
 բայը սովորաբար չի կրկնուիր , այլ ընկերայն  
 կ'իմացուի :

Որ առողջ միտս ունին , ոչ զչարժուեսն՝ այլ  
 զչարժիչն պարտին իհառաւորել . այսինքն՝ Ոչ զչար-  
 ժուեսն պարտին շատաւորել , այլ զչարժիչն պարտին շատ-  
 աւորել :

Չերախտաւորսն եւ զբարերարս որ 'ի նմանէ  
 կարգեցան՝ մեք ոչ հրամայեմք անարդել . բայց զարձ-  
 եալ եւ ոչ զպաշտօն արարչին պարտածոց մատու-



ցանկել . այսինքն . Բայց դարձեալ եւ ոչ զպաշտօն  
արարչին հրամայէ՞ արարածոց մատուցանել , եւ այլն :

Չիարդ պաշտիցեմք զարեգակն որ կուչի ծա-  
ռայ , կամ զլուսին՝ ու ամսոյ ամսոյ հիւժանի , կամ  
զերկիր՝ զոր հանապազ բրեմք եւ ցանկ կոխեմք . այս-  
ինքն . կամ շիրտ գաշտիցէ՞ զլուսին . . . կամ շիրտ գաշ-  
տիցէ՞ զերկիր , եւ այլն :

Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն .  
գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի , եւ դա-  
տաւորն՝ դահճի . այսինքն՝ Եւ դատաւորն ճարտի-  
ցէ շէշ զահճի :

Ես ասեմ ձեզ ամենեւին մի երդնուլ . մի յեր-  
կինս՝ զի արժու է Աստուծոյ . եւ մի յերկիր՝ զի պատ-  
ուանդան է ոտից նորա , եւ մի 'ի զլուի քո երդ-  
նուցուս , եւ այլն . իսխանակ ըսելու . Մի երդնու-  
ցուս յերկինս զի . . . եւ մի երդնուցուս յերկիր զի . . .

Թէպէտ եւ ամենեքին զայթակղեսցին , այլ ես  
ոչ . այսինքն՝ Այլ ես ոչ գայեակղեցայ :

484 . Ինչպէս վերի օրինակներէն սեանուե-  
ցաւ , երբեմն բային հետ ուրիշ բառ մ'ալ , զոր  
օրինակ՝ ածական մը , խնդիր մը , մակբայ մ'ալ  
մէկտեղ կը զեղչուի . զոր օրինակ .

Արեգակն յայտ առնէ թէ շեմ ես արժանի պաշ-  
տաման , այլ այն որ զիս զամենայն տիւ լուսաւոր  
պահէ . այսինքն՝ Այլ այն է արժանի պաշտաման որ . . . :

Գովեսցէ զքեզ ընկերն եւ մի քո բերան , օ-  
տարն եւ մի քո շրթունք . այսինքն՝ Գովեսցէ զքեզ  
ընկերն եւ մի գովեսցէ շէշ քո բերան . գովեսցէ շէշ օ-  
տարն եւ մի գովեսցէ շէշ քո շրթունք :

Նորա կարօտ են հացի , եւ դու իմաստութեան .  
այսինքն՝ Եւ դու խորտ ես իմաստութեան :



## 3 . Չէղչումն խնդրոյ :

485 . Միեւնոյն հոլով խնդիր առնող բայերէն ամենուն քով դերանուն խնդիրը չի կրկնուանուիր , այլ անգամ մը մէկուն քով դրուելէն ետքը՝ յաջորդ բայերուն քով լռելեայն կ'իմացուի . զոր օրինակ .

Ետես զնա եւ կոչեաց . փոխանակ . Ետես զնա եւ կոչեաց զնա :

486 . Բայց երբ բայերը տարբեր հոլով խընդիր կ'ուզեն , ամեն մէկուն պահանջած հոլովով դերանուն խնդիրն անոր քով դնելու է . զոր օրինակ .

Ետես զնա եւ խօսեցաւ ընդ նմա .

Յարեցաւ 'ի նա եւ ոչ մեկնեցաւ 'ի նմանէ :

## 4 . Չէղչումն յառկացեալէ :

487 . Երբոր միեւնոյն յատկացեալէն ետքը քանի մը յատկացուցիչներ կան , յատկացեալն ամեն մէկ յատկացուցչին քով չի կրկնուիր , մանաւանդ երբոր յակացեալը հայցական հոլով է . բայց ան ատեն յատկացեալին նախդիրն ամեն մէկ յատկացուցչին վրայ կը կրկնուի . զոր օրինակ .

Իբրեւ լուաւ զձայն երգոցն եւ զպարուց . փոխանակ . Եւ շնայն պարուց :

Արեւք զարտաքին բաժակին եւ զպնակին . փոխանակ . Եւ շարժութիւն պնակին :



Ղուկաս երկու գիրս գրեաց . մի եւ առաջին  
 զԱւետարանին , երկրորդ՝ զԳործոց առաքելոց . այս-  
 ինքն՝ Մի՝ զԳրքս Աւետարանին , երկրորդ՝ զԳրքս Գոր-  
 ծոց Առաքելոց :

Եթէ ոք զճարտարութիւն իրաց ինչ գիտիցէ ,  
 եթէ զնուագածութեան , եթէ զբժշկութեան եւ ե-  
 թէ զհիւանութեան . այսինքն՝ եթէ զճարտարութիւն նուա-  
 գածութեան , եթէ զճարտարութիւն բժշկութեան , եւ ե-  
 թէ զճարտարութիւն հիւանութեան :

Ժանիք նորա կորեան առիւծոյ . այսինքն՝ Ժա-  
 նիք նորա ծանիկ կորան առիւծու :

Ոչ օգտի եւ խաղաղութեան բանս խօսի , այլ  
 չարի . այսինքն՝ Այլ բանս չարի :

Աստուծոյ բաւբառ է եւ ոչ մարդոյ . այսինքն՝  
 Եւ ոչ մարդոյ բարբառ :

Թեւք նորա իբրեւ զարծուոյ . այսինքն՝ Իբ-  
 րեւ զնա արծուոյ :

Զարմանային ընդ գեղեցկութիւն նորա եւ ընդ  
 ամենայն որդւոցն Իսրայէլի . այսինքն՝ Եւ ընդ գեղեց-  
 փութիւն ամենայն որդւոցն Իսրայէլի :

Ծ . Չէղչո՞՞ն ածականի համ ընդունելութեան :

487 . Գոյական անունները մինակ սեռական  
 հոլով խնդիր կրնան ունենալ , որ , ինչպէս (194)  
 ըսինք , հայերէն յատկացուցիչ կ'ըսուի . ուստի  
 երբոր գոյականի մը քով սեռականէ զատ ուրիշ  
 հոլով կամ նախադրութեամբ հանդերձ բառ մը  
 կայ , հոն ածական մը կամ ընդունելութիւն մը  
 լռելեայն կ'իմացուի , որուն խնդիրն ան հոլովը  
 կամ նախարութեամբ հանդերձ բառն է . զոր օ-  
 թինակ .



Ինքն երթայր բոկ , եւ ամենայն ժողովուրդն  
ձորձ զգլխով . այսինքն՝ Ամենայն ժողովուրդն աշխ  
հաւ ձորձ զգլխով :

Անկանէր 'ի ներքս սուսեր 'ի ձեռին . այսինքն՝  
Սուսեր կաւեաւ 'ի ձեռին :

Արմուկն 'ի ծուկ եւ ձեռն 'ի ծնօտի նստաւ . այս  
ինքն՝ Արմուկն ետեաւ 'ի ծուկ , եւ ձեռն ետեաւ 'ի ծնօտի :

488 . Նոյնպէս է՛ ի Կազան բայր ոչ խնդիր եւ  
ոչ մակբայ կրնայ ունենալ . ուստի ուր որ Կա  
կան բային քով գոյականն անուն խնդիր մը կամ  
մակբայ մը կայ , հոն ածական մը կամ ընդու  
նեղութիւն մը կամ ստորոգելի մը լռելեայն կ'ի  
մացուի . զոր օրինակ .

Էր նա ամաց երեսնից . այսինքն՝ Էր նա այդ ա  
մաց երեսնից :

Եւ էր նա 'ի տան . այսինքն՝ Մօ\* ( ներկայ ) 'ի  
տան :

6 . Ձեղչոմն նախորդէ կամ նախաորոմնեան :

489 . Երբոր միեւնոյն նախդիրէն , մանաւ  
անդ 'ի նախդիրէն քովէ քով երկու հատ պատա  
հին , ձայնի անուշութեան համար մէկը կը զեղ  
չուի . զոր օրինակ .

Ի քուն լինել մարդկանն՝ եկն թշնամի . փոխա  
նակ . Ի 'ի քուն լինել մարդկանն . այսինքն՝ Ի լինել  
մարդկանն 'ի քուն :

Առ 'ի սպասն յոր կարգեցաւ հասանելոյ . փո  
խանակ . Առ 'ի 'ի սպասն , եւայլն . այսինքն՝ Առ 'ի  
հասանելոյ 'ի սպասն :



Ի միտս գալ նորա . փոխանակ . Ի 'ի միտս գալ  
նորա . այսինքն՝ Ի գալ նորա 'ի միտս :

Ի ճանապարհ անկանել նորա . փոխանակ . Ի  
'ի ճանապարհ անկանել նորա . այսինքն՝ Յանկանել  
նորա 'ի ճանապարհ :

Նախադրութիւններն ալ կրնան զեղչուիլ՝  
երբոր առաջ անգամ մը յիշուած են . միայն  
նախադրութիւնը նախդիր ունեցած ատեն ,  
'նախդիրը զեղչուած նախադրութեան խնդրոյն  
վրայ կը կրկնուի . զոր օրինակ .

Գթայր 'ի վերայ նորա , իբրև հայր ,որդւոյ .  
այսինքն՝ Իբրև հայր 'ի վերայ որդւոյ :

Երթ զհետ արդարութեան , զաստուածաբաշ-  
տութեան , զսիրոյ , զհաւատոյ . այսինքն՝ Երթ շէտ  
արդարութեան , շէտ աստուածաբաշտութեան , շէտ  
սիրոյ , շէտ հաւատոյ :

Չկնի նոցա երթան , եւ զմեր ոչ գան . փոխա-  
նակ . Եւ զմեր կնի կամ զկնի մեր ոչ գան :

Շահու վասն խնդրես . այլ փրկութեան ոչ .  
այսինքն՝ Այլ փրկութեան շահն ոչ խնդրես :

Ոչ մեր միայնոյ , այլ ձեր եւս առաջի խօսե-  
ցաւ . փոխանակ . Ոչ առաջ մեր միայն , այլ եւ առա-  
ջ ձեր խօսեցաւ :

Յօդ . Գ .

ԱԼԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

490 . Պէտք է զիտնալ որ կրկնուածն ու ատե-  
լատութիւնը տարբեր են :

Կրկնուած ճարտասանական ձեւ մըն է , եւ



միեւնոյն բառը կրկնելով կ'ըլլայ . զոր օրինակ .

Աստուած , Աստուած իմ , ընդէր թողեր զիս .

Եմ , եմ եւ ես մահկանացու .

Դու ես , դու ես այրն .

491 . Իսկ աւելադրութեանը քերականական ձեւ է , եւ կ'ըլլայ՝ երբոր խօսքին միեւնոյն մասը , զոր օրինակ Տէր բային կամ՝ Խնդիրը՝ տարբեր բառերով երկու անգամ կը բացատրուին . զոր օրինակ .

Այ՛ն զոր տեսեր , նա է իմ թշնամի :

Կի՛ն զոր ետուր ընդ իս , նա ետ ինձ 'ի ծառոյ անտի :

492 . Սովորական աւելադրութիւնն է՝ Տէր Բայի եւ Խնդրոյ աւելադրութիւնը :

493 . Աւելի դրուած թէ Տէր բայի եւ թէ Խնդիր՝ սովորաբար անանկ բառի մը կրկնութիւն է որ յարաբերական դերանուան մը յարաբերեալն է . զոր օրինակ .

Կի՛ն շէր ետուր ընդ իս , նա ետ ինձ 'ի ծառոյ անտի եւ կերայ :

Այ՛ն շէ տեսեր , նա արասցէ զայդ :

Ուրե՛նք ո՛ր ծնանիցի , նա արասցէ զայդ :

ԶՅի՛ն շէ դուք սպանէք , նա յարոյց Աստուած :

Ի բարեկամե անտի շէ գովէիր , 'ի նմանէ զգոյշ լինիջիր :

Աս խօսքերն աշխարհաբարի այսպէս կը դառնան .



Ինծի տուած կնիկդ է որ ան ծառէն ինծի տուաւ  
ու կերայ .

Ինծի ըսողը քու տեսած մարդդ է .

Ստիկա ընելու անձը՝ քու որդիդ է որ պիտի  
ծնանի .

Ձեր սպաննած Յիսուսն է՝ որուն Սատուած յա-  
րութիւն տուաւ .

Գոյած բարեկամդ է՝ որմէ գգոյշ ըլլալու ես .

494 . Նախդիրներն ալ հայերէնի մէջ կրնան  
իբր աւելադրութիւն կրկնուիլ . զոր օրինակ .

1 . Յատկացեալին նախդիրը յատկացուց-  
չին վրայ .

Նոյնպէս եւ սողնոցն Վիսօշիւն միայն Վարդոյն  
առեալ , է որ 'ի ծակս , է որ 'ի սորա , եւ է որ ընդ  
փապարս մտեալ զօղեն :

Մի խոտորիցես Վիրաւունս Վեկին եւ Վրբոյ եւ  
Վայրոյ :

Չամենայն Վբարկոծչացն Վհանդերձս առեալ  
պահէր :

Կապեցէք Վդորա Վոտս եւ Վձեռս :

2 . Գոյականին նախդիրն ածականներուն  
վրայ :

Սատակել Վձեր Վայր եւ Վկին :

Չիմ Վաչս երաց :

Ի հոյակապ , 'ի հռչակաւոր եւ յականաւոր 'ի Տար-  
տոն քաղաքի :

Չայրն Վկեծ եւ Վերեւելի :



## ԲԱԿԱՌՈՒԹԻՒՆ

493 . Բակառութիւն կ'ըսուի , երբ բառ մը ոչ քերականական օրէնքով , այլ բառ իմաստին ուրիշ բառի մը հետ կը համաձայնի :

Չոր օրինակ՝ կրնայ ըլլալ որ բառ մը որ վերջաւորութեամբ եզակի է , յօքնակի նշանակութիւն ունենալուն համար , ինչպէս են հաւաքական անուններ , յօքնակի բայ առնէ : Այսպէս հայերէն թռական ածական մը ունեցող գոյականին բայը կրնայ յօքնակի դրուիլ . զոր օրինակ .

Պատահեցան նմա քան որ բորոտ :

Հինգն 'ի նոցանէ իմաստունք էին :

Նոյնպէս Տէր բային եզակի եղած ատեն ալ բայը յօքնակի կրնայ դրուիլ , երբ ստորագալը յօքնակի է : Տէ՝ Ըի = (239) :

Բակառութիւնն ամենէն քիչ գործածուած , եւ ամենէն աւելի զգուշալի ձեւ մըն է : Բակառութիւն կարծուած շատ օրինակներ աւելի զեղծումն քան թէ ձեւ :









## Յ Ա Ն Կ

ՅԱՌԱՋԱԲԱՆ . . . . .	
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ . . . . .	Ա
ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ . . . . .	Գ
ՈՒՂՂԱՍՍՅՈՒԹԻՒՆ . . . . .	Ը
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ . . . . .	ԺԱ
ՏԱՂԱԶԱՓՈՒԹԻՒՆ . . . . .	ԺԹ
ՀԱՅԵՐԷՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ . . . . .	1
ԱՌԱՋԻՆ ՄԱՍ ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ . . . . .	1
ԳԼ. Ա. ԱՆՈՒՆ . . . . .	2
"    Անուններուն հոլովներուն վրայ գիտելք	12
"    Անուններուն թուոյն վրայ գիտելք .	13
"    Զարտուղի հոլովմունք . . . . .	14
ԳԼ. Բ. ԱԾԱԿԱՆ . . . . .	16
"    Ա. Որակական Ածականներ . . . . .	16
"    Բ. Տուգական Ածականներ . . . . .	17
"    Գ. Ստացական Ածականներ . . . . .	18
"    Դ. Թուական Ածականներ . . . . .	19
1. Բացարձակ թուականներ . . . . .	20
2. Դասական թուականներ . . . . .	21
3. Անձներական թուականներ . . . . .	22
"    Ե. Անորոշ Ածականներ . . . . .	23
ԳԼ. Գ. ԴԵՐԱՆՈՒՆ . . . . .	25
"    Ա. Անձնական դերանուն . . . . .	26
"    Բ. Յարաբերական դերանուն . . . . .	27
"    Գ. Փոխադարձ դերանուններ . . . . .	28
ԳԼ. Դ. ԲԱՅ . . . . .	29



„	Էական բայ . . . . .	33
„	Չանոնաւոր բայեր . . . . .	35
„	Ա. Լծորդութիւն . . . . .	35
„	Բ. Լծորդութիւն . . . . .	40
„	Պ. Լծորդութիւն . . . . .	43
„	Դ. Լծորդութիւն . . . . .	45
„	Ներգործական բայերուն կրաւորականը . . . . .	48
„	Բայերուն անկանոն կամ զարտուղի խոնարհումը . . . . .	50
„	Ներգործական զարտուղի բայերուն կրաւորականը . . . . .	57
„	Անկանոն բայերուն վրայ գիտելիք . . . . .	59
Պ. Լ.	Ե . ԴԵՐԲԱՅ . . . . .	61
Պ. Լ.	Զ . ՄԱԿԲԱՅ . . . . .	65
Պ. Լ.	Է . ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ . . . . .	68
Պ. Լ.	Ը . ՇԱՂԿԱՊ . . . . .	70
Պ. Լ.	Թ . ՉԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ . . . . .	70
	<b>ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ</b> . . . . .	<b>72</b>
Պ. Լ.	Ա . Տէր բային ի՞նչ է և բային հետ ինչպէս կը համաձայնի . . . . .	72
Պ. Լ.	Բ . Խնդիր և խնդրառու . . . . .	75
„	Յօդ . Ա . Գոյականին խնդիրը . . . . .	76
„	Յօդ . Բ . Ածականներուն խնդիրը . . . . .	77
„	Յօդ . Պ . Նախադրութիւններուն խնդիրը . . . . .	78
„	Յօդ . Գ . Բայերուն խնդիրը . . . . .	79
Պ. Լ.	Գ . Ստորոգելի և Ստորոգեալ . . . . .	87
Պ. Լ.	Դ . Բացայայտիչ և Բացայայտեալ . . . . .	89
Պ. Լ.	Ե . Վերադիր և Վերադրեալ . . . . .	92
„	Յօդ . Ա . Ածական վերադիր . . . . .	93
„	Յօդ . Բ . Մակրայ վերադիր . . . . .	109
Պ. Լ.	Զ . Կոչական . . . . .	111



ՅԱԽԵԼՈՒԱԾ . Ինք մասանց բանի վրայ հար-		
կաւոր գիտելիք զարգացելոց		
	համար . . . . .	112
ԳԼ:	Ա . Գոյական անուն . . . . .	112
"	Որոշեալ և անորոշ անուն կամ	
	յոգի վրայ . . . . .	113
ԳԼ:	Բ . Ածական . Ածականներուն աստիճանը .	122
ԳԼ:	Գ . 1 . Անձնական Գերանուն . . . . .	125
"	2 . Յարաբերական գերանուն . . . . .	125
"	3 . Գերանունական գիրեր կամ դի-	
	մորոշ յօդեր . . . . .	129
ԳԼ:	Դ . Բայ . . . . .	135
"	Ա . Գրաբարին ուրիշ ժամանակ-	
	ներուն մէջ աշխարհաբարին	
	նոյնութիւնը . . . . .	135
"	Բ . Գրաբարին Ապառնին ու Ստո-	
	րագասականը . . . . .	137
ԳԼ:	Ե . Գերբայ . . . . .	144
"	Ա . Գոյական Գերբայ կամ Անե-	
	րկոյթ . . . . .	145
"	Բ . Ածական Գերբայ կամ Ըն-	
	գունելութիւն . . . . .	149
"	1 . Ընդունելութիւն Ներկայ . . . . .	149
"	2 . Ընդունելութիւն Անցեալ . . . . .	152
ԳԼ:	Զ . Մակբայ . . . . .	158
ԳԼ:	Է . Նախադրութիւն . . . . .	165
ԳԼ:	Ը . Ըաղկապ . . . . .	177
ԵՐՐՈՐԴ ՄԱՍ ՇԱՐԱԴԱՍՈՒԹԻՒՆ . . . . .		186

ԳԼ:	Ա . Քերականական կարգ . . . . .	186
ԳԼ:	Բ . Չաւոր կարգ . . . . .	191
"	Յօդ Ա . Յեղաշրջութիւն . . . . .	191
"	Ա . Հարկաւոր յեղաշրջութիւն . . . . .	192
"	Բ . Ազատ յեղաշրջութիւն . . . . .	196



„	Յօդ . Բ . Չեղում . . . . .	202
„	1 . Չեղումն գերանուն տէր բայի	202
„	2 . Չեղումն բայի . . . . .	205
„	3 . Չեղումն ինդրոյ . . . . .	207
„	4 . Չեղումն յատկացեալի . . . . .	207
„	5 . Չեղումն անձանի կամ ընդ դունելութեան . . . . .	208
„	6 . Չեղումն նախդիրի կամ նա խադրութեան . . . . .	219
„	Յօդ . Գ . Աւելադրութիւն . . . . .	220
„	Յօդ . Դ . Բազառութիւն . . . . .	223

*(Faint, mirrored text from the reverse side of the page, likely bleed-through or ghosting of the following page's content.)*



Վ. Ր. Թ. Ս. Կ. Բ.

Էջ 41 ,	Տ-շ 21 .	Խօս սեցիս	Խօս Էսցիս
„ 42 ,	„ 9 .	Սկս—իմ	Սսկս—անիմ
„ 47 ,	„ 16 .	Զբօնում, չէ.	
		զգրհերուն Կարգը	Զբօն—ում
			Յեն—ում
„ 56 ,	„ 18 .	Ետուք	Ետուն
„ 62 ,	„ 25 .	«բր» 4 էւ	«բր» 4 էւ
„ 115 ,	„ 19 .	առած են	առած չեն
„ 144 ,	„ 4 .	Գ. Լ. Ռ. Ի. Ե	Գ. Լ. Ռ. Ի. Ե



ՄՇՏՆՋԵՆԱԻՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ  
ՀԱՅ ԿԱԶԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

---

Ի յշտի՝ անձան հոգ՝ Յակոբ Պատրիարքի Նալեան  
 ,, Մխիթար Աբբայ վարդապետի  
 ,, Պաղտասար պատուելոյ  
 ,, Գրիգոր Պատուելոյ Փէշտիմալճեան  
 ,, Նիկողայոսի Մ . Զօրաեան  
 ,, Երանուհի տիկնոջ Յ . Եէմէնիճեան  
 ,, Խրիսցի Գէորգ Աղայի Աղայէքով եւ  
 Տիրուհի տիկնոջն :

Աւիքսան Յ . Խօրասանճեան  
 Ահարոն վարդապետեան  
 Անդրանիկ Պէյ կրճիկեան  
 Գրիգոր Տէր Գէորգեան Ատափաղարցի  
 Գրիգոր Խուրտաճեան  
 Գառնիկ Յ . Յովակիմեան  
 Գրիգորիկ Բարսեղեան  
 Գրիգորիկ Կ . Պալեան  
 Դանիէլ Մարկոսեան  
 Եսայի Մ . Անուխեան  
 Լեւոն Մ . Գաբամաճեան  
 Խաչատուր Մակաղեան  
 Խորեն վարդապետ Գալֆաեան  
 Կարապետ Սախայեան  
 Ճանիկ Արամ  
 Ճանիկ Պէյլիկճեան  
 Մկրտիչ Ճանըմեան  
 Մկրտիչ Պէնտէրլեան  
 Մկրտիչ Տամատեան  
 Յովհաննէս Պոյաճեանց



Յ Ռսկան  
 Յովհաննէս Հովիւեան  
 Յակոբիկ Կ . Պալեան  
 Յարութիւն Մարգարեան  
 Յովհաննէս Յ . Ամիրաղով  
 Յովհաննէս Յակոբեան  
 Յովհաննէս Սպարթալըեան  
 Յովսէփ Գարամաճեան  
 Նիկողայոս Տէր Շմառոնեան  
 Նշան Հարենց  
 Պողոս Մէրասեկտիեան  
 Ռուբէն Յ . Քիւրքճեան  
 Սարգիս Մ . Գարամաճեան  
 Ստեփան Մ . Ամիրաղով  
 Տիգրան Մ . Գարամաճեան

**ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ ԱՐԴԵԱՄԻ ՏՊՈՒԱԾ ԳՐԻԵՐԸ  
 Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք**

1 . Առաջնորդ Հոյ ընկերայանութեան կամ Նոր Քերտ-  
 ան և Հեգարան . մինչեւ հիմա ազգիս մէջ տպուած  
 քերականներէն ամենէն դիւրուտոյցն ըլլալը՝ շատ  
 մանկավարժներէ վկայուած է . 40 երեսէ բաղկաց-  
 եալ՝ գին 1 ղուրուշ : ( 2 . տալազրութիւն )

2 . Պարպ Կղայոց . որ տղոց իրենց ծնողաց եւ ի-  
 րենց նմաններուն ունեցած պարտականութիւնները  
 ազդու խօսքերով եւ ընտիր պատմական օրինակնե-  
 րով կը սովորեցընէ . եւ հեգարանէ ետքը տղոց ըն-  
 թերցանութեան գիրք ըլլալու խիստ յարմար գըր-  
 քոյկ մըն է . 132 երեսէ բաղկացեալ՝ գին 4 ղուրուշ :

3 . Նախագիտելի մանկանց . յատկապէս տղոց ըն-  
 թերցարան ըլլալու համար՝ պիտան



ծանօթութիւններ պարունակող գրքոյի մըն է . 180  
երեսէ բաղկացեալ՝ գին 3 զուրուշ :

4 . Թոսագիտութիւն համարօք . Թուագիտութեան  
սկզբունք Չորս Գործողութիւնները թէ ամբողջ եւ  
թէ տասանորդական թիւերով կատարելու կը վար-  
ժեցընէ , եւ մասնաւորապէս դպրոցներու դասագիրք  
ըլլալու համար յօրինուած է . 128 երեսէ բաղկաց-  
եալ՝ գին 3 զուրուշ :

5 . Ֆեռահանական Վերաճութիւն . զանազան ընտիր  
մատենագիրներէ հաւաքածոյ մը 160 երեսէ բաղ-  
կացեալ , որուն մէջ կը գտնուի նաեւ վերլուծութեան  
կանոններ որ քերականութիւն սովորողներու համար  
խիստ հարկաւոր է . նաեւ վերջն ալ կէտադրութեան  
մասնաւոր կանոններու յաւելուած մը կը պարունա-  
կէ՝ 20 երես . ընդ ամենը 200 երեսէ բաղկացեալ՝  
գին 6 զուրուշ :

#### ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

6 . Անգո-Բն Պեքրոս . Աղեքսանդր Տիւմա մեծա-  
նուն հեղինակին մէկ ընտիր վիպասանութիւնը 75 ե-  
րեսէ բաղկացեալ՝ գին 3 զուրուշ :

7 . Բարոյական Պոստարէայ ( հատոր Բ . ) Պլուտար-  
քոս փիլիսոփային՝ Ունկնդրութեան վրայ շինած մէկ  
ճառը , 64 երեսէ բաղկացեալ՝ գին 2 զուրուշ :

8 . Բարոյական Պոստարէայ ( հատոր Գ . ) Պլուտար-  
քոս փիլիսոփային՝ Ճշմարիտ բարեկամը շողոքորթէն  
որոշելու վրայ գրած մէկ ճառը . 104 երեսէ բաղ-  
կացեալ՝ գին 3 զուրուշ :



ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Ընկերութեան նպատակն է, Ազգային լեզուաբարձր տպագրել տալ, եւ զանոնք առանց շահու՝ բուն իրենց ելած գիներովը վաճառել :

Ա . Ընկերութեան խորհրդական անդամները տասը հոգի են՝ եւ այս գործիս ձեռք զարկած են, Ընկերութեան ամեն հոգերն իրենց վրայ եւ ամեն կերպով իրենք պատասխանատու ըլլալու պայմանաւ :

Բ . Ընկերութեան հաղորդ ըլլալ ուղողը պիտի վճարէ տարին 20 դրշ . մէկ տարեկան տոմսակագին :

Գ . Այս քսան զուրուչնոց տոմսակներէն 'ի զատ՝ ով որ 200 դրշ . վճարէ ու 200 զուրուչնոց տոմսակ մը առնէ մէկ անգամ, այն անձը Մշտնջենաւոր Ընկեր կը համարուի, եւ անոր անունը կ'արձանագրուի Ընկերութեան դիւանին մէջ :

Դ . Այս 200 զուրուչնոց տոմսակներէն հաւաքուած ստակովն ալ գիրքեր պիտի տպուին . բայց անանկ որ ամեն մէկ մշտնջենաւոր տոմսակ՝ տարին 20 դրշ . տարեկան տոմսակներու շահ տայ . եւ այս շահը՝ 20 զուրուչնոց տոմսակներէն հաւաքուած ստակովը մէկտեղ հեռագհեամ գիրք տպելու պիտի գործածուի . ու մէկ գրքի մը քանի դրշ . ծախք որ երթայ՝ անկէ աւելի գնով չպիտի ծախուի :

Ը . Ընկերութիւնը պիտի ջանայ ամեն առեւն Ազգին ամենահարկաւոր, օգտակար եւ գալբոցական գրքեր հրատարակելու, եւ մանաւանդ բարոյականի եւ կրօնքի դէմ գիրք տպել շտալու :

. . . . .





Եւ իւրապէս զի զայն անկողնէն իւր  
հետ խնամ շարժուար պայմաններով  
Սերբանո մարաշախան և Թորէթէ ճո-  
վապետը Սարախոսա դային և կիրակի  
Մարտիա պիտի գառնան :

Սարախոսա 16 հոկտ.

Սերբանո մարաշախան և Թորէ-  
թէ ճովապետը յարթական կերպիւ  
Սարախոսա մտան : Ժողովուրդն ան-  
պատկելի ցնծաւ թեալք մօն կատարեց :  
Եւնն ազատամիտ մասերն եզրաչափե-  
ցան : Երկու պաշտօնեայնէրն հայրենա-  
սիրական ձառեք խօսեցան : Մարթոս  
աւանկափորը խղճի ազատութեան և ան-  
հատական իրաւանց վրայ ձառեց : Ընդ-  
հանաւր աղաղակեցէր ելան : « Եւկցի՞ն  
Պարպոնք , կեցցե՞ն Սերբանո , Բրիտ ,  
Թորէթէ , Օլոզակա , Ախլէաօ » :

Մարտիա 18 հոկտ.

Պ . Օլոզակա պաշտօնեայն հա-  
տաւ : Մատիկ յարգ անձրեի մը հա-  
կառակ բարձրաթիւ ժողովուրդ և շատ  
մը պատգամաւ որով թիւններ զնուս-  
րական և քաղաքային նաւագարաննե-  
րով զննքը դիմաւ որեցին : Բրիտ դօ-  
րապետն երկաթուղւոյն կայարանը Պ .  
Օլոզական դիմաւ որեց : Քաղաքայե-

հաւարակի  
թէ ընդ հո-  
րոշուի :  
Յեղաւ  
չուծուած  
որով կը  
յայտարար  
վարութեա  
Սահմանա  
նայ :

Երէկ  
մարտի մը  
բանութի  
հեռեկալ  
« Աւանկ  
միակ ձեք  
տու թիւն ա  
տի առաջա  
ւաւնք դոր  
հրատարակ  
տարեկան  
տեարակներ  
դարականու  
ակ կառավ  
եան պիտի  
Պաշտօն













2013 2515



